ՍԱՐԿԱՒԱԳ Ց. ԺՈՒԳՂՈՒՐԵԱՆ

ՄՈՌԱՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ

Բ. ԳԻՐՔ

ՏՓԽԻՍ

Տպ. Մ. Շարաձէի. ‖ Тип. М. Шарадзе.

1895

891.99
Ճ-97

1556

[illegible]
1556

2015

891.99
Ժ - 97

ՍԱՐԿԱՒԱԳ Ց. ԺՈՒՂՈՒՐԵԱՆ

ՄՈՌԱՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ

Բ. ԳԻՐՔ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէի, Նիկ., 21.
Типогр. М. Шарадзе, Ник., 21.
1895

2003

2940-ւշ

Дозволено цензурою Тифлисъ, 8 Апрѣля 1894 года.

ՀՍՍՀ-ССРА
Мясникян
1556-2013
(3965/41)
Լ.Ց. 1549.

ՓԵՐՑԱԼ

Օ՛հօ՜... հէնց թուրք ա դառել, որ հայի խաչն էլ չի ճանաչըմ։—

Ժող. աս.

Պա՜հ, պա՜հ, պա՜հ. տղէք, քեօխվեն ջլէզգան կըրտաղած ա գնըմ, վարժապետը լակը կեծ արել ա (ուսուցիչը սաստիկ բարկացրել է).—արագ-արագ ասաց գիւղամիջում ժողովուած գիւղացիներից մինը՝ ցոյց տալով միւսներին մի արագավազ ձիաւոր։

—Ո՞րտեղ ա գնըմ, ա՛ Խեչ (Խաչատուր)։

—Գնըմ ա Դիլի (Դիլիջան)։

—Ինչի՞ հըմար։

—Տիրացուին հըցրո՛ւ, նա գիդայ։

—Տէ՛րացու, ինչի՞ ա գնըմ։

—Կանչել են.—ասաց տիրացու Մաթոսը, որը գիւղացոց մէջ առանձին պատիւ էր վայելում, որովհետև աշխարհից ուրիշ բան չիմանալով խեղճը, առանց այն էլ նախապաշարուած գիւղացիներին համարեա ամեն մի հարցին Սողոմոնի իմաստութեան գրքերից էր պատասխանում՝ անմիտ բա-

ցատրութիւններով հանդերձ, բայց նա գիւղացիների համար միակ գրագէտ և գիտուն ու խորհրդատու անձն էր, թէև հազիւ էր կարողանում ժամագիրք կարդալ և իւր ազգանունն ստորագրել։

—Ի՞նչ կայ, ընչի՞ են կանչել, տէ՛րացու ջան.— հետաքրքրութեամբ հարցրին շատերը։

—Ո՞վ ա գիտըմ, հալբաթ թէ մի բան կլի, ըռանց էն չի։

—Բա վարժապետը լակը ի՞նց ա կեծ արել։

—Կազէթի ներկի կարասն ա կոխել հանել էլի։

—Զլիս սևըցրել ա՞։

—Բա ի՞նչ ա, բիաբուռ բէյսիրաթ ա արել։

—Պա՛հ, պա՛հ պա՛հ, տղէ՛ք, քեափուրին կազէթըմը խայտառակ անեն, տունը կքանդուի կը պրծնի.—ասաց մի ուրիշը, որն այնպիսի բան միայն լսել էր և չը գիտէր, թէ կազէթն ի՞նչ է։

—Մա՛թոս ապի ջան, Մա՛թոս ապի, ա՛սա տենաք, կազէթն էլ են ներկը՞մ.—հարցրեց Միգոն (Մարտիրոսը)։

—Հա՛…—ծիծաղը հազիւ զսպելով պատասխանեց Մաթոս ապին, որը քիչ թէ շատ գաղափար ունէր լրագրի մասին, այսինքն՝ աչքով տեսել էր։

—Ո՞նց են ներկըմ, չուխի պէս կարասն են կոխըմ հանը՞մ.—կրկին և բոլորովին միամտաբար հարցրեց նոյն մարդը։

—Ի՜ի՜, քու շաշ տունը մհանեն պրծնի, չէ՛, չէ՝ լաչակի պէս են ներկըմ.—արհամարհական եղանակով պատասխանեց տիրացու Մաթոսը և իրեն

այնպիսի մի դիրքի մէջ դրեց, որ իբր թէ շատ բան գիտէր լրագրի մասին, ասաց նա և կչկչալով ծիծաղեց. տիրացուի հետ ծիծաղեցին և շատերը, իսկ Միգոն զարմացած անակնկալ ծիծաղի վրայ, կարմրեց՝ զգալով, որ ինքը անշուշտ մի յիմար բան պիտի ասած լինի։ Նա մճռուելով հարցրեց.

—Ա՛, էտ խի՞ էք կրկչըմ, չլի՞ թէ շաշ բան եմ ասել։

—Ըհա՛հա՛ հա՛, ի՞նց չը ծըծաղենք, քու տունը չքանդուի, բա էնդա՛դար էլ չը գիդաս, որ թուղթը թէօր ջրի մէջ կոխեն փթուր-փթուր կլի՞։

—Կազէթը թուղթ ա՞։

—Բա՞, բա ի՞նչ ա, շալ ա՞.—կրկին արհամարհական ծիծաղ բարձրացնելով ասաց ծնօտը ծուռտիկ Մաթոսը։ Ժողովականներից շատերը բերանները բաց, առանց խառնուելու սպասում էին, թէ ինչ պէտք է լինի կազէթը և երբ իմացան, որ թուղթ է, մինը նրանցից վրաբերեց.

—Վա՛, ձեր տներն Աստոծ չքանդի, ես էլ չի գլխի ընկայ, հէնց գիդացի թէ վարժապետը քեօխվին մեր Մրգանց ներկի կարասն ա կոխել հետը կռուած վախտը։

—Ըհա՛հա՛ հա՛…

—Ա՛, դէ լաւ, քի՛չ ծըծաղեցէք է։ Մա՛թոս ապի ջան, Մա՛թոս ապի, էտ ա խէր ես արել, խէր. մի պատմութին արա տենանք ի՞նչ բան ա կազէթը.—խնդրեց մի ուրիշը։

—Հանէս, Հանէս, էհէօյ, ա՛յ գեադա.—տէրացուն կանչեց իւր երեխային։

—Հէյ, ի՞նչ ա, ա՛պի։

—Քե մատաղ, գնա՛ Նանին ասա՝ ապին ասըմ ա էն ինչ Քրվըսըրեցը եադլախըմը (Թաշկինակում) փԹաԹած մի մե՛ծ Թուղթ բերի քե՛ տըւի, ղըկի՛։ Դէ վա՛զ տուր, վա՛զ տուր, քե մա՛տաղ, վա՛զ տուր։ Էս ա կըերի, ամենքդ էլ կտեսնաք։

Երեխան գնաց և մի խունացած Թաշկինակի մէջ փաԹԹած մի բան բերեց տուեց հօրը։ ՄաԹոս ապին կապոցը կամաց-կամաց ետ արաւ, բացեց լրագիրը, առաջը փռեց, նայեց և ապա բարձրացնելով ցոյց տուեց ամենին.

—Տեհէ՞ք, էս ա կազէԹը։

—Պա՛... Էտ ի՞նչ մեծ Թուղթ ա.—ասացին ամենքը, որոնք լրագրի չափ Թուղթ չէին տեսած։

—Մա՛Թոս ապի, հմի դըրա մէջ ի՞նչ ա գրած.—հարցրին նրանք։

—Սրա մէ՞ջ, հըհը՜, սրա մէջ ըշխարիս ամեն ծէրիցն էլ խաբարնի ա գրած, ամա, ó, մեր քեօխվիցը գրածը՞, չլի՛ս խայտառակուԹին ա. էնպէս բաներ ա գրած, որ նրա քեօխվուԹինը սօր Թէ էգուց կտրիլու են...

—Տէ՛րացու ջան, կա՛րճ ասա, կա՛րճ, եանի դըրա մէջ ի՞նչղայդի բաներ են գրած—արդէք ե՞ն, պըրիտակըլնի են, բապուտնի ե՞ն, Թէ էլի ուրիշ-ուրիշ մեծ-մեծ բաներ.—աւելի մանրամասն կերպով ուզեց իմանալ մի հետաքրքիր գիւղացի, որը գիւղա-

կան կեանքում կարծես միայն բողոքագրեր էր տեսել և...

—Չէ, չէ, Պե՛տրոս ապէր, լսի՛, ասեմ. ով որ փխսուԹին, չարուԹին, շաշ՞ու փէնջուԹին, գողուԹին, կաշառակերուԹին անըմ ա, չիմ ըստի գըըմ են, որ կարդացողնին՝ մենծամարդիկը կարդան անողի ըրեսին Թքեն, վրեն ծըծաղեն, որ գլուխը քարովը տայ, էլ էն Թաւուր բան չանի։

—Բա հմի մեր քեօխվի վրայ մենծամարդիկն ու յուսումականնին ծըծաղիլ դե՞ն։

—Հըհը՜, մենակ ծըծաղիլ դե՞ն,՝էտ հու քեօխվի մեծը՝ նաչալնիկը որ մանայ, նրա կաշին պուկիլ դի։

—Մա՛Թոս ապի ջան, դու չիմ կարդացել մէջն իմացել ե՞ս։

—Հաբա՞։

—Ա՜խ, էրնակ քե՛. քու հէրն էլ ա մարդ լել իմն էլ էլի—տունը քանդուածին հզար հետ ղանչաք պղատանք արի, որ տէրտէրի կուշտը ղրկի կարդամ, քարով քոլով գցե՛ց...

—Տէ՛րացու ջան, տէ՛րացու, ես քու ընկճըկոԹերիդ մատաղ, մի կարդայ տեսնանք ի՞նչ բիաբըռչուԹին ա գրած քեօխվիցը.—շատերը խնդրեցին տէրացուին։

—Դէ որ մի՛ւննաԹ էք անըմ, կը կարդամ, ամա դեռ լաւ չեմ սերտել։

—Բան չկայ, ոնց որ կարդաս, մեզ ըռադի ա։

—Անտէր աչքերս լաւ չեն տեսնըմ։

—Խե՛ղճ տիրացու, էնղադար ժըմագիրք ես կարդացել, որ աչքերդ խարաբ են լել։

—Հա՛, շատ եմ կարդացել, շա՛տ.—պատասխանեց տիրացուն՝ մի կողմից պարծենալով, միւս կողմից իւր ոգևորութիւնը ծածկելով նրանց առաջ. Նա վախենում էր թէ վատ կարդայ, կզկըղացնի, գիւղացիք յետոյ ծիծաղեն և խօսք ու զրոյցի նիւթ շինեն*)։ Նա առաւ լրագիրը, աչքերին մօտեցրեց և շփոթուած սկսեց այս ու այն կողմը շրջել։ Ամենքը լուռ և հետաքրքրութեամբ սպասում էին ընթերցումին։

—Մաթոս ապի, կորա՛ւ։

—Վա՛յ անտէր լի սա.—պատասխանեց տիրացուն

—Հըհը՛, էտա դհէ բան էլ կայ հա՛, բա հլէ ինձ վրայ ծըծաղըմ էր... էնղադար շուռտի մուռտի արիր, որ թուղթը մաշեցիր.—ասաց անհամբեր սպասողներից մինը։

—Ա՛, էս անտէրնըրիկունը լա՛ւ կարդացի հմի դժար եմ գտնըմ.—ասաց տիրացուն։ Վերջապէս

*) Գիւղերում կարդալ իմացողը, եթէ մի բան սխալ կարդայ և կամ իւր ուժիցը վեր, մասնագիտութեանը չվերաբերեալ բան չը կարողանայ գրել կամ կարդալ, նա բոլորի առաջ ծիծաղի առարկայ է դառնում, «է՜, էսքան տարի ա կարդըմ ա, անըմն էլ յուսումական ա արել, կարըմ չի թէ մի արզա էլա գրի, մի ըրսեվար հրաման էլ ա կարդայ...» ասում են միմեանց ու ծիծաղում։

գտաւ և սկսեց իրենից ևս շարադրելով կարդալ հետևեալը.

—«Ելիսաւետապոմպոլի գմբեռնու, Ղազախի գաւառի Ս. գեղը ջլիզդան կեղտոտ ա, փէյնն ու թրիքը կորնինուվեր ա դառնըմ, խուլեարը (խոլերան), Աստօծ հեռու տանի, տէր Վէրնէինը մի՛ արասցէ, թէ որ եկաւ, բիրադինին էլ կտորել դի... Ս—ի քեօխվեն մի շատ յիմար և ախմախ մարդ ա, ոնչիչ չի հսկանըմ, գեղը խոտակ չի պըհըմ, խնդըրըմ ենք... հրամայել քեօխվին, որ գեղն խոտակել տայ...»։ Տիրացու Մաթոսը թերթը շրջեց և ասաց.

—Էս մէկէլ ըրխըմն էլ դոխտուրների վրայ ա գրել։

—Ի՞նչ ա գրել.—հարցրին։

—Նրանց էլ ա բիաբուռ արել։

—Վա՛հ... էտ ի՞նչ սուր ղալամ ունի, որ էնղայդի մենծամրդկերացն էլ ա բիաբուռ անում։

—Տի՛րացու ջան, ջա՛փա քաշի, ըտէլ կարդայ։

—Լսե՛ցէք։

—«Ղազախի դոխտուրնին գեղերը չեն մտնըմ, շատ մարդ ըռանց դոխտուրի, ըռանց դեղ ու դարմանի ա մեռնըմ...»։

—Տի՛րացու ջան, հլէ էտքանն ա՞.—հարցրեց հետաքրքրութեամբ լսողներից մինը։

—Մթամ էս քիչ բա՞ն ա.—պատասխանեց նա։

—Խըւա՛յ, ա՛յ թէ արել ա հէ՜յ. ես նրա ղալամին մատաղ, էլ նա՛ էտ թաւուրների հախիցը կգայ...

—Ես նրա ջա՛նին մատաղ,... մի լաւ որցկա-

ճուտ դեմ փէշքէշ անիլ, որ մ'նէլ գրի, մ'նէլ խայտառակ անի…

—Ա՜խ, որ հլէ մի բան թողել ա վարժապետը. —նկատեց մի ուրիշը։

—Ի՞նչ, ի՞նչ ա թողել, Թի՛ւնի բիձայ.—խիստ հետաքրքրութեամբ հարցրին ունկնդիրները։

—Պէտք ա գրէր, որ էն քոռ հարամզադէն վրփիվերի (այրի) կնկայ՝ Նարգիզի խոզի գողերին բռնեց տուն ածեց—(բանտարկեց) եասուն մանէթ փող առաւ ու մի շահի էլ ա քեասիբ կնկանը չը տուեց։

—Է՜, ամեն բան էլ խու չի՛ գրուիլ ըստեղ.—ասաց տիրացուն։

—Խի՞ չի գրուիլ, եքա թուղթ ա։

—Մթամ Դադինի տղին, Մրանանց Գեալինին դուլթսաղ չարմւ, ամեն մնիցը մի-մի թուման խլեց ոչ ինքը կերաւ. էս օր էլ խեղճ քեասիբները թումանին ամսէնը վեց շահի շահ են տալի՝ պարտքի տակիցն էլ կարըմ չեն դուս գան։

—Թող հլա մի գայ ըստեղ, ես շատ բան ունիմ գրիլ տալու…

—Վա՛լլահ, վարժապետի սիրտը հենց սիրտ ա, որ ըտոնք էլ իմանայ՝ կը գրի, քա՛շուիլ չի…

—Հա՛… նա որ էնթաւուր չին ու փնջի տէր դոխտուրների վրայ բան ա գրը՜մ, քեօխվեն ինչ մարդ ա, դրան խու ղալամի ծէրին պար կածի…

—Ա՛, էտ ի՞նչ իշտահով գրեց ու մասլահաթ էք անըմ.—արհամարհական եղանակով ասաց խաչ-

թառակցի Նադախուրին, որին դուր չէր գալիս գիւղականների վարժապետի մասին արած գովեստները, որովհետև թշնամի էր նրա հետ։

—Վարժապետը գրել ա թէ…

—Իրնակ ձե՛զ, դուք էլ ծըծաղըմ էք…

—Օ՜, շատ թիւնդ ա գրած…

—Հմի դուք ձեր կարճ խելքովը գիդըմ էք թէ նա լա՛ւ բան ա արե՛լ, էն խու մատնութին ա արել, որ տէրը իմանան դան գլխներիդ կրակ վառեն՝ կաշիներդ պուկիլ տալով փէյնին դեն ածիլ տան…

Խուրին կամենում էր դրանով ամբոխին գրգռել ուսուցչի դէմ։ Բայց, ինչպէս ասում են՝ քեօխվիցը դաղուած մարդիկ շատ կային, ականջ չը դրին, պատասխանեցին նրան.

—Ջա՛րար չունի, թող դեն ածիլ տան, միայն թէ մեր գեղն իստակուի, մեր քեօխվեն խըրատուի։ Նրա ղալամին մատաղ, շատ լաւ ա արել, եբոր դայ՝ ա՛սիլ դենք քու արածների մասին էլ գրի…

—Դուք հլա վարժապետի խիզտի-բիզտի գրիլն էք տեհել, մի համբերեցէք, տեհէք քեօխվեն ինչ դի անիլ է՞.—պարծեցաւ Նադախուրին։

—Տօ ես քեօխվի է՜ քո՛ռ հէրն անըծեմ, դէ բա էն կաղէթ գցե՛լու բան չի՞, որ քեասիբ Թևոսին, մի տուն լիքը քիւլփաթով, փորը ցաւիլու հըմար՝ սոված, ծարաւ, անտէր, անտիրական, գեղիցը դուս քշեց տարաւ գցեց Պակերի ձորի գոմը, յետոյ էլ հրամայեց, որ ոչով չգնայ նրա մօտ, ինքն էլ սուտ-

սուտ ձէն-ձէն գցեց ու գնաց, որ դոխտուրներին ասի, թէ Թէւոսը խուլեար ա ընկէլ։ Բա էտ Աստօծ վէ կունի…

—Հա՛, հա՛, էլ ա՛սըմ ես, թէ ի՞նչ անես. Նաչարի կնիկը եկել էր գեղը, արտասունք թափելով ըստուց, ընդուց հաց էր ուզըմ, որ իր նաչախի հըմար տանի, ամա քեօխվի ահիցն ոչով հացի թիքա չէր տալի.—խղճի դրութիւնը մտնելով ասաց Մակի ապին։

Խօսակցութիւնը շարունակւում էր…

Բ.

Այդ միջոցին քեօխվէն կէս ճանապարհից ետ դառնալով՝ շտապ-շտապ մտաւ գիւղը, խմբուած մարդկանց միջից իր խորհրդատու Եսդախուրուն դուրս կանչեց, առանձնացաւ մի կողմը և մի քանի րոպէ զգուշութեամբ շուրջը մտիկ տալով, խորհրդաւոր կերպով խօսաց ու կրկին գլխապատառ ձին քշեց, որ ընկերներին հասնի։

—Ը՜ը՜… ընդո՞ւր էր ասըմ, թէ «տեհէք քեօխվէն ի՞նչ դի անի՞լ…, դրանցըմ թագուն բան կայ.—լեզուները կծելով գուշակեցին գրոյցընկերները։

—Հա ի՞նչ դի անիլ, վարժապետի ըսկի վէջն էլ չի, թէ քեօխվէն կա՞յ, թէ չկայ…

Քեօխվէն իւր մեծից՝ պրիստաւից եասաուլի ձեռքով մի անորոշ հրաման էր ստացել, որի մէջ պարզ յայտնած չէր, թէ ինքն ինչի համար է կան-

չուել Դիլիջան։ Նա ահը սրտումը, բայց վարժապետի վրայ խիստ բարկացած՝ քեօխվայական սպառնալիքներ էր տալիս նրա հասցէին և համոզուած կարծում էր, թէ իրեն խիստ հրամանագրով պահանջելու պատճառը ուսուցիչն է—լրագրում գրուած լուրն է, որի համար պատժելու են կանչում…

—Եկա՞ր, պահ տուե՞ր.—հարցրին առաջընթաց ձիաւորները։

—Հա՛, ամեն բան կարգադրեցի…,—պատասխանեց տանուտէրը։

—Կը տե՛նաք, թէ ես նրան ի՞նչ կանեմ, հլա մի Աստօծ աջողայ պրիստաւն ուրիշ բանի հըմար կանչելիս լի՞… թէ նրա վարժապետութիւնն ու կազէթը մտիցը գցիլ տուի՛, խու ես էլ մա՛րդ եմ, թէ չէ՛ խու, կե՛նայ ու պըրծենայ էլի…,

—Քեօ՛խվայ, քու հրամանոց բանն էնդադար ո՛ւնդատն ա ընկել (յաջողուել է), որ դոխտուրնին էլ են չարացել վարժապետի վրայ, թէ չէ՝ դու նրա հախիցը կա՛րալ չէր գալ…

—Ես թէ նրա կոները քըմակին կպալիլ տըւած Դաղքասաման*) չը ղրկեմ, բաս էս չեկ բեղերս ըստեղ չըլեն.—բեխերը շօշափելով կրկին պարծեցաւ, սպառնաց քեօխվէն։

—Քեօխվայ, հէնց արա, որ բանը վախտին գլուխ գայ, ասըմ են վարժապետն էս մի էրկու

---

*) Դաղքասաման ասելով, պոլիցիայի տեղն է ուզում ցոյց տալ։

օրս քաղաք ա գնալու, ընտեղ գնալուց եդն էլ մտքինդ խոււ կօրալ չես կատարիլ.—տանուտէրին զգուշացրեց իւր հետ գնացողներից մինը։

—Հըհը՜, ես նրա բանը հէնց սարքել եմ, որ չուեւլ ըրիկու նրա կռները կապուիլ դի.—վստահութեամբ պատասխանեց քեօխվէն։

—Քեօխվայ, դու Դիլըմը կլես, ո՞վ դի նրա բանը սարքիլ գեղըմը.—հարցրեց խօսակիցը։

—Ի՜նչ րեխայ մարդ ես, հլէ ամեն բան էլ բաց ասիլ դեմ, որ հըսկանաս, գեղըմը մեր մըրդկերանցն ամենին էլ պահ եմ տուել, որ...,—նեղսրտութեամբ պատասխանեց քեօխվէն այն ժամանակ, երբ մի փոքր արանք տուին իրենց ընկեր ձիաւորներից մէկին, որին նրանք «խըբըրըբզան» էին անուանում գիւղում և որի մօտ գաղտնիք ասել չէր կարելի։

—Հըսկանըմ եմ, թէ ինչ ես ասըմ, ամա ասելիքս էսա թէ՝ խելքը գլխներին մըրդկերանց ես պահ տուե՞լ, թէ նհենց...—հարցրեց գաղտնախօսը։

—Խելքը գլխինը ո՞րն ա, վարժապետի հօր ամենագոռ դուշմաններին եմ պահ տուել։

—Հա՜, այ ի՛նչ կասեմ, ո՞րոնց։

—Մինն ա, հինգը՞, որն ասեմ, շանից շատ են։

—Է՛լհէ, ասա տենանք։

—Խոտը կրակողին ասել եմ...

—Է՞լ։

—Բաղի վազները կտրատողներին...

—Է՛լ ո՞ւմ, քիչ են, ա՜սա։

—Գէօմոշը (գոմէշը) քարնըվեր գցողներին...

—Պըծա՞ր։

—Հա։

—Բա չանին (ծնօթին) թըւանք կրակողների՞ն։

—Նրանց էլ եմ ասել.—հակառակորդի թշնամիների անունները մի առ մի թուելով՝ պատասխանում էր քեօխվէն խօսակցի հարցերին և միևնոյն ժամանակ ետ էր մտիկ տալիս շուտ-շուտ, որ տեսնէ թէ «խըբըրըբզանը» հասնո՞ւմ է իրենց։

—Հլա հեռու ա, խօսա.—ասաց ընկերը։

—Ի՞նչ խօսամ, էնա գիդաս էլի իմ խըսեաթը—նրան շատ փիս վնաս եմ տալու։

—Մի պատմութին արա տենանք ո՞նց դես նրա կռները կապիլ տալ. այսինքը՝ մի բան, մի մհանայ կա՞յ, թէ ո՞նց։

—Բանն էս ա, որ Թևոսը նչխացել ա, ես էլ գեղը հօվար (ձայն) եմ գցել, թէ նա խուլեար ա ընկել. նաչախին (տկարին) տանով ու քիւլփաթով գեղից դուս եմ անիլ՝ տուել հրէ Պակերի ձորի մի գոմի մէջ սոված, ծարաւ վեր ընկած, ես էլ էս ա գընըմ եմ Ք. գեղը, դոխտուրին խըբըրփորիլ (խաբել) դեմ, թէ՝ «մեր գեղըմը խուլեար ա լիս ընկել, ժողովըրդիցս մինը հրէ տեղըմը վեր ընկած...,—ասաց քեօխվէն, խօսքն ընդհատեց և ձիու վրայից կըրկին ետ նայեց եկողին։

—Հա՛, ետո՞յ։

—Ետոն էն ա կտենաս էլի...

—Պա՜հ, հըսկացայ քեօխվայ, էտ ի՞նչ զորբա

բան ես միտք արել, էլ խօսալ մի՛, էտա ու էտ։

—Դէ որ Հըսկացար, սո՛ւս, էլ խօսալ մի՛, խըբըըըբզանը (լըտեսը) մօտանըմ ա։

—Զէ, բանդ ղայդըմն ես բռնել, վարժապետի բանը խարաբ ա…

—Հըհը՜, էտ ղայդի բանը սարքելու Հըմար էլ գլուխ ա Հարկաւոր է։ Վարժապետի մեծ Թիքէն բողազըմը Թողեմ, բողազըմը.—վրէժխնդիր ձայնով կրկին ետ նայելով պատասխանեց քեօխվէն։

Խօսակցութիւնն ընդՀատուեց, ետ ընկած ձիաւորը Հասաւ նրանց։ Արդէն Քարվանսարա գիւղն էին մտնում։

Գ.

Ձիաւորները Ք. գիւղի «դուքան-բազարը» Հասան, ձիերը կապեցին խանութի բակում։

Երկու ընկերները քեօխվի եասաուլի Հետ միասին խանութի դրանն սպասեցին, իսկ քեօխվէն դուրս գնաց, դէս ու դէն Հարց ու փորձ արաւ… վերջապէս գտաւ Թէ բժշկին և Թէ նրա անունն արատաւորող և ի չարը գործ դնող Փերշալ Շեկոյին, որը խմելուց, կոնծաբանութիւնից Հոգնած, Թմրած մի սպիտակ վրանում քնած էր այդ ժամանակ։ Բժիշկը ընդունեց քեօխվին, նա շըլԹայով նշանը վզին մօտեցաւ բժշկին և մեծ փափախը կռնատակը դնելով, խաբեբայի պատկեր ու ձև ընդունելով՛ յայտնեց Հետևեալը.

—Ա՛ղայ, ես եկել եմ ձեր բարցր պարեծնԹութենին յայդնիլու, որ մեր գեղացի Թևոս Անմեղովը խուլեար ա ընկել, գեղիցը դուս եմ արել մի դոմ դցել, դուռը փակել, որ խուլեարը չփոխուի, ուրիշներին էլ չբռնի…

—Դու ինչպէս ես իմանում, Թէ ձեր գիւղացու ՀիւանդուԹիւնը խոլերա է.—Հարցրեց բժիշկը։

— Ա՛ղայ, մենք լսել ենք, որ խուլեար ընկածը սևանըմ, կըպըտըմ ա ու ցըըմ…

—Ուրեմն ձեր Հիւանդն այդպիսի նշաններ ունի՞։

—Հրամմն քե, ա՛ղայ ջան։

—Շեկո՛, շեկո՛։

—Հա՛մմէ, ա՛ղայ։

—Իսկոյն ձիեր պատրաստել տուր, գնացէք Ա. գիւղը, Հիւանդ Թևոսի մասին մի տեղեկուԹիւն բերէք։

—Է՛ս սՀաԹին, ա՛ղայ ջան։

Թուրք եասաուլը շուտով ձիերը պատրաստեց, Հեծան և քոռ Մոլլա քեօխվի Հետ միասին իջան դէպի «Դուքան—բազարը», ուր լօԹի Աղանի խմելիքի խանուԹի դրանն իջան, քեօխվի Հետ օղի կոնծեցին։

—Ա՛ղայ, քե նեղուԹին չլի, ջափա քաշի դէսն արի, բա՛ն ունեմ քու Հրամանոց Հետ։ Այդ տեսակ կանչելու եղանակից Աղան իսկոյն գլխի ընկաւ, Թէ ինչ սովորական բան է ասելու իրեն։ Երկուսն ևս առանձնացան պատի տակ և կամացուկ, գայլակերպ

հայեացքով շուրջները պահելով բաւական գախտ-նախօսեցին։ Խօսակցութեան միջոցում աղայ կոչուածը շարունակ գլուխը տմբտըմբացնում էր ասելով. «Դա՛, դա՛»։ Երկար խօսակցութիւնից յետոյ Մոլլէն գրպանից մի բան հանեց, տուեց նրան և ասաց.

—Ա՛ղայ, էտ քե արաղփուլի եմ տալի, յետոյ ես ու դու գիդանք...

--Հըհը՜, ես ցո՛յց կտամ, փարշիվուն....—աղէն ասաց իւր սպառնական խօսքը, կրկին մտան Աղանի խմելիքի դրախտը և քեօխվի հաշուով մի քանի թէյի բաժակ գցեցին, հաղալով ու թքելով կոկորդները մաքրեցին, բայց գլխարկն աչքերն ընկած Շեկոյի օղխասէր, պզլիկ ու փոքրիկ աչքերը դեռ շշի ու բաժակի կողմն էին յառուած։

—Քեօ՛խվայ, ա՛ղայ, ընչի՞ չէք խըմըմ, խմե՛ցէք. վա՛հ, կշտացա՞ք... հէր օրխնածնի, ձեր փողովը, ձեր ըշխատանքովը խու չէք խըմըմ, ասած ա, «սար ու ձոր քեօխվի փոր», ըռհա՛մթը սաղ լի, մի տբասու, էրկու տբասու կը խմէք, պլետնիդ (մտրակներդ) ժա՛ժ կտաք՝ տասն աբա՛սի կաշխատէք. խմե՛ցէք, իշտահներիդ միք մտիկ անիլ.—ասում էր խորամանկ Աղանը և այդ կոմիքական շնորհով ախորժակի յորդոր կարդում նրանց։ Օղխասէրները մի քանի անգամ բաժակները դադարկելուց յետոյ, վիզներն ու դէմքները կարմրացրած՝ տաքացած դուրս եկան խանութից, իրար յաջողութիւն մաղթեցին և ուղևորուեցին։ Շեկոն իւր և

քեօխվի եասաուլի հետ դէպի Ս. գիւղը գնաց, իսկ քեօխվեն դէպի Դիլիջան։

Դ.

Կէս օրին գիւղացոց խօսակցութիւնը յանկարծ ընդհատուեց։—Երկար-ղոբու թմբի քամակից մինը միւսի ետևից երեք ձիաւորներ դուրս եկան։

—Տղե՛ք, ըհը՛, էլի դուս եկան.—յանկարծ ասեց մի գիւղացի։

—Ընչե՞րը դուս եկան.—հարցրին մի քանիսն և իրենք էլ շտապով նայեցին այն կողմը։

—Է՜, էլի գեղի հըմար կրակ կլեն բերելիս.—սևասրտած բացականչեց մինը և սրահի տակ նստատածների ուշադրութիւնը գրաւեց ձիաւորների վրայ։ Ամենքը ոտքի ելան, վիզները եկարացրած սկսեցին դիտել և անորոշ կարծիքներ յայտնել։

--Թո՛ւրքեր են։

—Չէ, ղուշ բռնողնի կլեն։

—Թուանք ունեն, ֆերս անողնի են (որսկաններ են)։

—Ո՜վվէ, տղե՛ք, մինը շլապկաւոր ա, նրա տո՛ւնն Աստօծ քանդի, նրանըմ բա՛ն կայ...

—Չէ, տղե՛ք, դրանց դոնիցը ո՛չ ղուշ կալնող ա ըրևըմ, ո՛չ աստղ բռնող. դրանք պլետաւորնի են, կարըմ էք մէջքներդ պըհեցէք, խարջ ու բորջի են գալի, կաշիներս պուկիլ դէն...

—Ը՜, ես գտել եմ, վատայ հող չափողն ա (երկրաչափն է)։

—Հող չափողը հետը բրխանայ ա ունենո՞ւմ (իրեղէններ է ունենում), նա՛ չի։

—Ա՛ ձեզ մատաղ, էն եդի ձիաւորներիցը մինը լէյի թէ մեր բալաբանչին լի։

—Հա՛, ա՛դա, ջլիս նրա նման ա։

—Նա ա, էլ խօսալ մի՛ք, ամա նա հու քեօխվի հետ գնաց…

—Հա՛ նրան ինչ, որտեղ ուտելիք կայ, նա ընտեղ ա լուս ընկնըմ։

—Էն մինն էլ եասաուլի ա նման.

Այդպէս մէկը միւսի ետևից այդ խօսքերը կրկնում էին, զանազան մարդկանց նմանեցնելով նրանց և հետաքրքրութեամբ ու երկիւղով սպասում էին ձիաւորների մօտենալուն։

—Տղե՛ք, ղօ՛րթ ա, մինը չլապկաւոր ա։

—Տղե՛ք, էն չլապկաւորն ով ո՛ր ա, ճուտից զատից հազիր արէք.—նկատեց մի սրախօս գիւղացի։

—Վայ՜, ա՛ Զատ ջան, դու ա՛սա թէ ճուտով բռազի կենայ, մենք վախըմ ենք, թէ գէօմոշ էլ ուտի.—պատասխանեց մի ուրիշը։

Եկողների մասին խօսողներից ոչ ոք կարծես տեղեկութիւն չունէր բացի քեօխվի խորհրդատու Եաղախուրուց, Խևից, Մծառիկից…, որոնք ըստ երևոյթին եկողներով հետաքրքրուող չէին ձևացնում իրենց։—Վերջիններս ձիաւորների երևալուն պէս ամբոխի միջից յետ քաշուեցին և մտան իրենց տուն։

—Ը՜, ճնանչե՛ցի.—մատը կծելով ասաց ուստայ Աթոն.—էն ղաքի եկողն էրէկ Քըվըրըի կըմնջի կողքի դուքանըմը ոտնուձեռից ընկած «արաղ խմի պար արի էր անըմ»։

—Ղօ՞րթ։

—Էն Աստօծը։

—Դէօր տհե՛նց ա, վա՛խիլ մի՛ք, արաղով եօլայ կտանենք։

—Եօ՛լայ կտանենք, թէ որ գեղըմս արաղ գտնենք է։

—Ես մի պուլճիկով (կճուճիկով) մի քիչ հարամ-մարամ հօգեպահուստ ունեմ, կխմըցնենք.—պատասխանեց «բօզբաշ ուտող» Մակին, որին շատակերութեան համար էին յատկացրել այդ մականունը։

—Ես էլ ճնանչեցի.—ասաց մի օտար գիւղացի։

—Ո՞վ ա, Մա՛կրտըմ ջան, դու լաւ կը գիդենաս, էլի աշխար մանեկած մարդ ես.—հարցրին շատերը հազար մաղի հաց կերած Մակրտումին։

—Դա ուսն ուռածի (սապատաւորի) տղէն ա, հէրն էլ իրան փեշակին էր, էնա դօրն ասես՝ պխութը շալակած ման էր գալի, որ մարդ խաբի։

—Ի՞նչ գործի, ի՞նչ ղունլուղի մարդ ա, Մա՛կըրտըմ ջան.—անհամբերութեամբ հարցրեց և մի ծերունի։

—Փերշալութին ա անըմ, ա՛պէր։

—Փերշալութի՞ն։

—Հա՛։

—Փերշալութինն ի՞նչ ա, ա՛ քե մատաղ։

—Դո՛խտուր ա, դո՛խտուր.—բացագրեց Մակըր-տումը։

—Փերշալ, Փերշալ, Փերշալ...տղե՛ք, էս ա-նըմը սըվերեցէք։

—Մա՛կրտըմ ջան, ասըմ ես Փերշալը դոխ-տուր ա՞։

—Հա՛։

—Ը՜, դրա տունը մհա՛նեն պըծնի, էտա ասա խուլեարի հըմար ա գալի էլի։ Ախր էրէկ իմացայ, որ գեղերը դոխտուրնի դեն մանդալ է... պա՛մ-բոշնիկ. գեղըմն էլ ուրիշ նաչալս, տկար, զատ-կա՞յ, թէ մենակ Թէոսն ա. ա՛սըմ են թէ՝ ում փո-րը ցա՛ւըմ ա, նրան գեղիցը դուս են անըմ, հա՞.—ձեռնըչալկի վրայ յենուած, հազիւ լսելի ձայնով և վախկոտութեամբ հարցրեց մի մաշուած և դեղ-նած մորուսով ծերունի։

—Չէ, չէ, սուտ ա, ա՛պէր.—պատասխանեց քեօխվի օգնական Կրպօն։

—Պա՛մբոշնիկ։

—Հէյ։

—Էս խու գեղի ճամբեն ներքնուց ա, դրանք խե՞ էն վերնուց գալի։

—Հալբաթ գնացել են Թեւոսին ակը տըւել (այցելել)։

—Պա՛մբոշնիկ, ինձ նհենց ա թըւըմ, թէ դու էս եկողներիցը խաբարութին ունես, ամա թագց-նըմ ես.—հարցրեց մի գիւղացի՝ իւր մտքում ունե-նալով այն ամենն, ինչ որ կատարուել էր առաւօ-

տից մինչև այդ վայրկեանը, այսինքն՝ քեօխվի Դիլի-ջան ուղևորուելը, նրա ու Եազախուրու սպառնա-լիքները... և այլն

Քեօխվի օգնականը լռեց, այլևս չպատասխա-նեց նրա հարցին։ Ձիաւորները հետզհետէ մօտե-նում էին գիւղամիջին, ուր ամբոխն սպասում էր։ Սակայն տեսէք, թէ ի՞նչպէս էին գալիս նրանք։

Ե.

Ցուցամոլ ձիաւորները գիւղի դիմաց դուրս գա-լով, սկսեցին իրենց ոտն ու ձեռը դրստել—աւելի կոկ նստեցին ձիերի վրայ, որպէս զի նայող տգէտ գիւղացիների վրայ շլացնող ազդեցութիւն գործեն ցանկացածի պէս...

—Ա՛ղայ։

—Հը՞։

—Տե՛նըմ ես, սաղ գեղը մեզ ա թըմաշ անըմ.—ասաց բալաբանչին և ուռցրեց Ճեկոյին։

—Ա՛ղայ, հարսներն էլ են մտիկ անըմ, հա՛րս-ները.—կրկնեց նա։

—Դրուստ։

—Հրա՛ման քե։

—Ինչի՞ են մտիկ անըմ։

—Դէ սիրուն մարդ ես, էն ա...

—Ձեր գեղըմը լաւ հարսներ կա՞ն.—բեխերը սրելով հարցրեց «շլապկաւոր» Ճեկոն։

Ի՜ւֆ, շա՛տ լաւերը կան, ա՛ղայ։

—Եզո՞յ։

—Եզոն էն ա...

—Էտա լաւ ա.—պատասխանեց անմիտ Ճեկոն։

Ձիաւորներն առհասարակ հպարտ են լինում, բայց նրանց հպարտութիւնն աննկարագրելի էր, մանաւանդ իրենց ոչնչութեան հետ եթէ համեմատէինք։

—Դա՛հ, վա՛յսկայ.—ասում էին ու ձեռի ափով ձիերի պարանոցին խփում, զանգուներով կողքները խուտուտ անում և հպարտութեամբ մտրակում, սանձները ամուր քաշում, կարծես ուզում էին կենդանիներին էլ հպարտացնել։ Ձիերը կատաղած վիզները ետ կռացնելով, քափ ու քրտինքում մտած, զօրով շնչելով կնգղի-կնգղի էին անում (կրընգրնթաց էին գնում), ծառս-ծառս ըլում և ոտներն այնպէս խիստ կերպով քարերին խփում, որ ետևներից ամպի նման փոշի էր բարձրանում։ Դրանցից գիւղացիների նկատած «շլապկաւորը» հեծած էր կարմրաւուն ձի, հագին ունէր կապոյտ վերնաշապիկ, որի ափերի շուրջը և պարանոցը զարդարուած էր գոյնզգոյն թելերով՝ նաշխած ասեղնագործով. դրա վրայից մէջքին կապած ունէր ծայրերը փնջով թելի հիւսած գօտի (կիստի), ոտներին հագել էր ճտքաւոր մինչև ծնկները քաշած կօշիկներ, իսկ գլխին կիզուրուկաւոր գլխարկ, որն արդէն դէն ձգելու բան էր դարձել, բայց ճակատին դեռ կպցրած էր մի դիլըում խնձոր, որի գո-

րութեամբ կամ պաշարմամբ էլ նա իրեն պէտք է մի բանի նմանեցնէր տգէտ ամբոխի աչքում և որով միայն ահ ու երկիւղ կարելի էր տալ քեասիբ գեղջուկներին...։ Գեղջուկները նոյն իսկ «շլապկից» վախենում են, ուր մնաց թէ այդ «շլապկան» աստղաւոր լինէր։

Ճեկո աղի հետ խաղսով արշաւող ձիաւորներից երկուսն էլ, այսպէս ասած, «եասաուլի հագուստ *) էին հագած, այսինքն՝ անօյմա, նոր ձեւի երկար գետնագործ կամ տափագործ չուխա, Գանջի չուստեր՝ զանգալներով (զանգապանակ), որոնց մէջ էին քաշել իրենց պապական լայն շալուարի փոխկերը, մէջքներին կապել էին արծաթի գօտի, գլխներին դրել չերքեզի գլխարկ, մի խօսքով հագուստ, որի մէջ չտես մարդն անշուշտ պիտի հպարտանար։ Բայց նրանց հպարտութեան շուքն աւելացնում էին մանաւանդ վրաների զէնքերը, այսինքն՝ կրծքներին կաշուի լայն «պատրանդաշ», այնալի հրացան՝ կողքնուվայր կախած և թուր ու դաբանչէն գօտիները խրած. այդ բոլորը ձիերի արագ-արագ շարժուելուց իրար դիպչելով զրնգզրնգոցի ձայներ էին հանում. արեգակի ճառագայթներն էլ հակառակի պէս զէնքերը շողշողացնում էին և նրանց արշաւանքի եռանդը կրկնա-

*) «Եասաուլի հագուստը» մանաւանդ թուրք գիւղացիների ամենագոված հագուստն է, որ պարսկական ժամանակից է մնացել։

պատկում, գիւղացիներին նախապաշարում։ Հեռուից նայող օտարը, անծանօթը, տեսնելով նրանց արշաւանքը, տեսք ու կերպարանքը, կը կարծէր, թէ պատերազմ գնացող հայրենասէրներ են և կամ քաջամարտ պատերազմի յաղթանկը տարած, թշնամուց յափշտակած դրօշակով վերադարձող կորիճ ու ազրայիլ զինուորներ են, իսկ յանձին ծանօթը, ցաւելով պիտի ցաւէր այդպէս շուտ վարակուող թշուառ արարածների վրայ, որոնք իրենց մայրենի լեզուն թողած, չիմանալով անգամ, օտար լեզուի բառեր խառնելով խօսակցութեան մէջ, իրենց միքանի օր առաջ ունեցած դրութիւնը չյիշելով, որև է Շեկոյի հետ ուզում էին ցոյց տալ իրենց հարևաններին, հարկի, կոռ ու բէգեառի լծակիցներին, որ իրենք այն չեն, ինչ էին առաջ, մի խօսքով մարդ չէր իմանում ինչպէս ազատուէր իւր արդար բարկութիւնից։ Անիծուած «շլապկաւորը» և իր հետի օդի դէմ պատերազմող երկու օյին-բազ թշուառները նոյն գաւառից, նոյնպիսի գիւղացի մարդիկ էին, ինչպէս նրանց նայող գիւղականները, որոնց մտքից, մինչև նրանց մօտենալը, հազարաւոր երկիւղալի բաներ էին անցնում։ Միքանիսը նրանցից կարծում էին թէ պրիստաւ է գալիս, որ այսինչ հարկը կամ բէգիառն առնի, միւսները կարծում էին թէ անտառապետն է, գալիս է թագցրած գերանները տեսնի, պատժի... Իսկ եկողներն ո՛վ գիտէ, թէ ի՛նչ հրէշաւոր ծրագիր ունէին մտքներումը, որ ղազախի հին, պարսկական տգ ղ

սովորութեամբ վարուեն խեղճ և անմեղ գեղջուկ ռամիկների հետ, որոնց վզի լուծը յաւիտեան ծանր է..։ Վերջին երկուսը, եասաուլները, «շլապկաւորի» աննշան պատիւը գիւղացիների աչքում բարձր պահելու համար զանազան անմիտ, զզուելի և «սովորած» ցոյցեր էին անում։ Նրանք արդէն մօտեցան ամբոխին՝ Գիգոի կալին, և ահա բալաբանչին թափուկ տուեց իւր ձին, ջխտլափու քշեց դէպի «շլապկաւորը» եկող իւր համագիւղացու բեռնաւորուած սայլը և մտրակը ցոյց տալով, խեղճ քեասիբի ահագին գոմշասէլը ճանապարհից աղմուկով դուրս հանեց, որ գռիլակաւորն (կնճիթաւորն) աւելի հանգիստ անցնի լայն ու ազատ ճանապարհով, այն ճանապարհով, որի շինութեան վրայ սայլապան գեղջուկը հող ու քար փորելով մաշել էր իւր ձեռքի մէջը. այդ արաւ անմիտը, ապա ձիու ագդրը տաքացրեց—մտրակելով հասաւ կալում կիտուած գիւղականներին, որոնք արդէն չովուշի կարգադրութեամբ ճանապարհի երկու կողմը կանգնած՝ սպասում էին իրենց կարծած «մենծաւորին»։

—Հը՛, վե՛ կացէք, կաղնեցէք, մենծաւոր ա գալի. էհէ, էտ ո՞նց ես կաղնել, ուզըմ ես՝ տենայ կաշիդ պուկե՞...,—ոտը մի քիչ անկարգ դրած գիւղացուն սպառնաց բալաբանչին։

—Փափախնիդ վե՛ կալէք.--հրամայեցին եասաուլները։ Ամենքը գլխաբաց կանգնեցին։

—Գլուխ տուէք։—Գիւղացիները խոնարհ գըլուխ տուին, իսկ «շլապկաւորը» խոժոռած դէմ-

քով, խէթ ու պզլիկ աչքերով, ուռած, փքուած հայեացքով նայեց գիւղացիներին, որ զգան թէ նա էլ մի բան է, ապա գոռոզաբար հարցրեց։

— Ո՞վ ա քեօխվի պամբօշնիկը։

— Ե՛ս եմ, ա՛ղայ.— մահակը ձեռին առաջ վազեց Մծուտիկը, սուտ օգնական դառնալով։

— Ինձ հըմար տեղ, սենեա՛կ էք պատրաստել։

— Հրաման քե, ա՛ղայ, համե՛ցէք.— ցոյց տուեց նա Եազախուրու սենեակը։

— Մտի՛կ արէք, էլ վախտ ուրանըմ էլ թէ եկողներից խաբարութին չունի, հմի օթախ ա չըհանց տալի.— նկատեց այն գիւղացին, որն առաւօտեան քեօխվի մասին խօսակցութեան առիթ եղաւ և վարժապետին պաշտպանեց։

Շլապակաւորը պատրաստուած սենեակի դրանը մօտեցաւ։

— Ազի զանգուն բռնէ՛ցէք.— հրամայեց բալաբանչին. գիւղացիները զանգուն բռնեցին և նա չըլխկալէ իջաւ ձիուց և դառնալով Մծուտիկին, ասաց։

— Ա՛սա ինձ, մի ինչոր վարժապետ կայ, ձեր գեղըմն ՚ա նա՞։

Հրաման քե, ա՛ղայ.— իսկոյն և եթ պատասխանեց Մծուտիկը, իսկ զգոյշ գիւղացին մատը կըծեց.— սրանըմ մի բան կայ.ա սաց։

— Էտ ի՞նչ ա ասըմ, ա՛ քե մատաղ.— հետաքրքրութեամբ հարցրեց քեօխվի իսկական օգնա-

կան Կարօն, չը հասկանալով «շլապկաւորի» լեզուն, որը համարեա թէ ռուսերէն էր։

— Աղէն ասըմ ա, օ՛թախ էք հըզըել ինձ համա՞ր, վարժապետը ձեր գեղացի ա՞, ըստեղ ա՞.— թարգմանեց Մծուտիկը, որ մի քանի տարի Թիֆլիս մնալով մի քանի բառ ռուսերէն «շալթայ-բալթայ» գիտէր։

Շեկոն շուռ եկաւ և նազ ու քիւզով մտաւ պատրաստուած սենեակը. ամբոխը մնաց դրանը և ոչ ոք չէր համարձակւում ներս մտնել, բացի Եազախուրուց, Մծուտիկից, գզրից և եասաուլներից։ Վերջինները ձիերը յանձնեցին գիւղացիներին և դեռ սպառնալով էլ նրանց, ասացին։

— Ազի ձին լա՛ւ թիմարեցէք, գարի, խոտ, դարման շա՛տ ածեցէք.— ասացին և իրենք դարձան, ուզում էին սենեակ մտնել, մի գիւղացի ետևներից ձայն տուեց կամաց.

— Բա՛լաբանչի, բա՛լաբանչի…

— Հէյ։

— Էտ ի՞նչ մարդ ա։

— Դոխտո՛ւր ա։

— Բա էտ ո՞ւր ա եկել։

— Մարդ դի բռնիլ տալ.— պատասխանեց բալաբանչին և աւելի երկիւղի մէջ ձգելով նրանց, ինքն արագ-արագ մտաւ սենեակը։ Գիւղացիների մէջ քչփչոց ընկաւ, ամենքն անհանգիստ էին. նրանք մի կերպ բալաբանչուն կրկին դուրս կանչեցին և հարցրին.

—Ա՛յ տղայ, էտ ի՞նչ ասեցիր, ո՞ւմ դի բռնիլ տալ, էտ ի՞նչ բան ա, ընչի՞ հըմար, ասա տենանք, սըրտներս աՀ գցեցիր, ախր մենք կտորւածքի ենք.—վախվխելով հարցրին գիւղացիներից մանաւանդ շատ վախկոտ մարդիկ, որոնք նոյն իսկ շլապկի անունից էլ էին վախենում: Բայց ի՞նչ էր դրա պատճառը...

—Վախիլ միք, ձեզանից ոչովի բռնելու չի:

—Բա ո՞ւմ:

—Վարժապետին.—վերջապէս պատասխանեց նա:

Երկիւղածները փոքր ինչ հանգստացան:

—Վարժապետին ընչի՞ հըմար դեն բռնիլ տալ, ա՛ քե մատաղ, նա ի՞նչ ա արել:

—Դոխտուրներից կաղէթըմը բաներ ա գրել:

—Եդո՞յ:

—Եդոն էն ա, որ վրեն չարացել են, հմի էս դոխտուրը եկել ա, որ նրանց տունը, դուռը, հաեաթները տենայ թամուզ ա՞, թէ ոչ:

—Եդո՞յ:

—Եդոյ էն ա, որ կեղտոտ լի, վարժապետի կռները կապիլ դի տալ, եասաուլի առաջն անիլ՝ ուղարկիլ..

—Մենակ վարժապետանց հայաթնին դի տենա՞լ, թէ՞ մէկէլներինն էլ:

—Չէ, մենակ նրանցն ա տենալու:

—Հմի՞ դի տենալ, թէ էգուց:

—Հէնց էս ա, դուս ա գալի, որ գնայ տենայ:

—Վա՛շ, դրա եկած ճամբեն նզովւի, մենք գիտենք ոչ, որ դա լաւ բանի չի եկե՞լ.—ասացին միքանի երիտասարդներ ու նստեցին քարակոյտի վրայ:

—Տղե՛ք, էս ի՞նչ փիս բան ըլաւ—վարժապետին բռնիլ դեն տալ, ափսո՛ս տղայ, թի՛ւ հա՜.—ցաւակցելով ասաց միամիտ գիւղացիներից մինը:

—Էտ չիմ քեօխվի արած բան ա. ես բա՛որ ձեզ ըռաւօտն ասըմ ի քեօխվեն կըտաղած ա գընը՞մ.—պատասխանեց Խեչոն:

—Անպատճառ քու ասածն ա, դա սարքո՛վի բան ա. զուր տեղը Թէոսին գեղիցը դուս արաւ նա ու էտ մհանովը էս եկողի հետ հալբաթ բան սարքեց:

Այդ միջոցին բալաբանչին դուրս եկաւ և գըզրին ասաց, որ աղայի համար մի քանի վառիկներ ժողովի, ճաշ պատրաստի: Խեչոն հարցրեց նրան.

—Բալաբանչի, Թևոսի տկարութինը խուլեար է՞ր:

—Չէ.—ասաց նա ու տուն պրծաւ կրկին:

—Թի՛ւ հա՜, բռնիլ դեն էլի՜..., կրկնում էին շատերը:

—Ա՛, աստղ կալնող բալաբանչին ասեց, դուք էլ հըւատացե՞ք. մգեար վարժապետը հաւի ճուտ ա, որ բռնիլ տա՞ն, սա՛րսաղ-սա՛րսաղի տղեք.., ամօթ էլ չեն քաշըմ:

—Բալաբանչին ի՞նչ ասեց, բի՜ձայ, որ տհենց խօսըմ էք.—հետաքրքութեամբ հարցրեց հանդից

նոր գիւղամէջ եկող մի մարդ, որն այդպիսի անորոշ բաներ էր լսում։

—Ասեց թէ որ վարժապետանց դրանը դուխտուրը մի հաւի ծեռտ էլ տենայ, բռնիլ դի տալ նրան։

—Մթամ մեր գեղըմն ո՞ւմ տներն ա նրանց տանիցն խստակ, որ վարժապետին հաւի ծռտի հըմար բռնիլ տայ։

—Ա՛, նա եկել թէ իստակութե՛նի ման գա՛յ։

—Բա՞։

—Էտ քօռը վարժապետի ու նրա հօր հետ լաւ չի, էն ա, ասել ա հաշիր խուլեարի հըմար տէրութենիցը խիստ պատիճնի կայ, մի մհանայ անեմ մրդկերանցը բանի մէջ գցեմ, վնաս տամ էլի.—նկատեց դարձեալ Խեչոն, որ լաւ տեղեակ էր քեօխվի մտնիչ բնաւորութեան, որի յարաբերութիւնը, մանաւանդ լրագրի մէջ իւր մասին հրատարակած մի լրի համար, վատացել էր ուսուցչի հետ։

—Բաս էտ ա, ասա բռնիլ դեն տալ էլի։

—Օյիննե՛ր դեն անիլ, օյիննե՛ր. վարժապետին ո՞նց դեն բռնիլ տալ, եա ո՞վ կարայ նրան բռնի, դուխտուրն ի՞նչ ըրաւունք ունի որ մարդ բռնիլ տայ.—ասաց Խեչոն, որին ուսուցչի յարգողներից շատերը հետեւեցին։

—Ո՞վ դի բռնիլ ասեցէ՞ր.—կրկին հարցրեց մի ուրիշը։

—Եկողն, ո՞վ, գիդըմ չե՞ս.—վստահութեամբ

պատասխանեց քեօխվի բնաւորութեան որոշ յատկութիւնն ունեցողներից մինը։

—Ի՜... գե՛տը քե տանի, խելքդ էտ ա՞. ա՛, եկողը վարժապետիցը մեծ ա՞։

—Բա նրա թայն ա՞։

—Խե՞, ի՞նչ ա լել, որ նրա թայը չի։

—Նա վարժապետիցը շատ կարդալ գիդա՞յ։

—Բանը կարդալը խու չի՛։

—Բա ի՞նչն ա։

—Խե՞, ղաքովդ որ անցկացաւ տե՛հար ոչ ինչքան չին ու փունջ էր ստացե՞լ. վարժապետն էնղայդի մեծութինը ո՞րդեան ունի։

Միամիտ և նախապաշարուած գիւղացին կարծում էր, թէ «շլապկաւորի» ասեղնագործ հագուստի զունաւոր նախշերը բոլորն արտօնաւոր նշաններ են...

—Իմ խելքովը, վարժապետը դրանից մեծ մարդ ա.—ասաց ուսուցչի բռնուելուն չհաւատացողը։

—Ո՞նց ա մեծ։

—Նհենց ա մեծ, որ ով ուզըմա դուխտուր, ընջներ, պրիստաւ, նաչալնիկ դառնալ, առաջ ուսումարան ա գնըմ, վարժապետիցը բան սովորըմ, եդոյ մարդ դառնըմ...

—Չէ, սղալ ես, բռնե՛լ ա տալու.—կրկին պնդեց նախապաշարուածը։

—Կարկաժը հէնց տեղիցը կէս կանենք որ... էս սաղ գեղի վարժապետին նա ո՞նց դի բռնիլ մի դարդակ բանի հըմար.—ասաց մի սրտոտ երիտա-

սարդ և պատրաստ էր հակառակ դէպքում...

Այդ վայր ի վեր խօսակցութեան միջոցում մեր Շեկոն սենեակում թախտին, մի պատռած մութաքի վրայ թինկը տուած խորհուրդ էր անում Եաղախուրու, Բրուտի, Մծատիկի և ուրիշների հետ: Նա բաւական հանգստանալուց յետոյ, դուրս եկաւ մի արտակարգ շուքով: Եաղախուրին... Բրուտը և ուրիշները համարեա թէ իսկ աղայի պատիւ էին տալիս նրան:... Ստիպուած գիւղացիները կըրկին ոտի կանգնեցին: Շեկոն, մի մանրունք ծախող հրէայի դաւթար ձեռին, ուղիղ գծով, եասաուլների և այսպէս ասած՝ քեօխվայականների հետ գնաց վարժապետանց բագը, սկսեց դռներին, կտրներին ման գալ, դիտել ու զարմացնել տգէտներին: Վարժապետն այդ ժամանակ իրենց այգումն էր, իսկ հայրը գիւղամիջում. տանը միայն նրա եղբայր Միքայէլն էր:

—Միքէլ, Միքէլ.—կանչեց Բալաբանչին ուսուցչի եղբօրը:

—Հէյ, էտ ո՞վ ես. - հարցրեց նա սենեակի մէջ:

—Ըստի արի, ըստի:

—Միքէլը դուս եկաւ թէ չէ, Շեկոն բարկացաւ նրա վրայ:

—Էս ինչ կեղտոտութիններ են.—Միքէլն իհարկէ ոչինչ չը խօսաց, որովհետև չգիտէր նրա ով լինելը: Բալաբանչին Միքէլի ականջին փսփսաց՝ առանձնանալով մի կողմը:

—Վարժապետը տանն ա՞:

—Չէ.—պատասխանեց Միքէլը:

—Ո՞րդեղ ա:

—Բաղըմն ա:

—Եբոր գայ, ասա տուն մտնի, դուս չը գայ: Էս աղէն բռնիլ, կռները կապիլ դի տալ՝ ղարկիլ...

—Վարժապետին ընչի՞ հըմար դէն բռնիլ, աղա.—վիրաւորուած ձայնով հարցրեց նա:

—Կաղէթներըմը աղէնոնցից փիս-փիս բաներ ա գրել, չարացել են վրէն...

—Չարացել են, թող սառը ջուր խմեն:

—Կա՛մաց ասա, կը թակի...

—Կթակի համա թըւանքով կրա՛կ կտամ... դու էլ՝ էտ ա ինձ ասեցիր, ուրիշի չասես, թէ չէ վարժապետիցը պրծնիլ չես....—վստահութեամբ ասաց Միքէլը և հեռու կանգնեց: Հակառակորդները գիւղում արդէն տարածել էին և միամիտներն անհամբեր սպասում էին վարժապետի բռնուելուն: Նրանցից շատերը նրա այգում լինելը չիմանալով՝ մինչև անգամ կարծում էին, թէ տանը թագնուել է:

Շլապկաւորը գլխարկն աչքերը ձգած, դաւթարը ձեռին, շարունակ շրջում էր վարժապետանց հաեաթում և մատիտով նկատողութիններ գրում: Գիւղացիք կալերից, կտրներից նայում, տեսնում էին նրա միմոսութիւնները: Շլապկաւորը, ոտները տափը թակելով, նկատում էր, որ սագերը դռներին, կալում և գոմի շէմքում ծռտոտել են, որ օջախից քաշած մոխիրը կտուրն է ածած..: Նա կտրից իջաւ ներքև, մտաւ թաւլեն, կամ գոմը,

ուր վարժապետանց ձին և միքանի լծկան եզն ու գոմէշ կային, որոնց աղբը, Թրիքը, Միքէլը քերել, սրբել աղբածակի տակն էր արել, որ երեկոյեան դէն անի։

— Ֆու, սա ինչ կեղտոտութին ա, այստեղ կանչիր տիրոջը.—Ճեկոն հրամայեց եասաուլին։ Միքէլը եկաւ։ Գլխարկն աչքերն ընկածը սաստիկ բարկացաւ նրա վրայ, բայց չհամարձակուեց ձեռք տալ, որովհետև Միքէլը միքանի սուր-սուր պատասխաններ տուաւ նրան։ Նա այնտեղից, որսի ման եկողի... նման, դուրս եկաւ և սպառնալիքներ տալով, կրկին գնաց Եաղախուլուի սենեակը, ուր իւր արած նկատողութիւններն սկսեց ցուցակագրել, ապա Եաղախուլուն և Մծատիկին ուղարկեց նոյն տեղը, որ գնան աղբը տեսնեն ու գան որպէս վկաներ՝ ստորագրեն իւր գրած «պրոտոկոլին»։ Վարժապետն այգուց դուրս եկաւ։ Միքէլն շտապով առաջ գնաց և ամեն ինչ յայտնեց նրան...

—Մի՞թէ դուք էլ հաւատացիք այդպիսի անմիտ բաներին, ինձ ինչու համար պէտք է բռնեն.— ժպտալով ասաց վարժապետը.—բայց ո՞վ է այդ աղան։

—Գիդըմ չեմ, ասըմ են դոխտուր ա, ամա չլխս կըտաղած էր, մեզ շորափի տակ դի գցիլ։

—Ինչու, ի՞նչ տեսաւ։

—Ոնչի՜չ, անտէր ղազերը դռներին ըստի ընդի մ՚քիչ ծռտոտել ին։

—Հէնց դրա համա՞ր։

—Չէ։

—Հապա՞։

—Թաւլեն էլ մտաւ։

—Յետո՞յ։

—Ընդի էլ ձիու փթիր տեսաւ։

—Վրէդ հօ չը բարկացա՞ւ։

—Բա ի՞նչ արաւ։

—Ի՞նչ ասաց, հայհոյե՞ց։

—Ասեց ընչի՞ էք թողըմ, որ ձին ու գոմէշներն էսքան փթրըշմ, թըքըմ են։

—Դու ի՞նչ ասացիր։

—Ես էլ ասեցի ա՛ղայ, դոխտուր մարդ ես, դէ դու մի հնարք շհանց տու ձիու փթրանցքը կապենք, որ կրենայ ոչ փըթրի, թէ չէ մեր երկըրմը ձիանները փթիրը փորներըմը չեն պըհըմ...

—Յետո՞յ ի՞նչ ասեց։

—Ետոն էն ա, որ փոստալնին (ոտնամանները) տափը թակեց, քեաքեալամիշ ըլաւ, ուզեց խփի, էլ չը խփեց, մտը վրես թափ-թափ անելով թողեց գնաց, ամա ապլին քե վրայ շատ չարացել ա։

—Ինչու։

—Ասըմ ա կազէթըմն էտղայդի մըդկերանց մասին ընչի՞ ա բան գրըմ, որ դիւշմնանըմ են հետներս...

—Է՜... ապլին ի՞նչ գիտէ, թէ իմ մտքինն ի՞նչ է....—պատասխանեց վարժապետը։

Երկու [illegible]եղբայրներն այդպէս խօսելով [illegible]հէնց

իրենց տան շէմքը հասան թէ չէ, մէկը ետեւներից ձայն տուեց։

—Մի՛քէլ, Մի՛քէլ։

—Հէ՛յ։

—Հետինդ վարժապետն ա՛։

—Հա՛։

—Աղէն հօրդ կանչել ա իրան մօտ, վարժապետին էլ ա կանչըմ, ասա գայ։

—Ո՞վ է երանի այդ աղան, որ ինձ հետ էլ գործ ունի.—ինքն իրեն ասաց վարժապետը, որի ականջին գիւղում անընդհատ աղայ, բէգ, մեծաւոր և այլ անուններ անախորժ կերպով դիպչում էին շարունակ։ Վարժապետը դեռ չէր իմանում կանչողի ո՛վ կամ ի՛նչ մարդ լինելը, գիւղացիները միայն աղայ ու դոխտուր էին անուանում. նա չէր էլ կարծում, որ եկածը լաւ մարդ լինի, բայց որովհետեւ տգէտ ամբոխի մէջ աննպաստ լուրեր էին տարածուել, վեր կացաւ, ժողովրդի միջով անցկացաւ, գնաց նրա իջած սենեակը։ Գիւղացիք շարունակ նրա ետեւից շշնջում էին։

—Ա՛, էտ մարդը խու գողութին, մարդասպանութին, պէզութին չի արել, կա՛զէթ ա գրել, դրան ընչի՞ դեն բռնիլ...

—Ա՛ղպէր, զարմանք բան ա էլի։

—Ո՞վ գիտայ, բալի ուրիշ բան կա՛յ.—իրար ետեւից կրկնում էին գիւղացիները։

Գ.

Եռդախուրու անսուաղ սենեակի մի պատի տակ, վառարանին կից, դրուած էր գիւղական խալիչով ծածկուած թախտը, որի մի կողմը դարսուած էին Փերշալ Շեկոյի իրեղէնները՝ խունացած ու կեղտում մտած գլխարկը, մի քանի տեսակ կոճակներով՝ բամբակը պատռուածքներից երևեցող վերարկուն, մի խուրջին, ձիու թամքը, մտրակը և այլն։ Միւս պատի տակ, լուսամուտի առաջ դրած էր համարեա թէ սեղանի նման մի բան, որի վրայ շարուած էին մի քանի մեծ ու փոքր դեղօրայքի շշեր ու փաթթած թղթեր, իսկ սեղանի առաջ՝ քամակը մարդկանց կողմն արած, ոտն ոտովը ձգած նստած էր Փերշալ Շեկոն, նրա ետեւը կանգնած էր թուրք եասաուլը, կողքին Ղազախի նշանաւոր լօթի Արևը-Հատածը։ Փերշալ աղան գլուխը խոնարհած էր, իսկ գիւղացիք լուռ նայում էին նրան։ Սենեակի պատուհանները բաց էին և դրսից կոկորդային ձայներով քչփչոց էր լսւում։

—Ա՛, տեսնըմ էք, վարժապետը ներս մտաւ, ըսկի ա՛սա թէ վրեն մտիկ են անը՞մ...

—Վարժապետն էլ սուս նստեց, էտ խի՞ դհէ արաւ։

—Տենաք վարժապետը վա՛խըմ ա։

—Ընչի՞ց դի վախիլ։

—Վախեցողը նհենց ռանդն ըռանց թողնելու կը նստի...

Ուսուցիչը նստած էր թախտի վրայ և սպասում էր, որ Փերշալը իւր գրելիքը վերջացնի, բայց ինչպէս նկատելի էր Փերշալի դրութիւնից, չէր կարողանում ուզեցածը գրաւոր կերպով կարգին արտայայտել. Նա շարունակ գրում ջնջում էր՝ ինչպէս վա՜տ կարդացող տէրտէրը կամ տիրացուն եկեղեցում ժողովրդի առաջ աւետարան կամ գիրք կարդալիս, տեղները նեղացած ժամանակ, միքանի բառ կամ նոյն իսկ տառ կարդում ու շուտ-շուտ հազում, քիթը սրբում են մինչև որ գիր կապեն՝ ծածկելով իրենց տգիտութիւնը, այնպէս և մեր Փերշալն էր անում, օրինակ՝ նա երբ գրելի բառերը դժուար էր արտաբերում, ճակատի կնճիռները շատացնում, մազերը փայփայում էր, շէկ ու խղոտ բեխերը արագ-արագ սրում, պտտում, բլիբիզտու կոթեր էր շինում և կամ ծխախոտ փաթթում գոռոզութեամբ ծխում-ծխում ու դունչը դէպի առաստաղն էր ցցում «փո՛ւ, փո՛ւ փի՞ւ» անում, սենեակը ծխով լցնում, անկարգ թքում-կեղտոտում յատակը, նորից գրիչ վերցնում ու բզբզում։ Իսկ պատուհանի առաջ, դրսի կողմից, դարձեալ շշնջում էին գիւղացիք։

—Ա՛, էտղադար էտ ի՞նչ ա գրում։

—Գի՛դըմ չեմ, աղպէր, ես էլ եմ ըրմացել։

—Կարա՛պետ ապին ղա՛ւ կիմանայ՝ պամբօշնիկ մարդ ա, հըրցրէ՛ք.—ասաց մէկը մատնացոյց անելով քեօխվի օգնականին, որը դուրս եկաւ սենեակից հէնց պարծենալու մտքով։

—Կա՛րապետ ապի, էտղադար էրգեան էտ ի՞նչ ա խզմզըմ։

—Պա՛հ, պա՛հ. պա՛հ. շա՛տ զոռ բան ա գըըըմ, էն ա վարժապետին զո՛լ դի ղըկել։

—Տհէ զոռ ընչի՞ մասին ա գըըմ։

—Ձիու փթրի մասին գանգատ ա գըը՛մ, ամա ջլի՜ս թիւնդ ա։

—Ա՛դա, բա ձիու փթրի գանգատն էտղադար էրգեան ա՞։

—Մ՛ենակ ձիունը չի, ուրիշ էլ կայ հետը։

—Է՛լ ի՞նչ կայ։

—Ղազերի ծեռտն ու գէօմշի թրիք-մրիքը՝ չիմ իրար ա խառնել։

—Վի՜ի՜. ղո՛րթ քե մատա՛ղ։

—Իմ արևը վկայ.–երդուեց Կրպոն։

Փերշալ Շեկոն հազիւ վերջացնելով՝ թերթը բացեց, մէջքը պատին յենեց և հպարտութեամբ գրածին նայեց-նայեց ու յանձնեց Արևը-Հատածին, որ արտագրի։

— Վօզմի ՛ի պերեպիշի.—ասաց նա և ոտը կոտրած աթոռի վրայից շուռ եկաւ, ապա կանգնեց, թախտին մօտեցաւ, ճխլուած գլխարկը դրստեց՝ աստղը նայողների կողմն արաւ, որ վախկոտների ուշադրութիւնը գրաւի, բայց յանկարծ կարմրեց և շփոթուեց.—Այս դէպքում նրա դրութիւնը շատ վատացաւ։—

—Օ՜, բարև Շեկո.—թախտի վրայից վեր կենալով ուսուցիչն ընկերաբար բարևեց նրան։ Նա

հասակակից, հայրենակից և վաղուց ծանօթ էր ուսուցչին. չորս տարի էր միայն, որ իրար չէին տեսել: Ուսուցչի բարեկամաբար վերաբերուելն ընդհանրապէս ամենքի համար տարօրինակ երևաց. նրա հակառակորդները սաստիկ տխրութիւն զգացին. նրանք կարծեցին, թէ ծանօթութիւնը բան է խանգարելու:

— Ըհը՛, վարժապետին ճանանչ դուս եկա՛ւ. — ասացին նրանք:

—Պա՛, հրէ՛, հրէ՛, ձեռը չի տալի:

—Մենծաւոր մարդ ա, լայեաղ չի անըմ. — վրաբերեց Կրպոն:

Փերշալ Շեկոն իւր ծանօթին բացի ուրանալուց, ուրիշ հնար չգտաւ. նա աշխատեց այնպէս ձևանալ, որ իբր թէ իւր կեանքումն ուսուցչին տեսած չի: Նա չէր էլ իմացել, թէ ուսուցիչը իւր ծանօթը դուրս կգայ, միայն լսել էր, որ լրագրում մէկը իրենց մասին աննպաստ լուր է հրատարակել...

Միւս կողմից արդէն անպատուել էր ուսուցչի եղբօրը, հօրը, սպառնացել էր՝ բանտարկել, կռները կապել, մեծ տուգանք առնել տալ և այլն այդպիսի տգէտ մտքեր ու յիմարութիւններ: Եւ բացի դրանից, նա կրքից ու կաշառքից կուրացած ուզում էր քեօխվին արած խոստումը կատարել, Խուրի-Մուրինի առաջ իր և նրանց փոխադարձաբար արած պատիւը պահել և վարձատրել նրանց իւր անտակ տգիտութեամբ, որ արաղի... խաղալիք

էր դարձել: Ուսուցչի բարևելու րոպէին նա իրեն հաւաքեց՝ բոլորովին անծանօթի և մեծ իրաւունքի տիրոջ դիրք տալով, խոժոռված դէմքով պատասխանեց.

—Եա վաս նէ զնայիւ, տի կտօ տօկօյի, բերեգիս:...

—Շեկո՞, ա՛յ տղայ, դու ինձ չես ճանաչո՞ւմ. — զարմանքով հարցրեց ուսուցիչը:

—Նետ, նետ. նէ զնա՛յիւ, ի զնա՛տ նի խօչու...

—Ա՛յ տղայ, դու Շեկոն չե՞ս, որ Թիֆլիսում...

—Եա գօվօրիւ նէ պօնիմայիւ վաս. իլի պօրուսկի գօւօրի, իլի վօ՛ն...

—Ա՛յ տղայ, ախր դու ինքդ էլ ռուսերէն չգիտես, զոռի շալթայ-բալթայ ես անում, ինձանից՝ ռուսերէն խօսա՞լ ես պահանջում:

—Դա՛, դա՛, վի դօլժնի սօմնօյի պօրուսկի գօվօրիտ...

--Ըհա՛հա՛ հա՛, ա՛յ տղայ, ծիծաղս գալիս է, արի դու հանաքներ մի՛ անիլ:

—Եա նի շուտիւ, վաս նի զնայիւ...

—Է՛հ, յիմար, քեզ հետ աւելորդ է խօսալ, բերանիցդ էլ սարսափելի հոտ է գալիս. — ասաց ուսուցիչն և ուզում էր հեռանալ չնչին մարդուց. նա այժմ էլ այնպէս ձևացաւ, որ իբր թէ չի էլ իմանում, թէ նա իւր պահանջած մարդն է, հարցրեց հեգնաբար.

—Քե՞մ դըր բու, օն սումաշեդշի, շտօ՛լի...

—Ա՛ղայ, բու օ վարժըբէթ դըր, հանսընը սան

ըստադըն (սա այն ուսուցիչն է, որին պահանջեցիք).—առաջ կանգնեց թուրք եասաուլն և ասաց միամտաբար։ Իսկ Փերշալը կրկին շուռ գալով դէպի Եադախուրին, հարցրեց նրան․

—Էտը տո՞տ ուչիտել, կոտօրի վը կադէթախ պիշետ...

— Մուստաֆայ, ասա հա՛, հա՛. — վրադցեց Խուրին։ Եասաուլ Մուստաֆեն պատասխանեց «Դա՛, դա՛, տօ՛տ, տօ՛տ։

—Տղէ՛ք, էտ Փերշալը սարսաղ ա.—երկար լռութիւնից ու դիտողութիւնից յետոյ ասաց տէրացու Մաթոսը։

—Ո՞նց, տէ՛րացու ջան։

—Խե՞, տե՛նըմ չէ՞ք։

—Տենը՛մ ենք, համա մանըմ չենք, ռըսեվար ա խօսըմ։

—Ես էլ հէնց դրա հըմար եմ ասըմ սարսաղ ա է։

—Խե՞, ռըսեվար խօսողը...

—Չէ, բանը դրանըմ չի, բանը նրանըմ ա, որ համ ասըմ ա հայերէն չը գի՛դամ, համ էլ վարժապետի հայեվար խօսալուն ռըսեվար ա ջուղաբ տալի... Այդտեղ և վերևը կալում, ուր վարժապետը ամբոխը գլխին ժողոված խօսում էր, գիւղացիների տրամադրութիւնը դէպի անբարոյական Փերշալը փոխուեց․ Նրանք մտածում էին մինչև անգամ մահակներով զարկել նրան։ Փերշալը սաստիկ վիրաւորուելով ուսուցչի արհամարհանքներից,

բայց այնուամենայնիւ իւր դիրքն առ ժամանակ պահպանելու համար, սկսեց չէքմէքը յատակին զարկել և բարկանալ ասելով․

—Եա եմու պօկաժու, եա բուդու եմու արէս-րէս-տօվա՛տ... դա՛, դա՛, եա զնայիու....—այդպէս ասելով՝ գլխարկը մէկ ծածկում, մէկէլ կրկին վերցնելով, շուտ-շուտ ոտներին ու պատերին մտիկ անելով չափում էր սենեակը։

Նրա բարկութիւնն աւելանում էր մանաւանդ, երբ գիւղացիներից ոմանք լուսամուտից կամ դրան ճեղքից շուտ-շուտ ներս էին ծիկրակում ու ետ քաշւում։ Իսկ Եադախուրին, Բալաբանչին և ուրիշները հանգստացնում էին Փերշալին ասելով․

—Ա՛ղայ, էտ շատ լաւ ըլաւ, որ քե անպատիւ խօսք ասեց, մի արզա էլ անպատւութենից հըմար գրի, մենք էլ ձերք կը քաշենք, վկայութին կտանք տեղը։

—Անպատճառ, անպատճառ, դա՛, դա՛...

Այդ միջոցին գզիր Կըպոն կանչեց պատշգամբի նման մի տեղից․

—Սաքո՛ Սաքո՛։

—Հէյ։

—Ա՛դա, աղի ճուտերը չ'եփուեցի՞ն։

—Է՛փել են, էփե՛լ։

—Ջուանը՞, ձուաձեղը՞...

—Է՛փել են, էփե՛լ, էսա բերըմ ենք, սուփրէն գցի։

—Վա՛րժապետ, էն սարսաղ դրաստի բրատը

հրէ հօրդ ուշունցնի ա տալի.—մէկը կալը բարձրանալով յայտնեց նրան։

—Հա՞ն։

—Հա՛։

—Գնա՛ չոլուշին դուս կանչի։ Չոլուշը դուրս եկաւ։

—Կա՛րապետ։

—Համմէ, վա՛րժապետ։

—Գնա՛, մտի՛ր այդ սենեակը և այդ արբեցողին ասա՛ ուսուցիչն ասում է վեր կաց կո՛րի...

Չոլուշը մտաւ սենեակը, և հէնց իւր սրտի ուզածը նոյնութեամբ հաղորդեց նորան։ Փերշալը մահուան չափ վիրաւորուեցաւ այդ խօսքերից և իրեն ժողովրդի առաջ մի փոքր մխիթարած *տեսնելու համար, խստիւ հրամայեց Սրևը-Հատածին, որ իւր գրած «պրոտօկօլը» կարդայ ամբոխի ներկայութեամբ ուսուցչի հօր դիմացը՝ նրան վախեցնելու համար։ Սրևը-Հատածը, որ մի ժամանակ հայ ուսուցչի պաշտօն էր վարում, կեանքի հանգամանքներից փչացել էր. նրա պաշտօնն այժմ գրագրութիւնն էր. ամենայն օր խանութների շէմքում վայր ընկած սպասում էր, որ իրեն խնդիր, բողոքներ գրել տան և կամ, սրան նրան հասարակ բաների համար կռուացնում էր, որ իրեն համար մի բան ճանկի և իսկոյն օղի խմի։ Նա արբեցողութիւնով մարդու պատկերից բոլորովին ընկել էր, դէմքի ոսկրները դուրս էին ընկել, մէջքը ծռուել, աչքերը խորն էին ընկել, ատամները ու քիթը ճանկռտուել, դէմքը սևացել էր և անբարոյական կեանք վարելուց աչքերի լոյսն անգամ պակասել էր։ Նա թուղթն առաւ և կարդաց կըգկըգացնելով.

«Եմ-եմ-եմ, —անվերջ «եմ-եմ», —Փեր-փերշա-շա, շալ, սօ-սօ-սոս-տա-տա-տա-վիլ, վիլ, պրօ-պրօ-տօ-տօ, տօկօլ, պրոտօկօլ...։ Սրա վրայ ծիծաղեցին, իսկ Փերշալը խիստ բարկացաւ։

—Փո՛ւ, պրօպզտ.—ասաց ու «պրոտօկօլը» նրա ձեռքից յափշտակեց և կարդաց. «ստօ պեդդեսեատ րուբլէյ շտրաֆ զա նավօզ սկօտին, (տօ եստ՝ զա փիլթիր լօշադեյ ի զա ծերտ գուսեյ), վսեվօ ստօ շեստդեսեատ րուբլեյ...»։ Փակագծի բառերը նա հայերէն էր խառնում, որ ամբոխին հասկանալի լինի։

—Պօ՞նեա՞լ.—ասաց նա ուսուցչի հօրը։

—Ի՞նչը պօնեալ. Ի՜, «օհօ-հօ-հօ, էնդայգի թուրք ա դառել, որ հայի խաչն էլ չի ճնանչըմ», պօնեա՞լ, ի՜, քու տէրը մեռնի հա՛, էտա՝ ա՛ռար էլի՞, ասաց ու արհամարհելով դուրս գնաց։

Սեղանը պատրաստ էր։ Եադախուրին, Բրուտը, Մծռուտիկն ու Կրպօն անմիտ Փերշալի բարկութիւնից մեծ հաճոյք զգացին և արդէն իրենց նպատակին հասած էին համարում։ Նրանք նստեցին միասին և գիւղի աղքատներից ժողոված վառեկների խորովածով, գինով, արաղով իբրև թէ քէֆ արին, ապա ձիերը պատրաստեցին ճանապարհ ընկնելու դէպի Քարվանսարայ։ Փերշալը ձի նստեց

պռօշները լպստող բալաբանչու, Եաղախուրու և Թուրք Մուստաֆայի հետ, վերջին անգամ էլիրեն ցոյց տուեց դառնալով ուսուցչի հասցէին.

—Եա իգու, նօ եվօ զաւտրա բուդու աապրաւիտ վը տիւրմու։ Սկաժիտէ եմու, չըտօ Փերշալ տակ գօվօրիլ...։ Կօգդա օն բուդետ զապլատիտ ստօ շեստդեսեատ րուբլէյ զա Նավօզ գուսէյ, ի կօնեայ, տօգդա օն նէ բուդետ պիսատ վը կազէթախ՝ օ վրաչախ, դօքտօրախ չտօ, օնի նիչեվօ նէ դելայիւտ, լիւդի վօ վրեմեայ խօլերի ումիրայիւտ բեզ պօմօշչի, դօքտօրա նէ խօդեատ վը դերեվնեախ... ի վօտ, տակիայ վեշչի...։—Նա այդպէս անմտաբար սպառնաց, մտրակեց ձիուն և դուրս եկաւ գիւղից։

—«Էրուած սրտին սոխ մխիթար»—ասաց Մաթոս ապին.—լակը կէծ ըլաւ, դա էլ էս գեղը չի մտնիլու...

Փերշալը գնաց, բայց գաղտնիքը, մատնութիւնը յայտնուեց. գիւղում մինչև կէս գիշերն, ականջ խլացնող աղմուկներով, գիւղացիք երկու կուսակցութեան բաժանուած, կռւում էին օրուայ տգեղ դէպքի մասին։ Փերշալի փիթրի «պլոտօկօլը մնաց անհետևանք.

ՄՈՐԵԽԿՈՌ

Ջա՛ն, ջա՛ն, ա՛ քէֆըլը ջէյրա՛ն, ջէյրա՛ն.
Քէօլ դա քէֆ դա սանընըքի,
Քեանդ դա էնլիգ դա քեօխվանընըքի.

Թրքական Առած.

Ա.

Բարի լիս քե, քեօխվայ։

—Աստու բարի՛ն. նստի տէ՛նանք։ Ա՛ղջի, Հուռի, մի թաղիք դուս բի էս մարդի տակը գցի։ Դէ՛հ, ասա տէնանք ինչ կայ ինչ չկայ։

—Ես ամենից առաջ էս բդի ասեմ, որ ինձ նհենց ա թւըմ, թէ սօր քեփդ խարաբ ա. մեր կալէցը բրաւուրդ արի տեհայ մենակ ես, եկայ. դէ՛հ, ասա, ըռանգդ էտ խե՞ ա թռել.—հարցրեց քեօխվէին բարի լոյս ողջունողը։

—Է՜հ, թուչի ո՛չ բա ինչ անի, նազունահմադ *) եմ ուտը՞մ.—դժգոհութեամբ պատասխանեց տանուտէրը։

*) Աղնիւ կերակուր։

—Ընչի՞, սօրի արաղից զատից կուլ չես տը-ւե՞լ։

—Ընչո՞վ եմ կուլ տըւել, անտէր լի նա, փող կա՞յ։

—Վա՜հ, «սար՛ու ձոր քեօխվի փոր», դու էլ ես ասըմ փող չկա՞յ։

—Է՜, սև ու սախտ լի սրա պէս ձմեռը. ջլխ ղարղակ ու մաղըուն մնացինք։

—Ընչի՞, ձմեռը ձեզ ի՞նչ արաւ։

—Ցուրտ ղըեամաթ (սառնամանիք) էր, կարա-ցինք ոչ թէ գեղըանքների վրայ մի տեղով ժամ գանք բոլի մի «զատ» ճարենք—քեասատացանք…

—Ճարար չկայ, դարդ մի անիլ, շատը գնա-ցել քիչն ա մնացել, էս ա գարունքանըմ ա, մեր օրն էլ կլաւանայ, մենք մեր «զատը» կը ճան-գենք։

—Է՛հ, ո՞րդեան դենք ճանգիլ, շատ էլ գա-րունքանըմ ա, գարունքը որ ծաղիկ չտայ, ի՞նչ անենք։

—Աշխարս դմա՛կ, մենք դա՛նակ. հէր օխնած, գարունք ժըմանակը խոզերը ո՞րդեան են… ճարըմ, բա մենք խոզի չափ էլ չկա՞նք։

—Ա՛դա, ա՛ մուհալ, դու հլէ հանաքուէր մեզ խող շինեցիր հա՞։

—Չէ, խօսքի էօրնակ եմ ասըմ. ամա առակն անխօթելի ա. խի՞, դու գիտըմ չես որ գարունքը երբոր մօտանըմ ա, քե պէս գլխաւոր մարդկերանց քեփը քէօքանըմ ա՞։

—Ղօրթ ես ասըմ, սուտ չի, համա դէ քեօխ-վի գարունքն էլ պէտք ա մարդավարի, բարաքեա-թով գարունք լի է, չոր ու ցամաք ընչի՞ ա պէտքը։

—Վախիլ մի, սիրտդ պինդ պըհի, ինչղադար չոր լի, չո՛ր, էլի կը թըլթախւենք, ըռանց էն չի, ըռհա՛թն ըլի սաղ։

—Ըռհաթը հ՛մէլ ա սաղ, մեզ ի՞նչ՝ «զատ» չենք ճանգըմ։

—Դրան էլ մի մըհանայ ա հարկաւոր, ո՞ւր ա, կռիւ չկայ, ղալմաղալ, դաւի-դառաբա չկայ, «զատի» ընչի՞ցը դուս գայ, ժըղովուրդի մէջ ըռոնք պէտք ա լեն, որ քեօխվայ-սուդիեն ու գզիրն էլ օգտւեն…

—Տաքուլթինն էս ա ընկնըմ ա, սօր թէ էգուց ո՞րդի ո՞ր ա մուրեխավորն իրան սազը կըհանի՝ քեփներս բաց կանի…

—Ա՜խ. ո՞ւր ա՛, էտ հու սրտիս է քթա՛լիցն ես ջուր կում անըմ, գի՛դաս էլի՝ մուրեխավորն էլ մեր՝ քեօխվենոնց զատիկն ա։ Օ՛հ, ես սրա ցրտա-տէր հօր է․է կըկամըմը վե տամ, անտէրը եդա-ցրեց, թողեց ոչ, թէ վախտին մուրեխը դուս գայ, որ քեփներս չաղացնի…

—Շատ դըրուստ ես ասըմ՝ չունքի քօլըմը կուժա կխտարը (եղջերուն) երբ որ ուրախ-ուրախ դէօռըմ ա, ասըմ են՝

«Ջա՛ն, ջա՛ն, ա՛ քէֆը ջէյրան, ջէյրան,—

Քէօլ դա քէփ դա սանընքի,

Քեանդ դա էնլիգ դա քեօխվանընքի…»

Ջա՜ն, ջա՜ն, եղջերու, եղջերու, անտառն ու քեֆը քունն է, գիւղն ու ժողովուրդը տանուտէրինը։

Սուտ հու չի ասած, աթալարի խօսք ա. սոր թէ էգուց մուրճխակոռը դուս դի գալ, խալխը վա՜յ դէն կանչիլ, բան ու գործները թողիլ մուրճխ կըտորելու գնալ, մենք բախրի ու ջէյրանի բուղի (ցուլի) պէս կէօռալ դենք՝ հոգով էլ մարմնով էլ լիանալ դենք…

—Գիդամ էտ ո՛րդեան ես խօսըմ, ասածդ մեղրու կարագով կուտեմ, ամա անտէրը եդի ա դուս գալու, աչքս ճմըի ա մնացել՝ սէլհարքին էնքան մտիկ եմ արել, գիլեն (հիւլէն) ջուր ա կտրել՝ վախտին մի եասաւուլ չի դուս գալի ներքևից, որ ունքամէջս բացուի…։

—Վռազիլ մի՛, վռազողին տղայ չի ծնիլ, դըժարն էն էր, որ տափը կնանչէր, կնանչեց. էս ա որտեղ որ ա՝ վերևից, թէ ներքևից մի պոչը կապած ձիաւոր դուս կըգայ։

—Է՜, ո՞նց չը վռազեմ, վախըմ եմ էն անտէրը դուս չը գայ ու ըստարի մնանք խայտառակուած…

—Ընչի՞ չըդի դուս գալ։

—Եսինդիտեմ, ասըմ են ձմեռուանս ցրտի թիւնդութենից մթամ թէ սերմը ցրտատար ա լել։

—Վայ էհէ, ա՛, քու խելքն էլ կտրըմ ա՞. մուրճխի սերմը մգեար մինն է, հարիրն ա՞, որ ցըրտատար լի էլ դուս չգա՛յ, նա անհամբարք բան ա, ինչղադար ցուրտը տանի, էլի դուս կըգայ. մ'նէլ էս որ՝ հերու մուրճխ կտորելիս էնղադար սերմը հողի տակովն արին մշակները, որ հլէ մենակ էն դուս գայ է, աշխարս վե կունի։ Է՜, էս քանի տարի ա, որ աշխարս հըւաքուած կարըմ չի՛ վերջացնի, քա՞նի տարի ա, որ ձու և սերմն են ածըմ հա՜. վրայ էրկուսն էլ էս՝ որ էտ բանը Աստծանից դըրած պատիժ ա, հըզար էլ ցո՛ւրտ անի, հզար էլ կտո՛րեն, էլի դուս դի գալ, ոչով կարալ չի Աստու կամքին հակառակ գնալ…

—Տա՛յ Աստօծ, լիւզւով ա՛սես, սրտինս կատարի։ Մուրճխակոռը որ լուս ընկնի, մին, էրկու, որ ես խէրուեմ, մ'հէտ էլ քե կխէրեմ…

—Քեօխվայ, մին-էրկու մի՛ ասիլ, որ պակասութին շատ ունեմ, պէտք ա դըստեմ…

Բ.

Այն միջոցին սէլհարքում յանկարծ երևաց մի ձիաւոր, որն արագ-արագ մտաւ գիւղը, իջաւ մի սրահի առաջ, ձին սիւնից կապեց խոտ ածեց և այդտեղից, առանց իւր տունը մտնելու, իսկոյն եկաւ քեօխվանց տուն։ Նրա կերպարանքից, հագուստից, շարժուածքներից և գարշելի դէմքից կարելի էր եզրակացնել, որ կամ քեօխվի օգնականն է և կամ նրա դասակարգի մարդ։ Վերջինիս գըզուանք արտայայտող զինջ ու ժպիտները ցոյց էին տալիս, թէ նա երկու ցեց խօսակիցների համար

մի *ուրախալի լուր* է հաղորդելու, որն իսկապէս բոլորին, մանաւանդ քեասին և մեն-մենակ գիւղականներին աճագին նեղութիւն պատճառող մի գոյժ էր։ Այդ գիւղական ցեցը շտապով գոտկից դուրս քաշեց իւր հաստագլուխ մխոտած չիբուխը, չուխի տակից՝ ետևի կողմից էլ հանեց ծխախոտի քիսան (քսակը), լցրեց, հուրհանով կայծաքարին չխկացրեց, յաբէթը վառեց դրեց չիբուխի կնդին և ախորժակով փը՛ստ հա-փը՛ստ՝ մուլ անելով մօտեցաւ վատագրոյցներին և ըստ պատշաճի աւուր ողջունեց.

—Բարի օր ձեզ։

—Ա՛յ Աստօ բարին քե՛.—յանկարծակի տեղից, ինչպէս ասում են, «ծլո՛ւնգ ըլաւ» քեօխվեն։

—Օ՛հ, դու ես.—ասաց միւս խօսակիցը.—համեցէք, նստի, հըա մի *խէր խաբար* բերած լես *Ներքևից* (Ղազախ քաղաքի դիւանատանից).—ասացին նրանք սպասողական եղանակով։

Նորեկը ձեռը նազով գրպանը տանելով մի թուղթ հանեց, յանձնեց քեօխվին և ինքը գող կատուի նման աչքը կթեց նրա աչքերը և գիտակ հայեացքով թագուն-թագուն ժպտաց, որից երևում էր, թէ թղթի բովանդակութիւնը թէև իրեն յայտնի է, բայց քէֆի խաթրու ուզում է, որ քեօխվեն ինքը կարդայ, ինքն ուրախանայ իւր սրտի ցանկացածով։ Իսկ նա նկատելով նրա դէմքի արտայայտութիւնը, դեռ թուղթը չբացած, կարծես կէս-մի ուրախութիւնից, կէս-մի երկիւղից շփոթուած հարցրեց։

—Էս ինչ թուղթ ա։

—Կա՛րդա, կա՛րդա, տես ինչ ա.—ասաց, բայց չկարողանալով երկար լռութիւն պահպանել մինչև կզկզան քեօխվի կարդալը, սրտխօսութեամբ յայտնեց նա իւր փոխաբերական միտքը։

—Փերս (որս) անիլու թուղթ ա, ինչ թուղթ ա։

Ցեց անպիտանը չիբուխը բերանին, անշնորհ հաստ ու լպրտուն շրթունքները պրպտացնելով և զզուելի ժպիտներով կարծես մի առանձին տեսակ հոգեկան բերկրանք, մխիթարութիւն ու բաւականութիւն էր զգում մի այնպիսի թուղթ բերելով, թուղթ տալով նրան։ Մեծ ցեցը թուղթը բաց արաւ, որի ճակատին այս էր գրած՝

«Հ ր ա մ ա ն» և ապա՝

« Խ. գիւղի շինական կառավարութեան հա-
« սարակութեան տանուտէրին խստիւ հրամայում
« եմ, որ հրամանս ստանալուն պէս քեզ պահ
« տուած գիւղերի հասարակութիւնից անպատճառ
« և անյապաղ քառասուն մշակ պատրաստես՝ ի-
« րանց աւիլներով, բահ ու թիերով... (և պաշա-
« րով) ուղարկես Աղստափայ, որ այնտեղից պէտք
« է ուղարկենք Փոյլուի ու Ղարաեազի կողմերում
« մորեխ կոտորելու։ Հակառակ դէպքում օրէնքի
« հիման վրայ մեծ պատիժ կըկրես»։

Տանուտէրը կարդաց և խստութեամբ գլուխը շարժելով ասաց.

Օ՜... շատ թինդ հրաման ա, շա՜տ...

—Բա ասըմ իր ցուրտը տարած կլնի, փա՛ռք Աստու, ունքա՛մէջը բաց ըլաւ, ըռանգը էլ տեղն եկաւ.—խօսքը յարմարեցնելով ասաց նրա սկզբնախօսակիցը։

Ըհա՛հա՛, հա՛.—ծիծաղեց քեօխվէն և ասաց խնդագին։

—Դէհ, դէ վե՛ կաց կա՛նչի, կա՛նչի չօվուշին, էս ա բաներնիս ունղատն ընկաւ—(յաջողուեց), կա՛նչի։

—Գնամ տո՞ւն, թէ էս եալիցը (բլրիցը) կանչեմ, քեօ՛խվայ։

—Տուն ո՞ւր ես գնըմ, էտ բացըը տեղիցը գոռայ, ղալմաղալ գցի, որ գեղն իմանայ, ամա աշխատի, թագուն բաները կամաց ասել, որ ոչով չիմանայ...—պատուիրեց նա։

Երիտասարդը, որ արդէն ցեցերից վարակուելով փոքրիկ ցեց էր դարձել, գնաց բլրի գլխին կանգնեց, ձեռը ճակատին դրեց ու գոռաց.

—Դա՛դաշ, Դա՛դաշ, էհէ՜ Դադա՛շ...—Դադաշի խրճիթից մի փոքրիկ աղջիկ դուրս եկաւ։

—Ա՛յ աղջի, Մա՛րօ, Մա՛րօ, աղջի մա՛նըմ չե՞ս.

—Հէյ.—պատասխանեց աղջիկը։

—Աղջի քու Դադաշ ամին տանն ա՞։

—Հէ՞.—քթումը խօսողին լաւ չլսելով աղջիկը՝ «Հէյ» արաւ, իսկ նա լեռնականի կոպիտ բարկութեամբ անիծեց երեխային՝

—Զ՛ռի է մեծը, գլխկու-պկա՛ւ, քա՛ռ էս, ասըմ եմ քու Դադաշ ամին տանն ա՞։

—Հա՛, հա՛, հրէ մեր գոմըմը։

—Դէ վա՛զտու, նի՛ մտի, ա՛սա դուս գայ, ա՛սա դուս գայ, դէհա. դէհա, լե՛ղով հա, լե՛ղով հա...։

Աղջիկն շտապով վազեց գոմը մտաւ և դուրս կանչեց չօվուշ Դադաշ ամինին, որը նոյնպէս ձեռը ճակատին դնելով, կանգնեց կալի մէջ տեղը՝ երեսը դարձրեց դէպի բարձրից կանչողն և ասաց.

—Ա՛, էտ ի՞նչ խաբար ա, որ տհենց վռազվռազ կա՛նչըմ ես, էհէօ՛յ։

—Աղա ըստի՛ արի, ըստի՛ արի.—ձեռի ափով անելով, շտապ-շտապ կանչեց Քիքին։

Դադաշ ալին իսկոյն իմացաւ թէ ձեռով անելն ի՞նչ է նշանակում, վազեց դէպի նա և հարցրեց.

—Ա՛ Քիք. հը՞, էտ ի՞նչ ա. թաքուն ա՞ թէ աշկար, ա՛սա տենանք։

—Խէ՞ ասեմ. դէ դու հլա ասա տենամ ընկճըըռնուկն ինչ ես տալի՞.—ականջը բռնելով ասաց Քիքին։

—Աղպէր հինգ ձու կտամ, ա՛սա։

—Ասիլ չեմ, քիչ ես տալի։

—Ա՛, դէ ա՛սա, սիրտս փորըմս լքլըքըմ ա, ըեխութին մի՛ անիլ է։

—Չէ, ա՛սիլ չեմ, մի բան էլ աւելնացրու։

—Դէ լա՛ւ, մի վրցկաճուտ էլ կտամ։

—Մուրեխակոռը դո՛ւս ա եկել, քեօխվէն հրաման ստացաւ, աչքդ լիս.—ողջունեց կանչողը։

—Աչքդ լի՛սի կենայ, ղօ՞րթ.—կարծես ուրա-

խուլթեան հալուած սառցաւ Դադաշը. իսկոյն սովորական ժպիտն երևաց նորա դէմքի վրայ։

—Էն խունկ ու մոմը գիդենայ, որ ղօրթ եմ ասըմ.—երդուեց աւետաբերը։

—Է՜, դէ ասա էն ժամը՞։

—Էն ժամն էլ, էն ժմամէրն էլ, էն կծըպծանն էլ, որ ղօրթ եմ ասըմ։

—Հաւատըմ չեմ. դէ ասա էն Վերնէյին Աստծը՞։

—Վըլի՜, ա՛, հըւատըմ չես. էն Աստօծն էլ, էն ըստըծամերն էլ, որ քե ընդուր հըմա՛ր եմ կանչըմ.—կրկին երդուեց և հաւատացրեց Քիքին։

—Ջա՛ն. ջա՛ն, Աստօծ քե խէր խաբարըմ պըհի.—արագ-արագ ասաց չոլուշ Դադաշը, և միրգ ստացած երեխի պէս ոտներն ու ձեռներն աջ ու ձախ գցելով մի երկու պտոյտ խունջիկ-մունջիկ ուրախապար տուեց չափարի տակ և ապա հարցրեց.

—Քա՞նի մարդ են ուղել, ա՛ Քիք ջան։

—Քեօխվեն ասեց ջլի՜ս շա՛տ են ուղել, հալբաթ մուրեխը զոռ ա էլի։

—Ա՛, էտ ի՜նչ լաւ խաբար ա. դէ լե՛ղով արի գնանք։ Հա՛, քեօխվլի կշտին էլ մարդ կա՞յ, թէ մենակ ա։

—Իրան պըմբօշնիկն էլ ա կշտին։

—Հաւա՛տա հրամանը նա՛ բերեց։

—Անպատճառ։

—Էտ լաւ ա.—ասաց Դադաշն և իւր խօսակցի հետ գնացին տանուտէրի մօտ, որը դեռ հե-

ռուից իւր ուրախութիւնը Դադաշի ուրախութեան հետ խառնելով և զուարճանալով ասաց.

—Հը՛ հը՜, սո՛ւղեայ Դադաշ, քէփդ ո՞նց ա բացուե՞լ։

—Մթամ քունը պա՛կաս ա բաց լե՞լ.—պատասխանեց նա և բարի օր ողջունելով՝ սրահի սեւնի վրայ յենուեց։

—Սո՛ւղխայ Դադաշ.—նրան աւելի բարձըր պատուանուն տալով, ասաց տանուտէրը.—Մեր ուպըրաւլեննուցը քառսուն մշակ են ուզել, էնպէս որ՝ ամեն գեղի գլխի օխտը մարդ ա ընկնըմ, ո՞նց անենք, մենք քանի՞սին իմացտանք, որ աժմունքը բան դառնայ. ամեն գեղից քսան մարդ ըլ դուս անենք բոլ ա՞. ջիբներս կարա՞նք բան գցել։

—Է՜, քսանով ի՞նչ դենք դառնալ, ամենիցը մի եռսուն, քառսուն էլա պէտքա ղըրկենք, որ գէօլով (բաւականացուցիչ) բան դուս գայ։

—Քառսուն չէ, ամա եռսունի իմաց տանք։

—Հա՛, տհենց անենք։

—Դէ՛ դու գնա չոլս տղայ կանչի, ես էն մէկէլ գեղերի վրայ հրամաննի գրեմ, որ պըմնոշնիկնիս իրանց ձեռի տակի մարդիկը հագրեն, թուփ անեն ու ղրկեն։

—Դէ դու լե՛ղ արա (շտապիր) գրի՛, ես գնըմ եմ։

Դադաշը շտապով գնաց հրամանատարներ կանչելու, իսկ տանուտէրն առնելով իր փետրէ գրիչը,

անխաթանաքը, մոթալ փափախը՝ իբրև գրասեղան դրեց ծնկանը, իսկ փափախի վրայ դրեց թղթի կտորները և շտապով հետևեալ ձևով և բովանդակութեամբ չորս հրաման և մի-մի «ծածուկ» խորհուրդներ գրեց իւր օգնականներին, որ նրանք ըստ այնմ էլ գործ կատարեն՝ նայելով հանգամանքներին...

—Բերէ՞ր, պատրաստ ե՞ն տղեքը՝

—Հրաման քե, հրէս դռանը կաղնոտած։

—Դէ անգաճ արա, տես լա՞ւ եմ գրել։

«*Հ ր ա մ ա ն*»

« Թ., (Ք. Ղ. և Ռ.) գեղի պըմբօշնիկկիդ. հըմածայն *տեղից* եկած հրամանի, խիստ հրամայըմ եմ, որ գեղիցդ եռսուն մշակ հազիր անես մուրեխակոռ ղրկիլու հըմար...։ Կաւառապետի հրամանը շա՛տ թիւնդ ա, դ՛ու հրաման ա, չը սղալւես, աղօգուլ չանես (անտարբեր չմնաս), թէ չէ՝ ղալա (բերդ) կնստես։ Իսկ ով որ քե ընդդիմութին անի, տո՛ւ, կտո՛րի, ղամշուդ (մըտրակիդ) ռէխը տու—երսուն մարդը պատրաստի, ղրկէ՛...»։

Խ. գեղի տանուտէր՝ *Մ. Թիրալով*։

—Ա՛նգաճ դի՛, էս էլ թագուՆն ա.—ասաց նա և կարդաց.

«*Ծ ա ծ ո ւ կ*»

« Պարոն պըմբօշնիկ, գիդենաս, որ ձեր գեղի փայը ութ մարդ պէտք ա կռատեղը հասնի, ամա եռսուՆն եմ գրել։—Դու գիդաս, թէ ո՞նց

« ժաժ կը գաս, ո՞նց կըշխատես, դու հէրուանից (անցեալ տարուանից) սըւորած ես, էլ սըվրցնիլ չի հարկաւոր քե, ամա էլի մի էրկու բան որ պահ տամ էս ծածուկիս մէջ, վա՛տ չի լիլ...։ Հրամանս հէնց որ ստանաս, տա՛ր գեղամէջ՝ խալխը գլխիդ հըւաքի մի կալըմ և սկսի ղաչիմ-ղա՛յիմ կարդալ, որ մանան թէ եռսուՆ մարդ ա գրած... դրանից եդը չովուշիդ ձեռին մի փետ դի մշակնին թուփ անի քշի կըրմնջի վրա. ամա՝ քշելուց առաջ թող մին-մին քե մօտ ղրկի նրանց։ Եկողին թափ կըտաս—«*զատ*» տըւողներին կը սըվրցնես, որ չուել թթի ճալէն հասնիլը՝ ամեն էրկու վերստից եդը մինը փախչի—մի բան մհանայ անիլով... չը սղալւես, դու ըլես քու Աստօծը, հէնց արա, որ փխցնիլը գլխի չ՛ընկնեն. թէոր բան ա՝ գլխի էլ ընկնեն, փախչողի վրայ կնըգւէ՛ (բարկացիր), չարացի, հըլա մի էրկու հետ էլ սուտի-մուտի թակի, կըփցրու (բարեկամաբար ծեծի), որ կարծեն թէ ամենևին ոնչիչ չկայ մտքըմդ։ Ես ու իմ ըստեղի պմբօշնիկս էլ Խ.-ի մշակնին դուս անելուց եդը, պէտք ա գնանք Ռ. գեղն ընտեղի մարդիկն էլ դուս անենք։ Էս ծածուկս որ կարդաս, ճղէ՛ դէՆ գցի, նահլաթը չար սատանին մարդու ճանգ կ՛ընկնի...

Տանուտէրը Թ. գիւղի օգնականին գրած հըրամանի տակ իբրև ծանօթութիւն գրել էր և այս՝

« «Պարոն պըմբօշնիկ, քե ամենից գլխաւոր պահտալուս բանը քիչ էր մնըմ մոռացել ի. էն էս

« ա, որ սիրունի, ա՜խ, էն ջէյրանի... մարդին (ա-
« մուսնուն) անպատճառ կոռ ղրկես, որ՝ էն ինչ
« ես ու դու գի՜դանք, գլուխ բերենք։ Սի՜րելի
« պըմբօշնիկ, քե լաւ այեան ա (յայտնի է), որ ութ
« ամիս ա նրա հըմար հոգի եմ տալի ճանկս չի
« ընկնըմ... էգուց գիշեր տանջիլ դեմ, ի՜նչ կլի՛,
« կլի...— նա այդ էլ կարդաց և հարցրեց Դադա-
« շին.

—Սո՛ւդեալ Դադաշ, լա՛ւ ա գրա՞ծ։

—Ո՜ւֆ, ո՜ւֆ շատ լա՛ւ ա, թէ կըենաս...։

Քեօխվէն դուրս եկաւ դուռը, ուր թղտատարները կանգնած սպասում էին։

—Ա՛կոբ.—ասաց նա։

—Հա՛մմէ, քեօ՛խվայ։

—Դու էս թուղթը կը տանես Թ., դու էլ Ռ., դու էլ կը տանես Ք... դէ՛ հա, կորցնէք ոչ, կա՛ղնէք ոչ, կեծակի պէս գնացէք... տե՛նամ հա, տենամ ո՞վ դի թեզ ետ գալ. տեհէ՛ք՝ թքըմ եմ, հլեչւել (մինչև) թքիս ցամաքիլը պէտք ա ետ եկած լէք...

—Դա՛դաշ, թղթատարնինտարան, դէ գեղն ընկի մենք էլ մեր գեղինը դուս անենք. ամա չէ՛, առաջ արի մի հէսա՛բ անենք տենանք ո՞ւմ—ո՞ւմ դես ղրկել, որո՞նցից դի ճրագ կառչիլ։

Դադաշն սկսեց մի ձեռով միւս ձեռի մատները կէնտ-կէնտ խուփ անելով հաշւել։

—Մինը Թաթին։

—Էտ մի՜ն.—տէր ողորմեալով հաշւեց քեօխվէն։

—Մինը Թաթին, մինն էլ Աթին.—կրկնեց Դադաշը։

—Էտ էլ արա՛ւ երե՜ք։

—Մինը Խեչօն, մինը Դադինի տղեն, մինն էլ մոխոխ ուտողի տղեն։

—Էտ էլ վե՛ց։

—Մինը-քաչալ Վալին։

—Էտ վեց, օխտը, ութ, ինը... տասներկու..., տասնուինը, քսան, էլ...

—Քեօ՛խվայ, դէ մնացածնին էլ դո՛ւ ասա։

—Քսա՛ն, քսա՛ն, մի՜տդ պըհի, քսա՛ն...

—Քսա՛ն, քսա՛ն...,—շարունակ կրկնեց Դադաշ ամին, իսկ տանուտէրը մտածում էր, որ իր խելքի կտրած մարդիկը գտնի։

—Մինը Պետին, Սաքին, Ղուկին... էդ քսա՞նի արաւ.—կարկուտի պէս վրատուեց նա։

—Թամա՛մ քսանո՛ւթ արաւ։

—Լա՛ւ, միտդ պըհի։ Ե՛րկուսն ա պակա՛ս։

—Հա՛։

—Մինը Մէլոն, մինն էլ Ղարօն. եռսունը թմամե՞ց։

—Հրաման քեզ.—պատասխանեց Դադաշ ամին։

—Լա՛ւ, դէ հըմի ա՛սա տենանք, սրանցից ո՞րեցը դի շահի-փարայ դուս գալ քեօխվի հըմար։

—Որեցը՞, ը՞, էդղադամիցը (այդքանիցը), տաս-

նուլթ մարդից խելքս բան ա կտրըմ, մէկելոնքը դառը դարդակ են։

—Բան չկայ. մէկելոնցից էլ ուլթ մարդ դի տեղ հասնիլ, մընըմ ա հինգը. Նրանց էլ կասես մի-մի օր հունձ խոստանան։ Դէհ, կա՛ղնիլ մի, գնա իմաց արա։

—Քեօ՛խվայ, մի.քանի փեստած (հոտած) մարդիկ հուջալթ դեն անիլ, ամա…

—Ո՞նց թէ հուջալթ դեն անիլ. անողին թխի՛ վախես ո՛չ, ըստի՛ եմ…—Դադաշը գնաց, կէս ճամբին կանգնեց ու ասեց.

—Քեօ՛խվայ, արի Սիսօին էլ իմաց տանք. նըրանը ջլիս նաղդ ա, մէկէլօրին բոլոմա խող ա ծախել, համ էլ մենակ մա՛րդ ա, տեղն էլ նեղ, էն ա ի՛նչ ուզենք տալ դի…։

—Համ. դէ գնա՛։ Զոլուշ Դադաշն ընկաւ գիւղը և ահագին գոռոցներով սկսեց սրան նրան կանչել, հայհոյել և սպառնալ։

—Մա՛թի, էհէ՜ Մա՛թի.—կանչեց նա գիւղացիներին։

—Հէ՜յ։

—Աւիլդ, թիդ, բահդ, պաշարդ պատրաստի, ըրիկունը դվեր ճամբայ ընկի։

—Վա՛յ, քու տո՛ւնն Աստօծ քանդի.—աւաց և ապա հարցրեց.—ա՛, դվեր դո՞րը ճամբայ ընկնեմ։

—Դաղքասամանի վրա… մուրեխակոռ…—նա վրա-վրայ և միքանի անգամ կրկնեց Դաղքասաման անունը թէ չէ, գիւղի մի ծայրից միւսը

տարածուեց բէգխառի դաժան լուրը և գիւղականների մէջքն անակնկալ կերպով թլացրեց. կարծես բէգխառի անունից թունաւոր գնդակի հարուած ստացան ամենքը։ Նրանք սկսան բէգխառից ու զանազան պատահարներից յառաջացած իրենց վնասների ու նեղութիւնների մասին այսպէս արտայայտել յոգնած ձայնով.

—Ո՜վվէ, մէջքներս կոտրուեց, գնա՛ց. վա՛յ դըրա տիրունչ տունը քանդըւի, անտէրն էլի դուս եկա՞ւ. եա՛րաբ էսղադար չըչարանք կլէ՞ր, որ դա (մորեխակոռը) մեզ տըւեց էս քանի տարին։ Հէրու մենք գնացինք մուրեխակոռ, երկինքն էլ փակուեց անձրևի տուալ չկաթեց՝ չորէյին արաւ՝ լածչըլած արտերնիս ու խոտերնիս ոտի վրայ կաղնած չորացրեց, վա՛յ էն հնձիլուն, որ հնձեցինք — հէ՛նց հունձն ըսկսե՛ցինք, Աստու գիւլումաթն ըշխարիս հըսաւ՝ խուկին ու խուլեարը դուս եկան, էն վախտըն էլ հնձածներս կասիլու մնաց կալի ղրաղին փթելիս, եասաուլը եասաուլի քամակից մաթրախը քաշած տուր ու տրաքը նի կապեցին՝ տասը տարուայ կիտած աղբ ու փէյինը դէն ածիլ տուին. ետոյ՝ ո՛նց որ ըլաւ, շան հալին, զոռի, գիւջի, հարամմարամ կասեցինք, ամա ի՞նչ, ահենցով թէ մարդ թէ անասուն անպաշար մնացինք. մեր մեղքիցն էլ ըրեգնակը կասես թէ ծովի տակը մտաւ, սառաւ կորաւ՝ գիւլ-գիւլումաթ չտեսնուած ձմեռ եկաւ, սառուցն ու ձինը ճամբէքը փա՛կեց, ղըեամաթն (սառնամանիքը) ապրանքնիս կտորեց…

Մենք էլ տուն ու քիւլփաթ պըհելու համար պարտք ու կրակի մէջ ընկանք, հացի տեղ համարեա թէ հող կերանք։ Ի՛հ, հըմի էլ ուժից ընկած հլեչուելը կը գնանք—կը գնանք, արտերնիս եա կարկուտը կտանի եա թէ չէ, էլի կչորանայ... չէ, աշխարս սով ա ընկնիլու... գեղըցիք կորած են... Հազիւ թէ մէկը վերջայրեց իր ցաւերը, միւսը, երրորդ...ն սկսեց այրուածի պէս մղկտալ...

—Ա՛կոբ ջան, բա մեր տներն ի՞նչը քանդեց, մեզ ի՞նչն աղքատացրեց ու էս սեւ-սեւ օրերին հասցրեց։ Ռանչպարի-(երկրագործի) մանգեղը որ կռնիցն ընկնի՛, էս օրը բդի քաշել էլի։ Ախր ո՞վ ա տեհել, էսղադար տարւայ մարդիկ ենք, որ մագեղաւորը՝ հնձողը ղաչաղ (աւազակ) կալնի. զուր տեղը մեզ բանից գործից գցըմ են ղըրկըմ, գնըմ ենք քօլերն ու սարերն ընկնըմ, թէ ինչա՝ գող, ղաչաղ պէտքա կալնենք. եա թէ չէ՝ մի բուռը ցորեն ենք ճարըմ, էն էլ արագեզդուն, ղըրաւուլին տալի ու մենք ճաթի եա գարու ղան-ղուռուռթ՝ սեւ ու չոր հաց ուտըմ՝ ծկակ ըլելով. էն էլ թէ ճարըմ ենք՝ լաւ, թէ չէ հու կռոթօ կէ՛ր...*)։ Բա Աստօծ վէ՞ կունի՞, բա սա տեսնուած բան ա՞, որ տարուայ էս չախըն ա հասել, մենք մածնի էլ ենք հասրաթ մնացէ՞լ։ Զէ, ըսենց բան ըսկի Ղազախըմը լէլ ա՞... Մի խօսքով՝ հայ-հայնիս գնացել ա, վայվայնիս ա մնացել... Քանի ղաղաք ենք գնըմ լա-

*) Կռոթօն բոյսի արմատ է։

ւանալու տեղ սեւ-սեւ օրերի ենք ըռաստ գալի՛. կասես թէ՝ Աստօծ էլ ա իրես թեքել մեզանից, մարդն էլ. ամա՝ Աստօծ ի՞նչ անի, ոչով նրա ճամբին չի ման գալի, թէկուզ հէնց...—նա էլ։

—Գեղականի տունը մենակ մուրեխը, ղաչաղը, չորէյինը խուլեա՛րը չքանդեց, քանդողնեն նրա՛նք են, որ կռռուբէդեառ քաշող քեասիբներիս կարգով, հերթով ու արդարութենով չեն ղըրկըմ—մնին պահըմ-պըհպանըմ են աղի պէս, մէկելին չըչարըմ շան եա թէ չէ, եսիրի պէս... Մուրեխը հու մ՛ուրեխ ա, ա՛մա քեօխվեն էլ մի ուրիշ ղայդի մուրեխ ա դառել մեզ համար...

Մինչ դեռ խեղճ գեղջուկներից շատերն այդպէս թւում էին իրանց ցաւերը, գզիր Դադաշն արդէն գիւղի վերի թաղումը վիճում էր մէկի կամ միւսի հետ եւ անկարգ հայհոյում...

—Ես քե՛ հրամայըմ եմ, որ զատըմատդ վե կալնես ճամբայ ընկնես, թէ չէ, դըգնակի տա՛կ գցիլ կտամ.—սպառնում էր նա։

—Ա՛, տօ տնաքա՛նդնէր, էլի եկաք իմ եա՛խեցը կպա՞ք, բա մրուաթ (խղճմտանք) չունէ՞ք. հէրու, մէկէլ տարին ինձ իրեք հետ ղըրկեցիք, հըմի էլ կոռը գալուն պէս իմ դուռը վազ տուե՞ք. բա նըրանք (հարուստները) որ ո՛չ մ՛հետ կռռ չեն գնացել, խե՞ չէք նրանց էլ ղըրկըմ։

—Էտ մե՛ր քեփն ա, քե ասըմ եմ գնա՛։

—Գնըմ չե՛մ.—Նա հազիւ վստահանում էր հակառակել։

—Դ՚էնա ուզըմ ես թէ հէրուայ պէս կաշիդ-պուկենք ետոյ գնաս էլի. աւել պակաս ըըլխիդ մի՛ անիլ, ոտնուձեռդ հըւաքի ճամբայ ընկի՛...— հետզհետէ բորբոքուելով նա բռնում էր երկրորդի կամ երրորդի օձիքը և քաշ տալի տանուտէրի մօտ։ Նա միքանիսին շատ մեղմութեամբ մօտենում էր և կամացուկ ձայնով այսպէս ասում.

—Սաքօ՛, քե կոռ ենք ասել, ուզըմ ես գնա՞ս, թէ՞ մի «զատ» ես տալի՛ ազատըըմ։

—Վայ՛է. ի՞նչ տամ, ա՛ղպէր ջան, զատ չունեմ։

—Զատ որ չո՛ւնես, մի օրէն հունձ բոյինդ (յանձդ) կալ քեօխվի հըմար։

—Դէ ճարս ինչ, ըեխէքս տկար վե դառած են, ասա մի օր կը գամ կ՚օգտեմ.—ճարահատեալ ասում էր աղքատը։

—Դո՛ւ գնա, քեօխվեն հըէ դռանը նստած։

—Պե՛տի, Պե՛տի, էհէ Պետի՛...

—Հէյ։

—Ըստի՛ արի, ըստի՛։

—Ի՞նչ ա, ա՛ղպէր ջան.—բանի էութիւնն զգալով հարցնում էր քեասիբը։

—Աղա, քեօխվին մի «զատ» խոստացի, որ քե կոռից թափի։

—Ես քու արևին մատաղ, տեղս շատ դժուար ա, կա՛րալ չեմ գնալ. ձեռիս մի շահուց աւել կապէկ չունեմ իրան կտամ, ասա եօլա տանի, գեօմշնիս ու կովերս կանաչի ընկան՝ վեր են թա-

փուէլ, ես որ մուրեխատեղ գնամ, չիմ կը կըտորուեն՝ վե քաշող չի ըլէլ։

—Դէ բի էտ հինգ շահին ինձ տու, քեօխվին էլ մի հաւից-զատից խոստացի, անցկացնեմ....— ասում, առնում էր նա և շներին ծեծելով անցնում էր միւս թաղը.

—Ա՛թի, էհէ Ա՛թի, կո՛ռ, կո՛ռ...

—Վայ ձեր տնէրը հոգիա՛ռը պըծնի, լէյի թէ անտէր մուրեխակոռը փոդրաթով ինձ տըւած լեն. հըէ քու աշուղի պէս եախէս ճնանչել են էլ բաց չեն թողըմ։ Ա՛դա, կնիկս, ըեխէս, մէրս նաչախ վե դառած թողեմ ո՛նց կոռ գնամ, իմ հալն (դըրութիւնս) էս սաղ գեղին յայտնի ա, բա դուք մա՛ցել չէ՞ք, որ տունս նչխութինը լի՛քն ա՞. մի ուըշին՝ որ քէօմակ ա, եա ըսկի կոռ գնացած չի, էս դո-նըմ (այս անգամ) նորան ըրկեցէ՞ք չուեըը տենանք նաչախնիս ի՞նչ են դառնըմ է։

—Դէ բի՛ մի «զատ» տու ըռէխը գցենք մընացիր, էլ ղալմաղալ մի՛ անիլ...

—Ի՞նչ տամ, զատ ունե՞մ...

—Խի՞ չ՚ունես, էրէկ մէկէլ օրը չէ՞ր, որ եղըդ սըտակե՞ց։

—Դէ թէ ուզըմ էք աղ դըրած միս տամ, հը՞։

—Միսն ընչի՛ս ա պէտքը։

—Բա ի՞նչ տամ, ա՛ղպէր ջան։

—Մի ջուխտ կաշի տու, ամա լաւ տեղից կտրի։

—Ա՛ քե մատաղ, կաշին էլ ուզըմ եմ սաղ

ծախեմ՝ նրա փողովը մի աչառ առնեմ, որ էգուցէլօր, թէ որ Աստօծ տայ, կալս կասիլու, լուծս տափին չմնայ, կորեմ ո՞նց անեմ։

—Գլխի կաշին հու չես ծախիլու, գլխենին տու.—Աստուծոյ քեասիբն անճարացած պատասխանեց.

—Տուած ո՛չ ինչ դեմ անիլ, հուջաթ որ անեմ, գլուխս թակիլ դեք...։ Նա ասաց և գնաց կաշին բերեց յանձնեց Դաղաշին, բայց ահա մի երիտասարդ խիստ հակառակեց վերջինին, մատնացոյց անելով հարուստ մէկին։

—Ես կոռ չեմ գնալ, չուելը նա չըգնայ...

—Հը՛հը՛, չես գնա՞լ, ամա կաշիդ կըպուկենք։

—Չէ։

—Վէ՛ կաց տեղիցդ։

—Վէ՛ չեմ կենըմ։

—Վէ՛ կաց, գնա՛։

—Գնըմ չեմ։

—Է՛ս փետը վրէդ կոտրատիլ դեմ, վե՛ կաց։

—Վէ՛ չեմ կենըմ, վե՛...

—Ա՛դա էտ ո՞վ ա, էտ շան տղեն, որ ղաքիդ հուջաթ էլ անըմ ա, տո՛ւ, ջարդի, գա՛լիս եմ.—գոռաց քեօխվէն և հասաւ թէ չէ՝ տուր ու տըրրաքոցն սկսուեց՝ դագանակներն իրենց գործը տեսան և գլուխը պատռած «զատ» չտուող քեասիբը քէօթակ ուտելուց յետոյ, պաշարը շալակեց, բահն ուսին դրեց ու ճանապարհ ընկաւ։ Բոլոր մշակներն արդէն պատրաստ էին։ Դաղաշը շատերից «զատ»—կաշառք..., շատերից խոստումն առնելով, ըստ կարգադրութեան և հրամանի Մոլլա-քեօխվի, քշեց

նրանց սէլհարքի ճանապարհով դէպի Աղստափայ։ Փախչողները նախօրօք կարգադրութեան համաձայն ճանապարհի տակ ու գլխին թագնուեցան՝ փախան, իսկ գնացողներն աղի արցունքով անյայտացան սէլհարքի թմբի ետևը։ Ձիերն արդէն պատրաստ էին։ Տանուտէր Մոլլէն դուրս եկաւ իւր օգնականի և եասաուլի հետ՝ ձի նստեց և ճանապարհ ընկաւ դէպի Ռ. գիւղը։

Գ.

Քեօխվայ Մ.-ին գիւղացիք աչքի մէկը շուտ-շուտ խուփ անելու համար Քոռ-Մոլլա անունն էին յատկացրել։ Նա հէնց երիտասարդական հասակից անպիտան բնաւորութիւն ունէր. օրինակ՝ գարնանը, երբ կանաչեղէնը բուսնում էր, նա սիրում էր կանանց հետ հանդ գնալ՝ սինդրիկ, ծնեփակ և ուրիշ բանջարեղէններ քաղել, բայց ինքը երեկոյեան մի բուռը բան չէր բերում տուն. դատարկ վերադառնում և հօր անէծքին էր արժանանում միայն։—Նա ամենայն օր տնական աշխատանքից փախուստ էր տալիս. իւր ծերունի հօրը, որի միակըն էր ինքը, չէր օգնում և ոչ մի գործում։ Քոռ-Մոլլի մայր խնդլիկ Թամամն էլ՝ իբրև միակ որդու, միշտ կոկած էր պահում և նպաստում նրա ծուլութեան և երբ հայրն ուզում էր խրատել,

ծեծել նրան, Թամամն առաջն ընկնելով՝ նախատում էր մարդուն։ Քոռը հագնում էր գեղեցիկ գիւզըմանի կարմիր տրեխետէններով տրեխներ, գոյնզգոյն թելերից գործած գուլպաներ, որոնց ճտքերի վրայից պատատում էր խաս կտորից կարած կանաչ-կարմիր հէսկիներ—(զանգապանակի փոխանակ փաթաթան կամ ինչպէս գիւղացին է ասում՝ դօլաղներ), գլխին դնում էր կուժնուտ մորթուց կարած ցած գլխարկ... և այդ հագուստով փափագում էր ղրաւուլ, աբեշչիկ... և կամ եասաուլ դառնալ. Նրան միայն մի ձի էր պակաս, այն էլ, մի օր իրենց եզը հօրից թագուն՝ քշեց տարաւ ծախեց, մի ձի առաւ իւր սարքով, մի քանի ճուտ հաւաքեց փեշքեշ տարաւ ում հարկն էր և իր սրտի ցանկացած պաշտօններում նշանակուեց՝ հետզհետէ մէկից միւսն անցնելով։ Նա այդ պաշտօններում, մանաւանդ եասաուլի պաշտօնում շատ լըբրուեց. պատկառանք, խիղճ-խղճմտանք, պատիւ, ամօթխածութիւն, մարդավարութիւն... բոլորը կորցրեց։ Նա էլ հարսն ու աղջիկ չթողեց, բոլորին էլ բեդամաղ արաւ... Նա իւր մօր շնորհիւ շուտով ամուսնացաւ և մինչև քեօխվայ դառնալը վեց որդի ունեցաւ։ Բայց վա՜յ երեխանց աշխարհ գալուն՝ նրանց հայրը ձեռք չվերցրեց իւր դատարկ բնաւորութիւնից։ — Աշխատած, ձեռքը ձգած կոպէկները, բոլորն իւր անձի վրայ էր ծախսում։ Նրա համար փոյթ չէր, թէ երեխայքը բոլորովին մերկ, ոտաբոբիկ և գլխաբաց շրջում էին արևի, անձրևի տակ

և ձիւնի մէջ, միայն թէ՝ ինքը իւր սիրած հագուստով թաշկինակը գօտկից կախած պարէր հարսանիքներում, որ հարսն ու աղջիկ նայէին նրան։ Սրբեցողութիւնն, անառակ կեանք վարելը նրան և անգութ էր դարձրել և կերպարանափոխել...։ Անպիտանն իւր կնոջն էլ անհաւատարիմ էր՝ անհոգ և անփոյթ էր դէպի նա։ Այդ տեսակ կրթութեամբ և վարք ու բարքով նա քեօխվայ էլ դարձաւ, որով անբարոյական ազդեցութիւն արաւ իրեն յանձնած ժողովրդի՝ գիւղացիների վրայ։ Նրա կեանքը, լի էր տգէտ քեօխվաներին յատուկ հազարաւոր քստմնելի պատկերներով և ինչպէս գիւղացին էր ասում՝ «երկրորդ տեսակ մորեխ էր դարձել» վերոյիշեալ գիւղերի ժողովրդի համար, որ ուտում էր և՛ նրանց արտը, և՛ հացը, և՛ ամեն բան...

Քեօխվայ Մ-ն իւր օգնականների հետ միասին Ռ. գիւղը մտան, ուր քիչ ժամանակից յետոյ մի աղիողորմ աղաղակ բարձրացաւ։ Ամենքը տեսնում էին, թէ ձիաւորներն ինչպէս անխըղճաբար և սարսափելի կերպով ծեծում են գիւղացի մի երիտասարդի, որը համարձակւում էր նրանց մատնացոյց անել, թէ գիւղում կան մարդիկ (ունևորներ), որոնք իրենց մորեխակոռի հերթը դեռ չեն լրացրել, թէ կան և ա՛յնպիսիները, որոնք մինչև անգամ կոռ, բեգիար էլ չեն գնում և թէ՝ ինքը (քեասիբը), մէկի տեղ մի քանի անգամ է գնացել...

—Վա՜յ, վա՜յ... ա՛ անաստօծնի, ինձ խե՞ էք

մորթըմ, բա խղճմտանք չունէ՞ք... վա՛յ նա՛նի ջան, վա՛յ կողքս կոտրեցին, վա՛յ...։ Ահա գիւղականի հեծող ձայնը, որը բարբարոս մարդուն՝ խղճահարել չի կարող, բայց մանաւանդ տգէտ բարբարոսին։

Երիտասարդին անիրաւաբար ծեծում էին իւր սեպհական սրահի տակ, իւր կնոջ աչքի առաջ, որը նոյնպէս իւր քթկալն արդէն թաց էր արել արտասուքի յորդառատ կաթիլներով և այս ու այն կողմն ընկնելով՝ ուզում էր իւր գանակոծուող ամուսնուն գայլազգացների ձեռքից խլել։

—Վա՛յ, վա՛յ... սպանիլ մի՛ք, կը գնամ....— ստիպուած պաղատեց գիւղացին․—ձեզ մատաղ բո՛լա, սպանեցի՛ք, խեղճ եմ... վա՛յ...։

Նրանք երիտասարդին անբան արարածի նման երկար քաշքշելուց յետոյ՝ թիերով, աւելներով ու բահով բեռնաւորեցին ու ճանապարհ դրին դէպի մորեխատեղ։

Գ.

Երիտասարդը գնաց, իսկ նրա նորատին մընաց տանը։ Նա մենակ էր չորս պատերի մէջ, կիսանթեղ կրակի ածխակոթերը շեղջի մէջ դեռ մլռում, ծխում էին։ Դուրսը մութ գիշեր էր․ հարսը պառկած էր անկողնում․ նա անքուն աչքերը յառած դէպի ծխանին, ուշն ու շունչն իրեն քաշած՝ սարսափում էր մենակութիւնից․ նրա սև ու սիրուն աչքերը րոպէապէս փակւում-բացւում էին,

բայց ահը սիրտն ընկած՝ չէր կարողանում քնել, մոռանալ վիշապների պատկերները․ ինչ ասես, որ գեղջկուհու աչքին չէր երևում, կարծես տունը գայլ էր դառել և նրան պիտի կլանէր, ամեն մի շշիւն նրան հալ ու մաշ էր անում...։ Եւ ահա գիշերուայ այդ ժամին նրա դուռը բաղխեցին։

—Բա՛ց արա։

—Վա՛յ․—ասաց ու անկողնուց յանկարծ վեր թռաւ։ Գեղջկուհին արթնացաւ սարսափահար և կոպիտ բաղխումից դողդողալով՝ ասաց.

—Ո՞վ էք, ի՞նչ էք ուզըմ էս վախտիս։

—Մենք ենք, մե՛նք, բա՛ց արա․—թուրքերէն լեզուով ասացին վախեցնող ձայները։

—Վա՛յ, ղաչաղնի են.—աւելի վախենալով ասաց նա։

—Բա՛ց.—սպառնացին դրսից։

—Դուք ո՞վ էք, գիշերուայ էս չախին ի՞նչ կայ, ընչի՞ բաց անեմ դուռս.—ներսից դարձեալ կրկնեց անտէր անտիրական կինը, որի զէնքերը կրակի ածխակոթերն էին միայն և պաշտպանը՝ խրճիթի սիւները։

—Դուռը բա՛ց։

—Սրանք կասես թէ թուրքեր չեն․—ինքն իր մտքում ասեց կինը՝ կասկածելով ձայների իսկական լինելու վրայ և լռեց, իսկ ձայները շարունակեցին՝

—Բա՛ց։

—Որ մտնեն ես ինչ անեմ, դո՞րը փախչեմ, մօ-

տիկ հըրևան էլա չունեմ, որ ձէնս մանայ հարայլս հաս լի.—շշնջում էր նա։

—Վխցնիլ մի՛ք ջէյրանխս.—ասաց Քոռ-Մոլլէն իւր ընկերներին.—հայերէն խօսցէք.:.

—Թագուհիր.—սիրային ձայնով Մոլլէն ասաց հայերէն։ Հարսը մատը կծեց ու լռեց։

—Ա՛ղջի, քե հըմար կանֆետ ու քիշմիշ եմ բերել, բա՛ց արա...

—Բաց չե՛մ անիլ.—Թագուհիրը ճանաչելով նրանց ձայները, բարձրացրեց և իւր ձայնը.—ինչ ճամբով եկել էք, էլի ընտեղով ե՛տ դառէք, ես ձեր ասածը չե՛մ... զօրթ ա, քեասիբի կնիկ եմ, ամա նամուսով եմ.—ասաց և դէպի ծխանին դառնալով ուժգին կերպով «հարա՜յ» ծղրտաց, բայց գիւղացիք քնած էին, իսկ Թագուհիրի խրճիթը հարևաններից հեռու էր. ոչ ոք այս անգամ չը լսեց նրան։

—Աղջի, ի՞նչ ես հարայ կանչըմ, քե հու ուտիլ չի գենք, բաց արա՝ հաւից-ճուտից զատից մորթի ուտենք՝ մարդիդ կուրտեղից ետ կանչենք՝ նրա տեղն ուրիշ մարդ ղրկենք։

—Բաց չե՛մ անիլ.—ասաց ու կրկին լռեց Թագուհիր հարսը, մօտեցաւ մլող օջախին, ընտրեց, վեր առաւ կրակից ծայրը վառուած մի ածխակոթ, կրկին եկաւ դրան ետևը կանգնեց։ Դուռը շարունակ բաղխում էին և կեղծ ու պատիր ձայներով համոզում, որ բանայ։ Բայց մաքուր գեղջկուհին հասկանալով եկողների անբարոյական միտքը, ածխակոթը պատրաս-

տեց դրեց ուսին ու սպասեց յաջող դէպքին։

—Աղջի, քե՛ չենք ասըմ բա՛ց արա՞։-Հարսը դարձեալ լուռ էր, իսկ նրանք իրենց կոպիտ բաղխումն ու խօսքերը կամաց-կամաց խստացնում էին և սպառնում ասելով՝

—Աղջի, բա՛ց արա, թէ չէ դուռդ կը կոտրենք, երեքով միասին նի՛ կը մտնենք՝ էնղադար կըթակենք, որ դու էլ մարդիդ օրին կըհասնես...—գեղջկուհու լռութիւնն աւելի բարկացնում էր նրանց։

—Ա՛ լաչառ անզգամ, քե՛ չենք ասըմ բաց արա՞։

—Ը՛հ, թէ նի կը մտնէ՜ք, ես ձեզ բաց ա՛նիլ շհանց կը տամ.—վրէժխնդրութեամբ ասում էր իւր մտքում արդէն վախը կորցրած Թագուհիրը։

—Կոտրեցէ՛ք, քացի տըւէ՛ք, ադա լնգի, փըթըհա՜ն արա.—վերջապէս վճռական կերպով ասաց քեօխվի բարբարոս ձայնը։ Բայց հէնց դուռը փեղկահան եղաւ ընկաւ թէ չէ, լսուեց.

—Դուք մարդիս կաշին պուկիլով ճա՛մբայ գցեցիք արտասունքն աչքերին, հըմի էլ եկել էք, թէ «հաւ մորթի ուտենք ու... ետ կանչե՛նք». ես իմ նամուսը ձեր ձեռը չե՛մ տալ...,—ասաց և ժամանակ չը կորցնելով կրկին ուժգին «հարա՜յ» ծղըրտաց, պտտեց ահագին ածխակոթն ու ջարդուփշուր արաւ տանուտէրին...։ Մթութեան մէջ յանկարծ կայծեր ցրուեցին և կնոջ ճիչ ու աղաղակը բարձրանալուն պէս մարդիկ ու շներն իրար խառնուեցին և անամօթ կինորսները թողեցին փախան։

ԳԻՒՂԱԿԱՆ ԱՄԲՈԽԸ

Ա՛նձրև ա վա՛յ ա,
Ա՛րև ա վա՛յ ա։
Վա՛տը հու վա՛տ ա…
Լա՛ւն էլ անիծւա՛ծ ա։

Ժող. առ.

Ա.

Ձմեռնամտի օրերից մէկը մի քիչ տաքացել էր։ Մի խումբ քեասիբ գիւղացիք ժողովուել էին Խաչթառակ գիւղացի Թաթոս ապինի գետնափոր մարագի սոխաղքը (չէմքը), որի բերանը նայում էր դէպի հեռացած արեգակը։ Քեասիբներն իրենց ձորձերում փաթաթուած այդ ապահովող տեղը աբեգակի անւզօր և հազիւ զգալի ճառագայթների տակ արեգունի արած, խօսում էին իրենց անթիւ ու անբաւ ցաւերի մասին։

—Թա՛թոս ապի.—գլուխը քորելով ասաց մէկը։

—Հա՛ջան։

—Գեղը՛մն էլ մարդ չմնաց, որ չփորձենք. ամենն էլ գէլ դառան ու մեզ կերան, ամա, մի կէնտ մարդ ա մնացել, որ նրան էլ ատամներիս

տանք…, փորձենք… արի դու գնա նրա կուշտը, մեր կողմից խնդրուի, ասա գեղն ուզըմ ա, որ նա մեզ քեօխվայ լի…։

—Էն ո՞վ ա, Ա՛ւագ ապէր։

—Տիրա՛ցու Սարգիսը.—պատասխանեց նա, յուսալով, որ ամենքն իրեն համակարծիք են լինելու։

—Օ՜հ, ողորմի ք՚հօրը. էտա, գտե՛լ ես, հլէ մեր մտքինն էլ նա էր։

—Ձլի՜ս զորբա քեօխվացու ա է, էլ խօսալու տե՛ղ չունի.—ամեն կողմից վկայեցին նրանք և Թաթոս ապինին խնդրեցին, որ էլ ժամանակ չկորցնի հէնց այդ երեկոյ աշխատի անպատճառ բանը գլուխ բերել։

—Շա՛տ լաւ, որ ա՛սըմ էք, կը գնամ։

Թաթոս ապին թէև աղքատ, բայց գիւղում յայտնի, մաքուր և բնատուր ձիրք ունեցող մարդ էր ասել խօսելու մէջ։ Նա նոր էր վերադարձել Աղստափից, ուր նա հաստատ լսել էր, որ իրենց մասի պրիստաւը կիրակի օրը, ամսի 25-ին, պէտք է գնայ Քարվանսարայ գիւղի փոստի կայարանը, Խ. գիւղի տանուտէրի ընտրութիւն անելու. ուստի այդ բանը յայտնել էր իւր կողմի մարդկանց և շատ էր աշխատում տիրացու Սարգսի քեօխվայ դառնալու մասին, որին ազնիւ մարդ էր ճանաչում նա։ Երեկոյեան ժամանակ նա գնաց Սարգսի մօտ։

Տիրացուն եափնջին ուսերին գցած, ոտնկախ նստած էր գիւղական սրահի տակ—թախտի վրայ։

Թաթոսը շներին հաչեցնելով, մօտեցաւ Սարգսին և ասաց.

—Բարի աջողը՛մ քե, տի՛րացու Սարգիս ջան։

—Ա շ՜ուն։ Այ Աստու բարին քե, Թա՛թոս քեօխվայ, էտ ո՞ր խաչը, ո՞ր քամին պտտեց քե մեր տան վրա, խե՜ր ըլի...

—Էտ մի՛ ասիլ, էտ։

—Բա ի՞նչ ասեմ։

—Ասա՝ Թա՛թոս, էտ հու քառսունըհինգ տըրեկան ես, խի՞ ես տհենց սիպտակել։

—Էլ ի՞նչ հըրցնեմ, կասես էլի.—պատասխանեց Սարգիսը։

—Գնանք գոմը. ըստի ցուրտ ա, կեցս էլ չոր չկայ, ընտի կասեմ։

—Գնա՛նք, հա՛, ընտի տաք կլի.—ասաց Սարգիսը։

Նրանք մտան գոմն, ուր անասունները դարմանը կերել, նստոտել և հանգիստ որոճում էին. ոտնկախ նստեցին ախոռի վրայ և խօսացին.

—Սա՛րգիս ջան.—ասաց Թաթոս ապին։

—Հրամա՛յի։

—Հրա՛մանքդ բարի. դէ լսի ա՛սեմ։

—Ասա՛, լսըմ եմ։

—Մենակ իմ մազերը չի էս օրն ընկել, գեղըմն ինձանից ջահիլնի էլ կան, որոնց գլուխը վաղուց ա սիպտակել. դա մեր դարդից ու ջաբրից ա։ Գեղըմն ինչղայդի ջաբրն ասես, մեզ պէս քեասիբ-քիւսուբի գլխին ա դրած. ո՛չ քուն ունենք, ո՛չ

ղարար՝ (հանգիստ). էս ա կրի՛ հա կրի՛, տա՛ր հա տա՛ր, բի՛ հա բի՛, տո՛ւ հա տո՛ւ... էնքան տարել, կրել, տուել ենք, որ հալերնըմս հալ չի մնացել, ջլըս դարդակուել ենք։ Դրանք մեզ քանդեցին, քարը քսեցին... Հմի դու մեր գեղի լաւ մարդն ես, Աստոծ տուել ա, խնայել չի՝ խելք ու շնորք ունիս, գրի սեւն ու սիպտակն իմանըմ ես, խի՞ ես թողըմ, որ մեզ էս օրը գցեն... տե՛նըմ չես ոտի տակի կորցնըմ են մե՛զ՝ ճտներից (վզներից) հետ պարտքի մէջ խրուել ենք, ոչ կեցներս չոր ունենք, ոչ բողազներիս կըրակուր.. մի՛ խօսքով՝ միսներս կերել են, ոսկրնե՛րս ա մնացել, որ ընէլ ուտեն... արի դու մեզ թրահմ արա (ողորմիր), խղճա՛... զէօրէն որ ճուտերին վրայ ա տալի, նրանք թխսի թեւերի տակն են վազտալի...

—Ի՞նչ կայ, Թաթոս ապի, ի՞նչ ես աղատ-աղատ, խւքիւր-խւքիւր գանգատ անըմ, ես ի՞նչ անեմ, ի՞նչ կայ ձեռիս. ես իրաւունք չունեմ.—պատասխանեց տի՛րացուն, կարծես գզալով Թաթոսի մտքինը։

—Խի՞, գիդըմ չե՞ս, ա՛յ ես քե մատաղ, աչքիդ ղա՛քին չի ամեն բա՜ն...

—Ես գիտամ, որ մի բանի հըմար ես եկել ըռանց էն չի, ասա տենամ.—Թաթոսի կրկնողութիւններն ընդհատելով ասաց Սարգիսը։

—Ես ե՛կել եմ քե միւննա՛թ անեմ, որ կամք տաս քե քեօխվայ ջոկենք.—ասաց Թաթոսը։

—Ես որ քեօխվայ դառնամ, դուք կոռ ու բէգիառ չէք գնալո՞ւ, Թա՛թոս ապէր։

—Ա՛ ես քու ըևին մատաղ, ես հու ա՛սըմ չեմ, թէ կոռ ու բէգիառ չես ղըրկելու...

—Հաբա՞։

—Ես ասըմ եմ՝ մ’հետ որ ինձ ղըրկես, մ’հետ էլ Եաղախուրուն ղըրկես, մ’հետ էլ Ղոնդաղսազին, գիժ Ուհանին, Քիքինի տղին..., Բա Աստօծ վէ կունի՞, որ ով սուրուներով ոչխար, տաւար ունի, հինգ-վեց գէօմէշ ա կթըմ, եռսուն-քառսուն էլ կով, տասից տասնըհինգ ըրավար (օրավար) ցորեն ու գարի ա հընձըմ, կէս էտ չափ էլ կորեկ..., ով որ օխտն ութ տղայ ունի՝ մինը տաւարն ա պըհըմ, մինը խոզերը, ոչխարը, մինը վարող-ցանող ա, միմինը քաղքիցն ա ջիբը լիքն աշխատանք բերըմ, մէկէլը մի ուրիշ տեղից ա խազնայ թուփ անըմ, տունը լցնըմ... Էտղայդի մարդիկը տարէնը հինգ հետ կոռ ու բէգիառի իրես չե՛ն տենըմ. ամեն անգամ հէնց մենք՝ քեասիբներս տասը նրանց չափ գնըմ, տանջըւըմ չըչարըւըմ ենք. Էտ Աստօծ վէ կունի՞, որ կոռըտեղից հլա տուն չեմ հասել, քու Մոլլէն մընէլ ա կոռ ասը՞մ, բա նա խղճմտանք ունի՞, անաստօծ չի՞...,—Թաթոս ապին այրուած սրտով, կրակուած կաշիով անբաւ դառնութիւններ թափեց տիրացու Սարգսի գլխին. իսկ նա ձեռի փայտով հողը փորփորելով, երկար լռելուց յետոյ՝ ասաց.

—Թա՛թոս ապէր։

—Հա՛ջան.—պատասխանեց նա։

—Լա՛ւ ես ասըմ, ամա ես մենակ մարդ եմ, քէօմակ չունեմ, քեօխվութինը որ բոյինս (յանձս) ունեմ, բա տունս ո՞վ կառավարի։

—Մե՛նք, մե՛նք. ինչ որ հրամայես, կը կատարենք, միայն թէ՝ դու էդ անիրաւ հարուստներին թա՛լիմ տաս։ Դրանք էս գեղի աղքատների տունը քանդողնին են. դրանք ամենին էլ պարտքակոխ արին՝ թումանին վեց, օխտը շահի, թաղարին կէս թաղար շահ են առնըմ. էհ, ո՞ր մինն ասեմ, որը թողամ, ասելով կ’հատնի՞։

—Թա՛թոս, ես կա՛րալ չեմ քեօխվայ դառնալ, ամա որ դա՛ռայ, ծ... գիտե՞ս ինչ դեմ անիլ՝ դրանց կաշին մա՛շկիլ, տի՛կ բդեմ տալ, ինձ էլ են էրել խրովել...

—Հա՛, ղորմի ք’հօրը, ես քու լե՛զուիդ ու բերանիդ մատաղ, որ մեր սրտի գդալիցն ես ջուր խմըմ. մենք էլ հէնց էտղայդի քեօ՛խվի ենք ման գալի է... Լսել ե՞ս, Սարգիս ջան։

—Ի՞նչը։

—Քեօխվայ ջոկելու ժըմանակը ջլե՛ս մոտացել ա. ես ըրէ՛կունը եկայ Դաղքասամանից.. թուրք պրիստաւին տեհայ, նա ասեց, որ ամսիս քսանըհինգին նաչալնիկի պըմբօշնիկը Քրվըսրի փոշտն ա գալու, որ հասարակութինն ընտեղ կանչի՝ քեօխվայ ջոկի մեր գեղի հըմար...։ Կիրակի օրը ձիդ պատրաստի, չորերդ, փափախդ բանդ դըստի, բանն

ուրիշ ղայդի ենք շուռ տալու՝ մեր քեօխվացուն դո՛ւ ես ու դո՛ւ։

—Պըմբօշնիկի գալը մենակ քե՛ ա այդնի՞, թէ Եադախուրին էլ ա բան գիտըմ։

—Ըրևըմ ա նրանք էլ են լսել, որ ըստուր ընտուր տուն են մտնըմ, ամա...

—«Ամա» ի՞նչ։

—Գեղը մեր կո՛ղմն ա, նրանք մարդ չունեն։

—Հըւատա՞մ։

—Հըւա՛տա։ Ղօ՛րթ ա, քեասիբ-քիւսուբ են իրեսներին կա՛րըմ չեն բան ասեն, ամա ամենին էլ ատամիս եմ տուել, ջանե՛րնին ա հասել՝ էլ համբերելու չեն՝ մեր ղոլն են անցկենալու։

—Թա՛թոս ապէր.--գետնին նայելով ասաց տիրացուն.—Էն աղաք էլ՝ գիտես, որ էլի ուզեցին ինձ քեօխվայ ջոկել, դառայ ոչ...

—Հա՛, լա՛ւ գիդամ, մինն էլ ես ի, որ ուզում ի, չլաւ, թէ չէ՛, դու հմի քեօխվայ իր.—խօսքն ընդհատեց Թաթոսը։

—Դէ էտ ա, որ մի՛տդ ա, գի՛տես, պէտքա աշխատես, որ զուր չի անց կենայ՝ բէյղափիլ անըմս քեօխվացու վեր կանէք ու ես չեմ ջոկուիլ, խայտառակութին դուս կը գայ...

—Վա՛յ, վա՛յ, վա՛յ. էտ ի՞նչ ես հրամայըմ տի՛րացու ջան. հըւա՛տա, որ գեղըմը, սավահի էն գիլանոնցից, ուրիշ չէ մա՛րդ չկայ քե հըմար. չիմ էլ խելքի են եկել, վախիլ մի։

—Մարկոսը, Ղուկաս ապէրը... ամենն էլ ճուղըմ են...

—Օ՛, որ իմանան թէ խօսք ես տուել, ըշխարի չափ ուրխանալ գեն, երկնքի չափ բացրանալ։

Սարգսի մեղմ խօսքերից ու տրամադրութիւնից նկատւում էր, որ նա արդէն համաձայնուելու է։ Վերջապէս նա խօսք տուեց ասելով։

—Ես քե հըւատըմ եմ, Թա՛թոս ապի, գնա ա՛սա, որ հըմաձայն եմ։

—Դէ ճա՛կատդ դէսն արա մի պաչեմ.—Թաթոսն ուրախացած վրայ ընկաւ՝ համբուրեց տիրացուի ճակատը և օրհնելով ասաց.

—Աստօծ կեանքդ էրգեան անի, որ գեղի խնդիրն անտես չարիր, դէ, ես գնըմ եմ, միքանի մարդիկ կան նրանց էլ շուռ տամ, դու քու շորերի պատրաստութինը տես...

Թաթոսը տիրացուի ձեռը սեղմեց, կրկին անգամ համբուրեց նրա պարզ ճակատն և ուրախութեամբ ոգևորուած, աչքը հեռուն կթած, ոտներն այս և այն քարերին խփելով՝ դարձաւ մարագի շէմքը և սպասող ամբոխին յայտնեց քեօխվացուի համաձայնութիւնը։

—Տիրացուն հըմաձա՛յնըւեց, նա խոստանըմ ա, որ եթէ քե՛օխվայ դառնայ, քեասիբներին ղուշի պէս իրան թևերի տակ պըհի... Նա չափից դուս բարկացած ա հարուստների վրայ։ Օ՛... թէ դա-

ռաւ, էն ա մաթրախի (մտրակի) տա՛կ դի պըհէլ նրանց...

—Էտ ի՜նչ լաւ բան ա լել, որ ղաբուլ ա կա-ցել. էն առաջուայ քեօխվութենովը մենք դրան ա-ղաք գցեցինք, դա ետ մանչեց.—ասաց մինը նրանցից։

—Հա՛, էտ դրուստ ա, ինքն էլ ասեց.—պա-տասխանեց Թաթոսը։

—Է՛հ, հալբաթ մարդ ա, տենըմ ա, որ գեղը ոտի տակի կորչըմ ա, ըռազի ա լըմ էլի։

—Դէ էլ խօսալ մի՛ք, վե՛ կացէք գնանք շնոր-հակալութին անենք տիրացուին.—առաջարկեց Քի-քի ապին։

—Լաւ ա ասըմ, վե՛ կացէք գնանք։

—Գնա՛նք։

—Գնա՛նք։

Ամենքը վեր կացան, փայտներն առան՝ գնա-ցին Սարգսի մօտ, շնորհակալութիւն արին և կըր-կին վերադարձան նոյն տեղը։

—Տղե՛ք, գարխս ա՛ջ եմ գցըմ, լաւից էլ լա՛ւ քեօխվայ պէտքա լի դա, ես գիդամ...

—Խէ՞, տե՛նըմ չէք մարդը ժամըմը ո՛նց ա սըր-տալի, աղատով կարդը՞մ, նհենց էլ քեօխվութին կանի էլի...։

—Տղե՛ք, խըստովանք լի, դրա ղամշու (մըտ-րակի) տակ ընկած մարդը չուեըլ էրկու տարին իրան կարալ չի դըստիլ հա՛։

—Շատ գիժ քեօխվայ ա լէլու, շա՛տ...

—Ա՛ղպէր, թէ մի էրկու-իրեք անգամ էլ ինձ

կթըրմփացնի, ըռանց էն չի, ամա որ էտ հա-րուստներին՝ ի՛լհաքիմ՝ (մանաւանդ) մի քանինը կան, նրանց որ թխել, թրթփե՛լ էր, սրտերնիս եղ կըքսէինք...

—Հա՛փիյ է՛, հա՛փի՜յ է՛.—սաբր եկաւ ցրտից կուչ եկած գիւղացիներից մէկին։

—Խէր, տէր թագաւոր Աստօծ, խէր.—միա-բերան գոչեցին ամենքը։

—Ջուխտ փաշտաց, Սարգիսը լա՛ւ քեօխվու-թին բըդի անիլ.—գուշակեցին ամենքը։

—Հա՛փիյ է՛, հա՛փի՜յ է՛.—կրկին փռշտաց նա։

—Խէ՜ր ասըմ չե՛մ, էլի ջուխտ եկաւ։

Օրը կիրակի էր. քեասիբները երկար ժամա-նակ նստոտած Թաթոսի գոմի շէմքում՝ այդպիսի անմեղ գուշակութիւններ էին անում և լաւ-լաւ ապագայ խոստանում ընտրելի քեօխվային, որը տիրացութիւնից 1876 թուին մի նոր ասպարէզ էր մտնում՝ հարուստներին պատժելու վրէժխնդիր հա-գով։

Տիրացուն միջակ հասակի, առողջ կազմուած-քով, սիրունատես, շիկաբեխ, չալաչք և եռանդուն մի տղամարդ էր. նա որ եկեղեցում երգում էր, ինչպէս գիւղացին է նկարագրում՝ «Խորհուրդ խո-րի» կամ շարական էր սկսում, օճօրքից հող էր թափւում, այնքան բարձր և ազդու ձայն ունէր...

Ե.

Ընտրութեան օրը մօտենում էր. հին տանուտէրն իր գետնափոր տան օջաղի առաջ նստած տըխուր կերպով խօսում էր կնոջ հետ իւր ժամանակաւոր իշխանութեան անկման մասին և ասում.

—Ա՛ կնիկ, տեհար ինչ անխելք ժամ եկա՞յ։

—Խէ՞։

—Դէ նհենց, որ գեղի շատ փայն ինձանից հեռացաւ։

—Եգո՞յ։

—Եգոն էն ա՝ որ չիմ Սարգսի ղոլէն են կաղնիլու ու բանս բուրդ անեն։ Թի՛ւ, սաս տօ ա՛նխելք, հլէ Թաթոսի հետ էլա բարեկամացիր է.—ինքն իրեն ասում էր հին քեօխվեն, իսկ կինը նըրան թէ՝

—Դէ ո՞նց անեմ, գիտէիր ո՞չ, որ Թաթոսն ըռէխը պատռած մարդ ա, քե վնաս կտա՞յ, ընչի՞ չիր դոստանըմ հետը…

—Է՜, էլ ա՛սըմ ես, թէ ի՞նչ անես, սղալուել եմ։ Սարգիսը որ քեօ՛խվայ դառաւ, ինձ շատ վընաս կը տայ, նա վրէս շա՛տ ա չարացել։

—Ի՞նչ վնաս դի տալ.—հարցրեց կինը։

—Նա ինձանից նշաննին վե կալնիլու ժամանակ հաշիւ ու հեսաբ ա ուզելու, ես էլ մի քանի բան տակով եմ արել, գիտըմ չեմ՝ թէ ո՞նց անեմ, որ նրա ձեռիցն ազատուեմ։

—Եանի դու հմի յուսդ ջլիս կտրել ես, քե էլ չեն ջոկելո՞ւ։

—Չէ, նրա ղոլի մարդիկը աչքիս շատ են ըրեւըմ…

—Դէ ո՞նց անեմ, կրացիր ոչ թէ՝ խալխի հետ էնպէս եօլայ գնաս, որ վրաէրկու տրեան էլ ջոկուես՝ տունդ տեղդ դըստես, ընտուցի եդը ջըհանդամը, թէ քեօվութինդ կըկտրեն։ Միտդ չի գալի՞, էն ի՞նչ էր մեր հալը քեօխվայ դառնալուցդ առաջ. էս ա իրեք տարի ա աչքներս հու բաց ինք արել, էն ի՞նչ նեղութին էր, որ քաշըմ ինք… ոչ հագներիս շոր կար, ո՛չ բողազներիս հաց, մի տուն չունինք, որ մէջ ապրենք. հէնց քեօխվայ դառար թէ չէ՝ էտ ամենն էլ դըստուեց—հին շորերի տեղ՝ թազայ կեցանք, գարու հացի տեղ՝ ցորեն կերանք, ամեն աշունք մեր խոզի խաշլամեն, մեր եղը, պանիրը պակասը՛մ չէր. միշտ բերըմ ին՝ թազուն թէ աշկար։—Քեօխվութինդ կտրեցին թէ չէ՝ էլի դառն աղքատութենի մէջ դենք ընկնիլ։

—Ասըմ ես, թէ ի՞նչ անես, քեօխվութինը որ կայ, աղութին ա, իմ պապերն ըսկի տրեխ չին ճարըմ որ կենան, ամա, ես որ քեօխվայ դառայ լապչիննի կեցայ, գըլըբարդին դրի գլխիս, քար ու կըրով օթախ պատել տուի… Է, ո՞ր մինն ասեմ, ո՞րը թողեմ… ջհանդա՛մը, դա՛րդ չեմ անիլ, թէոր Սարգիսը չջոկուի… Ա՛ կնիկ, թէ ասըմ եմ Թաթոսին կաշառք խոստանամ, վախըմ եմ Սարգսին ասի. գիդըմ չեմ թէ ի՞նչ հնարք անեմ, որ տիրացուն

քեօխվայ չըդառնայ, ես վախըմ եմ թէ նա մեր էն բանը… լխս գցի…

—Դուշման (թշնամի) մարդն ի՞նչ ասես, կանի.—պատասխանեց կինը, իսկ մարդը հոգոց քաշեց և սկսեց մտածման մէջ չոփի ծայրով մոխիրը խառնել։

Այդ միջոցին դրսից մի ձայն լսուեց՝

—Ա՛յ քեօխվայ, ա՛յ քեօխվայ.—տանուտէրը տեղից յանկարծ վեր թռչելով՝ դուրս նետուեց և կանգնեց մի Թուրք եասաուլի առաջ, նրա ձեռքից մի փակած թուղթ առաւ, շտապով բացեց, դրեց գրպանը և կանչեց.

—Ա՛ղա, Սա՛քօ, Սա՛քօ։

—Համմէ.—պատասխանեց մի վերջին աղքատ գիւղացի։

—Էս եասաուլի ձին արի տար գոմդ քաշի, կապի ու Թուրքի հըմար էլ հացից զատից պատրաստի, որ գայ ուտի։

—Քեօխվայ ջան, բա որ տեղ չունեմ, եասաուլին ո՞րտեղ պըհեմ. մի քցուլակ ունենք, ընտեղ էլ մենք ենք տեղաւորուըմ…

—Ըախիդ մի՛ անիլ, օջաղի մի ղոլէն դո՛ւք եօլայ գնացէք, մի ղոլէն էլ նա։

Քեօխվէն եասաուլին ըստ սովորութեան տեղաւորեց գեղջուկի խրճիթում և ինքը շփոթուածի պէս դէս ու դէն ընկաւ, ձեռի թուղթն այստեղ, այնտեղ մարդկանց մօտ կարդաց և խօսաց…։ Ամենքը հետաքրքրւում էին նրանով և մօտ գը-

նալով նրան, հարցնում, իմանում էին թղթի ինչ լինելը…

Գ.

Հասաւ որոշեալ ժամանակը, չըգիտեմ ո՞ր ամսի 25-ն էր, բայց տաք առաւօտ էր երկինքն ամպոտել էր։ Ղազախի գաւառապետից հին տանուտէրի վրայ նորի ընտրութեան խիստ հրաման էր եկել, որ նա՝ հին քեօխվէն, Խաչթառակայ գիւղական հասարակութիւնը Քարվանսարի փոստի կայարանը ժողովի, ուր տեղի պիտի ունենար Սարգսի կամ մի ուրիշի ընտրութիւնը։ Հին քեօխվայ «Մոլլա» մականուանուածի եռամեայ պաշտօնավարութեան ժամանակամիջոցն արդէն լրացել էր։ Ժողովրդի մեծամասնութիւնը դժգոհ էր նրանից՝ երես էր թեքել նրա կաշառակեր երեսից և պատրաստւում էր ընտրել այնպիսի մի տանուտէր, որը գոնէ մի փոքր մեղմացնէր հարուստներից և վաշխառուներից… խիստ հալածուած գեղջուկների դառը դրութիւնը։ Բայց ի՜նչ սոսկալի ժամ, ի՜նչ սև օր էր լուսացել այդ օրը, այդ րոպէն Մոլլա քեօխվի համար. թէ ի՞նչ ալեկոծութեան ու մաղձոտ մտատանջութեան մէջ էր նրա անմաքուր ներքինը, այդ պարզ հայելու պէս ցոյց էր տալիս ժանգոտ քեօխվի արտաքինը։ Հսկայի նման լեռնականը դարձել էր թակած, ծեծած ղաւ՝ (վառելասունկ), նա նմանւում էր մի քանի ամսով անկողին ընկած հի-

ւանդի—քիթ ու պռունգը վեր էր թողել, ոտն ու ձեռը հաղիւ էր քաշում, օղուց խանձուած ու հաստացած սար ու քոլ թնդեցնող ձայնը, որից շատ գիւղացիներ վախեցել՝ հիւանդացել էին անգամ, բարակուել՝ կտրուել էր։ Նա մեծ փափախն աչքերն էր գցել՝ կարծես չէր ուզում մարդ տեսնել. տրխրել, տրտմել էր նրա հոգին ու միտքը. խօսում էր ակամայից, ծիծաղում մաղձալից...։ Նա երբեմն այսպէս էր շշնջում իւր քթի տակ՝ «մարդի զոռը, տղամարդի ղոչաղութինը բրաւունքի մէջ ա, երբոր բրաւունքը խլե՜ն, նա էլ է՜ն չի լի՛լ, ինչոր էր, նա թեւերը կտրած ղուշի կընմանի՝ կըթռթռայ-կըթըռթռայ, ոչովըռխին մտիկ չի անիլ... Վա՜յշշ..»—ասում ու հառաչում էր որդին մեռածի պէս։

Գիւղական հասարակութիւնն, արդէն պատրաստ էր Թաթոս ապօր հետ միասին և մի այդպիսի հրամանի էր սպասում, որ գրէր գաւառապետը։ Նրանք իմացան թէ չէ, ձիերը թամքեցին ու խումբ-խումբ ճանապարհ ընկան դէպի Քարվանսարայ։

Խ. Գիւղը բաժանուել էր երեք գիւղական անկանոն կուսակցութեան։ Զօրեղ կուսակցութիւնը, ինչպէս երևում էր, տէրացու Սարգսի կուսակցութիւնն էր՝ Թաթոս ապինի առաջնորդութեամբ։ Այդ կուսակիցների խումբն ամենից առաջ ճանապարհ ընկաւ։

Երկրորդ խումբը չոբան Գալթի կուսակիցներն էին և ամենանուազը՝ հին քեօխվինը, որ

բոլորից յետոյ էր գնում։ Հին քեօխվէն՝ Մոլլէն նստած էր իւր սև ձին. նա եափնջին վրէն ձգած մի խումբ գիւղացիների հետ քշում էին դէպի սէլհարք, բայց վա՜յ էն գնալուն, որ գնում էր, կարծես թէ ննջում էր ձիու վրայ։ Այնպէս տխուր էր նա, ինչպէս վերջնական աքսոր գնացողը. աշխարհս կարծես յաւիտեան խաւարած լինէր նրա համար... Քեօխվի սևասրտութինը նկատում էին և նրա կուսակիցները, բայց ճար չկար...

—Հը՞, քեօ՛խվայ, ի՞նչ ա լել քե, վախիլ մի՛, քե լաւ պըհի, կոտրուիլ մի՛, էլի քե ենք ջոկելու...—քաջալերում էին հետը գնացողները, բայց նա բոլորովին յուսահատուել էր և այդպիսի քաջալերութիւնները նապաստակի քաջալերութիւններ էին նրա համար։ Նա արդէն տեսնում էր, որ իւր առաջ հասարակութիւններ ոխերիմ թշնամի Սարգըսին ահագին խմբով շրջապատած, ուրախութիւններ անելով, պատուելով տանում է Ք. անպատճառ ընտրելու նրան. և երբ մէկը նրան նապաստակի սիրտ տալով ասում էր՝ «Մի՛ վախենալ, էլի քե դենք ջոկիլ...», նա միայն դառն կերպով ժպտում էր...

Քեօխվայ Մոլլէն, աւելի հալածակւում էր, աւելի գետինն էր ուզում անցնել ա՜յն ժամանակ, երբ հակառակորդի հետևեալ ծաղրական խօսքերն էր լսում.

—Քեօ՛խվա՜յ, հը՛հը՛, ո՞նց ա հմի, աշխարս սև ա մթնել գլխի՞դ, բա գիդըմ՛ չէ՞ր, որ իշխանու-

թինդ յաւիտենական չի, ժըմանակաւոր ա, դէ Եղօյի կալի ծէրին էլ կաղնի, էլ գոռայ է, ինչ ես քաշալի պէս փախախդ աչքերդ գցել ու փըշփշուտ կզան պէս ուսերդ քե քաշել։

—Դրա քարը ծովն ընկա՛ւ. էն էլ մի գովրան էր, որ անց կացրեց, էլ քեօխվութենի իրես չի՛ տենալ դա։

—Պա՛հ, պա՛հ, պա՛հ. ամա սա էլ կերաւ հա՛…

—Բա քեօ՛խվայ դառաւ որ մեր ցաւերի վրա՛յ մտածէ՞. էնա ըռէխն ընկածը սոված գէլի պէս կուլ էր գցում էլի…

—Հմի էլ կուտի…

—Ա՛րին ու քա՛ցախ կուտի, ա՛րին… բարձրաձայն պատասխանեց մինը, որ քեօխվեն լաւ լսի։

—Ա՛խ, մ՚հետ ինձ ջլի՜ս զուր տեղից թակե՜ց. էն ա, որ Աստօծ աջողաց Սարգիսը քեօ՛խվայ դառաւ, ղսասս (վրէժս) հանիլ դեմ… — Այդպիսի արհամարհական խօսակցութեամբ. քեօխվի վրիժառուներից մինքանիսը, որոնք ետ էին ընկել Սարգսի խմբից, շտապում էին նրան հասնելու։

Գ.

Բոլորովին ուրիշ կերպով էին տանում տիրացու Սարգսին։ Ղազար Թաթոս ապին, բրդոտ քուրքը հագին, Մակին, դարբին Ակոբը և միւսներն իբրև հին քեօխվի վրիժառուներ, նրան բարձրացնելու համար, որպէս և նրա հետևողներին, զինուորների պէս կարգով՝ կողքէ-կողք՝ իւրաքանչիւրը մի բարակ ձող իբրև հրացան կուրծքնուվայր յենելով՝ կանգնում էին տիրացուի ետևից, մի, երկու կամ երեք ձիաւոր էլ առաջ էին գցում, որոնք մտրակները բարձր բռնած՝ կազակի նման «խա՛բարդա՛» գոռալով ճանապարհ էին բաց անում, իսկ Սարգիսն իւր թիկնապահ զինուորների առաջ հրպարտութեամբ, ծիծաղն ու ժպիտը երեսներին, ձիերի սանձը քաշած յառաջ էին գնում. մի խումբ լաւ ձայն ունեցող երիտասարդներ էլ՝ հայերէն, թուրքերէն լեզուներով երգեր ու խաղեր, բայեաթիներ էին ասում։ Նրանք երբեմն արագ արագ՝ ընկնելով դաշտի գիւղ տեղը, ծափ էին տալիս, պարում, շշերով օղին գլխներին էին քաշում խմում և երբեմն ձիերի բերանը լայն դաշտի մէջ բաց թողնում՝ քշում, արշաւում ու աղաք—կտրուկի էին տալիս։ Նրանցից մի քեադխուդա Սարգսի քեօխվայ դառնալու մասին այնքան ուրախ էր և այնքան փափագում էր նրան ընտրուած տեսնել, որ գիւղում հեծնելու ձի չը գտնելով՝ նստել էր իւր փալանած զռան իշի վրայ ու նրանով էր արշաւում, անտէր էշն էլ ձիաւորների կարգից՝ ճանապարհից դուրս ընկնելով՝ դունչը ցցում, զռում ու խառանչում էր և փախած ժամանակ տիրոջ ոտները գետնին թափուած մեծ-մեծ քարերին էր դիպցնում անդադար, իսկ նրա ուղեկից ընկերնե-

ըը նրանով զուարճանում էին և քըքըլալէ ծիծաղելով կանչում.

—Հո՛շ, հո՛շ..., Մի՛դի ապի, հո՛շ... քշեցէ՛ք, քշեցէ՛ք առաջը կտրենք՝ ճանապարհ բերենք...—այդ կերպով երիտասարդները Խաչթառակից դէպի Քարվանսարայ մի քանի բլուր ու հովիտ էին անցել, իսկ մի քանի ծերունիներ, որոնք չէին կարողանում երիտասարդների պէս արշաւել, խաղալ, արշաւող խմբից ետ էին ընկել և ձիերը ծանր քշելով զրոյց էին անում ու կարծիքներ յայտնում ժամանակիս մարդկանց մասին...

—Քի՛քի, էհէ Քիքի՛.

—Հէյ։

—Խելքդ ժըմանակիցս ի՞նչ ա կտրըմ. էս ջահէլ-ջուհիլնին՝ որ բախրէքի պէս խաղսն են լել, յոյս կա՞յ՝ Սարգիսն էլա մեր ա՛սածը, մեր սրտինն ա լիլո՞ւ, թէ՞ չէ։

—Վա՛լլահ, չորս ղոլերնիս հէնց փիսացել ա, որ հա՛ւատս գալիս չի, թէ դա էլա մի խնամքով քեօխվայ լի...

—Տղեքն ասըմ են Թաթոսին լաւ-լաւ յոյսեր ա տուել։

—Ի՞նչ յոյսեր։

—Ասել ա «հարուստների հախիցը գալ դեմ»։

—Է՛, ասող շա՛տ ա լել, դու ա՛նող ասա։

—Դէ էս ա գնըմ ենք ջոկենք. տե՛նանք՝ դըրան էլ փորձենք...

—Քի՛քի ապէր։

—Հէյ։

— Ես ըտոնց հաւատըմ չեմ, ասա խի՞։

—Խի՞, Ա՛դամ ջան։

—Նհենց, որ մենք փորձով գիտանք՝ եզը, աչառը, ձին, գոմէշը... քանի ջահէլ ու. խա՛մ են—լուծը եա թո՛կ չեն տեհել, տրտինգ-տրտինգ են անըմ, երոր ուսներն ու ճիտները հըրհա՛րւըմ ա, էլ ձի՛գ չեն տալի... հմի դա (տիրացուն) քանի քեօ՛խվայ չի, աւելի լա՛ւ ասեմ՝ քանի նոր ա. բան շատ կասի, կպարծենայ, ամա հէ՛նց որ «անտէրին» կըվորի, էն վախտն էլ ո՛չ հարուստ կ՚երևայ աչքին, ո՛չ քեասիբ՝ ամենին էլ ջըրմը կդնի...

—Է՛...—կրկին գլխին պտտեց ու սուս կացաւ Խեչո ապին։ Ծերունին կարծես չէր հաւատում, թէ գիւղում կարող է գտնուել մի քեօխվայ, որն արդարութիւն պահպանէր հարուստների ու աղքատների այս և այն գործի ու գանգատների վերաբերութեամբ։

—Ա՛ Խեչ, ձիդ թա՛փուկ տու մերոնք շա՛տ հեռացան, էս անիծուածնին էլ ետևներիցս հասնըմ են։

Ծերունիները խօսակցութիւններն ընդհատելով արագացրին ձիերը։

Ե.

Աւելի հետաքրքիր էր լսել մի ուրիշ խումբ գիւղացիների խօսակցութիւններն և դիտողաբար տեսնել նրանց քեօխվացու Դաւիթ ապինի պատկերը։ Այն խումբը, գիւղի երրորդ կուսակցութիւնն էր։ Նրանք ոչ հին քեօխվայական էին և ո՛չ տիրացու Սարգիսական։ Այն խմբակն էլ ուզում էր իւր խելքի կտրած մարդուն քեօխվայացնել. նրանք էլ իրենց որոշ նպատակներն ունէին տգիտութեան տեսակէտից։ Այն կուսակցութեան ընտրելի քեօխվացուն «Զուլամա Դաւիթ ապին էր»։ Լուսանկարը գուցէ աւելի պարզ և գեղեցիկ հանէր նրա տեսքն ու պատկերը, բայց թող փորձէ գրիչը, գուցէ նա էլ կարողանայ մի փոքր գոնէ նմանացնել…

Նախ գծենք, որ Դաւիթ ապին իւր ձիուցը հաստ էր. նա մի մեծափափախ, տասն և հինգ տարի ձողաչափ գաւազանն ուսին հովութիւն արած, շլինքը վրացու սէլի թոփի նման հաստացրած մի մարդ էր։ Նրա անկանոն հաստութեան պատճառով բունն ու անդամներն իրարից զանազանել չէր կարելի։ Դաւիթը քսանամեայ հովուութիւնից մի քանի տարի էր, որ յետ դառնալով՝ քեդխուդայ՝ հասարակական մարդ էր դարձել, բայց այնուամենայնիւ պահպանէլ էր իւր հովուական բոլոր կոշտութիւնները։ Գիւղում, թաղական կռիւների ժամանակ, մրցանակը գովասանքով միշտ սա

էր տանում. թուխ ոչխարների կաթնով, սառնակն աղբիւրների ջրով ու եայլաղի՝ եալբուզ սարերի օդով սնուած Դաւիթ ապին՝ գոմշի ուժ ունէր, կռիւն սկսւում էր թէ չէ, նա իւր կոմբալագլուխ ցուպն առնում ընկնում էր իւր հակառակորդների մէջ, ձեռքին թքում էր ու առաջն ընկնողի գլուխը մի քանի տեղից ճեղքում…

Դաւիթը նստած էր իւր ձին, որը նրա տակ ճօճալով հազիւ առաջ էր գնում. սակայն, Դաւիթն իրեն՝ ձիու վրայ հպարտ քեօխվացուի դիրք էր տուել՝ հաստ ու կարմիր վիզը ուսերի մէջ տռուզացրել էր սովորականից աւելի և բրդոտ փափախը մի կողմի վրայ թեքել։ Նա իւր նոր հագած՝ քեօխվացուի հագուստին՝ անդադար, նայում հրճւում էր և զարմանում իւր վրայ։ Դաւիթ ապին հանգամանքից ստիպուած էր տանուտէր դառնում։ Նա, վաղուց, համաճարակ ցաւի կոտորածից զըրկուել էր իրեն հօտից, աղքատացել էր, այնպէս՝ որ վերջին տներից մինն էր դարձել Խ. գիւղում։ Դաւիթը լսել և տեսնում էր, որ գիւղում մարդ միայն քեօխվութիւնով է հարստանում և եթէ ինքն էլ քեօխվայ դառնայ, կարող է վաշխառու էլ դառնալ, կրկին հօտի տէր էլ դառնալ, այսինքն՝ կարող էր սրանից նրանից ձրի ոչխար հաւաքել իւր պաշտօնի ուժով՝ կաշառակերութիւնով, ուստի ուզում էր անպատճառ նպատակին հասնել։ Դաւիթն առաջ չէր էլ երևակայում, թէ կարող է քեօխվայ լինել մի ժամանակ, բայց նրա մօտ հարևանները,

համակրողները, մի․քանի անգամ չոր ու ցամաք Դաւիթ քեօխվայ անուանելով նրան, հաւատացրել էին, որ առաջիկայ ընտրութեանը տանուտէրութիւնը նրան են յանձնելու, ուստի, միմիայն մարմնի կազմուածքով հարուստ Դաւիթ ապին, շաբաթներից առաջ, նորահարսի պէս քեօխվայ դառնալու համար գլուխը կապել, կոկել էր․ նա գնացել էր իւր համագիւղացի «դուքանչի բրուտի» խանութից պարտքով մի․քանի գազ կանաչ ղադաք և կտաւ էր գնել ու մի երկարափեշ արխալուղ էր կարել տուել՝ հագել։ Նոր արխալուղը մեկդակած էր բամբակէ հաստ ու սպիտակ թելով, որի կարերը մի․քանի սաժէն հեռաւորութեան վրայ նայողին մարգերի ու ակոսների պէս էին երևում։ Նոր, բայց սովորականից աւելի մեծ փափախը, ճիշտ է, պառաւ ոչխարի մորթուց էր կարուած, բայց քեօխվացու Դաւիթն այնքան ջուր էր փչել վրէն, որ կոժնուտացել էր։ Դաւիթը իւր ոտների վրայ էլ էր զարմացել․ նա քառասուն և հինգ տարուայ տրեխներն այդ օրն առաջին անգամ հանել թողել էր իրենց պուճախում և նրանց տեղ հագել էր լայն և քըթերը նեղ չուստեր․ մի վզի բաշլուղ էր կարել երկար ծայների ափերին կարմիր զէհեր ու կանաչ աստառ էր գնել տուել և հաստ վիզը փաթաթել, ուսերովը՝ ետևի կողմի վրայ թառ տուել։ Դաւիթ ապին գլուխն ու երեսը նոյնպէս անխնամ․ք չէր թողել—մազերը կլոր կտրել, երեսը սիրուն սափրել էր տուել, բեխերը ոլորել, սրել՝ բլիթեգտու կոթեր

էր դարձրել, և այդ հագուստի շուքից՝ չտեսի պէս հպարտացած իւր հաւատակիցների հետ գնում էր Ֆարվանսարի փոստում տանուտէր ընտրուելու։ Նա իւր արտաքին կողմով արդէն տանուտէրի պատկեր ունէր, միայն ընտրուել և հաստատուելն էր պակասում։

Դաւթի հետ ընտրելու գնացողները յոյս ունէին, որ իրենց նպատակին հասնելու են․ նրանք երկու պատգամաւոր էին ընտրել իրենցից և ուղարկել հին տանուտէրի մարդկանց մօտ, որ համոզեն նրանց իրենց կողմն անցնելու, հակառակ դէպ․քում, երբ տեսնեն, որ Սարգիսն է ընտրւում։ Իսկ իրեն․ք իրենց քեօխվացուին, հէնց նրա երեսին գովաբանում, երկի․ն․ք էին բարձրացնում վատաբանելով միւսներին։ Խումբ-խումբ գնացող գիւղացիների այս վերջին երկու խմբերն իրարից շատ հեռու չէին, այնպէս որ՝ սրանց խօսեցածները նրանց լսելի էր լինում։

—Տղէ․ք, մի հլա ետ մտիկ տուէ․ք, հրէ, հրէ. հին քեօխվլի վեթողած քթին է՞.—Հը՛հը՛, ո՞նց ա․․—ասաց Դաւթի կուսակիցներից մինը, խիստ արհամարհելով նրան։

—Հա՛, տե՛նըմ եմ. պոզ ա դառել, պո՛զ․—պատասխանեց միւսը։

—Դու․ք պոզ դա՛ռնալն էք ասըմ, բա պռօշե՞ն, հրէ, հրէ․․․կա՛սես թէ կողքը պատռած ջուալի տակ ըլլի։

—Ղօ՛րթոր ա՛դա, ջլիս կախ ա լել, ոտիտակն ընկել․․․

—Վա՛յ է՛, ասա տօ տնա՛քանդներ, էնդայդէ անշնորքին խե՞ էք քեօխվայ ջոկըմ, աչքներդ ո՞րդի էր.—նկատեց մի ուրիշը։

—Սա՛ ա ջոկել, սա՛, էն վախտը սա նրա ղո՛լէն էր...

—Ո՞վ, ե՞ս։

—Բա ե՞ս։

—Հա՛, մեղքը խոստովանելի ա՝ ես դրա ջոկելու տարին շատ մարդ խաբեցի..., ամա դէ անցկացածն էլ ետ չի գալ, սղալուել եմ էլի...

—Մթամ էն պարեկողնին, որ Սըրգսին աղաքարած տանըմ են հա՛, հլէ նա ափաթ արել ա՛...

—Քեօխվացուն հրէս, հրէս՝ ա՛հ, բաշնղադէօնդիւգիւմ*), ա՛ Դաւիթ քեօխվայ... Հանէս, ադա մի ա՛րաղ ածա քեօխվացուխս քեֆը բացուի. վայ ես սրա ջա՛նին մատաղ, մի մտիկ արէք էէ՛, մի բան 'էլա պակաս չի՝ բոյ, բուսաթ, ջան, ղուռ, ղուաթ, ամեն բան էլ ունի, թիկունքի լենութենին էէ՛, հլէ՛յի թէ ձիթահանքի քարը պտտող դէօմէշ լի. քեօխվացուն էլ լի՝ էսդայդի, որտաց օղիով տաքացած Դաւթի բարեկամներից մինը՝ ափով խփելով նրա լայն և առատ թիկունքին, իսկ քեօխվացուն փքուած ու սիրտ առած խրախուսուելով՝ օղին վայելելուց յետոյ պատասխանեց նրանց.

—Հըհը՛... թէոր քեօխվայ դառայ, գիտէք

*) գլխովդ պտոյտ գամ։

էլի՝ ձեր դուշմանի եդինն ա՛... էէ՛, ինչե՛ր դեմ անիլ, ինչե՛ր...

—Ա՛պրի մեր քեօխվացուն, ա՛պրի, ա՛դա, մ'նէլ ածա, մ'նէլ խմացրու։

—Ջատի ապլին լա՛ւ ա ասըմ, քանի խմացնէք լաւ-լաւ բաներ շատ դի ասիլ.—ասաց սրախօսներից մինը։

Այդպիսի խօսակցութիւններով առաջին խըմբերն արդէն մտել էին Ք. գիւղը, սրանք էլ մօտենում էին։ Դաւիթ ապլին արդէն թմրել էր բաքոսի զօրութիւնից. Նրա ուղեկիցներից մի քանիսը փոքր ինչ ետ ընկնելով՝ իրար աչքով արին, կանգնեցին և նրանցից մինն զգուշացրեց միւսներին և ասաց.

—Տղե՛ք, բա՛ն ա, ասուիլ չի. թէոր տենաք մեր ղոլի մարդիկը քի՛չ են, բա՛ն չի գլուխ գալի, էլ մտիկ չտաք՝ անցկացէք շատուորի ղոլը, թէ չէ, բաներնիս փթուուկ կըդառնայ—ո՛չ մեր քեօխվացուն քեօխվայ կլի, ո՛չ էլ մենք իրես կունենանք տիրացուի կշտին. ես գիտամ, որ նրա մարդը շա՛տ ա... նա ջոկուիլ դի... թուրքն անիծած ա՝ ամա խօսքն օրհնած ա. ասած ա թէ՝ «նէջաքի գոչաղլղ հիւնար դըր, գաչըբ գուրթուլմաղը դահունար դըր»—«որքան քաջութիւնն է գովելի, նոյնքան և փախչել ազատուելը». տիրացուն իր ոխը մեզանից կառնի...

Զ.

Խաչթառակի գիւղական հասարակութեան տանուտէրի ընտրութիւնը պաշտօնապէս նշանակուած էր Քարվանսարայ գիւղում՝ նոյնանուն կայարանում։ Երեք կողմից այգիներով շրջապատուած կայարանի չորրորդ կողմում խառնւում են Աղստև և Աղդանայ քաղցրահամ գետակները և գետ դառնալով, խճուղու ամբողջ շարունակութեամբ հոսում են դէպի հիւսիս։ Երկու գետերի վրայ ևս շինուած են փայտեայ կամուրջներ, իսկ ափերին Քարվանսարեցոց խանութները։ Խաչթառակից, Թալից, Քըրդևանից, Ռեվազլուից և Խուարածորից եկող մարդկանց խմբերն իրենց ընտրելիների հետ այդ կայարանը հասան։

Օրը ցուրտ էր, ընտրութիւնն էլ, ինչպէս երևում էր, ուշ պիտի սկսուէր։ Փոստի կայարանի մօտ սուրբ Վարդանեան Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանի պատերի տակ արևը խփել էր իւր անզօր՝ ձմերային ճառագայթները և փոքր ինչ տաքացրել, ուր մրսկան գիւղացիները ժողովուել արեգունի էին արել. Նրանք Սարգսի խմբի մարդիկն էին։ Նրանցից քառորդ վերստ հեռու նըստած և կանգնած էին Դաւթի մարդկանցից շատերը, իսկ հին քեօխվի՝ ցեց և ուտիճ Մոլլի խումբը դեռ ցրուած էր, որոնցից կէնտ-կէնտ մարդիկ էին երևում դարբին Աթոյի արհեստանոցի առաջ, ուր նրա մեծ փուքսը վըշշվըշշացնելով փչում էր ու

գիւղական քաղցր բայաթի էր երգում արհեստաւորի աշխոյժ աշակերտը։ Մոլլի մարդիկն այնքան քիչ էին, որ նա ամաչում էր հրապարակ դուրս բերել...

—Ա՛յ տղայ, ամօթ ա, ա՛մօթ. կացէք խառնուեն, ետոյ գնանք.—ասում էին մի քանիսը նըրանցից։

—Բա ի՞նչ... խայտառակութին ա էլի, մեր ղոլէն ջլխ մարդ չկայ...—պատասխանում էին միւսները...

Բայց մի հանգամանք։—Պատերի տակ արեգունի արած կուչ եկածները, բոլորն ա՛յն քեասիբ, քիւսուբներն էին, որոնց քեօխվէն և կամ գիւղում ազդեցութիւն ունեցողները, ստիպմամբ՝ մըտրակի ծայրով ժողովել բերել էին, որ իրենց օգտին ձայն տան։ Նրանցից շատերն ակամայից, ստիպուած պիտի ընտրէին սրան կամ նրան, բայց եթէ քուէարկութիւնը գաղտնի լինէր, անշուշտ ամէնքը Սարգսի կողմն էին և ո՛չ այս կամ այն վաշխառուի։

—Վա՛շ... ե՛րաբ գէօմշխս ջուր ու խոտ տուող ըլմա՞ւ, թէ չէ։

—Ա՞խ, էրնակ գիդենամ ըեխէս գոմերիցն եկա՞ւ, թէ չէ...

—Մա՛րկոս, ես ջլխ ըրմացել եմ...

—Խէ՞։

—Լա՛ւ, էս հարամզադէքը (քեօխվայ-քեադխուդաներն ու վաշխառուները) երոր կնունքահաց, պաշտըմահաց, եա թէ չէ մի ուրիշ հացկե-

րութին ա ըլը՜մ, ըռանց մեզ «կուշայի» են անըմ. երո՞ր քեօխվայ ջոկելու վախտը գալիս ա, միտներըն ենք ընկնը՞մ... վա՜յ ես դրանց հէրն անիծեմ..., դրանց... ուտիլ խմիլու վախտը մենք Խաչթառակցի չենք ըլում, քեօ՛խվայ ջոկիլիս միտներն ենք ընկնըմ...

Աղքատները մինչդեռ այդպէս խորհրդածում էին, քեդխուդէքը բաքոսի ազդեցութեամբ գործում էին խանութներում և իրենց կուսակցութեան համար մարդիկ էին որսում. Նրանցից ամէն ոք իւր քեօխվացուի յաջող ընտրութեան կենացն էին վայելում՝ աղօթքներ վերառաքելով Աստուծուն: Ընտրողներից շատերը խանութներում և կամ դուրսը՝ հրապարակ տեղերում, ճանապարհի վրայ այստեղ և այնտեղ ջառանձնացած քչփչում, համոզում, օղու կամ գինու էին հրաւիրում համոզուողներին. այնպիսի խռնումն ու բռռբռոց էր առաջացել անկանոն խմբերի մէջ, որ կարծես մի քանի գործողութիւններով թատրոն ու ցիրկ լինէին ներկայացնելիս...

Ը.

Կէս օր էր արդէն: Ցանկարծ փափախի կողքն ալլուած գզիրը, չուխի օյման տուզնուվալը դըցած, մի կոմբալագլուխ հէօզի *) ձեռին՝ չխկլի **)

*) Մխոտած դագանակ. –
**) Կաղ:

ոտով, դփի՜ հա դփի՜ ընկաւ բազարը և ցրուած գիւղականներին անասունի պէս առաջ արաւ քշեց դէպի կայարան: Կայարանի շէմքի առաջ դրուած էր մի սեղան, որի վրայ պատրաստ էր գրիչ, թուղթ և թանաքամանը. շուրջը կանգնած էին մի քանի եասաուլներ, որոնց հրամայուած էր մտրակները ձեռքներին բռնած՝ ժողովրդի մէջ կարգ պահպանել: Վերջապէս, հեռուից եկաւ գաւառապետի օգնականն և պրիստաւը: Ամէնքը գլխարկներն առան, տեղները մնացին կանգնած:

—Ստարշինա՛,—կանչեց պրիստաւը:

—Ըզըդես, ա՛ղայ.—շտապով պատասխանեց հին տանուտէրը և առաջ վազեց:

—Ա՛դամլարն, համսը բուրդա՞դըրմը (մարդիկըդ բոլորն այստե՞ղ են).—հարցրեց պրիստաւը:

—Բա՛լի, ա՛ղայ, (այո՛, պարոն).—պատասխանեց նա դողդողալով:

—Կարգով կաղնացրու.—հրամայեցին նրան:

—Ե՛կէք, կաղնե՛ցէք.—ասաց տանուտէրը: Ժողովուրդն իրար խռնուեց, խմբուեց:

—Մեր մարդիկը թող դէսը ջոկուեն.—ասաց Թաթոսը.

—Մերոնք էլ էս կողմը եկէք:

—Նրանց մի՛ք խառնուիլ.—Թաթոսից օրինակ առան միւս խմբերի առաջնորդներն և իրենց կուսակիցներով արանք տուին, կանգնեցին:

—Խառնուե՛ցէք.—ասաց պրիստաւը, բայց ոչ ոք տեղից չըշարժուեց:

—Խառնուեցէք.—կրկին հրամայեց նա։

—Ա՛ղայ, մենք ջոկ ենք, մեր քեօխվացուն ո՛ւրիշ մարդ ա.—ամեն կողմից ձայներ լսուեցին։

—Եասսա՛ւլ, Եասսա՛ւլ.—կանչեց թէ չէ, ամբոխը մտրակի երևալուն պէս խմբուեց

—Հարցրէք խնդրեմ.—ասաց ռուս օգնականը թուրք պրիստաւին.—ո՞ւմն են ցանկանում տանուտէր ընտրել։

—Ո՞ւմն էք կամենում... հարցրեց նա։

—Ա՛ղայ, տիրացու Սարգսի՛ն.—ասաց Թաթոս ապին և նրան հետևելով, միւսներն էլ աղաղակեցին բարձրագոչ աղաղակներով։

—Տիրացու Սրգսի՛ն, տիրացու Սրգսի՛ն...

—Չէ, ա՛ղայ, Դաւթի՛ն, Դաւթի՛ն...

—Ա՛ղայ, մենք էլի հին քեօխվեն ենք ուզը՛մ, հին քեօխվի՛ն...—

Զանազան խմբերի անկանոն և լեռնականի առողջ աղաղակներն օդը թնդեցրին, այնպէս ինչպէս փոթորկի ճայթիւնը։ Գաւառապետի օգնականն, ինչպէս ասում են, բեխի տակ ծիծաղեց, քմքածիծաղ տուեց, ապա խնդրեց պրիստաւին տանուտէր Մոլլին հրամայել, որ ընտրելի տանուտէրացուներին առանձին-առանձին առաջ կանգնեցնէ։

Այդ միջոցին Թաթոս ապին, Մակին և միւս խմբից՝ Եադախուբին, Բրուտը, Քոլքին, երրորդից՝ Մոլլէն և ուրիշ վաշխառուներ կուչուկուչ անելով՝ պրիստաւի աչք-ունքը պահելով, ընկել էին ամբոխի մէջ և կամաց, գողի-գող ձայնով կրկին և

կրկին համոզում էին հակառակ խմբի մարդկանց, որ իրենց քեօխվացուի կողմը կանգնեն՝ նրան ձայն տան։

Նոր քեօխվացուները, որոնցից աւելի համեստը Սարգիսն էր, կուրծքները համարձակութեամբ դուրս գցած կանգնել էին հրապարակում. նրանք աչքները օգնականին յառած սպասում էին, որ քեօխվայ կոչուեն մէկն ու մէկը։

—Սրա՞նք են ձեր ընտրելիները.—պրիստաւը դարձաւ ամբոխին և հարցրեց թէ չէ, աղաղակները կրկին բարձրացան.

—Մերը Սարգիսն ա՛, Սարգիսը՛...

—Մերը Դաւիթն ա՛...։ Այս նուագին արդէն հին քեօխվի կուսակիցներից շատերը թագուն աշկար միւսների կողմն էին անցել...

—Սո՛ւս, ը՛շշ....—լռութիւնը տիրեց։

—Ո՛վ ո՛ւմ ցանկանում է, թո՛ղ անցնի նրա կողմը.—պրիստաւն ասաց թէ չէ, ամբոխը ճօթռուեց երկու մասի. մեծ մասը շրջապատեց Սարգսին, քիչը Դաւթին, իսկ հին քեօխվի նոյն իսկ հաւատարիմները, ինչպէս առաջուց մտադրուած էին, տեսնելով, որ իրենց կողմը մարդ չ՛մնաց, ասացին մէկ մէկուն՝ կամացուկ ձայնով.

—Տղե՛ք, էլ ընչի՞ էք սպասըմ, յոյս չը կայ, ա՛նցկացէք, ա՛նցկացէք, թէ չէ՝ յետոյ ով որ քեօխվայ դառնայ մեզ խրոված օձի միս կուտացնի.—ասացին ու շտապով փախան իրենց հակառակորդներին ընկերացան, աչքի առաջ ունենալով անշուշտ

նորընտիր տանուտէրի ապագայ վրէժխնդրութիւնը։

Երկրորդ խումբը նոյնպէս առժամանակ տատանուելուց յետոյ հետևեցին վերջինի օրինակին, նրանցից շատերն ևս խառնուեցին տիրացուի մարդկանցը։ Սակայն, յանկարծ աւելի ծիծաղելի տեսարան բացուեց հին—քեօխվի մօտ կանգնած ջուխտ ու կէնտ մարդկանցից մէկը, որն աւելի յիմարութիւնից քան թէ խելօքութիւնից կամ հաւատարմութիւնից դրդուած ո՛չ մի կողմը չանցնելով գոռաց՝

—Ա՛ղայ, հրէ, հրէ.—մատնացոյց անելով մէկին ու միւսին,—նրանք իրեքը մի տա՛նից են եկե՛լ, իրեքը մի տա՛նից են եկե՛լ...

Գաղտնիքը բացուեց. Դաւթի խմբում մի ծըխից երեք հոգի էին մասնակցում ընտրութեանը։ Եասաուլները ըստ հրամանի... ջոկեցին ապօրինի մասնակցողներին և մտրակահար անելով քշեցին դէպի խանութները...

—Մեզ խայտառակ մի՛ք անիլ մեր դուշմանների ղաքին.—ասաց ծեծուողներից մինն և գրպանից հանելով մի քանի դրամներ տուեց նրանց և ազատուեց ծեծ ու քեօթակից...

—Ա՛ղա, Ա՛հմադ, Ա՛հմադ.—կամաց ասաց ծեծուողների հակառակորդներից մինը.—ա՛ռ մի աբասի էլ ես կը տամ, մ՛նէլ թխի դրանց։ Ահմադը այս վերջինի խաթրը չկոտրեց, արաւ ինչպէս ուզում էր...

—Վա՛յ, վա՛յ, ո՛ւֆ...—հեծում էին ծեծուողներն, իսկ ծեծել տուող համագիւղացիներն իրենց

մխիթարուած համարելով ձեռքները սիրտները քըսելով ասում էին.

—Հրէգ հա՛... կերաք է՛լ, էտա տհե՛նց ենք անիլ տալի հա՛... Դաւթին ջոկեցէ՞ք... և այլն։

Այդպէս քուէարկութիւնը բաց, նահապետական ձևով կատարուեց և աղէն մտրակի կոթով համարեց տեսաւ, որ տիրացու Սարգսի մարդկանց թիւը եռապատիկ է, նրան ընտրուած համարեց։ Բացի տանուտէրից, նոյն ձևով ընտրեցին և գիւղական միւս դատաւորներին։ Կէս օրից անց էր արդէն. գաւառապետի օգնականն ու պրիստաւը կառք նստեցին գնացին դէպի Դիլիջան, իսկ նորընտիրները միասին խմբուած ուղևորուեցին դէպի խանութները։

Դաւիթն ու հին քեօխվեն քիթ ու պռունգները վեր թողած բաժանուեցին իրենց հակառակորդներից դէպի Խաչթառակ, իսկ նրանց քամակից միւսները սկսեցին պարծենալ ու ծաղրել ասելով.

—Ըհը՛հըհը՛, Դա՛ւիթ, քեօ՛խվայ դառա՞ր... ես քե ա՛սըմ չի թէ՝ հին քեօխվի պոչը խուզիլ դեմ ու դու էլ ջոկուիլ չի դե՞ս...

—Դա՛ւիթ քեօխվա՞յ, հըհը՛, ո՞նց ա... քե որ խրա՛տըմ ինք թէ՝ դու քեօխվա՛ցու չես, քե ջո՛կիլ չենք, զուր տեղը խարջ ու պարտքի տակ մի՛ ընկնիլ, խո՞ չիր անգաճ անըմ, դէ հըմի էլ գնա մնացած հինդուհաւերդ էլ ծախի, որ չորերիդ պարտքը տաս.—աւելի արհամարհելով խիստ վի-

բաւորեց նրա վրէժխնդիր հարևաններից մինը...

Դաւիթը բարկութիւնից ատամները կրճրտեցնում էր, բայց ի՞նչ անէր, օտար գիւղում... և բազմաթիւ հակառակորդների մէջ էր։ Սարգիսը և նորընտիր դատաւորները բոլորը միասին քաշուեցին Քարվանսարեցի մկիտան լօթի Աղանի խանութը և իրենց ընտրութիւնը յաջողեցնող քեդխուդաների հետ միասին սեղան նստեցին, որ օղիով ու գինով շնորհաւորեն նորընտիր պաշտօնեաներին։ Բանը կոնծաբանութեան հասաւ, իշխանների քէֆն ու ախորժակը բաց եղաւ։ Աղանը կռները վեր քաշած ուրախ-ուրախ ծառայում էր իւր հիւրերին։ Նա իր կոմիքական ձևերով շարունակ ծիծաղեցնում էր նրանց։

—Էլ բերէ՛մ.—ասում էր նա և շշերը շարում սեղանանման տախտակի վրայ։

—Ստաքաննիդ մեծ-մեծ ա՛, պո՛ւճուրը համեցէք.—ասում էր և ահագին թաբախը դնում նրանց առաջ՝ իբրև փոքր բաժակ կամ գինիաման։ Այդտեղ ծափ ու ծիծաղին վերջ չը կար։

Թաթոս ապին, որին յաջող ընտրութեան առաքեալ կարելի էր անուանել, ջաղատ գլուխը բաց արաւ, առաւ օղիով բաժակն և սրտալից օրհնեց.

—Պա՛րոն պարներանց, Սարգիս քեօխվայ, մե՛ր գլխի տէր, մե՛ր աչքի լիս...

—Հրամա՛յի, Թա՛թոս ապէր, իրա՛ւունք ունես, սո՛ւս, սո՛ւս կացէք, հայը խօ՛սըմ ա...

—Էս թասը քու կենդանութեան ու աջողութեան ազիզ թասն ա. դու բարով ջօկուե՛ցիր՝ դիւշմանի աչքը հանե՛ցիր, բարով էլ կառավարես մեր քեօխվակեր գեղը...։ Սա՛ղ լես, խղճմտանքով կառավարես, մեծի, պուճուրի, տղամարդի, ծերի, կընկայ, ամենի ղադրն էլ գիտենաս։ Քու արդար ղամշին ու ճիպոտն Աստօծ անպակաս անի քեասիբ-քիւսուբի միսն ուտողների գլխից. մի խօսքով՝ ես ու դու ո՛նց որ գիտանք՝ նհե՛նց ժաժ գաս. վախի՛լ մի՛, Թաթոսի գլուխը քանի սա՛ղ ա, քե հըւատա՛րիմ կը մնայ.—օրհնեց նպատակին հասած ծերունին և ահագին բաժակը վրաբերեց, գցեց, և «ա՛հ» անելով չուխի փեշովը բեխերը սրբեց ու լսեց ընկերների օրհնանքներին։

—Սա՛րգիս քեօխվայ, էս քու բարձր բարեծընդութենի լայաղական թա՛սն ա. Աստօծ քու մոքիցը ամեն չար խորհուրդները հանի՝ բարին տեղաւորի. Նա քե էն միտքը տայ, որ արդարին ա՛րդար ասես, անարդարին անա՛րդար...։ Քեասիբների վրայ բարի ա՛չք ունենաս, խեղճ են. բո՛լա՝ ինչքան հարըստի ջաբրը քաշե՛ցին... էլ ի՞նչ ասեմ մի՛ խօսքով անպակաս լես մեր գլխիցը.—օրհնեց երկրորդը և կոնծեց։

—Քեօ՛խվայ ջան, ասա հա՛մմէ։

—Հա՛մմէ, հրամա՛յի, Մո՛ւկուչ ապէր.—պատասխանեց տիրացուն, և՝ «սո՛ւս» հրամայեց, որ լսեն ծերունուն։

—Նոյ նահապետի ու Լուսաւորչի օխնութինն

ըլի քու տան ու տեղի վրայ. էս պաժակը սաղութենից աննման ու հուրհրատին տուող պաժակն ա. աշուղ Բանգին, որ մեր գեղն էր գալի՝ Աստծ հոգին լուսաւորի, իրան խաղի մէջ քեօխվի հըմար էս խաղն էր կանչըմ թէ՝ «Էյ, քեօխվայ, սաղ լես բաղ լես, թէ լաւ քեօխվայ լես՝ շա՛տ ապրես. Նամուսո՛վ, ղայրա՛թով, լես..., խեղճի, նաչարի՝ քեասիբքիւսուբի աչքը բռնես՝ պահես, պըհպանես. Թէ լաւ, բարի լես՝ օխնուես, թէ հու չար, անողորմը լես՝ անիծուես, պատճուես...»։ Աթալարի խօսք ա թէ՝ «ծերի անէծքն ա՛նէծք ա, օխնանքն օ՛խնանք». հըմի ես ծեր տեղովս քե համ անըծըմ եմ, համ օխնըմ, որն ո՛ւզըմ ես, էն վե կալ։ Թէ որ հարուստներին երես տաս, քեասիբներին քոռ Մոլլի պէս զըբնես, քու տունն ու տեղը աւերա՛կուի, թէոր չէ՝ ծաղկի, կնանչի, պտղի և ամենի աչքը քե էրնակ տայ...— արագ-արագ աշուղ Բանգու երգը երգեց ու դատարկեց բաժակը։

—Ապէ՛ր, շորա՛փ ունես, շորա՛փ, քեօխվին խե՞ անիծեցիր, շորա՛փ...

—Անպատճառ, շորա՛փ, շորա՛փ....—գոչեցին ամենքը։

—Շորա՞փ.—հարցրեց ծերունին։

—Հա՛, հա՛... շորա՛փ, շորա՛փ...

—Դէ որ շորա՛փ, ինչքան կո՛ւզէք ածեցէք, խմէ՛լու եմ.—գոռոզաբար ասաց ծերունին։

—Ա՛ղան, էհէ Աղան.—կանչեց Թաթոսը.—ադա, մի մեծ քրեղան բե, պէտք ա քրեղա՛նով խմաց-

նեմ սրան. սա ո՞նց ա համարձակւըմ մեր աչքի լիս քեօխվին անըծել...

Ասեղ մաշկող, քիստ լպստող ու հոգի ծախող Աղանն էլ ուզում էր մեծ ամանով խմացնել, որ օղին վաճառուի։ Նա քրեղանը լցրեց, բայց առողջ ծերունին առանց մի կաթիլ անգամ թողնելու դատարկեց...։ Քեագխուդաներն այնքան խմեցին, որ արբեցին։ Նրանցից Սարգիսը, Թաթոսը և միքանի հոգի միայն իրանց լուրջ պահեցին։ Վերջապէս դուրս գալով խանութից, պատրաստեցին ձիերը, որ ճանապարհ ընկնեն դէպի Խաչթառակ։

—Հա՛նէս, Հանէ՛ս։

—Հա՛մմէ, ի՞նչ ա, ա՛պի։

—Ա՛դա, խե՞ ես կաղնել, քեօխվի ձին բէ՛, քաշի գա՛յ։

—Թա՛թոս, մեզ ամօթի կը թողաս, կաց մի տե՛նանք, կարելի ա ըսկի հաստա՛տւըմ չենք, դու հլէ քու կողմից քեօխվայ ես շինըմ ինձ...—քմքըծիծաղ տալով ասաց Սարգիս քեօխվեն։

—Հըհը՞... ոնցոր ջոկեցի, նհենց էլ հաստատել կը տամ. խու գիտաս, որ ես Թա՛թոսն եմ. չուել Ելիսաբետապոլսկի գմբեռնին մին կը գնամ հա՛, գիտենաս, որ էլ ետ չեմ մտիկ տալ.—գոռոզութեամբ և պարծենկոտութեամբ ասաց Թաթոս ապին, որի՝ արևից այրուած դէմքը օղուց արդէն կարմրել էր։

—Հանէ՛ս, Հանէ՛ս։

—Հա՛մմէ։

—Ա՛դա, քեօխվի ձին բերե՞ր։

—Հրամմա՛ն քե, բերի։

—Բէ՛, բէ՛, ա՛յ որդի, Հա՛նէսն ես էլի, ըսօր թէ էգուց գողութենից բանից անիլ դես, դա էլ մեր ջոկած քեօ՛խվեն ա, մ՚հետ, էրկու հետ ղամշով մէջքիդ կը տայ ու բաց կը թողի...

—Սո՛ւտ ա ասըմ, թէոր գողո՛ւթին արէր, իմացէր, որ միտդ կը կտրեմ ըռխիդ դէմ կանեմ.— ցուցամատով զգուշացնելով ասաց Սարգիսը, ոտը զանգուն դրեց և հեծաւ իւր ձին։ Ամենքը ձի հեծան և առաւօտուայ պէս խաղ ու պարով արշաւեցին դէպի Խաչթառակ գիւղը։

Ը.

Մի ամսից յետոյ՝ նորընտիր դատաւորները հաստատուեցին իրենց պաշտօնում։ Գաւառապետի պրիստաւներից մինը կրկին եկաւ Քարվանսարայ և նրանց նշաններ յանձնեց։ Տիրացուն քեօխվայ դարձաւ։ Նրա քեօխվութեան ժամանակ կոռ ու բէգիառն աւելի շատացաւ, դժուարացաւ։ — Ռուս-տաճկական պատերազմն սկսուած էր. տանուտէրը համարեա ամեն օր գաւառապետից հրաման ու հրահանգ էր ստանում. գիւղացիներն ամենայն շաբաթ հետևակ զօրքի պաշարն ու պատերազմական իրեղէնները մի կայարանից միւսն էին տեղափոխում։ գիւղացոց դրութիւնը, մանաւանդ անձրևային օրերում շատ ծանր էր։ Քեառիբները պէտքէ կորչէին,

եթէ Մոլլէն լինէր տանուտէրը։ Տիրացու Սարգիսը մտածեց, որ իւրաքանչիւր գիւղացու իւր կարողութեան և դիրքին համեմատ կոռ ու՝ բէգիառ կրել տայ։ Մինչև Սարգսի իրաւունքի տէր դառնալը գիւղում այնպիսի մարդիկ կային, որոնք ուժի, փողի կամ ազդեցութեան շնորհիւ, կնեազի պէս էին ապրում։ Նրանք նախկին քեօխվաների օրով կարծես արտօնութիւն էին ձեռք բերել, որ իրենց բոլոր նեղութիւններն աղքատների մէջքին բարձեն։ Տիրացու Սարգսի օրով, ինչպէս նա վաղուց արդէն մտադրուել էր, պէտք է վերանային այդ բոլոր տգեղութիւնները և հաւասարութիւնը պիտի տիրէր բոլորի մէջ։ Մի երեկոյ խիստ հրաման էր ստացել Սարգիս քեօխվեն։ Նա թուղթը կարդալով՝ սկսեց կանչել.

—Խեչո՛, Խեչո՛....—պատասխան չեղաւ։

—Խեչո՛, Խեչո՛.—դարձեալ կանչեց նա։

—Համմէ, քեօ՛խվայ, ըստեղ եմ, հրամմա՛յի.— մօտ վազելով պատասխանեց նրա գզիրը։

—Խեչո՞։

—Հա՛մմէ։

—Մի լաւ փետ ձեռդ կալ, գնա՛ գեղի վերի ծէրիցն սկսի՝ Հանէսին, Մուսինին, Մկրատի տղին..., ետոյ ընտեղից ՝գլխվերի գեղի մէջ՝ Ղոնդաղսազին ու Եաղախուրուն ա՛սա, գաւառապետի հրամանի հըմաձայն քեօխվեն հրամայըմ ա ձեզ, որ սէլերնիդ լծէք ճամբայ ընկնէք դըպա Դըգևանայ ճա-

լէն. ընտեղից ղոշունի բըրխանեն պէտք ա տանէք Դիլիջան…

Գզիր Խեչոն մինչև Ղոնդաղսաղի անուն տալը լուռ լսում էր, բայց հէնց որ Սարգիսը նրա անունը տուեց, գզիրը մճրուեց և ասաց.

—Քեօխվայ ջան, Ղոնդաղսաղին ու Եաղաւխուբուն ես կր՛ալ չեմ կոռ ասիլ։

—Խե՞, ը՛ղա.—հարցրեց տանուտէրը։

—Դէ նրանք ո՛չ մի քեօխվի ու գզրի օրով բէգիառ գնացած չեն, որ գնամ ա՛սեմ՝ ինձ ջլիս բիաբուռ կանեն. Հլա վախըմ եմ թակեն էլ։

—Ո՛չ մի քեօխվի ժըմանակով գնացել չեն, ամա ես՝ հէնց նրա հըմա՛ր եմ քեօխվայ դառել, որ դրանց սուտ աղութինը մուժիկութին շինեմ. գնա՛, ինչ որ ասեցի քե, հասկա՛ցրու նրանց։

—Քեօխվայ ջան, վախըմ եմ թակեն ինձ։

—Գնա՛, ինչպէս կը համարձակուեն քե ձեռը դիպցնել, գնա ասա՛, որ ես նրանց կոռ գնալ եմ հրամայըմ…

—Քեօխվայ ջան, կուզես ինձ գզրութենից դուս գցի, ես կր՛ալ չեմ նրանց կուշտը գնալ.—գզիրը դարձեալ հրաժարուեց. քեօխվեն բարկացաւ նրա վրայ, սպառնաց, բայց նա դարձեալ աղաչեց թէ «Քեօխվայ ջան, մի ուրիշին ղրկի… և այլն»։

—Դէ լա՛ւ, դու գնա միւսներին իմաց տուր սէլերնին լծեն, ես մի ուրիշին կը ղրկեմ նրանց կուշտը.—վերջապէս վճռեց տանուտէրը։ Խեղճ գզիրը գնաց։ Նրա վախենալու պատճառը յայտնի էր։

Նա վաշխառու Ղոնդաղսաղին մի քանի թուման փող էր պարտ, ուստի երկիւղ էր կրում գնալ կոռ ասել, որովհետև լաւ գիտէր, որ միւս առաւօտեան շահասէրը տեղը կը նեղացնէր և ունեցած մի լուծ եզը ձեռքից կը խլէր…։ Քեօխվեն առաւ իւր փետրէ գրիչը և մի այսպիսի խիստ ու համարձակ հրաման գրեց վաշխառուների—եթէ այսպէս կարելի է « ասել—թագաւորի վրայ.

« «Ղոնդաղսաղ Ջալիլեանցին։

« Գաւառապետի հրամանի զօրութենով ես
« Խաչթառակի տանուտէրս հրամայըմ եմ քե՝ որ
« էգուց առաւօտեան ծէգը ծէգելուն պէս սէլդ
« լծես ղրկես Դըդևանի ճալէն ղոշունի բարխանին
« Դիլիջան տանելու։ Լա՛ւ յայտնի լինի քե, որ
« հակառակ դէպքըմ մաթրախի տակ կը գցեմ քե
« և օրէնքին էլ պատասխանատու կանեմ…»։

«Խ. գիւղի կառավարութեան տանուտէր՝ Սարգիս»։

Սարգիսն այդ հրամանը գրեց, կնքեց և կանչեց մի երիտասարդի.

—Գէո, Գէո։

—Հա՛մմէ։

—Էս թուղթը տար տու Ղոնդաղսաղին և ասա՛, որ թուղթը կարդալուն պէս՝ սէլը լծի ճամբայ ընկնի։

—Շա՛տ լաւ.—ասաց Գէոն ու տարաւ. նա գնաց, Ղոնդաղսաղի տանից հեռու կանգնեց ու կանչեց նրա ծառային.

—Բա՛լաբէ՛գ, Բա՛լաբէ՛գ։

—Հէ՜յ.—պատասխանեց վաշխառուի ծառան։

—Ուստէն տանն ա՞։

—Հա՛։

—Դէ մի գէսն արի, շներեցն անցկացրու, էս թուղթն իրան եմ տալու։

—Ինձ տու, ես իրան կը տամ էլի։

—Չէ, քեօխվէն ասեց, որ ես տամ...

—Դէ, բի՛, բի՛։

Աղքատ Գէոն միամտաբար գնաց մտաւ Ուստի սենեակը, բարի երեկոյ ողջունեց ու Հրամանը յանձնեց նրան, աւելացնելով և տանուտէրի բանաւոր պատուէրը։

—Ա՛յ, պի՜ճ հառամզադայ, կերա՛ր...—խեղճ Գէոյին ապտակով պատասխանեց նա, գլխին տալով դուրս ձգեց տանից և Հրամանը պատառոտելով, բարկացած, կատաղած սկսեց խօսալ և հայհոյել քեօխվին։

—Ո՞վ, նա, էն լոբի ուտողի տղէ՞ն, որ քեօ՛խվայ ա դառել ու ինձ էլ համարձակւըմ ա կոռ ասել ու տունս էս կէս գիշերին եա գզիր ա վզըցնըմ, եա թէ չէ՝ թղթի կտոր... Նա ի՞նց ա սիրտ անըմ... ես նրան շհա՛նց կտամ...։ Ես չուել օրս, ո՛չ մի անգամ կոռ, բէգեառ չեմ գնացել, ո՛չ մի քեօխվայ ռի՛մ չի արել, որ ասի աչքիդ վրայ սև ունք կայ. հըմի դա էրկու օր ա, քեօ՛խվայ ա դառել՝ ուզըմ ա ինձ հե՛տ մեկնել ոտը՞...։ Ես դըրա պէսերին իմ դըռանը նոքար եմ պահըմ, իմ նոքա-

րը դըրանից լա՛ւ ա հագնըմ, ուտըմ, ինձ պէս մարդին՝ էս սաղ գեղըմն ոչով կա՛րըմ չի մի թթու ջուղաբ տայ, մի սառը խօ՛սք ասի։ Ո՞ւմ չոռ եմ ասըմ՝ ջա՛ն ա ասըմ, սաղ գեղն ինձ պարտա՛կան ա, ինձանից ուռի պէս դողըմ են, ուզեմ կը մորթեմ, ուզեմ՝ կը թողեմ. Նա քա՞նի գլխանի ա, որ համարձակւըմ ա էսղայդի բան գրել վրէս։ Ես նրա գլուխը քար ու փետի տեղ՝ մանէթներով կը ճղեմ, նրա խելքը ո՞րտեղ ա, ես կոռ կը գնա՞մ, կա՛րայ ինձ ղըրկէ՞...։

Ղոնդաղսազն այդպէս, լուծին անսովոր եզան նման սկսեց տրտնգի տալ. Նա անվերջ բարկութեամբ ցասնացաւ Սարգիս քեօխվի վրայ, սկսեց հայհոյել նրան, իսկ Գէոն ծնօտը բռնած գնաց Սարգսի մօտ ու լալով ասաց.

—Քեօ՛խվայ, լա՛ւ արէ՞ր։

—Էտ ի՞նչ արիւն ա, ա՛դա։

—Ուէխ-մըռէխս ջարդեց, ըռնըլւիկ արաւ, ի՞նչ ա...

—Ո՞վ արաւ։

—Ղոնդաղսազը։

—Ղօ՛րթ ադա՞։

—Բա սո՞ւտ. քե էլ ուշունցնի տուուց, թուղթըդ պատռտեց ու ասեց թէ՝ քեօխվի գլուխը մանէթներով կը ճղեմ...

—Թուղթս պատռե՞ց. ի՞նց սիրտ արաւ տհենց բան անել...

—Քեօ՛խվայ, դէ արաւ անիլու պէ՜ս, էն ա մի

քիչ մտիկ տուց ու հարիր կտոր արաւ, դէն անեց…

—Դէ լա՛ւ—ես ըռաւօտը նրա գլուխը մի օյին բէ՛րեմ, որ սև շանն էծ կանչի, էծ։ Ի՛լ ի՛նչ արաւ, չիմ ասա տե՛նամ։

—Ասեց ես աղայ մարդ եմ, նա ո՞նց ա ինձ կոռ ասըմ…։

—Նա ո՞րդեան ա աղութին ստացել, ես նրան եզան պէս լծե՛մ, լծե՛մ…—բարկացած ասաց տանուտէրը և ձեռները ետևին դնելով սկսեց քայլել։

Կէս գիշեր էր արդէն. գզիր Խեչօն ևս եկաւ յայտնեց տանուտէրին, թէ Եաղախուլրին էլ նոյնն է ասում՝ ինչ որ Ղօնդաղսազը։ Սարգսի բարկութեան չափը որոշել չէր կարելի, նա անհամբեր սպասում էր որ լուսանար։ Սարգիսն իւր պաշտօնավարութիւնից շատ առաջ էլ արդար բարկութեամբ լցուած էր դէպի անգութ և անխիղճ վաշխառուների բռնած գործերը. ուստի, երբ տանուտէր դարձաւ, ուզեց նրանց հետ շատ խիստ վարուել. դրա համար էլ նա՝ հէնց իւր տանուտէրութեան առաջին քայլում, ճնշեց հարուստներին և ցոյց տուեց քեասիբներին, որ նրանց յոյսը պէտք է արդարացնի…։ Սարգիսն ուրիշ քեօխվաների պէս բոլորովին չէր էլ մտածում, թէ իւր կեանքի հանգամանքների վրայ հարուստ մարդիկ կարող են ազդեցութիւն ունենալ։ Նրա համար միևնոյն էր՝ տասն օր կամ տասը տարի տանուտէրութիւն անելը, միայն թէ՝ խրատէր վաշխառուներին, մեղ-

մացնէր քեասիբների նեղ դրութիւնը…։

—Ա՛խ, հալբաթ էգուց կը լիսանայ, ես ձեզ եզան պէս լծե՛մ, լծե՛մ.—անդադար կրկնում էր նա անկողնում, դառնանալով սուտ կնեազների արարմունքի վրայ։

Թ.

Ղօնդաղսազ կամ Ջախմախսազը ղարաբաղցի վաշխառու, ինչպէս ասում են, հացով ու պատուով, բայց չափից դուրս հպարտ և ամուր ու հրամայող բնաւորութեան տէր մարդ էր։ Նա ոչոքից կախում չունէր, ամենքը նրան կամ փող էին պարտ և կամ՝ հաց, ցորեն, գարի և ուրիշ կենսական նիւթեր։ Ղօնդաղսազը շատ աշխատող շատ էլ ուտող, խմող և հագնող մարդ էր։ Նա հագնում էր ալջակաւոր կռներով մահուդ չուխայ, քթաւոր լապչիններ և լայն շալուար։ Ծածկում էր բուխարայի մորթուց կարած նեղ ու բարձր՝ վերին մասը սուր՝ գլխարկ։ Նա այդ աղայական հագուստով զանազանւում էր բոլոր գիւղացիներից. ամեն աշխատանքի օր նա չուխի թևքերը ետևի կողմի վրայ թառ տուած, գլխարկը թեքը դրած, բեխերը սղալելով, իւր կալուածներում հեռու կանգնում էր և վաշխառուի հսկողութեամբ մշակներին անհանգիստ անելով՝ արտերը հնձեցնել էր տալիս և կամ գոմ՝ մարագ, ցանկապատ շինում, իսկ կիրակի օրերը իւր թայ ու թուշի, իրեն հաւասար մարդկանց հետ քեֆեր

էր սարքում։ Բայց աւելի օտար գիւղացիք էին իջնում նրա տանը. նա աւելի օտարներին էր պատւում, որպէսզի իրեն մասին լաւ համբաւ տարածեն իրենց գիւղերում։ Այնպիսիներին հիւրասիրելու ժամանակ՝ առատ ճաշ, խնջոյք, խաղ ու պարն անպակաս էին նրա օջախից։ Ղոնդաղսազը լաւ պարել և երգել էլ էր իմանում. կարճ որ ասենք՝ շա՛տ քեֆի մարդ էր։ Դեռ 1870 թուականին, երբ ղազախեցին աւելի տգէտ ու խաւար էր քան այժմ, Ուստեն սամովար, չայ ու փունջ էր գործ ածում և ո՛չ միայն ջասխական սազ ու քամանչայ, այլ և Վրաստանի կանանց ու աղջկանց զուարճութիւն տւող սիրելի «դայիրայ» ունէր։ Թէև մեր ղազախեցիք «դայիրայ» թակողին արհամարհում են, լօթի ու միմոս (կապիկ) պարածող են անուանում, բայց ղարաբաղցին այնպիսի ազդեցութիւն ունէր գիւղում, այնպէս էր թագաւորում գիւղացիներին, որ նրանք չէին համարձակւում լօթի անուն տալ նրան։ Նա գիւղում ուժի, երկիւղի կամ վաշխառուի պատիւ ունէր, իսկ դուրսը՝ օտար գիւղերում, պատուաւոր և հիւրասէր մարդու պատիւ էր վայելում։ Ամեն ոք Ղազախում ակնածութեամբ էին վերաբերւում դէպի նա և «աղայ», «Ուստա» պատուանուն տալիս նրան։ Գիւղացիք մի այսպիսի կարծիք էլ ունէին Ուստի մասին, թէ նրա պէս մարդ չկայ աշխարհում, ա՛յնպէս էին նախապաշարուել. միմիայն Թաթոս ապին էր, որ հաւատում էր Սարգիս քեօխվի նրանից աւելի բարձր

լինելուն։ Մինչև տիրացուի տանուտէր դառնալը, ոչ ոք չէր համարձակւել նրա խօսքին խիստ պատասխան տալ, ուստի նա տգէտների մէջ ցուլի ազատութիւն էր ստացել՝ ո՛ւմ ուզում էր՝ հարուածում էր, ո՛ւմ ուզում էր՝ պարտքակոխ էր անում խեղդում։ Բայց՝ բացի Թաթոսից, ո՞վ կը կարծէր, թէ Սարգիսը նրա պատիւը ձգելու է ամբողջ գիւղականների առաջ։ Թաթոս ապին հէնց նրա՛ համար ամեն ճիգ ու ջանք թափեց, Սարգսին ընտրել տուեց, նա ջաղատ գլուխը բաց արած հէնց նրա՛ համար էր պրոպագանդաներ անում...։

Ժ.

Գիշերն անցաւ։ Սարգիսն առաւօտեան վաղվաղ իւր օգնականի ու գզրի հետ միասին կանգնած էին գիւղի ամենաբարձր կէտում, իրենց սովորական ժողովատեղում, ուր կոռ գնացող սայլատէրերին հարկաւոր պատուէրներ էին տալիս։ Ամենքն իրենց սայլերը լծում էին տանուտէրի հրամանի և կարգադրութեան համաձայն, իսկ Ղոնդաղսազն իսկի տանից դուրս էլ չէր գալիս, որ գոնէ մի պատասխան տայ. նա բանի տեղ չէր դնում տանուտէրի կանչող ձայնը և այդ բաւական չէր, ծառաներին էլ հրամայել էր, որ չլսեն տանուտէրին։

—Բա՛լաբէ՛գ, Բա՛լաբէ՛գ...—կանչում էր տանուտէրը։ Երկար լռութիւնից յետոյ, միայն ծառան

ակամայից գլուխը հանեց սրահի շեմքից և պատասխանեց.

—Հէյ, հէյ։

—Ա՛դա, աղէդ տանն ա՞, սէլը ղրկեցէ՞ք..—հարցրեց տանուտէրը։

—Տա՛նն ա, ամա սէլը ղրկել չենք։

—Խա՞, սէլն ընչի՞ չէք ղրկել, Թալղա ունէ՞ք։

—Աղէն Թողըմ չի, ո՛նց լծենք.—պատասխանեց Բալաբէգը։

—Աղիդ ա՛սա քեօխվէն կա՛նչըմ ա, դո՛ւս արի։

Ծառան տուն մտաւ, դուրս եկաւ և ասաց նրան։

—Աղէն ասըմ ա, քեօ՛խվայ ես թէ ինչ ես, չը գի՛տեմ, միայն գլուխս ցըւըցնիլ մի՛, ըռա՛դ լի, կո՛րի ըստեղից...

—Ա՛սա, դո՛ւս գայ.—ուժգին բարկութեամբ հրամայեց տանուտէրը, սակայն Ուստէն՝ առասպելական Ուստէն, դարձեալ բանի տեղ չը դրեց նրա գոռոցը...

—Ա՛ադա, դուս չի գալի՞։

—Չէ, չէ։

—Դէ որ դուս չի գալի, ըստի արի դու.—

Ծառան աղայի ահից չէր համարձակւում տեղից շարժուել, մնացել էր դուրսն արձանացած։ Քեօխվէն տեսնելով, որ ուրիշ ելք չկայ, իւր օգնականին ու գզրին հրամայեց, որ ծածուկ, պատի ետևով գնան ու ծառային յանկարծ բռնեն՝ բերեն իրան մօտ։ Այդ յաջողուեց նրանց՝ ծառային բռնեցին ու

քաշտալով՝ բերին ձգեցին մի գոմ և դուռը դրսից կողպեցին։ Հպարտ Ուստէն լսեց, որ իրեն պէս աղայ մարդու ծառային տանուտէրը բանտարկեց, տանից խոժոռած դէմքով դուրս եկաւ, չուխի երկար Թևքերն ուսերովը Թառ տուեց, մի ոտը յառաջ, մի ձեռը ճակատին դրեց, միւսը կողքին և հեգնաբար ասաց տանուտէրին։

—Ա՛դա, ա՛ադա, ա՛ գարի ուտող, դու ո՞վ ես, ես քա՞նի գլխանի ես, որ ջուռեաԹ ես անըմ իմ նօքարին Թակըմ՝ տուն ես գցում. ճնանչըմ ես ինձ, ես, ե՛ս եմ, դո՛ւ ով ես...

—Ես Խաչթառակա Հասարակութեան տանուտէր Սարգիսն եմ և քե հրամա՛յողը, հրամա՛յըմ եմ, որ սէլդ լծե՛ս...—վեհանձնութեամբ պատասխանեց Սարգիսը։

—Ես էլ քե հրամա՛յըմ եմ, որ ո՛նց որ տո՛ւն ես գցել ծառայիս, նհենց էլ գնաս քու ձեռովը դուռը բաց անես, Թէ չէ՝ կը բարձրանամ՝ մեծ Թիքեդ բողազըմըդ կը Թողեմ...

—Ցէնդ կտրի՛, շա՛ն աղայ, Թէ չէ՝ էս ա գալիս եմ կարկաժդ ջարդեմ...—ասաց տանուտէրն և պատրաստուեց գնալ դէպի նա։

—Ա՛դա, Մա՛դի, խանչալս դուս բեր.—ասաց Ուստէն.—ես պէտք ա էս գեղըմը քեօխվայ էլ մորԹեմ...

Հէնց այն րոպէին, երբ երկու ախոյաններն ուժները հաւաքած պէտք է հանդիպէին իրար, յանկարծ մի Թուրք եասաուլ շտապով ձին քշած՝

գիւղամիջով կտրուկ կերպով անցաւ դէպի տանուտէրոջ տուն և այնտեղից քշեց, եկաւ Նրան գտաւ ու շտապով հարցրեց։

—Ա՛յ քեօխվայ, սէլերն ո՞ւր են.—ասաց ու մի կրկնակի հրաման ևս յանձնեց Նրան, որի մէջ գրուած էր. «զօրքը կանգնած է, եթէ սայլերն իրեն ժամանակին Նշանակած տեղը չը լինեն, դու պատասխանատու կլինես օրէնքի առաջ...»։ Այդ հրամանով Սարգսի ուժն աւելի ևս զօրացաւ, սկըսեց երկիւղով երկիւղ տալ Ղօնդաղսազին. Նա եասաուլին մատնացոյց արաւ վերևից եկող՝ իւր հրամանին հակառակող վաշխառուին և պատմեց Նրան բոլոր եղելութիւնը։ Եասաուլն իւր սովորական եղանակով մտրակն ուղղած դէպի եկողը, քեօխվի հետ միասին, յարձակուեցին Նրա վրայ և հէնց աղէն ուզում էր մի մեծ քարով դռան կողպէքը կոտրել, հասան։ Երկու կողմից ևս գոռոցներ սկսուեցին։ Անակնկալ դէպքին ամբողջ գիւղը հանդիսատես դուրս եկաւ։

—Ա՛ղա, ա՛յաղա, ա՛ բէօվուզ փափախ, քեօխվանըն էօմիւրա նեա գուլաղաս մերսան-(ա՛ մեծափափախ, տանուտէրի հրամանին ինչո՞ւ չես ականջ դնում).—ասաց և երկուսը միասին սկսեցին շըրխկ հա շըրխկ մտրակել՝ մէջքին, ոտին, ձեռին, գլխին, երեսին, մի խօսքով, էլ սաղ տեղ չը թողեցին։ Ղօնդաղսազն ուժասպառ ընկաւ գետին, իսկ Նրանք դաշոյնը ձեռքից խլեցին ու ոտից բռնելով ցեխի մէջ քարշ տուին։

—Կերա՛ր, դէ հըմի վէ կաց սէլդ լծի։

—Քեօ՛խվայ, մե՛նք կը լծենք.—ասացին ծառաները։

—Չէ, սա ինքն իր ձեռովը պէտք ա լծի.—ասաց տանուտէրը և կրկին մտրակեց։ Ղօնդաղսազը սէլը լծեց. ճանապարհ ընկաւ։

—Տեսա՞ր. ճնանչեցէ՞ր ինձ. հասկացա՞ր, որ մենակ մանէթներով չի գլուխ ճղւո՞ւմ, դէ հմիկանց ետը գնա քու խելքի կտրած քեօխվի հրամանը ճղի։ Ես Սա՛րգիսն եմ, Մ՛ոլլէն չեմ...։

ԺԱ.

Ղօնդաղսազն ամբողջ գիւղի մարդու կանանց առաջ ծեծուելով՝ այնքան վիրաւորուած էր իւր պատուի ու յարգանքի ոտնատակ լինելու մասին, որ ստամոքսը պատռուելու չափ բարկացել էր։ Նա ուզում էր իւր կարողութիւնը դնել, միայն թէ կարողանար Սարգիս քեօխվին զրկել պաշտօնից։ Նրա վիրաւորանքն աւելի սաստկանում էր, ամօթխածութիւնն առաւել ևս բորբոքւում էր, մանաւանդ ա՛յն ժամանակ, երբ գիւղականները գովում էին Սարգսի քաջութիւնը, իսկ պարսաւում Նրան հետևեալ կերպով.

—Տղե՛ք, տեհաք ինչ արաւ Ուստէ՛ն, պա՛հ, պա՛հ, պա՛հ, ամա տու՛ւց հա՛. մենք գիդըմ ինք թէ՝ Նրան ոչով կարալ չէր թակել, մգեար տհենց բան էլ ա լե՞լ։

—Բա՛, բա որ ձեզ ասըմի թէ՝ դրան իրա՛ւունք տուէք, խէ՞ իք չեմ, չեմ անըմ.—նկատում էր Թաթոս ապին։

—Պա՛հ, պա՛հ..., Թա՛թոս ապի, Սարգսի պէս կտրուկ քեօխվայ՝ էս ալամ (ամբողջ) աշխարը հլա ծնել չի։ Դա որ էնդայդի աղայ մարդին փէյնի ու ցեխի մէջ ոտնատակ տուեց, թակեց ու սատկած տըւարի պէս քա՛շ տուուց, էլ ի՞նչ չի կարալ անիլ...

—Մենք առաջուց էլ գիտէինք, որ Սարգսի պէս քեօխվացու չկայ գեղիս մէջ, ամա մի քանի մարդիկ ասըմ ին թէ՝ զակունագէտ ա՝ գեղը կը քանդի, ջոկիլ մի՛ք...

—Էտ ո՞վ էր տհենց ասըմ, ա՛ նրա աչքերը կուրանայ. դէ թող հըմի տենայ ու ճա՛քուի։

—Ա՛հ, ես դրա ջանին մեռնեմ, ջլե՛ս մեր սրտի ուզածն ա. տենըմ էք հարուստներին ո՞նց ա լծան տակը քաշը՞մ...

—Քօռ խու չենք, խէ՞ չենք տենըմ...

—Էն ո՞ր քեօխվեն սիրտ ու ուժ կանէր, կը համարձակուէր Ղոնդաղսազին, եա թէ չէ Եադախուրուն կոռ ասել, մի դառը ջուղաբ տալ...։

—Ես ձեզ ասեցի ոչ՝ թէ տիրացուն քեասիբներին ղուշի պէս թեւերի տակը դի պըհէ՞լ, դրա ջա՛նին մատաղ, դուք աղօթք արէք որ ջանը սաղ լի միշտ։

Տանուտէրի գործունէութիւնը, ամենից աւելի գովում փառաբանում և քաջալերում էր մանաւանդ յայտնի Թաթոս ապին, իսկ նա տեսնելով ժողովրդի

դէպի ինքը տածած սէրն ու համակրանքը, առաւել եւս քաջանում էր իւր ասպարիզում։ Սարգիսը գիւղական կոռ ու բէգիառի մեծ մասը հարուստների վրայ էր դրել. «քեասիբները մեղք են, պէտք ա մի քիչ հանգստանան, դուք էլ պէտք ա սովորէք տանջուել, որ նրանց ղադրըն իմանաք...»,—նա միշտ ասում էր աղքատակեր հարուստներին։ Եւ այդ էր պատճառը, որ Սարգսի տանուտէրութեան տարին դեռ չըր բոլորած գիւղի մնացած հարուստներն էլ թշնամացան հետը և օրէց օր դառան էին մտնում, որ գլորեն նրան։

Անհանգիստ Ղոնդաղսազը գիշեր ցերեկ աշխատում էր։ Նա քեօխվի բացակայութեան ժամանակ կանչում էր իրեն պարտ եղող բոլոր քեասիբներին իւր տանը և յորդորում, որ իրեն հետ միանան, ստորագրեն պատրաստուած թղթին և բողոքեն Սարգիս քեօխվից։ Սակայն գիւղականք արդէն տեսել էին Սարգսի ոյժն ու քաջութիւնը, էլ չէին կասկածում, թէ Ղոնդաղսազը կարողանայ վնասել իրենց, երբ այնպիսի տանուտէր ունէին։ Նրանք անսպասելի կերպով սառն էին վերաբերւում Ուստայ Դ.-ի առաջարկներին։ Ղոնդաղսազը տեսնելով, որ խօսքով բան չի գլուխ բերւում, յարմար միջոց համարեց իւր պարտականներին փողի կամ հացի շահը, տոկոսները բաշխել, որպէսզի դրանով կարողանայ գրաւել. բայց շատ քչերին կարողացաւ որսալ։ Այնուհետեւ նա շատերին սկսեց սպառնալ, թէ ունեցածները բոլորը կը խլի, եթէ

բողոքին չեն ստորագրել։ Հէնց այդ ժամանակ Քեօխվէն Աղստափից վերադարձաւ Խաչթառակ։— Ղոնդաղսազի պարտականներն երեկոյեան մթնով գնացին տանուտէրի տուն և եղելութիւնը պատմելով՝ յայտնեցին, թէ վաշխառուն սպառնում է իրենց։

—Քեօխվայ, սրանից ութ տարի առաջ հացս պակաս ժամանակ գնացի էտ անօրէնիցը մի թուման փող վե կալայ. էն մի թումանին ամեն տարի մի թաղար (9 փութ) ցորեն շահ եմ տուել և չորս օր էլ հունձ արել, էլի իրեք թուման պարտ եմ. հըմի էլ քեզ հետ հակառակուել ա, մենք էլ ղոլդ (կողմդ) վե չենք գցըմ, տեղներս նեղել՝ փողն ուզըմ ա, ո՞նց անեմ.—գանգատուեց մէկը, մօտեցաւ միւսը։

—Քօխվայ ջան, ես էլ դըրա պէս գլուխս քարովը տուած ո՛չ դի պարտք արած, հինգ մանէթին տարիւկխսումը տասը մանէթ շահեմ տուել, հըմի էս դժար մաջալին, էս ձիւն ձմեռ ժամանակը մնացած հինգն էլ ա ուզըմ...

Այդ կարգով շատերն սկսեցին իրենց անիրաւ պարտքերի պատմութիւնն անել...։ Քեօխվէն ամենքին լսելուց յետոյ՝ հարցրեց.

—Նրա ձեռքին թուղթ՝ սանաթ, բարաթ եա կապակցութին ունէ՞ք.—

—Ունենք.—պատասխանեցին։

—Ի՞նչ թուղթ, ի՞նչ կապակցութին ունէք, հաստատած, փեչատած ա՞, թէ՞ չէ...

—Չէ, պարապ թուղթ ա։

—Քունը՞.—հարցրեց երկրորդին, երրորդին...

—Իմը առանց թղթի ա։

—Իմը թղթով ա, ամա փեչատած չի.—ասացին նրանք։

—Ինչքան որ տուե՛լ էք Ղոնդաղսազին, վկայի մօտ էք տուե՞լ, թէ չէ։

—Ես վկայի մօտ եմ տուել։

—Դո՞ւ։

—Ես էլ։

—Ես էլ...

—Դէ որ տհենց ա, վախիլ մի՛ք, գնացէք ձեր գործին. դուք ձեր պարտքը տուել՝ վերջացրել էք և էն թղթերը բանի պէտքական չեն. ես նրանց ղուրանն օխմիշ կլեմ (կ'ոչնչացնեմ)...

ԺԲ.

Ղարաբաղցին շարունակեց թուղթ պտտեցնել Թ., Ռ., Ք. և Ղ. գիւղերում ևս, որոնք Խաչթառակի գիւղական կառավարութեան մասերն էին, բայց նա յաջողութիւն չգտաւ։ Ղոնդաղսազն այդ գիւղերից ևս շատ աննշան հետևողներ ունեցաւ. ուստի այնուհետև յոյսն աւելի իւր գրպանի վրայ դրեց։ Նա մի քանի անգամ իւր համախոհ և բարեկամ Եազախուրու հետ միասին Աղստափայ գնաց, որ կաշառքով բան գլուխ բերի, բայց դարձեալ յաջողութիւն չըգտաւ ուր հարկն էր, որովհետև ամ-

բողջ հասարակութիւնը Սարգսի քամակին կանգնած էր։

Սարգսի հակառակորդն օրէցօր ճաքւում, յուսահատւում էր, բայց չէր կարողանում «իւր մանէթներով» նրա գլուխը ճղել, ասել էր ու մնացել կրակի մէջ։ Նա ամեն հնար գործադրեց բան չըդուրս եկաւ։ Նա էլի շարունակեց գործել, բայց Սարգսի պաշտօնավարութեան վերջին տարիներում անբուժելի ցաւով հիւանդացաւ, մահուան անկողինըն ընկաւ։ Ղոնդաղսազն իւր հնգամեայ կռիւներով միայն մի բան կարողացաւ անել. նա ստեղծեց մի ժառանգական կուսակցութիւն, որը նրա մահից յետոյ էլ շարունակուեց որդեց որդի՝ ունենալով իւր տգեղ և անբարոյական հետևանքները գիւղականների վարք ու բարքի նկատմամբ։ Այդ կուսակցութեան գլուխ հանդիսացաւ նրա բարեկամ Եադախուրին, որին մեռնելու ժամանակ Ղոնդաղսազը մի այսպիսի կտակ արաւ։

—«Խո՛ւրի ջան, ես հինգ տարի ամեն հնարք ձեռք առայ, ամա, կրացի ոչ Սարգսից վրէժս հանեմ։ Ես էլ ապրելու յոյս չունեմ, էս ա մեռնըմ եմ, ամա կտակս անկատար չթողես՝ վրէժս ա՛ռ Սարգսից. եթէ էտ չանես, ես գերեզմանըմս հանգիստ չեմ մնալ...»։

—Ցո՛ւսով մեռիր, վա՛խիլ մի. ես վրէժդ կառնեմ.—պատասխանեց Խուրին և նա հոգին աւանդեց։

ԺԳ.

Սարգիս քեօխվի պաշտօնավարութեան ժամանակը լրացաւ, բայց նա երրորդ անգամ կրկին ընտրուեց։ Դաւիթն ու Մոլլէն այս անգամ էլ շատ աշխատեցին արգելք լինել նրա ընտրութեան, բայց չ'աջողուեց նրանց։ Սարգսի երրորդ անգամի տանուտէրութեան ժամանակամիջոցում նրա և Խուրինի յարաբերութիւններն աւելի ևս լարուեցին, բայց վերջինս ոչ մի հնարքով չկարողացաւ յաղթել հակառակորդին, ընդհակառակը՝ նա մի քանի անգամ էլ Սարգսի բողոքների հիման վրայ պրիստաւի և եասաուլների ձեռքով ծեծուել էր հասարակութեան աչքի առաջ, որ մեծ վիրաւորանք էր նրա համար։ Բայց այնուամենայնիւ Խուրին իւր վրէժխնդրութեան այրուած կաշուի մէջ չէր կարողանում հանգիստ մընալ։ Նա միշտ մտածում էր մի կերպ Սարգսին գլորել։ Վերջապէս մի չար միտք յղացաւ նա։

—Արի նրան ուրիշ ղայդի վնասեմ....—ասաց նա ինքն իրան։

—Մանո՛ւկ, Մանո՛ւկ....—խորհրդաւոր և դաժան ձայնով կանչեց նա իւր եղբայրներից մէկին։

—Ի՞նչ ա, Խո՛ւրի ապի.—ասաց եղբայրը։

—Դու էլ, Խևն էլ ըստէ՛ եկէք։ Մանուկը կանչեց Խևին և երկուսը միասին գնացին Խուրինի մօտ և դրանը կիտած գերանների վրայ ոտընկախ նստոտեցին։ Խուրին իւր յղացած միտքը եղբայրներին պէտք է յայտնէր։

—Ա՛յ տղեք, խե՞ էք տաղ արել (լռել)։

—Ընչի՞ հըմար ես ասըմ.—հարցրին նրանք։

—Նրա հըմար, որ էտ վայխս... վայխսի տղէն էլի քեօխվայ դառաւ...։ Դուք գիտէք, որ նա մեզանից եախայ չի թափըմ—հլա մի ամիս չըկայ նըշաննին վրէն ա արել, չորս հետ մեզ կոռ ա ղըրկել...

—Բա հըմի մեզ ասըմ ես, թէ ի՞նչ անենք, դու էլ նրան բարեբար (հաւասար) մարդ ես, դու էլ գիր գիդաս, կարըմ ես՝ ղալամով հախիցն արի, թէ չէ, մենք ի՞նչ կարանք անիլ...—պատասխանեց Խեւը։

—Ես գիդամ, որ դուք կարաք մի բան անիլ, ընդուր հըմար կանչեցի ձեզ։

—Էրնակ չի լի՞լ, որ ասես, շհանց տաս, մենք էլ անենք.—կրկին ասաց Խեւը։

—Է՜... նրա տունն Աստօծ քանդի, մենք նրան ի՞նչ դենք անիլ, նա որ կայ՝ գազան ա...՞ղալամը դօրը ժաժ ա տալի, որտի խաղըմ ա, ընտի մարդի տուն ա քանդըմ...—յուսահատուած ասաց Մանուկը։

—Էտ դրուստ ա, որ ո՛չ մի հնարքով նրան վե գցել չենք կարըմ, ամա մի բան եմ միտք արել, թէոր ինձ լսէք, ընտով կարող էք խղճացնել նրան։

—Դէ ասա, ընչո՞վ.—հարցրին հետաքրքրութեամբ՝ մի նոր բան սպասելով նրանից։

—Դուք սրանից ետը պէտք ա ջահտ անէք՝

(աշխատէք, տքնէք) ինչքան կարաք նրա ապրանքից՝ տաւար, ոչխար, ձի... գողանաք, թէոր ինքներդ չըկարենաք, գող թուրքերին սովորցրէք՝ նրա ապրանքի դրօշմը շհանց տըւէք, թող մէկ-մէկ կըրեն, տանեն հեռու տեղերում ծախեն, թէոր դո՛ւք գողանաք, աշխատեցէք լիսը չըգցել—էնպէս գողացէք, որ չ'իմացուի...

—Ա՜, ես իմ Աստօծը փանդը (հնարը) գտել ես. էտ հու մեր ազիզ փեշակն ա. էսօր թէ էգուց նրա գոռոցը վե կանենք.—ասացին նրանք և հաստատ խօսք տալով Եադախուրուն, գնացին Գիքոյի կալը, ուր գիւղականներն սովորական նիւթերի մասին աղմկալի ձայնով խօսում էին։

Աշնանամուտ էր, օրը կիրակի, եղանակը չոր՝ այնպէս որ՝ միմիայն փոշիոտ ճանապարհներում կարելի էր նկատել մարդու կամ կենդանու ոտի հետքերը։ Եղանակի այդ տեսակ լինելը միշտ ձեռնտու է գողերի ու աւազակների համար՝ ինչպէս և Խեւի ու Մանուկի համար։

Արեգակի վերջին ճառագայթները երբ թռան ընկան սարի ճակատին, գիւղամիջում կիտուած գեղջուկները ցրուեցին Գիքոյի կալից և կիրակին արդէն վերջացած համարելով՝ երեկոյեան վերնաքամիով իրենց կալերում սկսեցին թէզերը քամել, ցորենը դարմանից, խրիւսկը խծուծից զատել, խախալել, դարմանը՝ մղանել մարագն ածել, իսկ ցորենն ու գարին ջուալներն ու ամբարները...

—Մա՛նո՛ւկ։

—Հէյ։

—Մթնըմ ա, վե՛ր կաց գնանք։

—Գնա՛նք.—պատասխանեց ընկերը։

Նրանք փեշներում հաց կապեցին ու ճանապարհ ընկան դէպի Ջրվըժի հանդը, ուր սարեցիները եայլաղից իջել՝ սառնակն աղբիւրների մօտ բինա էին դրել։

—Մա՛նո՞ւկ։

—Հէյ։

—Էսա մո՛ւթը վրահասաւ, գտնիլու չենք, ամա գի՛դաս ո՛նց կանե՞նք։

—Ո՞նց, ա՛սա։

—Հըմի, մութն էլ որ չը լի՛, հովն ընկած վա՛խտն ա, ապրանքը քօլերն ու մոլուտներն ա քաշուել. արի ըրիկունս գնանք դագըմը (վրանումը) քնենք ու էգուց արևը դիպչելիս տանձուտներովը լեօլոկ (պտուղ) հըւաքելով կը գնանք Ջրվըժի ձորի գեօլի ղրաղին կը սպասենք՝ նրա գոմշնին շոգն ընկնըմ ա թէ չէ, գնըմ են գեօլըմը նստըմ...

—Լա՛ւ, տհենց անենք։

Միւս օրն առաւօտեան շողը դիպչելուն պէս նրանք չարութեան ճանապարհն ընկան դէպի Ջըրվըժի ձորի կողմը, ուր պէտք է գտնէին Սարգիս քեօխվի գոմէշները։ Հասան լճի ափը և ահա չարամիտներից մինը կանչեց միւսին։

—Մա՛նո՞ւկ։

—Հէյ։

—Ա՛, էն շան տղայ վայխսի գոմէշներէն մի-

նը հրէս գեօլըմը նստած արուճ ա անըմ՝ (որոճում է) էն մէկէլը կայ ո՛չ։

—Ոչինչ չկայ, հլա առաջի գոնըմն ա (առաջին անգամն է), էս մինն էլ բոլ ա. թող էս տանենք մարսենք, ետոյ էլ ընգոնք կը գտնենք։

—Էտ տհե՛նց ա, լա՛ւ ես ասըմ, ամա, ես ուզըմ եմ նրա ծուխը վախտին կտրե՛նք՝ շշկլըցնենք.—վրէժխնդրութեամբ ասաց Խեը և ծանր գագանակի սալըների ու քարերի անխնայ հարուածներով ջրի միջից վեր կացրեց Սարգսի լծկան գոմէշը, կոճերի չոր տեղերին կրկին և կրկին խըփեց ու տիրոջը հայհոյեց...

—Խե՛ ապի.—ասաց Մանուկը իւր քառասուն տարեկան հօրեղբօրը։

—Ա՛սա, ի՞նչ ա։

—Դո՞րը քշենք, ո՞ր ճմբովը տանենք, որ ոքմին տենայ ոչ։

—Դէսը քշի, էլ խօսալ մի՛։

—Դո՞րը, քարափի տակի վրա՞։

—Հա՛, հա՛. Սխտորուտի քարի վրա։

—Հօհօ, ա՛ գոմէշ ո՞ւր ես գնըմ։

—Ա՛, կա՛մաց, կամաց խօսա, ոքմին կիմանայ.—Խե՛ն զգուշացրեց եղբօր տղին։

—Մեր դժարն էս մոլուտն ա, էս որ ա՛նց կենանք, ձո՛րը մտնենք, էլ ձէններս լսուիլ չի։

—Հօ՛, հօ.... —կամաց՝ գողի ձայնով ասաց Մանուկը։

Ջարամիտները Սարգսի Շմալ գոմէշը բաժա-

նեցին իւր արօտընկերներից ու կոճերն անգթաբար ծեծելով առաջ արին քշեցին։ Շմալը՝ անխօս կենդանին գլուխը բարձրացրեց, նայեց իւր չորս կողմը և կարծես զգալով իւր կորուստը, «ընվա՛յը» գոլընգաց և նրա առողջ ու ուժգին ձայնը թընդացրեց անտառը...

—Մա՛նո՛ւկ.—ասաց Խևը։

—Հէյ։

—Ա՛ղաքը կտրի բռնենք՝ գունչը կա՛պենք, թէ չէ ձէնի վրայ մարդ դուրս կը գայ՝ կը տեսնի մեզ...

—Հօ՛, հօ՛, կաղնի օ՛հօ՛.—ասացին նրանք կենդանուն, և ականջը բռնեցին։ Շմալը կարծեց, թէ իրեն լծում են, բայց անգութները թոկով պինչն (բերանն) ամուր կապեցին և դիբին *) դէմ արին ու քշեցին։

Կէս օր էր, քամի չկար. շոգին չդիմացող կենդանին, որ ամբողջ գիշերը եղնարօտներում արածելով ստամոքսը լցրել կշտացել էր, ուժգին կերպով շնչում էր, բայց քթի հուպ տուած ծակերից հազիւ կարողանում էր միայն քրտնքի կաթիլներ հոսեցնել։ Գոմէշը տաքացած հնոցի նման այրւում էր ներսից, շունչն ազատ չէր կարողանում դուրս գալ. և երբ ուժ էր տալիս՝ աղբի հետ՝ փորոտիքն ուզում էր թէ դո՛ւրս թափուի, իսկ խիղճները կորցրածներն անդադար և վայրենաբար ծեծում ու քշում էին դէպի վեր։ Դրսից՝ բերանը սեղմած

*) Ներքևից վերև գնացող ճանապարհ։

կանեփի թոկը կաշին կտրել՝ ոսկրին էր հասցրել, իսկ ներսից դէպի բերանը ճնշող շունչը՝ պնչի երկու ծակերից փսլնքի ու գոլորշիացած քրտինքի հետ եռացող արիւն էր հոսեցնում։ Այդ բաւական չէր՝ անգութները դեռ ծեծելով և տիրոջ հօր հոգուն հայհոյելով՝ սրածայր դանակի ու դաշոյնի ծայրով ետևից ծակծկում էին անխօս և անլեզու կենդանու անդամները։ Այդ չարչարանքը տալով՝ կենդանուն տարան անցկացրին մի նեղ ու անձուկ կիրճով, ուր երկինքը չէր երևում անտառի խտութիւնից և սեպաձև կողմերի վերևում իրար հետ միանալուց, որտեղ միմիայն լուսանցք էր բացւում։

Շմալին, պատի պէս կանգնած կիրճով ներքևից վերև էին քշում. նա քափ ու քրտինքում մտած, դարիվերում շնչասպառ կամ ծնկների վրայ չոքեչոք էր գնում և կամ դունչը դնում գետնին՝ ղլղլացնում և անդադար իրեն ծեծողների վրայ ետ նայում, որ կապած բերանը յետ անեն։ Խեղճ կենդանու աչքերը շուռ էին եկել, այնքան նայել էր այդպէս, բայց չէր ազատւում։ Նեղ կիրճում, որտեղից հրացանի ձայնն անգամ հազիւ կլսուէր կէս վերստ հեռաւորութեան վրայ, կարծւում էր, թէ Սարգսի թշնամիները, գոնէ այդտեղ՝ կամ գոմշի բերանը կը բանան և կամ կը մորթեն՝ կազատեն սրտաճմլիկ կենդանուն իւր սոսկալի դրութիւնից, բայց դարձեալ կապած ծեծում ու քշում էին, թէև կենդանին առաջ չէր գնում։

—Խե՛, բո՛լ ա, արի ըստի մորթենք, կոչչի։

—Ըստեղ մորթել չի՛ լիլ, քչի՛, տեսնող կլի…

—Ա՛յ տղայ, ըստեղըսկի ղուշ էլ չկայ, ո՞վ դի տենալ. արի մորթենք.—ասաց Մանուկը՝ կրճի ամենախոր տեղում, ուր կրակ շնչող Ծմալի մահմըզող կճղակներից ու ոտքի դրած տեղից կայծեր էին դուրս թռչում, ստամոքսն անդադար խփում, տըրփում էր, կենդանին ուզում էր տըռլնգալ, չէր կարողանում, այնտեղ արդէն հուպ տուած ատամների արանքից կախ էր ընկել Ծմալի քրքրուած լեզուի մի կտորը, որից արիւն էր կաթկաթում։

—Ա՛յ տղայ, արի մորթենք.—կրկնեց Մանուկը։

—Մորթէ՛նք, հը՛հը՜.—արհամարհական քմքըծիծաղ տալով պատասխանեց Խեը և յետոյ թէ.—Մգեար մսացու ա՞, որ մորթենք…

—Բա՞. բա ի՞նչ դենք անիլ.—հարցրեց նա։

—Քչի՛, քչի՛, հրէս կտենաս։

—Ա՛յ տղայ, ո՛նց քչեմ, էս տէրամեռը էլ գնըմ չի՝ բզարել ա, տենըմ չե՞ս։

—Քու փողովը խու չի՛ առած՝ տո՛ւր, խնջալի, խնայըմ ե՞ս, դրա տիրունչ հէրն էլ անիծած, իրանուգլխու ա՞, որ չգնայ։

—Իրանուգլխու չի, ամա շունչը կտրել ա, հրէս վե՛ դի ընկնիլ, արի մորթենք։

—Է՜, է. գլուխս տա՛նիլ մի, քչի՛, դանակով հու չե՛նք մորթելու…

—Բա՞։

—Քչի՛, էսա հրէս կը տենաս։ Կենդանին ճաքւում էր շոգից, Խեը չէր մորթում, էլի ծեծելով քշում էին դէպի անտառապատ լերան գագաթը։

Թանձր և մռայլ անտառի մէջ մի հսկայամարմին լեառն իր չնգչնգուտ գագաթը համարձակ դուրս էր հանել և ահեղ կերպարանքով նայում էր իւր շուրջը։—Հանգուցաշատ և բազբասեպաւոր այն ապառաժուտ լերան ճակատին շանթալից կայծակներն այնպէս խիստ հարուած էին հասցրել, որ ահագնաշերթ քարերի հազարաւոր փթանոց կտորները ուժգին շպրտուելով այս և այն կողմը, պինդ խրուել էին հողի մէջ և շատ ժայռամասեր էլ՝ նոյն զօրութեամբ լեռ քարերին խփուելով՝ խշուրփշուր էին եղել ու շեղջի պէս կիտուել լերան ստորոտում։ Լերան կերպարանքն այնքան ահեղ, այնքան սոսկալի էր, որ եթէ մէկը ներքևից նայում էր նրա սպառնացող երկնաբերձ գագաթին, սառսուռը ջանն էր ընկնում, մազերը փշաքաղում և դողդողալով երկիւղից, ձայնը կտրած, ուզում էր շտապով փախչել, որպէսզի այն թուլացած՝ առկախեալ ժայրամասերը չը փլեն, չը թափուեն իւր գլխին։ Այն բազմաայր և խոռոչաշատ լերան գօտիների վրայ սրակճղակ այծեամներն անգամ չէին կարողանում ոտք դնել։ Այնտեղ, այն բարձր խոռոչներում և առապարներում՝ Արծիւն, Ղուզղունը, Լաչինն ու Ծահէնը և այլ գիշատիչ թռչունները միայն սիրտ էին և անում բուն դնում հօգեզմայլ անտառի գլխին աւելի բարձր օդի մէջ՝ իրենց զիլ

ու զօրեղ ծվոցներով սլանում, ճախրում։ Իսկ վերևից նայողը ներքևում կարծես մի անտակ ծով էր տեսնում, ուր եթէ լինէր, երկիւղից լեղին պիտի պատռուէր։

Անդնդասույզ այն ձորի միջով, մի փոքրիկ, բայց կատաղի շառաչիւնով վտակ՝ բարձր ջրվէժներից զօրութեամբ վայր թռչելով՝ բիւրեղանման կաթիլներով մաղւում էր անդնդում գոյացած խորունկ լճակի մէջ, որից յետոյ՝ ձորն աւելի ահաւոր էր դառնում և քանի գնում, այնքան նեղանում ու մթնանում էր։ Այդ ձորը Ուշապի կամ վիշապի բերան, իսկ լեառն Այծաքար էր կոչւում։ Ձորը մտնելու ճանապարհ չկար, միայն մի դժուարագնաց ու խճուտ շաւղով միայն հազիւ կարելի էր վիշապի բերանին մօտենալ։

Խևն ու Մանուկը կեռեղջիւր, չիկամազ, լայնակուրծ և սրակճղակ Ծմալին, որի պատկերը մի չքնաղ սուրաթ էր ներկայացնում, անխնայ ծեծելով բարձրացրին ահա այն ահաւոր Այծաքարի գլուխը և Ուշապի բերանին հանդիման կանգնեցրին։ Յոգնած կենդանին, քարափի գլխի բարձր տեղում, գլուխը հազիւ բարձրացրեց, թուխ-թուխ և վառվռուն, բայց արդէն շրջուած աչքերով նայեց դէս ու դէն և կարծես իմաստունի պէս իւր մահը գուշակելով՝ հառաչեց անասնաբար, բայց սարսափելի կերպով երկիւղից դողում էր։

Խեղճ կենդանին յանկարծ կողքի վրայ մեկնուեց և սկսեց վռչալ։

—Մա́նուկ.—դաժան ձայնով կանչեց Խևը։

—Հէ́յ։

—Դէ́հ, էլ մտիկ մի́ անիլ. խանջալդ դո́ւս քաշի, էս մոլուտիցն էրկու լաւ դագանակ կտրի...։

—Ընչի՞ համար կտրեմ։

—Դու կտրի́, կա́սեմ թէ ընչի համար ա։

Մանուկը դագանակները կտրեց, քշտեց և մինըն ինքն առաւ, միւսը Խևին տուեց։

—Դէ́հ, սրա տէրն ինձ շա́տ ա դղդղորել... վե́ կացրու, աղաքը քարափի ղուն արա ու ինչքան ջանմդ ջա́ն կայ, տո́ւ. գո́մէշ ա՝ զոռ կանի, որ ե́տ փախչի, տո́ւ, կարկաժը ճղի́, թողաս ո́չ։

—Ա՛, դվեր ես գցը՞մ։

—Հա́, հա́, տո́ւ, թողալ մի́, տո́ւ...

—Խև՛, էս ա դվեր ենք գցըմ, ամա կաշին ափսոս ա, խարաբ կըլի. մեզ կա́շին ա պէտքը, արի էն քաշ տե́ղից դվեր գցենք...

—Ա՛, դե́լը մի́ տալ, դե́լը. հա իմ էս ղարագեարդանսուե́ր թէ խարաբ կլի, կըպատռտուի, փող խու չե́նք տուել, ինչքան լաւը կըլի, մենք էլ էնքան կըտանենք... տո́ւ, վո́հո́, վո́հո́..., տո́ւ, տո́ւ...

Խեղճ գոմշին դագանակների հարուածն քարեկարկուտի պէս սկսեցին վրատալ՝ անդադար և անգթաբար։

Արտասուքն աչքերին, մունչաց Ծմալը, ուզեց վերջին շունչը հաւաքել, պոզերով հարուածել իւր թշնամիներին, ազատուել նրանցից։ Անլեզու հայւանը տանջուեց, փախչելու արաւ, երկիւղից ղըլ-

ղըլացրեց, բայց ի զուր։ Խեր մի ահագին քարով ուժգին հարուածեց երկու եղջիւրների մէջ տեղին և սարի նման գոմշի ուղեղը ցնդեց։ Շշմած կենդանին, մի անգամ գլուխը թափարեց, պտոյտ եկաւ ու ետևի կողմի վրայ շուռ գալով՝ ահագին բարձրութիւնից սեպաձև ժայռերին դիպչելով՝ մեծ դըրդոցով ընկաւ ներքև և փշուր-փշուր եղաւ։ Իսկ Խեր սիրտը մխիթարելով, կարծես մեծ բաւականութիւն ստանալով՝ ասաց ետևից.

— Հը՛դ հա՛յ՝ քու տիրունջ հէրն էտա տհե՛նց եմ անիծըմ էէ, դէ թող մ’էլ լծի ու սէլի գլխին նստի հօռօլօ Ցմալ, Ցմալ անելով խուրձը կրի… Իսկ Մանուկը միտքը Ուշապի բերանի կողմը ձըգած զարմացմամբ գուշակեց.

— Պա՛. Խե՛, հըմի ջը՛ս խըրդըփշուր եկաւ, թըմփոցը մացա՞ր։

Անիծուածներն այնքան էին ծեծել կենդանուն, որ իրենք էլ էին յոգնել ու քրտնել. Նրանք քարափի գլխին մէջքների վրայ ընկան և փոքր ինչ հանգստանալուց յետոյ, մի դժուարագնաց շաւղով սողալով իջան ձորը։ Բայց ինչ սոսկալի տեսարան կար այնտեղ, ուր նրանք վայրենու սառնասրտութեամբ էին պահում իրենց՝ առանց ամաչելու և խղճահարուելու այն բարբարոսութիւնից, որ կատարել էին։ Անխօս, անլեզու կենդանու դրութիւնն զգացող մարդու գլխին կրակ էր թափում այն տեսարանը։ Ահագին բարձրութիւնից ընկած գոմշի բոլոր ոսկորները փշրուելով՝ ճղել,

պատռտել էին նրա հաստ և ճարպալից կաշին ու դուրս ցցուել. եղջիւրներն արմատից կոտրտուել կորել էին, գլուխը ջախջախուել ուղեղը ճեղքուածքից դուրս գալով, փորոտիքի հետ միասին ցրուել ալամալթել էր քարակոյտերը և մօտ եղած ծառերի բները. իսկ կոտրտուած աղիքները մնացել էին ճիւղերից կախ ընկած։ Դեռ տաք էր կենդանու ջախջախուած միսը. սևագոյն արիւնը բարակ հոսանքով ներկում էր քար ու փայտերը և խաշամների վրայ փոքրիկ լճակներ գոյացնելով սառչում էր հետզհետէ, երբ նրանք թևքները վեր քաշեցին, որ մաշկեն։

Գայլասիրտ եղեռնագործները սուր դանակներով փշրուած ոսկորներից բաժանեցին եղած, մնացած կաշին, քիչ աղ շաղ տուին վրան և մի ապահով տեղ այրի բերանի մօտ մի ծառից թառ տուին, ուր գիշակեր թռչուններն ահագին երամներով ծվալով սկսեցին պտոյտներ անել լեշի համար, իսկ իրենք առանց խղճահարուելու գնացին երկրորդ, երրորդ… և այլ չարագործութիւնների մասին մտածելու։

ԺԳ.

Գոմշի լեշը կերան վայրի գազաններն ու թռչունները. բայց Սարգիս քեօխվեն դեռ բաւական ժամանակ ոչինչ չըգիտէր այն մասին։ Նա, գիւղի սովորութեան համաձայն, խուրձը կրելուց

յետոյ, լծկաններն արձակել էր դէպի հանդը, որ գնան իրենց կամքին, անտառներում ուր կուզեն արածեն, գէրանան, որ ձմեռուայ խիստ ամիսներում շատ չընիհարանան։ Բայց երբ ցուրտն ընկաւ, հանդերից բոլոր անասունները հաւաքեցին բերին գոմերն անելու, տեսան Շմալը չկայ. Նրանք շատ և շատ փնտռեցին, բայց Ուշապի բերանում միայն ցրուած ոսկորները գտան։

—Ափսո՜ս, իմ գոմէշ Շմալիս գլուխն էտ վայիս շան տղեքը կերան, ես լա՜ւ գիտեմ...—ասաց Սարգիս քեօխվեն և ոսկորներից մինը ձեռքն առնելով՝ խղճաց, արտասուեց և դարձաւ տուն։

—Կնի՛կ, գոմշիս ոսկրնին գտանք Այծաքարի տակ։

—Ա՛յ մարդ, ես քե հըզար հետ ասեցի ոչ թէ՝ էտ անտէր քեօխվութինը վե՛ մի՛ կալնիլ, էտ ըրեցի տարածնին դօշիցդ կախ մի՛ անիլ. դու՝ ինձ խե՞ չի անկաջ կալար, գի՛տիր ոչ որ՝ վնասից սավահի օգուտ չկա՛յ...—գեղջկուհին սկսեց նախատել ամուսնուն, բայց նա վեհանձնութեամբ պատասխանեց.

—Հա՛, ի՞նչ ա, ի՞նչ են արել. լեզուս խու չե՛ն կտրել. մթամ թէ ըսկի չեմ ունեցել, մի գոմէշ չէ՞, ջա՛նս լի սաղ, մինն էլ կառնեմ...

—Ա՛յ մարդ, որ մի՛նն ըլի, իմ վէջն էլ չի, ամա էլի կանեն էլի.—գուշակեց կինը։

—Թող գլանք գողո՛ւթին անեն, ես էլ իմ ձեռից եկածը կանեմ...

—Ընչի՞, ընչի՞, հա՛զիր ամենից լաւն էն չէ՞, որ էտ ճտիդ սև ու սախտ մնացած ժնջիլնին վեր ունես ըռխըներովը տաս՝ եախէդ թափես...

—Կնի՛կ, մազդ երգեան ա, խելքդ կա՛րճ, մինն ա՛սըմ ես, մէկէլը թո՛ղըմ. մի տես ես ո՞նց եմ մըտածըմ է...

—Հա՛, ո՞նց ես մտածըմ, ուզըմ ես Ղազախի թուրք ու հայի քեօխվենոնց մէջ զօրբալուն դո՛ւ դուս գա՞ս։

—Բա՞, բա ո՛նց ես ա՛սըմ. մարդ իրան անըմը պէտք ա սաղ աշխարի հետ փո՛խի ոչ, նա՛մուս ունենայ։ Իմ նամուսը կտա՞յ, որ ես օխտն-ութ թումնանոց գոմշի հըմար քեօխվութենից ետ կաղնե՞մ, գեղն ի՞նչ կասի, չի՛ ասիլ թէ, Սարգիս քեօխվեն վախեցաւ Եադախուրուցը՞։ Ղոնդաղսազին տէհար ինչ արի. մարդ կռուելիս էլ պէտքա նամուսով, ղայրա՛թով կռուի, թէ չէ, կնիկ դառնալն էլ մի բան չի, ես իմ ասածի տէրն եմ՝ հա՛ս հա՛ ա, չէս չէ. ես պէտքա կռուեմ, քանի շունչս բերանըմս ա...

—Մ՛արդ, ա՛սըմ չեմ թէ կնիկ դառ, կռուիլ մի՛, ասըմ եմ հէնց ա՛նես, որ դիւշմանդ վրէդ ծիծա՛ղի ոչ...

—Կնի՛կ, դիւշմանի ծիծաղը հա կա՛յ, հա կա՛յ, դու ո՛ւրիշ բան ասա, ծիծաղով մարդ չի՛ մեռնիլ....—ասաց քեօխվեն և եափնջին շուռ ունելով գնաց Գիքօյի կալը, ուր մարդիկ ժողովուած հարկ էին հաւաքում—ծեծւում, քեօթակւում, հայհոյւում և գոմերում բանտարկւում էին...

ԺԵ.

Սարգիս քեօխվի անյողդողդ բնաւորութիւնն ամուր երկաթի կամք էր դարձել։ Նա իւր մի անգամ ասածի տէրն էր. գոմշի հասարակ կորուստը, հարուստների դարանները և հազար ու մի վնասակար ջանքեր նրան չէին կարողանում վհատեցնել։ Նա տոկունութեամբ աւելի ևս իւր արիութիւնն ու եռանդը կրկնապատկում, և գործունէութեան ծրագիրն ընդարձակում էր. նա գործում էր հրապարակի, խղճի և առողջ մտքի ու խոհուն դատողութեան սահմանի մէջ, իսկ դարանի մէջ առիւծի, բայց դուրսը, հրապարակի վրայ, նապաստակի դեր կատարողները դարձեալ սկսեցին տգեղ միջոցներով և ծածուկ վնասել նրան։ Մի երեկոյ նրանք գիւղական մութ սրահի տակ փսփսում էին.

—Ա՛յ տղեք, Խե՛, Մա՛նուկ.—կանչեց տիրացու Սարգսի ոխերիմ թշնամի Խուրի ապին։

—Հէյ, Հէյ.—պատասխանեցին նրանք գողգող ձայնով։

—Դա խրա՛տըւմ չի, մի գոմշով ոնչի՛չ չգուս եկաւ, եկէք մի բան էլ արէք։

—Ի՞նչ.—հա՛րցրին գոմշապանները։

—Գնացէք....— ամա գնալիս, խօսալիս՝ կա՛մաց գնացէք, կա՛մաց խօսացէք, որ հըրևանները չ'իմանան...

—Գնըմ էք

—Հա՛,

—Գնացէք.—Աստծօ աջողո՛ւթին տայ։

Այս անգամ Խեն ու Մանուկը ուրիշ երեք ընկեր էլ ունէին. նրանցից մինն էլ գիժ Ուհանն էր։

—Ուհա՛ն.—ձայն տուեց նրանցից մինը։

—Հէյ։

—Ա՛, բա՛րօթ (վառօդ) վե կալա՞ք։

—Հա՛, հա՛, վե՛ր ենք կալել։

—Ղա՞ւ, ղամի՞շ, կի՞ւշ...

—Վե՛ր ենք կալել, գնա տե՛նանք...

—Հաց էլ էք վե կալե՛լ։ Դէ կամա՛ց-կամա՛ց եկէք։

—Հա՛ցն ի՞նչ ենք անըմ։

—Տները որ հաջեն, աղաքնին կը գցենք, նըրանով կլե՛ն, չուելը բաններս պրծնենք...

—Բա գնանք վե՛ կալնե՛նք.—ասացին կէս ճանապարհին։

—Հա՛, հա՛, թըղարիքի հըմար ՚լա՛ւ ՚ըան ա, գնացէք վե՛ կալէք։ Ես ըստեղ կաղնըմ եմ։

—Գնա՛նք.—ասացին նրանք ու ետ վազեցին։

—Եկա՞ք.—հարցրեց սպասողը.—դէ գնանք։

—Գնա՛նք.—ասացին նրանք և լռեցին մթութեան մէջ։

Մի մութն ակնակոյր ձմերային լսաւը գիշեր էր. ցուրտն արդէն գետինը ՚սառցրել ՚հուպ էր տուել. լուսին չկար, երկնքում մի քանի աստղեր միայն նոսր ամպերի արանքներում՝ հեռու հորիզոնի վրայ թագնուելով և մերթ դուրս գալով՝

հագիւ պսպղում էին։ — Գիւղական խրճիթներում վաղուց ճրագները հանգցրել էին և բոլոր գեղջուկները դառն ու խաղաղ քնով էին մտել։ Մարդու ձայն չէր լսւում, միայն բազմաթիւ շների ու կատուների ձայն ու մռմռոցները, կլանչոցն և մլաւոցները մարդու ականջ էին խլացնում և ձմերային դաժան քամին խիստ կերպով սառեցնում, փետացնում էր տաք տեղից դուրս եկողի ականջներն ու քիթը։ Այդ միջոցին հինգ չարանենգ մարդիկ կամա՛ց-կամա՛ց, կուզէկուզ, բարձրից իջնում էին դէպի Սարգիս քեօխվի տուն։ Նրանք իջան և մտան տան մօտի փոսը, բայց քեօխվի գամփռները հոտառութեամբ իսկոյն իմացան թշնամու գալը և սկսեցին ոռնալ ու մարդահաջ տալ։ Շներն էլ իջան փոսն և խիստ աղեկտուր ձայներով մի կասկածաւոր լալօշ սկսեցին...

— Հո՜ւֆտ, հո՜ւֆտ. — շվացրեց Խեն և ասաց. — ձեզ անխօս անիլու հնարը ես վա՛ղուց եմ միտք արել։ Մանո՞ւկ. — կանչեց նա կոկորդային ձայնով։

— Հը՜. — նոյն ձայնով պատասխանեց նամարդը։

— Ա՛դա, բերած հացներդ շների ա՛ղաքը գցեցէք, քեօխվանք կզարթնեն...։

Մանուկը հացերը գլորեց շների առաջ։ Շները բոլորը լռեցին, բայց մի հաւատարիմ շուն շարունակեց հաջել, վազեց տիրոջ դրանը ծմրաց, կլանչեց, կրկին ետ դարձաւ ներքև և շարունակեց իւր լալօշը։ Սարգիսը միամիտ և խաղաղ հո-

գով քնած էր։ Չարագործներն արդէն մտել էին նրա խոտանոցի՝ չարդախի տակ և զգուշութեամբ սկսում էին իրենց չար գործը...

Քեօխվակին Նախշունը քնի մէջ լսելով շների չարագուշակ լալօշի ձայնը, անկողնից քնաթաթախ վրանստեց կիսածածկ վերմակով և ականջ դրեց այն կողմն, ամուսնու կողքին ձեռքով բզեց և ասաց.

— Տի՛րացու, տի՛րացու...

— Հը՛ ի՞նչ ա, հէ՞. — բացականչեց Սարգիսն ու կարծես ահաբեկուած անկողինը վրայից շպրտեց...

— Ա՛սա, ի՞նչ ա, ի՞նչ. — էլի վրա-վրայ կըրկնեց նա։

— Տօ՛, շները փոսում դէշ հաջում են, մի վե՛ կաց, տես ի՞նչ կայ. — ասաց կինը։

Քեօխվեն պատուհանից ականջ դրեց, բայց շներն արդէն խաբուել էին հացի պատառներով։

— Է՜՜. երազով ես ընկե՞լ, ա՛ կնիկ. քնի՛, քնի՛. — երկար ականջ դնելուց յետոյ՝ ասաց տանուտէրն ու կրկին պառկեց. բայց, դեռ էս աչքները չը խփած՝ մի ընդհանուր հարա՛յ-հրոց ընկաւ և մթութիւնն անակնկալ կերպով յանկարծ լուսաւորուեց։ Հեռուից, գիւղի ամեն ծայրերից՝ «օգնութի՜ն, քեօմա՛կ»... գոռացող ձայները հետզհետէ մօտենում էին Սարգսի տանը. — էրուե՜ց, էրուե՜ց, հա՛սէք, հէհէ՜յ...

— Վա՛յ, տի՛րացու, քու գեարդանդ չըկոտրի, խոտդ էրեցի՞ն. — վշտահարի պէս ծղրտաց Նախշու-

նը և երկուսը միասին մետակհալաւ դուրս նետուեցին։

—Ա՛յ գեղակմնք, էրուե՛ց, էրուե՛ց, շարունակւում էին եկող ձայները։

—Ե՛րուեց, էրուեց, ո՞նց անեմ.—սառնասրտութեամբ ասաց տանուտէր Սարգիսն և դուռը վրադրեց։ Քիչ ժամանակից յետոյ ամբողջ գիւղն արդէն կրակի շուրջը հաւաքուած աշխատում էր գոնէ մօտ գտնուած պէտքական առարկաները ազատել, որ չայրուին։ Հրդեհը հետզհետէ մեծանում էր և բոցը կատաղի վիշապի նման վեր էր ելնում դէպի երկինք և քամուց յանկարծ թեքուելով՝ ճօճում էր դէս-դէն և ուզում էր թէ լափի շուրջը գտնուող պարտէզը, տունն և գոմը, որի մէջ խոտակեր անասունները, կարծես բնազդմամբ, զգում և բառանչելով աղաղակում էին անասնական լեզուով թէ՝ «ձմեռս ինչո՞վ ենք կերակրուելու, խոտն այրուե՛ց...»։ Հրալաւը մեծ արագութեամբ լափում, այրւում էր ահագին խոտանոցը, որի տաքութիւնից սառած, քար դարձած գետինը մի քանի սաժէն հեռաւորութեան վրայ ցեխ ու լոպոպ դարձաւ և գոլորշին ամպի նման սկսեց բարձրանալ։ Ամբոխը՝ մեծ ու փոքր, առաջին անգամ պատահող այդպիսի դէպքի վրայ զարմացած, ձեռքները ծոցները կոխած, երբեմն «վա՜շ, ա՜հ...» անելով՝ իրենց ծնկները ծեծում ու դառը ցաւակցութիւն էին յայտնում միմեանց և այրողի համար անէծք ուղարկում երկինք։

—Տէր, թագա՛ւոր Աստօծ, էս ի՞նչ զիւլզիւլումաթ ա, էս ի՞նչ անօրէն բան տեհանք. սրա կրակողի դատաստանը Դո՛ւ անես, դու հո՛ւր ու կրա՛կ թափես նրա գլխին. սա ի՞նչ ա, ի՞նչ անիրաւութին ա.––մատով ցոյց տալով հրդեհը, ասում էր ամեն մինը նրանցից։

—Տէր Վերնէին, քեանից ենք խնդրըմ լսի՛ր, սրա կրակողի ցանածը՝ ո՛չ պտղի և տնկածը՝ ո՛չ կնանչի...

Խոտը մի քանի ժամուայ ընթացքում այրուեց, մոխիր դարձաւ և կիտուեց գետնի վրայ։ Գիւղացիները տխուր կերպով արդէն ուզում էին ցրուել, բայց Թաթոս ապին սկսեց նախատել ամբողջ գիւղին այս ամօթաբեր դէպքի մասին։

—Ա՛յ գեղ, ա՛յ գեղականք, կա՛ցէք, դաղմիշ մի՛ ըլէք (մի՛ ցրուէք), անկաջ արէք՝ տեհէք ինչ եմ ասըմ ձեզ... սրա կրակողի տունն Ակո՛ւին դառնայ, ասեցէք ա՛մմէն։

—Ա՛մմէն, տէր Աստօծ, ա՛մմէն.—կրկնեցին ամենքն և իսկոյն կանգ առան, իսկ Թաթոսն սկըսեց շարունակել իւր ասելիքները։

—Դուք սո՛վոր էք էնդայդի քեօխվենոնց, որոնք բայղուշի պէս կլտափնին բաց կալած ձեզ կո՛ւլ են տալի. գեղը փիսացաւ, ձեր միջին լաւ թէ վա՞տ չիմ մին ա. փիսին էլ էք փիս ասըմ, լաւին էլ էք փիս ասըմ, ամա ձեր մէջը լաւ քեօխվէն մեղքէլ ա, որ լի...։ Սա ի՞նչ բան ա.––ցոյց տուեց հրդեհը.—ինչ որ տեհած չինք, տե-

հանք…։ Մարդի խոտըն էրեցին, մի տուն անասունը սոված՝ գոմումը բառանչելիս թողեցին. ամենդ էլ ապրանքի ու խոտի տէր էք, գիտէք, թէ խոտն ինչ դժարութենով պահըմ, ջըրըմ, հնձըմ ու կըրըմ էք. ամենդ էլ ձեզ վրայ փորձեցէք, եթէ էս էրուած խոտը ձեզանից մէկինն ու մէկինը լէր, ինչ նեղութին կը կրէր. Հըմի, դուք որ գնըմ էք՝ սրան ինչ էք ասըմ, ինչ ջուղաբ էք տալի, չէ՞ որ ցաւը պէտքա քաշէք, վնասին պէտք ա հընկեր դառնաք։

—Դրուստ ես ասըմ, Թմթոս ջան, պէտքա քաշենք.—պատասխանեցին շատերը։

—Դէ որ տհենց ա, շատ ապրէք, ըռաւօտն ամեն մինդ մի շալակով, խոտ՝ ով ինչղադար կարայ, թող բերի քեօխվի հըմար դիզենք, ղարիբ մարդիկ կը գան մեր գեղը՝ էս նամարդութինը կը տենան, ամօթ, այիբ ա մեզ հըմար։

—Ասածիդ յօժար ենք, Թմթոս ապի. Աստօծ դըրա էրողի ջանն ու օրն էրի. բա մեր քեօխվին տհենց կը թողանք.—ասացին ամենքը և ցրուեցին։

Առաւօտեան դեռ խոտանոցի սիւներն այրւում, ծխւում էին, որ գիւղացիք մէջքով կամ սայլակներով խոտ էին կրում քեօխվի տուն և այրուածի փոխարէնը կիտում այնտեղ։ Սարգիսը նեղացած, չէր ուզում ընդունել խոտերը, բայց լսեց Թաթոսին։ Սարգսի թշնամիների տեղը շատերը գիտէին, բայց իբրև վկայ՝ վախենում էին հրապարակ դուրս գալ, որովհետև իրենք ևս ծածուկ բաներ ունէին—կը յայտնուէր…

—Թմթոս, տեհա՞ր, որ Խէնու Մանուկը… խոտ չը բերի՞ն. ես էս խոտերն ընդունելու չի, խօսքիդ նրա հըմար ուշ կալայ, որ տենամ նրանք էլ բերըմ են թէ չէ։ Ես լաւ գիտամ, խոտս նրանք էրեցին։…

—Քեօխվայ, հրէ՜ սէլհարքըմը մի ձիաւոր ա գալի, եարաբ էն ինչ ձիաւոր ա, որ նհենց հարաքաթ ա կոխըմ….—մէկը նրա խօսքը ընդհատելով ուշադրութիւնը դարձրեց եկող ձիաւորի վրայ։

—Եասաւուլ կլի.—պատասխանեցին միւս ունկնդիրները։

ԺԶ.

Հակառակի պէս, այդ տխուր րոպէին, Ղազախի գաւառապետից Սարգիս քեօխվէն մի սաստիկ հրաման ստացաւ, որով պատուիրում էր նրան գիւղական ծխահարկն ուղարկել։ Սակայն, մի քանի գիւղերից բաղկացած Խաչթառակի հասարակութեան մի մասից (գլխաւորապէս չունևորներից) հարկի կէսը դեռ ժողովուած չէր։ Սարգիսը եասաուլից, հրամանն առաւ, կարդաց, իսկոյն ձի հեծաւ և բերողի հետ ուղևորուեց դէպի Ղ. գիւղը, որ հարկահաններին ստիպէ, շտապեցնէ, որ հարկը միւս երեկոյեան իրեն յանձնեն։ Նա գնաց, պատուիրեց և երեկոյեան մթնով տուն էր վերադառնում Թ. և Ք. գիւղերի սահմանում գտնուող մի նեղ ձորակի մի-

ջով, որն երկու կողմից չափարի նման մոշուտներով էր պատած։ Այն ձորակը, ցերեկով նույն իսկ, խիտ մոլուտի պատճառով՝ մութն էր լինում։ Գիշերն այնտեղից անցնելը շատ վտանգաւոր էր։ Սարգիսը, մտածման մէջ հէնց ձորը մտաւ թէ չէ, մի խո՛ւլ չըթոցի ձայն լսեց, որից նրա ձին յանկարծ խրտնեց և իրեն պինդ թափ տուեց։ Սարգիսը հազիւ թէ ազատուեց քարերի մէջ վայր ընկնելուց. նա հէնց ձիու սանձը քաշեց թէ չէ, մըթութեան մէջ՝ ասիական հրացանի հուրհանն իջաւ կայծվառի վրայ և երկրորդ չխկոցի ետևից թնդաց մոլուտից, այդ ձայնից ձին կատաղի կերպով նորից խրտնեց։

— Ա՛ նամարդ, չ՚աջողուեց, նո՛րից լցրու.— սըրտոտ կերպով որոտաց Սարգսի ձայնը և մի քանի ակնթարթի մէջ ձին կայծակի արագութեամբ իւր տիրոջը տուն հասցրեց։ Սարգիսն այնտեղ իջաւ ձիուց, արիւնն արդէն ողողել էր պարանոցն ու օձիքը. բայց նա դեռ ցաւ չէր զգացել։

— Մի՛քէլ, ո՛րդի, արի ձին տար կապի, առաջը խոտ գցի.— Սարգիսը պատուիրեց իւր միջակ որդուն և մտաւ տուն, ուր Նախշունը տաշտ ու մաղը դրած, թևքերը մինչև արմունկները ետ ծալած, հաց թխելու համար խաշ էր ճմբռում։

— Ե՛հէյ ջան, եկա՞ր.— հարցրեց կինը։

— Բա ի՞նչ արի.— դադրած ձայնով պատասխանեց նա և ձեռքը թախտի վրայ յենելով նստեց։

— Ա՛, բռանդդ էտ խի՞ ա տհենց թռել։— Սար-

գիսը լռեց, չպատասխանեց։ Կինը ձեռը խմորից հանեց, նայեց կրկին և յանկարծ վշտահարի պէս ծղրտաց.

— Վա՜հ, էտ ի՞նչ արին ա...։ Սարգիսը ձեռքը ծնօտը քսեց և զարմացմամբ հարցրեց.

— Պա՛ն գիպել ա.— ասաց և գունատուեց նա։

— Հը՛, վախիլ մի՛, ա՛սա, ո՞վքեր, ո՞րտեղ տըհենց արին։— Կինը խմորոտ և ալրաշաղախ ձեռքերով մարդու ծնօտը բարձրացրեց ու շարունակեց սիրտ տալ նրան։

— Երկիւղալի չի՛, վա՛խիլ մի. մի քի՛չ ջնկռտորուել ա չանէդ (ծնօտդ)։ Հը՛, ա՛սա, էս ընչով սհենց արին, ճընանչեցի՞ր...— կրկին հարցրեց Նախշունը։

— Կնիկ, Ղրանլուխ-Դարի ձորըմը վրէս թուանք գցեցին, մութն էր, կրա՛ցի ոչ ճնանչեմ, ամա, եա գիժ Ուհա՛նն էր, եա թէ չէ՝ Դաւիթը։

— Երկուսն էլ քե դիւշման են... ամա՝ ում որ մի կտոր հաց ես տուել, Աստօծ տեհել ա, քե ողորմացել ա, Արարիչը որդկերանցդ, քիւլփաթիդ էնղադար խէղճ ա եկել, որ արնկերի թուանքը գիւլլո՛վ չի լցուած լել, սաչմո՛վ (կոտորակով) են կրակել, թէ չէ, տաւններս քա՛նդուիլ դէր.— մի քանի արճճի կոտորակներ հանելով Սարգսի կարմըրած ծնօտից, կինը փառք տուեց Աստուծուն...

— Կնի՛կ, սաչմեն էլ կսպանէր, ամա շան տըղէն հեռուից կրակեց... հայլին (հայէլին) ինձ տուր մի տենամ.— էս ղոլը քիչ ուռել ա, ասաց.— նահլաթը չար սըտանին, բան կը դառնայ, մի քիչ

մոխրածուծ արա վրէն կապենք, բալի դաղուի, ուռչի ոչ։

Նախշունը քեօխվութիւնն անիծելով, կրակի չեղչը ետ-ետ արաւ, մորմոտի վրայ ջուր ածեց, Թշշալէ շաղախեց, տաք-տաք ցեխը փալասով կապեց Սարգսի ծնօտը և երկար նախատելուց յետոյ հարցրեց ժպտալով։

—Ա՛ մարդ, վխծմ՛ր։

—Հը՞, հը՞... Սարգիսը քմքըծիծաղ տուեց և ասաց.—կնի՛կ, ասած ա թէ՝ «վախեցիր էն գետից, որ ո՛չ վշշըմ ա, ո՛չ թշշըմ», հըմի ի՛նչ ասեմ, իմ դիւշմանը խու մեծ քաջութին չէ՜ արել, որ վրէս թագուն տեղից թւանք ա գցել, էն ով լի՛, կա՛նի. գիտաս որ մի ղոլս էլ թրատեն, ես վախեցող մարդ չեմ, ամա՝ նամարդ՝ մարդկերանցից տապ անող, դիւշմանից ո՛վ ասես, պէտքա վախենայ, զգուշ կենայ։—Վրէս հըզար էլ թըւանք գցեն, ես քեօխվութինս թողալ չե՛մ. ես մինեմին թքե՛լ եմ, թուքըս ետ լիզող չե՛մ, իմ ասածն ա՛սած ա...

—Ա՛յ մա՛րդ, դու քու տունն է՛լ ես քանդելու մերն էլ—գոմէշդ քարնուվե՜ր գցեցին, խոտդ կրակեցին, բաղիդ հաղողը հլա չը հասած՝ վաղնաւեն կտըրտե՛ցին ու ցեխի մէջ կո՛խ տուին. քունը տհենց անիլուց ետը, մօտիկ հրևաններիդ ու բարեկամներիդ դէզերն էլ կրակեցին... Նրանցով սրտները չը հովացրի՛ն, հըմի էլ ո՛ւզըմ են, որ քե սըպա՛նեն...։ Նա՛հլաթը չար սըտանին գայ, ա՛րի դու փեշիդ քա-

ըերը վե՛ր ածա՝ էտ անտէրնին գօշիցդ վե՛ կալ ըռխնե՛րովը տու՝ ազա՛տի եախէդ...

—Նա՛խշուն, դըրուստ ես ասըմ, մարդի կեանքըն ըշխարըս մէջ ամեն բանից թա՛նկ ա, ամա մեռնելուց ետը, նրա բարի անըմը կեանքից էլ թանկագին ա։ Էս էլ իմացիր, որ մարդ ըշխարըս մէջ կնկանից պէտքա ջո՛կուի, նա պէտքա նամուս, ղայրաթ ունենայ, ճշմարտութե՛նին պէտքա ծառայի և ոչ թէ՝ իր ա՛նձին, իսկ ճշմարտութինը՝ Աստուծ հրամանը խու չի՛ ասըմ թէ՝ «անիրաւներին գլուխ խոնարհի», չէ, ես կա՛րալ չեմ սաղ գեղի հասարակութինն անիրաւների ձեռքը տալ ու մենակ իմ գլխի վրայ մտածել. չէ, ես չեմ յուսահատուիլ ու վախենալ դիւշմանի կեղտոտ արարքներից. ես պատրաստ եմ եա մե՛ռնել, եա դրանց ախտել (յաղթել), չար լեզուներն ու հարամ ձեռքը կտրտել...։ Ես էն մարդին մա՛րդ չեմ ասիլ, որն արդարութինը, ճըշմարտութինը ճակատին ասելիս վախենայ թշնամուց՝ իր անձի, շահի ու օգուտի խաթեր...

Նախշունը լուռ էր և կարծես համաձայն նրա այդ վերջին խօսքերի հետ։

ԺԷ.

Միւս օրն առաւօտեան վաղ-վաղ Սարգիս քեօխվի կեանքին վտանգող լուրը տարածուեց ամբողջ գիւղում։ Ամենից վաղ, լուսածէգին քեօխվի ամենամտերիմ բարեկամներից մինը՝ յայտնի

Թաթոս ապին, իւր կարճ մահակը գիմհար տալով, երկիւղած, տխրութիւնը երեսին, շտապով մտաւ Սարգսի սրահը։

— Քեօխվայ ջա՜ն, վա՛յ, վա՛յ, վա՛յ. ջա՛նս քե հըմար դուս գայ, էտ խի՞ ես չանէդ կապել… աղուէսնին էլի նամարդո՛ւթին արի՞ն։

— Բա ի՞նչ արին. — ասաց Սարգիսը։

— Թաթոսի աչքերը քոռա՛նայ քե տհենց տեսնելով, մի բա՛ց արա տենամ. ո՞րտեղից են տուել։

Սարգիսը փաթաթանը ետ քաշեց, իսկ Թաթոսը կրկին անիծելով սկսեց կարեկցել նրա ցաւին ասելով.

— Վա՛յ, Թաթոսի մէջքի ի՛լիկը կոտրուի. ասա հետը գնա է։ — Ըստեղից են տուե՞լ։

— Հա՛։

— Ոնչի՜չ չկայ, Աստօծ էլի քու արդարութեան հըմար քե չի՛ կորցրել՝ աղուհացդ զօռով ա լել, ախտել ա. — վէրքը պըտուտելով ասաց Թաթոսն ու նստեց մի կոճղի վրայ։ Այնուհետև եկան և ուրիշները, ցաւակցութիւն յայտնեցին, դէպքի մասին հարց ու փորձ արին և գնացին իրենց բանին։

Նրանցից միայն Թաթոս ապին մնաց Սարգսի սրահի տակ նստած։ Նա ցուցամատը քներակին դրած լուռ մտածում էր, որ չարագործին գտնի։ Երկար լռութիւնից յետոյ, հարցրեց Սարգսին.

— Սա՛րգիս քեօխվայ, ո՞ւմն ես խեալ անըմ, ո՞վ կլի էն նամարդը, որ քու թանկագին կեանքի

հըմար թըւանք ա ձեռն առել. ես նհէ եմ խեալ անըմ, որ Դաւիթը պէտք ա լի։

— Օ՛հ, ղորմի քու լիս հօրը, էլ խօսալ մի. նա՛ ա. ամա գիտենաս, ինքը չէր անիլ, սըվրցրել են։

— Բա հըմի ի՞նչ ես հրամայըմ, արևը հընգցնենք ո՞չ…։

— Չէ, Թա՛թոս, ես էտղայդի բանի հըմա՛ձայն չեմ, թո՛ղ որ նրան կենդա՛նի խրատենք. — ասաց ներողամիտ Սարգիսը, խնայելով իւր կեանքը վերջացնել կամեցողին։

— Բա որ մնէլ անի՞…. — հարցրեց Թաթոսը։

— Գի՛տես ի՞նչ կայ, Թա՛թոս ապէր, մարդ դըմպա (դէպի) դիւշմանը պէտքա ներողամտութին ունենայ. արևը հանգցնիլը շատ հեշտ բան ա, էտ թո՛ղ. ըսօր թէ էգուց նա ինքն իրան թալակի մէջ կը գըցի – Աստօծ նամարդին միշտ աջողութին չի տալ։

— Դէ որ տհենց ա, քեօ՛խվայ ջան, այսուհետև ղորն էլ որ գնաս, ինձ իմաց արա հետդ գամ. ես քե էլ մենակ չեմ թողալ…

— Շա՛տ լաւ. — ասաց տանուտէրը։ Թաթոսը հեռացաւ նրանից։

ԺԲ.

Սարգիս քեօխվի վէրքն անվտանգ առողջացաւ։ Նա կեանքի մահաբեր գնդակից էլ չը վախեցաւ և ոչ վհատեց. ընդհակառակը քանի յառաջ, այնքան փորձուած, այնքան եռանդուն կերպով սկսեց շա-

րունակել իւր գործը՝ արդար դատավարելը։ Ամբոխից սիրուած Սարգիս քեօխվին շրջապատել էին հասարակ դաս կոչուած մարդիկ՝ քեասիբները, իսկ հարուստները միանգամայն թշնամացել էին նրա հետ և ամենայն եռանդով աշխատում էին աղքատներից ձայներ որսալ, ույժ կազմել՝ նրան գլորելու համար, որովհետև իրենց թիւը շատ քիչ էր՝ թէ իրենց և թէ միւս՝ հասարակութիւն կազմող գիւղերում։ Սարգիս քեօխվեն, առանց աջ ու ձախ տատանուելու, ծանրակիր բեռները՝ կոռ բէգեառը և ուրիշ շատ գիւղական հարկերը տարուայ վատութեան—եղանակի ու հանգամանքների նեղ ժամանակ աւելի ուժ ունեցողներին՝ հարուստներին էր քաշել տալիս, սակայն, համեմատաբար՝ քեասիբներին էլ չէր աղալացնում։

Հարուստների մէջ, ինչպէս ասում են, «ըռխով մարդը» Նաղախուրլին էր, իսկ աղքատների մէջ Թաթոս ապին։ Այս երկուսին հաւասար ուժով հակաձիգ լծակիցներ կարելի էր համարել, որոնցից մինն աջ՝ դէպի քեօխվեն էր քաշում գիւղականներին, իսկ միւսը դէպի Նաղախուրլին։ Սարգիս քեօխվեն, չնայելով իւր թշնամիների նենգութիւններին և նրանց իւր սկսած բարի գործերին խոչնդոտ հանդիսանալուն, սիրով տանում էր ամեն բան և նուիրուած գիւղական հասարակութեան գործերին, օրէց օր բարեկարգում էր իրեն ստանձնած գիւղերը։ Նա գիւղի հանդի առատ պտղաբերութեան ժամանակ՝ ցորեն, գարի և այլ տեսակ նուիրատու-

թիւններ ժողովեց, որով լրացրեց տարիներով կիսատ մնացած եկեղեցին և տանիքը ծածկեց, հողի պակասութեան պատճառով հարեան գիւղերի՝ աւելի հող ունեցող օտար հասարակութեանց հետ վէճի մէջ մտաւ և իւր հասարակութեան հողն աւելացրեց։ Գիւղի միակ աղբիւրը, որ գորտերի ջամաղով լցուել էր և շարունակ խմողների ստամոքսն ուռցնում ու «դող» հիւանդութիւն էր առաջացնում, հասարակութեանը մաքրել տուեց և սրբատաշ քարերից աւազաններ շինել տուեց, որտեղից այնուհետև լիացան թէ մարդիկ և թէ անասունները...։ Վերջապէս, նա ուզեց, որ գիւղն ուսումնարան ունենայ։ Այդ հարցը նա արծարծեց, սակայն քեօխվութեան պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրանում էր...։ Սարգիսն ուսումնարանի գործը նոր էր սկսել, իսկ աղքատ գիւղում ուսումնարան բանալու գործը մի գիւղական գործիչի համար, որից հարուստները նրա արդարադատութեան, ճշմարտասիրութեան պատճառով երես էին թեքել, թշնամացել և գործին շարունակ խոչընդոտ էին հանդիսանում, շատ դժուար էր և առնուազը գոնէ 3-4 տարի դարձեալ ժամանակ էր հարկաւոր։ Սարգիս քեօխվեն, հայի հոգուն մօտիկ այդ սրբազան գործում, աջակցում էր գիւղի քահանայ տէր Մհանեն. դրանք երկուսով աշխատում էին գլուխ բերել։

—Սարգիս քեօխվայ, ոչ մի քեօխվայ ուսումնարան բաց անելու մասին ըսկի մտքովը բան չի

անցկացրել, Աստծ կեանքդ երդեան անի, որ դու ուզում ես էտպէս մի բարի գործ անել. մեր ըեխէքը չեմ տըւարած, մոզարած են դառնըմ, մինը չկայ, որ եկեղեցըմը շարական ասելիս, խեղդուելուս ժամանակ ձայն քաշի, քանի քեօխվուլթինը ձեռիդ ա, լեղ արա (շտապիր) յուսումարանը շինենք, որովհետև քեանից ետոյ էնպէս մարդի ձեռք կ'ընկնի իշխանութինը, որ ախ ու վախ կանենք...

—Տէր-տէր ջան, թէ մեռայ ոչ սաղ մնացի, յուսումարանը գլուխ դեմ բերիլ, վախիլ մի.—պատասխանում էր ուսումնասէր տանուտէրը, բայց, ուսումնարանի պակը եկեղեցու մօտ դեռ կիսակըտրել էր, փայտն ու քարը պատրաստ էր, որ տարաբաղդաբար քահանան մեռաւ, իսկ Սարգսի հետ, ահա թէ ինչ պատահեց։

ԺԹ.

Խ. գիւղում հարևանի մօզին, երինջը, եզը ոչխարը, գառն ու այգին... գողանալն աշտարակեցոց հայհոյանքի նշանակութիւնն էր ստացել. մինչև անգամ տասներկու տարեկան պատանին, ծածուկ տեղերում՝ անտառներում և ձորերում գողութիւն էր անում, այրերում կենդանիներ էր մորթում խորոված անում, այգուց խաղող տանում և այլն։ Սարգիսն, իւր քեօխվութեան հէնց առաջին տարուց սկսած, մեծ խստութեամբ այդ անբա-

րոյականութեան առաջն առաւ, բայց էլի դեռ արմատախիլ չէր եղել։

Գիւղերում հովիւներն ու նախրապանները անկարելի բան է, որ տարուայ մէջ գոնէ մի անգամ գողութիւն չանեն։ Նրանք շատ անգամ, ըստ սովորութեան, ընկերութիւն են կազմում և մի քանի հոգի միասին՝ հերթով, ամսէ ամիս այս և այն հարևանի խոզը, ոչխարը . . . և կամ՝ ինչոր յաջողւում է գողանում են ու մորթում թագուն տեղերում։ Եթէ ամառն է լինում, իւղալի ղաուրմա կամ տհալ են շինում, փարախներում սառը գետնի մէջ թաղում ու քիչ-քիչ հանում, ուտում են, իսկ թէ ձմեռն է լինում, իսկոյն խորոված են անում...

Սարգիս քեօխվեն այդպիսիներին շատ անգամ էր խրատել՝ առանց խտրութեան՝ խաթրի կամ շահասիրութեան, առանց ասելու թէ՝ սա հարուստի որդի է, իսկ նա բարեկամի...

Ի.

Մի աշնան առաւօտ, երբ անտառը կերով—կաղնով, ընկուզով և հազարաւոր չոր ու թաց պտուղներով լի էր, գիւղից բարձր անտառից յանկարծ մի ահաբեկ ձայն սկսեց կանչել, աղաղակել.

—Հա՛նէս, էհէ Հանէս, Հանէս..

—Ա՛, էտ ո՞վ ես, էհէ՜յ...—գիւղամիջում կիտուած գիւղացիներից մինը բարձր ձայնով հարցրեց կանչողին։ Ամենքը լուռ պատասխանի էին սպասում։

Ձայնն անտառից մերթ լսւում, մերթ կտրւում էր. այնտեղ հովւի գամփռների ձայներ էլ էին լըսւում... Կանչողը վերջապէս լսեց գիւղամիջինի հարցմունքը և հաղորդեց հետևեալը։

—Հանէսին ասեցէք չոբաննին աղբօրդ կարկաժը ճղեցի՜ն, ճղեցի՜ն... ըհէ՜յ, հա՛սի՜ր, հա՛սի՜ր...։ Ձայնը նորից կտրուեց։

Սարգիս քեօխվէն իսկոյն հրամայեց միքանի քաջ երիտասարդների, որ գզրի հետ միասին օգնութեան հասնեն «Հարմ՛յին»։

Տասն ազրայիլ տղերք իսկոյն չուխաները հանեցին, մահակներն առան ու գնդակի նման վազեցին դէպի անտառը։ Նրանք անյայտացան, մըտան անտառը։ Շների աղաղակներն աւելի զօրացան, երբ նրանք տեղ հասան։

Գիւղականներն աչքները յառած դէպի անտառը, սպասում էին, թէ ի՞նչ կըպատահի հարահասներին...

—Ա՛յ տղերք, գնացողնին հետնելը թըւա՛նք չը վե կալան, վա՛յ թէ՝ գողերի, ղաչաղների հետ կռուելիս լէն, մա՛րդ կսպանեն, միքանի թըւա՛նք հասցրէք նրանց...

—Լա՛ւ ա ասըմ Ղուկաս ապին. անթըւանք մարդն ու կնիկարմատը մէկ են. շատ էլ ղոչաղ տղերք գնացին, եարաղաւորին ի՞նչ դեն անիլ, ձեռով բզի գլխին տալ կլի՞...

Սարգիս քեօխվէն հրացաններ ուղարկեց։

Գնացողներն ուղիղ մի ժամ հովիւների հետ

ղազանակամարտութեամբ կատաղի կռուելուց յետոյ՝ յաղթեցին նրանց և տասներկու հոգու՝ թոկերով կռները ետևներում կապած, վերջապէս դուրս եկան անտառից։ Նրանք կապուածներին քշած բերին գիւղամէջ, ուր մէր ու մանուկ թամաշա էին դուրս եկել...

Հանէսի եղբօր և մի քանի հովիւների գլուխները մահակների հարուածներից ճեղքուել էին և քիթ ու պռունգներն արիւնով ներկուել։

—Էտ ի՞նչ ա, ի՞նչ խաբար ա, Կա՛րապետ...— Հանէսի եղբօրը հարց ու փորձ արաւ քեօխվէն։

—Քեօ՛խվայ ջան, էս մուհալնին իրեք ոչխարս գողացել, տարել են մորթոտել. էսօր իզն ընկայ, գնացի Կարմիր քարի էրըմը (այրում) վրահասայ, բռնեցի գողերին։ Բանն աշկար ըլաւ թէ չէ, գիլլի պէս վրաթափուեցին գլխիս, որ ինձ էլ ուտեն, հարաս գեղը գցեցի, ամա չուել դրանց գալը գլուխըս ջարդեցին արիւնլուիկ արին...

—Հա՞, էդպէ՞ս.—հարցըրեց քեօխվէն։

—Հրա՛ման քե, քեօ՛խվայ ջան։

—Տարէք չիմնուն էլ (բոլորին էլ բանտարկեցէք).—միքանի մտրակ տալուց յետոյ՝ հրամայեց տանուտէրը և դատարան մտնելով առաւ թուղթ ու գրիչը և ցուցակագրելով գողերի անունները, դրեց ծրարում, կնքեց, յանձնեց գզրին և միքանի երիտասարդներին հրամայեց, որ թոկերով չաթած գողերին գոմից հանեն ու քշեն դէպի Դիլիջան՝

պրիստաւի մօտ, որ նա հարկաւոր տնօրէնութիւնն անի։

Տասներկու գողերից մինը տանուտէրի հաւատարիմ բարեկամ՝ Թաթոս ապինի տղէն էր, միւսն ինքը՝ «Զուլամայ Դաւիթը»։

Վերջինս հին գող էր, իսկ միւսները հարուստների որդիք էին։ Քեօխվէն արդէն բողոքագիրը պատրաստել էր, երբ գողերին գոմից դուրս քաշեցին։ Նրանց ճանապարհ դնելիս, քեադխուդաներից շատերը մտնում էին Սարգսի մօտ և խնդրում, որ իրենց խաթեր համար բողոքագիրը պրիստաւին չ՚ուղարկի, բայց նա, որ միշտ արդարին արդար, մեղաւորին մեղաւոր էր ասում ու ամենքին հաւասար պատժում, սիրում, ոչոքի խնդիրը չ՚ընդունեց։

Ծերունիները Թաթոս ապինին մէջ գցեցին.

Թաթոս ապին էլ մեծ վստահութեամբ մտաւ դատարան, կարծելով, թէ իւր ընտրած տանուտէրը, իբրև բարեկամ՝ խաթր կանի և իրեն որդուն գիջողութիւն անելով բաց կը թողնի, բայց հաստատակամ Սարգիսը Թաթոսի ոչ մի խնդրին չ՚անսաց ասելով՝ խստութեամբ.

—Չի՛ կարելի, գողը պէտքա պատժուի, ո՛վ կուզէ լինի...—տանուտէրը, խստութեամբ երես թեքեց, սակայն գիւղականք այդ կարծիքը չունէին Թաթոսի ու քեօխվի մասին, նրանք յոյսով էին, որ նա Թաթոսի խաթրը գետինը չի գցելու։ Հետևեալ օրը գիւղական բոլոր դատաւորները Սարգսի նախագահութեամբ նիստ ունեցան և Թաթոսից ու միւսներից գողացուած ոչխարներն առան և յանձնեցին ըստ պատկանելոյն, իսկ գողերին քշել տուին դէպի Դիլիջան...

ԻԱ.

Թաթոս ապին վիրաւորուեց, դաւաճանեց իւր սիրելի Սարգսին և դրժելով իւր հաւատարմական խոստումներն, նրա կատաղի թշնամին դարձաւ՝ անցնելով Եագախուրու կողմը։

—Դուք ինձ պէտքա թողութին անէք, ա՛յ գեղականք. ես ձեր առաջ մեղաւոր եմ, որ էնդայդի քեօխվին սուտ գովել եմ, նրա ղոլը վե՛ չեմ գցել, պահել եմ. ամա հըմի հասկանալով նրա՝ Մօ՛լլից էլ վաթթար ըլնելը, մեղքս խոստովանելով խնդրըմ եմ, որ մի տեղ հըւաքուէք, մի արզա գրել տանք ու ղրկենք նաչալնիկին...

—Ես ձեզ էտ բանը վա՛ղ ասեցի, ամա դուք անգաջ չը՛ կալաք, հըմի ամենդ էլ տեհաք, թէ ինչպէս ոչ մէկիդ խնդիրը չընդունելով՝ ձեր տղերանց կռները կապոտած ըըսի պրիստաւի կուշտը ղրկեց... դա հլա շա՛տ փիս-փիս բաներ էլ դի անիլ, թէ խե՛լք ունէք մեզ լսեցէք։ Թաթոսից լաւ ոչով չի ճանաչըմ Սարգսին, տեհա՞ք, սա էլ իրես թեքեց....—Եագախուրին սիրտ առած հանգամանքից, գողերի ծնողների հետ սկսեց գրգռել գիւղականներին. իսկ ոչխարի բնաւորութիւն ունեցող ամբոխը յետևեց նրան...։ Եագախուրին ու Թաթոս

ապին, նրանց հետ և Սարգսի հին ու նոր հակառակորդներն սկսեցին ամբողջ գիւղը տակն ու վրայ անել—ո՛րին խաբելով, ո՛րին փող տալով, ո՛րին սպառնալով, ո՛րին պարտքը բաշխելով համոզեցին և ստորագրել տուին բողոքագրին ու փոստը ձգեցին։ Խնդրի բովանդակութիւնը հետևեալն էր.

«Նորին բացր պարեծնութենին Ղազախու կեաւառապետին

Գանգատ

«Մենք ի ներքոյ սորին ստորակրեալք Խաշ-
« տարակու շինական հասարակութենի պաչոտնիկ-
« նիս տենալով, որ մեր քեօխվայ Սարգիսը մեր
« տները քանդեց՝ գեղիցը ցորեն, գարի, փող հը-
« ւաքեց, զուր տեղը պարտքի տակ գցելով աղբիւր
« շինել տուեց, որից մենք ըռանց շինելու էլ ինք
« ջուր խմըմ..., յետոյ՝ եկեղեցու գլուխը ծածկեց...
« հըմի էլ ուզըմ ա հասարակութենին խարջ ու
« պարտքի տակ գցի՝ յուսումարան շինել տայ...
« մենք մեր տղերանցն ուզըմ ենք խոզերը ղըր-
« կենք, յուսումարանն ընչներիս ա պէտքը...։
« Սարգիս քեօխվէն արդար դըդաստան չի՛ կտրըմ,
« կաշառ ա ուտըմ..., մի խօսքով՝ քեասիբ-քիւսու-
« բի ոտի տակի կորցնըմ ա...։

«Բացր... նաչալնիկ, մեր երեսը քու ոտի տակ
« դնելով՝ խնդրըմ ենք..., որ Սարգսին դուս գցես
« քեօխվութենից, որ մենք մի արդարադատ մարդ
« ջոկենք մեզ հըմար։...

«Ստորագրութին հասարակութենի՝

« Թաթոս Թաթոսով.
« Եաղախուրի Գնդակով.
« Ուհան Ղոնդաղսազիչ Հայիլով՝
« Աւագ Մարութով.
« Քիքի Բանջարափուկով.
« Գիրակոս Բոզբաշլիգողով.
« Բրուտ Բրուտով
« Մծռտիկ Գնդակով...։

Այդ և ուրիշ շատերի ստորագրութեամբ բողոքը գաւառապետին հասաւ, որն իսկոյն Սարգիս քեօխվին հրամանագրով իւր մօտ կանչեց։—

—Այս ի՞նչ գանգատ է, որ անում են քո մասին, Սա՛րգիս քեօխվայ.—ուրախ ժպիտով ու բարեկամական հայեացքով հարցրեց գաւառապետը. դա արդէն նշան էր, որ գաւառապետը բարի աչք ունի Սարգսի վրայ։—Վերջինս դէպքից օգուտ քաղելով, փափախը վեր կալաւ կռնատակը դրեց ու ինչպէս ասում են՝ «ըռխալի ու սրտալի պատասխանեց.

—Նաչալնիկին ապրած կենայ, հասարակութենից միայն էրկու մարդ ա սարքել էտ գանգատը, նրանք են պատճառ դառել խռովութեան, նրանք են արգելք լըմ իմ կառավարութեան...

—Ո՞վքեր են, ասա տեսնեմ։

—Մինը Խուրի Գնդակովն ա, միւսը Թաթոս Թաթոսովը։

—Այն գնդակովը՞, որ Ղոնդաղսազի հետ միասին քո դէմ գանգատում էին։

—Հրաման քե, նա։

—Ո՛չինչ, գնա՛, ես նրանց բողոքն անհետևանք եմ թողնում....—ասաց գաւառապետը։

--Նաչալնիկը Սարգսին տո՛ւն դի գցիլ հա՛...

—Հա՛։

—Ա՛դա, արզեն ո՞վ գրեց, էտ ի՞նչ թիւնդ ա գրել, որ նաչալնիկ՛ը դհե չուշտ՝ (շուտով) ուզեց։

—Տիրացուն ա գրել։

—Ո՞ր տիրացուն։

—Մաթոսը։

—Օ՜, դրա ղալամն էլ ա տնաքանդ...

—Բա՛.. բա դրա ղալամը չէ՞ր, որ պրպօքնին կտրե՜ց։

—Աղպէր, դէ որ տհենց ա, արժի որ դրան վախտին տէր-տէր շինել տանք։

—Տիրացու Մաթոսը հրէ իրանց կտերը կաղնած, արժի, որ կանչենք մի արաղ գցիլ տանք։

—Կանչե՛ցէք, փողն ինձանից, խմիլը նրանից.— ասաց գիժ Ուհանը։

Սարգսի հակառակորդները մինչդեռ այդպէս ուրախացած էին տուած բողոքի համար և գովում էին Մաթոսի գրած բողոքագիրը ու յուսով սպասում իրենց ցանկացածը լսելու, հէնց Մաթոսին օղի խմեցնելիս Սարգիսը վերադարձաւ և յայտնեց, որ նրանց բողոքն անհետևանք թողեց գաւառապետը։

Ամբոխը կրկին խառնուեց, կրկին մի բողոք ուղարկեցին, բայց դարձեալ անհետևանք մնաց։

Խառնակիչների կատաղութեանը չափ չկար. նրանք երրորդ անգամ փորձեցին, էլի անհետևանք մնաց, որովհետև սուտ զրպարտութիւն էր. գաւառապետը թէև լաւ էր ճանաչում Սարգսին, բայց օղին գիւղում մեծ գործ էր կատարում...

—Ա՛յ գեղականք, հրաւքւեցէք չիմս էլ մեր ոտովը գնանք նաչալնիկի կուշտը՝ մեր դարտերն ու ցաւերը մեր բերանովը յայտնենք.—յորդորեցին Թաթոսն ու Խուրին գլխաւորապէս։

—Գնա՛նք։

—Գնա՛նք....—ասացին շատերը և պաշար վերցնելով, ոըը ձիով, ոըը ոտով, միւսներն իրենց էշերը հեծած սպառնալիքներով ու գոռոզութեամբ ճանապարհ ընկան դէպի Աղստափայ։

Սարգիս Քեօխվէն այն օրը պաշտօնական գործով Քարվանսարայ գիւղն էր գնացել։ Բողոքաւորներն առաւօտեան վաղ-վաղ սէլհարքի բլրակի ետևն անյայտանում էին։ Նրանցից՝ վերջին խումբը՝ թուով քսանուեօթը հոգի, յանկարծ կանգ առան բլրակի վրայ և ճանապարհի մօտ գտնուած բարձր քարերի գլուխը բարձրանալով սկսեցին նայել, ծըկըրակել դէպի հեռու, Ցցուէրի դիւզի կողմը։

—Տղե՛ք, հրէ մի ձիաւոր դուրս եկաւ Ցցուէրըմ.—ասաց առաջին նկատողը։

—Ա՜խ, էրնակ նա՛ ըլի էլի։

—Ո՛վ սուր աչք ունի, թող մտիկ անի, ճընանչի։

—Նա ա՛։

—Նա՛ ա, նա՜։

—Հա՜։

—Հա՛։

—Է՜, նա՛ չի։

—Նա՛ ա...

—Ա՛, իմ աչքերը լուս ա կտրըմ նա՛ ա։

—Է՜...

—Ես իմ Աստոծը, որ նա ա։

—Նա՛ա, նա՛։

—Նա՛ ա։

—Հալբաթ Քրվըսըրեցն ա գալի։

—Բա ո՞նց անենք, Եալաղի ձորովը դի անց կենալ...

—Հա՛, ընդի շատ թագուն տեղ ա...

—Հը՞, Ուհան, ինչ կասես, գնա՞նք...

—Վա՛յ, թէ նա չըլա՜։

—Թէ գնալու էք, գնացէք, նա՛ ա, էլ ժըմանակ մի՛ք կորցնիլ։

—Գնանք, ես դրա... է՛... դա քանի գլխանի ա, որ սաղ գեղի խնդիրը չընդունեց՝ էնղայդի տղերանցը բռնիլ տուեց...

—Գնա՛նք։

—Գնա՛նք.—ասացին ամենքը և խումբը շարժուեց։

Նրանք դուրս գալով ճանապարհից, մահակները դիմհար տալով՝ կատաղածի նման քար, փայտ, սար ու ձոր չասեցին, ապառաժների վրայ վայր ընկնելով, վեր կենալով, չորս վերստաչափ ճանապարհ

կտրելով՝ տաքացած, քրտնած, քափուր մտած լեռնականի բարբարոս վրէժխնդրութեամբ լցուած, գնացին Սարգիս քեօխվի առաջը կտրեցին, որ մահակներով նրա գլուխը ջախջախեն։

—Ուհան, որ սպանենք, բանի մէջ կ՛ընկնենք։

—Ի՞նչ բանի։

—Եսի՛մ, կըբռնե՛ն, սիբիր կը ղրկե՛ն...

—Բան չունե՞ս..

—Ինհէ՝ բա ի՞նչ կանեն։

—Քննութին կանեն, մենք էլ կասենք թէ՝ ջամհաթն ա արել—(ամբողջ հասարակութիւնն է արել)։

—Բաոր էնվախտն էլ չիմնուս բռնե՞ն։

—Օրէնքով, եթէ էլը—ջամհաթը մա՛րդ ա սպանըմ, մտկաղ են անըմ...

—Հա՜։

—Բա՛ս։

—Էտ ա լաւ ա, բաններս լա՛ւ կգնայ։

Այդպէս խօսալով, սրանք այս կողմից, ձիաւորըն այն կողմից իջան ձորը և իրար պատահեցին, բայց, առաջին գնացողները յանկարծ կանգ առան ձորի բերանում, իսկ ետևից գնացողները կատաղաբար ձայն տուին.

—Ա՛դա, տըւէ՛ք, ՝խե՜ էք կաղնել, տըւէ՛ք, տըւէ՛ք.—ասացին ու փայտները բարձրացրած ձորը թափուեցին, բայց, յանկարծ մինը բացականչեց։

—Ա՛դա, ա՛ տնաշեններ, տէր-տէր ա, տէր-տէր։

—Տէ՛ր-տէ՛ր։

—Հա՛, հա՛։

—Վայ դրա տունը Հախմեան տէրը քանդի, ա՛դա, էտ ի՞նց տէր-տէր ա․—հարցրին՝ հէնց իւրաքանչիւրն իւր տեղը կանգ առնելով։

—Ա՛, տէր-տէրը ի՞նց կլի․ դ՚էնա թուքերը լեն, փեշերքը էրգեան մարդ ա էլի…

Եկողը Սևանի մի քահանայ էր, նա փալանած ձին հեծած, գլուխը տըըմբացնելով սկսեց ողջունել նրանց։

—Բարի ողջոյն, ո՛րդիք։

—Օխնեա՛ տէր։

—Բարի ողջոյն։

—Օխնեա տէր։

—Օխնեա տէր…

—Այ քու ի՛ջղումը գլխիդ դիպչի, տէր-տէր, հլէ կա՛ղնի մ՚հետ էլ թխեմ սիրտս էլա հովանայ է․—ասաց մէկը և վայրենաբար մահակը վրաբերելուն պէս քահանան խրտնած ձիուց գլորուեց գետին և երկիւղից սկսեց «պահպանիչ» ասել։

—Ա՛տէր, պահպանիչդ քե թափեց, թէ չէ, մի լաւ սխտո՛րել դինք։

—Ա՜խ, պըծաւ ձեռքներիցս էլի՜…

—Թէ նա կըլէ՜ր․—ասում էին և ատամները կրճտացնում։

Այդպէս, նրանք ետ դարձան և շարունակեցին իրենց ճանապարհը Դաղքասաման, ուր իրանց քանաւոր բողոքի մէջ ևս յարգելի պատճառ չկարողացան առաջ բերել Սարգսի արձակման մասին։

—Դուք բոլորդ էլ խառնակիչներ էք․ Սարգիսը շատ պատուական տանուտէր է․—եասաո՛ւլ, կապի՛կ․—գաւառապետը գոռաց թէ չէ, մտրակաւորները թափուեցին և անտեղի բողոքաւորներին սկսեցին ծեծել։

—Ձեր տնե՛րը չըքանդուի, ասեցի թէ՝ մենք նրա ճանկերիցը պըծնիլու չենք, դէ հըմի մկան ծակին հարիր մանէթ տուէք․—ասում էին շատերըն ու մէջքները քորելով փախչում դէպի փշուտներն ու թփուտները։

Այդտեղից նրանք աւելի կատաղած վերադարձան գիւղը և վճռեցին Սարգսին ծածուկ սպանել, բայց չ՚աջողուեց…

Սարգիս քեօխվի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացաւ և կրկին նոր ընտրութիւն նշանակուեց Քարվանսարում։

Գաւառապետը Սարգսի բաղդից տեղափոխուել էր Ղարաբաղ և նրա տեղ նշանակուած նոր գաւառապետը ծանօթ չլինելով Սարգսի գործունէութեան հետ, լսեց նրա հակառակորդներին և շուտով ընտրութիւն նշանակեց։ Միաձայն ընտրուած Սարգիս քեօխվի կողմը համարեա մարդ չէր մնացել այս անգամ, բոլորը կիտուել էին նրա հակառակորդների կողմը։

Գաւառապետն ինքն էր ընտրողը։

—Հի՛ն քեօխվին չէ՞ք ուզում վերստին ընտրել․—հարցրեց գաւառապետը։

—Չէ՜, չէ՜, չենք ուզըմ, չէ…

—Չէ՛, չէ՛, մենք էլ չենք ուզըմ, մենք էլ...

—Չենք ուզը՞մ, դա մեզ քա՛նդեց, քա՛րը քըսեց, չե՛նք ուզը՛մ...—փոթորկի նման բարձրացան ականջ խլացնող աղմուկները։ Սարգիսը խաղաղհոգով լուռ կանգնած էր երկու հաւատարիմ մարդկանց մօտ, որոնցից մէկը ցաւելով երեխայ ամբոխի ոչխարային բնաւորութեան և տգիտութեան մասին..., գլուխը պտտելով ամբոխի դիմաց՝ բարձըր ձայնով բացականչեց.

—Է՜... «Անձրև ա վա՛յ ա,
«Արև ա վա՛յ ա։
Ձեր տունը չըքանդուի, ձեր մէջ
«Վատը խու վատ ա...
«Լաւն էլ անըծած ա։

Իսկ միւսը, թէ՝

—Աշխարհս տհենց քօռ ա. գիւղմարդը պէտքա մի լաւ ձի ունենայ թամքած, որ հէնց ճշմարտութիւնն ասի թէ չէ, նստի ու զօլ փախչի...։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ

Ք'հօր տունն ու տեղը հենց քանդուի,
Որ տեղը սուխ ու սխտոր ցանուի։
Ժող. առած։

Ա.

Գիւղական ծանր հոգսերի տակ ժամանակից վաղ ծերացած Խաչթառակցի Խաչատուրը օրուայ քրտնատանջ աշխատանքից յոգնած, վաստակած, քաղցած ու ծարաւ, հազի՜ւ շնչելով, ջարդուած ջանի ոսկրախաղերը հարիւր ու մի տեղից խըրթխըրթացնելով, բահաքէնջն ուսից իջեցրեց և բահակոթն ուսնուվեր յենեց ու մարագի մղնածակի կըտերն մի քարի վրայ հազիւ թէ պպզեց և ողջունեց գիւղի երեցփոխ Ստեփանին։

—Ի՛րիցփոխ, բարի ըրի՛կուն քե։

—Ա՛ստու բարին քե, ա՛ Խեչ. տհէ քրտնքըմխած էտ ո՞րտեան ես գալի։

—Է՜, ի՛րիցփոխ ջան, ա՛սիլ մի ո՛րդեան, ա՛սա ո՞ր ջհանդամիցն ես գալի, որ էրուած, խորովուած սիրտս հովանայ...— գլուխը թափահարելով ասաց նա։

—Ընչի՞, տհէ ինչի՞ ես բեդամաղ։

—Հ՜. բեդամաղ ո՛րն ա, սօրի մի բան եմ տեհել, ամա աչքիս լիսիցը պէծ ու կրակ ա վե թափել՝ էրուել-խորովուել՝ քի՛ւլ եմ դառել՝ որ քամին տանի.—վիրաւորուած ասաց Խեչօն ու երեսը շրջեց, կարծես արցունքը սրբելու...

—Ա՛յ տղայ, տհէ ընչի՞ լցըկումեցիր, մի ասա տենանք ի՞նչ կայ եառոյ է.—կասկածոտ հետաքրքրութեամբ և լցուած սրտով թին կրծքին դիմհար տալով հարցրեց երեցփոխ Ստեփանը։

—Բա, ասիլ չես թէ՝ էտ անիրաւ աւերիչնին կոնձի կտրողներին տարել ծառը բուրղու *) տալ են տուե՞լ...

—Ծառը ո՞րն ա։

—Պօքնին (ընկուզենին)։

—Պօքնի՞ն, ո՞ր պօքնին։

—Ղմշգէօլի։

—Ղմշգէօլի՞, էտ ի՞նչ ես ասըմ, ո՞վքեր են տարել.—զարմացմամբ հարցրեց Ստեփանը։

—Գեղը քարուքանդ անողնին, ո՛վ, քանդուի դըրանց ջանն ու օրը...

—Ա՛, նրանք ըռանց գեղականի համածայնութեան ո՞նց են բուրղու տալ տըւել էն հըզար մանէթանոց ծառը». մգեար ալան-թա՛լան ա՞, նրանք կա՛րալ չեն կտրեն։

*) Երկաթի ոլորնուտ գործիք է, որով փայտ են ծակում։

—Վա՜յ վա՛յ... ըրևըմ ա, թէ դուբանից՝ խըբարո՛ւթին չունես։

—Է՛լ ինչ, թէ բա՛ն կայ, ա՛սա։

—Բա նրանք էս ա մի շաբթից աւել ա գեղն ընկած՝ հա՛յ-հարա՛յ, թագուն-աշխար թուղթ են մանածըմ—էլ հաւի պիւն (բուն) չեն թողել նի՛ են պըծել ու դուս վազել, դու ա՛սըմ ես թէ՝ ըռանց գիւղականի կարալ չեն կտրե՞ն։

—Լա՛ւ, եղո՞յ, պատա՛սխանը կտաա՛ն... ծառն ո՞ւմն ա, նրանք ո՞նց դեն կտրիլ տալ մեր հայրական, պապական յիշատակը.—վստահ կերպով պատասխանեց երեցփոխը, կարծես կէս մի ծաղր համարելով Խեչոյի ասածը, թին առաւ կրկին սկսեց քերել մարագի կտուրը։

—Ի՛րիցփոխ, ասածս խելքդ կտըըմ չի՞, հըւատըմ չե՞ս։

—Հ՜...էհ...։

—Դէհ, դու հըւա՛տալ մի, էհ արա. նրանք հրէ իրանց պատրաստութինը տենըմ են։

—Հըզար պատրաստութին էլ որ տենան, ոնչիչ չի դուս գալ։ Ծառը հու Դալլաքի Ղուլի գոմէշը չի՛, որ զուր տեղը խլեն ուրիշին տան. էն ոչ իմ հէրն ա տնկել, ոչ քո՛ւ, ոչ նրանց. նա եղեցապատկան ծա՛ռ ա. ո՞վ կարայ ըսկի մօտովն էլ ա անց կենայ։

—Ի՛րիցփոխ, կտրի՛լ դեն։

—Տհենց բան որ լի՛, տէր-տէրին կասեմ հէնց էգուց մի խնդիրք գրի Կանստորին, որ չըմնուն էլ

(բոլորին) բերդն ածիլ տան...

—Ես պարտքիցս պրծայ՝ եկայ տեհածս ու լըսածս քե պէս իշխան մարդին ասեցի, գնըմ եմ. ես քեասիբ մարդ եմ՝ ձեռօքս մի բան չի՛ գալի՝ խօսքս ոչ մի տեղ անց չի կենըմ, որ անեմ, ամա դու գեղիցը ջոկած մարդ ես, Տեղիցն էլ հաստատըւած. ծառն ափսուս ա, մի հնարք արա, աշխատի որ էլ բուրղու չը տան՝ կը չոռոտի..., մինչև որ տենանք ինչ ենք անըմ...—ասաց յուսահատ Խեչօն, քարի վրայից վեր կացաւ, բահը կրկին ուսեց ու գնաց իւր տուն։

Արդէն մութն էր և շաբաթ երեկոյ։

Բ.

Միւս օրը, կիրակի առաւօտեան, գիւղի կալերից մէկում համարեա բոլոր գիւղականները ժողովուել էին։ Նրանք իրար խառնուած, կոշտ ու կոպիտ խօսքերով անխտիր վիրաւորում ու հայհոյում էին միմեանց։ Լեռնականների խառնաշփոթ և անկանոն աղմուկից ոչինչ չէր հասկացւում, թէ ինչի մասին են անախորժ վիճաբանութիւնները, [որովհետև լսող ու հասկացող չկար. մի քանիսն իրար վրայ փայտ էին քաշում, միւսները քար ու բռունցքով սպառնում. [մի խօսքով, ամենքը գոռում, գոչում էին վայրենիների նման։ Նրանց մէջ մանաւանդ երկու անհանգիստ երիտասարդ, որոնք իսկապէս շարժման և խայտառա-

կութեան սկզբնապատճառ էին դարձել, մի թերթ թուղթ, մի սագի փետուր ձեռքներին և պարսկական մոլլայի կոթաւոր թանաքամանը գօտին խըրած՝ անդադար շրջում էին խուռն ամբոխի մէջ և սրան նրան ուժով թէ պատրանքով առանձնացնում էին քարի, պատի կամ կոճղերի ետևը, մի խօսքով՝ թագուն տեղերում համոզում և թղթին ստորագրել էին տալիս ու բաց թողնում։

Բայց գիւղը երկու մասի էր բաժանուել. կռուարարները հակառակ կուսակցութեան հետ խառնուած պաշտպանում էին իրենց գաղափարը. իսկ մի խումբ հասակաւոր գիւղացիներ աղմկաւորներից փոքր ինչ հեռու՝ միւս կալի բաշում, հակառակ տեսարան էին ներկայացնում և առանձին ուշադրութիւն գրաւում։—Նրանք շրջապատել էին մի պատկառահայեաց խոհուն ծերունու և ամենայն ուշադրութեամբ լսում էին նրա պատմածները՝ լեկզիների սրածութեան և անթիւ ու անբաւ աւերածութիւնների մասին, որ կատարուել էին ծերունու շրջած ու տեսած տեղերում գտնուած աւերակների գլխին։ Բայց, ինչպէս երևում էր, օրուայ աղմկալից վիճաբանութիւնն էր առիթ տուել ծերունուն աւերակների ու հին-հին դարերից մնացած յիշատակարանների մասին խօսել ու խրատել իւր ունկնդիր գեղջուկներին։ Թիկնալի, թանձրամօրուս, առոյգ, լայնաճակատ ծերունին իսկական հայի գիպար էր կրում։ Նրա ծանրաբարոյ բնաւորութիւնը, խոհուն հայեացքը, իմաստուն

աչքերը, յարգելի շարժուածքը և խօսակցութեան պատուական ձև ու եղանակը, վեհութիւն և խոհականութիւն էին արտայայտում. Նա ամեն մի խօսք կշռում, չափում էր ու այնպէս հաղորդում. Նրա իւրաքանչիւր խօսքը հազար փութ մեղր էր կշռում։ Ծերունին մօտ եօթանասուն տարեկան էր, սպիտակ մազերով զարդարուած։ Նա շատ գիւղ ու քաղաքներ էր տեսել, շատ դժնդակ տեղեր՝ ճանապարհների վրայ հարիւրաւոր օրեր էր մըթնացրել աշխատանքի համար, բայց անյաջող հանգամանքների շնորհիւ քեասիբ էր մնացել. Նա ամեն լաւ յատկութիւն ունէր, ամեն գովելի գործ ձեռնարկել գիտէր, խելք ու իմաստութիւն ունէր, բացի հարստութիւնից։ Նրա փորձառութիւն արտայայտող դէմքից, խօսալու եղանակից և պատմելու ոգևորութիւնից նկատելի էր, որ վկայ և տեղեակ էր շատ անցքերի, պատմութիւնների և աւանդութիւնների։

—Լսեցէք, որդիք։ Պապիցս եմ լսել.—մօրուսն ու բեխերը փայփայելուց յետոյ, սկսեց ծերունին.—Դիլու գլխի ձորիցն սկսած՝ Աղստափայ գետի բոլընի՝ չուել Քուռը, էլ աւելի. եղոյ՝ ընտեղան գաս մեր Կոթ-քարովն անցկենաս հլեչւիլ Բաթլլու, էլի դէնը, չի՜մ հայի գեղեր են լել. քաղցր ինչպէս մեղր ու կարագ, գառն ու ոչխար ապրելիս են լել էրանց հըմար. անօրէն լակըին զռացել ա ու ինչպէս որ մօրեխը հիս լած ուտըմ փչացնըմ ա մեր արտն ու խոտը, նհենց էլ նրանք՝ եարազըմը

մտած հիս են լել մեր խեղճ ազգուազգանդանին ու առաջնին ընկնող քրիստոնաներին ոչընչացրել, չի՜մ՝ ինչոր կայ սուրն են քաշել, տուն ու տեղները կրակել, քարուքանդ արել՝ էօրանայ (ամայի) դարձրել—շատերին մորթել, քերթել են հըւատը չուրանալու հըմար, շատերին եսեր տարել՝ թուրքացրել, եա թէ չէ՝ արինկերների վրայ ծախել են։ Ձեր ամենից ուշադրութինը դարձնըմ եմ հէնց ձեր չորս ղոլի, ձեր գեղի հանդերի կէս մի կաղնած ժանքերի ու աւերակների վրայ. փա՜ռք ստեղծողին, ամենդ էլ աչքեր ունէք, տե՜նըմ էք, որ մի տեղ հին գեղատեղ ա՝ հանգստարանն ու ժամը կողքին, մի տեղ վազնուտ*)՝ տաքեարնին**) մէջը պատած, մէկէլ տեղը պատ ու պարիսպ քաշած, մի ուրիշ տեղ ծառ ու տունկ. էօրնա՜կ՝ Վազնուտի ձորը, Տօրնի ձորը, Ծաւիգը, Կոտնի սէաը, Թուրտեղը, Արևբաթանը, Մոլորածակը, Ղամիշգէօլը... սրանք չի՜մ մինը մնին հըևան քրիստոնայ հայի գեղեր են լել, ամենքն իրանց հըւատին ու յուսին հաստատ, Աստու երկիւղը սրտներըմը մարդիկ են լել. էն գեղերըմ ապրողնին մեզ, մեր ազգի, մեր հըւատի հըմար կտորուել, չըչարուել, ա՜րին են թափել, անօրէններին եսիր են գնացել, նրանցից որը հէնց իր տան շէմքըմն ա դրել գլուխը, որը քշուելիս

---

*) Որթի տունկ։

**) Կրից ու աւազից շինած գինու մեծ ամաններ գետնի մէջ։

ճամբի տակ ու գլխին ա մնացել՝ մինը ղուշերին թողել, մէկելոնքն էլ անօրէնի թօրփաղըմն են մնացել, որ ինչա՝ մեզ հըմար մի բարի անըմ թողան։ Ամա հըմի, մենք, մեղա՜յ Աստու, մեղա՜յ Աստու, նրանց գերեզմաններըը ոտնատակ տալով, նրանց թանկագին յիշատակներըը քանդելով անց ենք կենըմ. մի անգամ չի՛ ըլըմ, որ նրանց գերեզմանի վրայ մի հոգոց էլա ասիլ տանք, եա նրանց արնով շինած եղեցու, վանքի, մանդուռի փուլ եկած տեղը շի՛նենք, մէջներըը ժա՛մ ասիլ տանք, տեղահան լած քարըը տե՛ղը դնենք, նրանց տնկած տունկերի տակը ջուր ածենք, որ չըր չորա՛նան, բարն (պտուղն) ուտենք ու ողորմի տանք նրանց։ Վա՜յ մեզ, դրա փոխանակ մեզանից ով որ տեղից վե՛ր ա կենըմ, հազիր տաշած ու կոփած քարերի ա վազ տալի ու իր խեղճ պապերի շինած եղեցու եա վանքի պատը փուլ ածըմ, յիշատակը կորըմ, ու նրա սուրբ քարերովն իր ապրանքի հըմար գոմ ա շինըմ...

Ձեզանից ո՞վ չի տեհել թամաշալու Մակարայ վանքը՝ Աչաջրի հանդըմը, Գօշ Մխիթարի ու Հաղարծնի սուրբ վանքերըը՝ Դիլըս ձորումը. տեհել էք, էն ընչեր ե՞ն. եա՛րաբ ձեր սիրտը մըմնջա՛ցել ա, ձեր ջանը կրակւել ա՞ նրանց ըրխսին մտիկ տալով, էն ի՞նչ ձեռք, էն ի՞նչ սիրտ ա շինել նրանց. ըսկի մի անգամ արտըսւելով ասել է՞ք, թէ «Ա՜խ, ա՛ վանքեր, ա՛ երկնքի չափ բարձր տաճարնի, եա՛րաբ ձեր շինող ուստեն ո՞նց մեռաւ, եա ձեր միապանու-

թինը ի՞նչպէս, ո՞ւմ ձեռով վերջացաւ. ո՞վ, ո՞ր պապանձուած լեզուն անիծեց ձեզ...

Ո՛րդիք, ըշխարհս անէծքների մէջ չար մարդը, որ անէծքի հընտրութին արաւ, ասեց թէ՝ «Ք՚հօր տունն ու տեղը հենց քանդուի, որ տեղը սոխ ու սխտոր ցանուի». հըմի էն չար բերանից դուս եկած, մարդու մազերը փշըքաղացնող անէծքը մեր ազգի գլխին ա կատարուել, էտ անէծքի կապը չուել օրս ետ անող չի ըլել, այսուհետեւ էլ տեսնանք։ Էսօր աչքերնիդ ղաքին մեր սուրբ պապերի կղնըցրած վանքերի ու քաղաքների տեղը ընջրաքօլ ա դառել։ Վա՜յ մեզ, նրանց աւերակների մէջ էս օր գիշերնուկներն (չղջիկներն) են ճըղճըղացնում և շարականների քաղցր եղանակողների տեղ՝ գորտերն են կըռկըռըցնըմ... եա՛րաբ դուք մի բերան ասել է՞ք — «Ա՜խ, ա՛ մեր արքաւութենի դասին դասուած պապեր ու հէրեր, դուք՝ որ էսղայդի երկնքի չափ բարձր-բարձր տաճարնի էք կղնըցրել, որ մնով պաւականացել չէք, հազարն էք շինել ու Սողոմոն իմաստունի իմաստութինը մէջ կարդացել՝ սաղ ըշխարհի հըմար ծունկ էք չոքել, ա՛ղօթք արել, ձեր կեանքը նամ (խոնաւ) ու մութ խուցերըմը մաշել էք... անհաւատի դէմ կըռիւ էք տուել, ազգի ու սուրբ հըւատի հըմար տանջուել, չարչարւել՝ նահատակւել էք..., մենք էլ՝ մի քիչ ջաներիս ջափայ կտանք, մեր անարժան ոտնուձեռով կբարձրանանք՝ ձեր մէջքով կրած քարերով շինած ու սուրբ ձեռով սուաղած վան-

քերի գլուխը, տեղահանված քարերը տեղը կրդընենք, եա գոնէ կաթուղիկների ու խորանների կըտերը բսած ծառերը, քօլերը կըկտրենք, դէն կածենք, որ իրանց հրամի տակուքներովը չուտեն, չքանդեն արնապատ տաճարների պատերը... Չէ, իմ որդիք, դո՛ւք, ես լա՛ւ գիտամ, որ էտ բարի գործը չէք արել, դուք շատ վախտ գնացել տեհել էք, որ անօրէն Թուրքի տղէքն իրանց ոչխար ու տաւարը, ձին, էշը, մեղա՜յ Աստու, մեղա՜յ Աստու, մինչև անգամ շները, էն սուրբ տաճարների մէջ կապել, իրանք էլ... աղբոտացրել են, եա թէ չէ՝ պատերն ու սեղանները դիւշմանութենով սեպերով ճղքել են, ամա դուք արին տալու, արին առնելու փոխանակ, հլա հետները նստոտել էք, քաղցըր զրից ու մասլըհաթ արել...

Ծերունու ունկնդիրներն արտասուաթոր աչքերով, կորացած և ուշադրութեամբ լսում էին։ Նա ճակատի քրտինքը սրբեց և բոպէապէս շունչ առաւ փոքր ինչ։

—Պահո՛վվէ, ա՛պէր, ջաներնիս կրա՛կ գցեցիր, էրե՛ցիր մեզ.—շատերն արտասուագին, միւսներն աչքները չուխաների կօշտ փեշով սրբելով, մի քանի կաթիլ արցունք գլորելով չոր տախտակ դարձած այտերի վրայ, արտասուահեղձ հեկեկանքով բացականչութիւնով, ա՛խ քաշեցին ու հառաչներով վշտոտի նման գլուխներն աջ ու ձախ սկսեցին տարուբերել, բայց աւանդախօս ծերունին կարծես չէր յագենում խօսելուց, նա ճակատի քրտինքը սրբե-

լով էլի վառեց իւր եռանդը, էլի շարունակեց գրաւել ունկնդիրներին. երևում էր, որ նա աննպատակ չէր խօսում...

—Ամեն մի լոքից (քայլից) ետոյ, դուք իրեսներիդ խըչըկնքըմ էք՝ պատահելով անթիւ ու անհամար խաչ քարերի, աւերուած եղեցիների ու վանքերի, որոնք իրանց գլխովը մազխս համբարովնումին օրեր ու հարիրաւոր տարիք անցկացնելուց ետն էլ՝ կասես թէ նո՛ր ըլեն շինուած, վարպետը վրնիցը նո՛ր ըլի հեռացած։ Օ՛րդիք, դուք դրանց տենալով պարծենըմ էք...։ Աստօծ ղորմի մեր պապերի հոգուն, էտթաւուր ուխտատեղեր են շինել, նրանցից ըտո՛նք են յիշատակ մնացել, նրանք ըտո՛նք են ձեզ պարծանք թողել. ասեցէք, դո՛ւք ինչ էք թողելու ձեր որդկերանց ու թոռների համար, է՞ն, որ քեալլերնուդ հովհովելով (հայհոյելով) ասեն թէ՝ «Մեր հէրէրը մեր պապերի յիշատակնին քանդել են։ Լա՛ւ, դուք ինքնե՛րդ միտք արէք, սա ի՞նչ բիաբռչութին ա, որ ըռւօտից դէսն ա, ո՛չ մեծ են ասըմ, ո՛չ պուճուր, ո՛չ մեռել, ո՛չ կենդան, մնչև անգամ Աստուց էլ չեն վախենըմ՝ խայտառակութինը սարքել են, թէ ինչա-ինչա՝ մի հազիր տնկած, մեծացրած ծառ բդեն ոչնչացնիլ... բա բօլ չէ՞ր, ամեն ինչ քարուքանդ արին, ամեն սովորութին ոտի տակ տւին, սրբութինները հրամեցին, հըմի էլ մի կէնտ ուխտատեղ, մի կէնտ ծա՛ռ ա մնացել, ընէլ ուզըմ են գլուխն ուտել։ Էսօր ծառն են ուզըմ տհենց անել՝ կտրել,

ոչնչացնել, էգուց էլ գերեզմանների քա՛րերը կըծախեն, էլ ի՞նչ կըմնայ...։ Հայութինն էլ կըվերանայ... վա՛յ մեզ, վա՛յ. մեր խեղճ պապերը գոնեա հա՛յ մեռան, մե՛նք ի՞նչ դենք մեռնիլ...

Ծերունին ազնիւ ճակատի քրտինքը չուխի կոշտ փեշով կրկին սրբեց և ուզում էր դարձեալ շարունակել, եթէ միայն չխանգարէին նրան։

Աղմկալից խմբից դուրս գալով, վերոյիշեալ անհանգիստ երիտասարդները մօտեցան ծերունուն և արհամարհելով դիմեցին նրան։

—Թէ՛ւնի ապէր, ճգնաւերութինդ թո՛ղ, արի էս թղթին ձեռք քաշի։

—Դա ի՞նչ թուղթ ա։

·—Ծա՛ռի թուղթն ա։

—Կո՛րէք, կո՛րէք.... պի՜ճ-պճից լածնի. միմոն (կապիկ) պարածողի պէս գեղն են ընկել ու շուն հըչըցնիլով խալխի մէջը խառնակըմ, մաքները պըտորըմ, մթամ թէ սրանք էլ քեադխո՛ւդէք են, բա՛ն են տեհել, բա՛ն են հսկանըմ,... էրէկ մէկէլ օրուայ ձուից դուս եկած՝ ամեն մինը մի տափը սըրող չուխա են կեցել, մի.մի էլ ռուսի զոլլակաւոր «դըրաստի» գլխնին պռծըցրել ու պրօ-պրօ անըմ, «դըրաստի բրատ, գուռակ սաբակ, մայմաթ, վայ-մաթ» անըմ։ Հա՛, էտա գեղը լուսաւորեցիք էլի՜...

—Բա հու քե պէս ճգնաւերութին չի՛ դենք անիլ. ջահէլների մէջ էլ նստել, միւրուքդ կախ ես արել ու խաչերից, նշաւկոտներից, դիւահարից

մթամ թէ բան ես խօսըմ. գիդըմ չենք տէր-տէր ես, վըրդա՛պետ ե՛ս, թէ՞ ինչ...—երիտասարդներն արհամարհեցին ծերունուն։

—Ա՛ հարամ թոխումնի... գնա՛ցէք, գնա՛ցէք, գլխիցս ըռա՛դ լէք, կորէք, ես ձեր փչած քամուցն օրօրուող չե՛մ.—արհամարհական հայեացքով կրկին և լի բարկութեամբ ասաց ծերունին, վրաթռաւ, որ ձեռքների թուղթը յափշտակի, պատռի. դատարկաշըջիկներից մինը բռնեց ծերունուն, մինչև որ հասան միւսները։ Նրանք մի քանի մարդով ծերին հրելով դուրս հանեցին և առաջարկեցին նրա ունկնդիրներին, որ ստորագրեն թղթին։

—Ոչով ձեռք չքաշի, սպառնաց ուժեղ ծերունին և իրեն բռնած երիտասարդներին գնդակի նման հրեց այս ու այն կողմն ու բռունցքով սկըսեց դիմադրել։ Այնտեղ աղմուկ բարձրացաւ, խըմբերն իրար խռնուեցին և մէկը միւսի կողմն անցնելով՝ սկսեցին կռիւը տալ։ Աղմկաւորները հետըզհետէ տաքանում էին. երկու կողմից էլ նկատւում էր, որ կոմբալագլուխ գաւազաններ են պատրաստւում. հէնց մի փոքր էր մնացել, որ տուր ու տրաքոցն սկսուէր, յանկարծ մի ռուսի արտօնաւոր՝ ‹շլապկաւոր› մի քանի թիկնապահ ձիաւորներով գիւղը մտաւ։ Նա իրաւունքի տէր էր և ամբոխը նրան նկատելուն պէս, քար գցած գորտի պէս ձայնը կտրեց։

—Էլ դրա՛նք ձեր հախիցը վեր կը գան.—նկատեց դիմադրող ծերունին և շտապեց երեցփոխ

13

Ստեփանի տուն: Դրանով վէճն ու դմփոցը միւս անգամին մնաց, իսկ պատրաստի թղթերը, թէ աղմկաւորների կողմից և թէ բողոքը՝ երեցփոխի ու ծերերի կողմից, պոստը ձգուեց դէպի Թիֆլիսի վիճակային կոնսիստորը:

Գ.

Տարին շատ առատ էր, անտառն ամէն տեսակ բարիքներով լի: Պտղատու ծառերի ճիւղերը բեռնաւորուել, ճնչխոտել էին չոր ու թաց պտուղներով: Ծառերի տերևները հետզհետէ կորցնում էին իրենց մուգ կանաչութիւնը և հասունացած պտուղները կենտ-կենտ պոկուելով՝ տերևախիտ ճիւղերին շփելով ընկնում էին գետին. ամէն ոք ազատ կարողանում էր վայելել այդ բարիքներից առանց կոպէկ վճարելու...: Սարերից եայլաղցիներն իջել էին ներքև և հանդի ամենահրապուրիչ տեղերում՝ սառն աղբիւրների մօտ վրաններ զարկել: Արօտատեղերում արածող բազմաթիւ կենդանիների ձայների՝ բառանչոցի հետ միախառնուած հովուական սրինգի ու պկուի քաղցր և մարդու զգացմունքները եռացնող հնչիւնները՝ *զբօսնասէրներին* և ոչ թէ գիւղացիներին ճեմելու և զմայլելու էին հրաւիրում. սակայն դրանք գիւղացուն չէին գրաւում, նա դեռ հեծում էր հոգսերի տակ և ժամանակ չունէր, որ մտածէր այն մասին:

Աշունն սկսուել էր արդէն և դորան էլ երեք

ամսից յետոյ ձմեռը պիտի հետևէր: Գիւղացի պառաւներն ու հարսները անտառի պտուղներից չիր էին չորացնում արևի տակ, ընկուզ ու տխիլ և այլ տեսակ պտուղներ էին ժողովում հանդերից, իսկ երկրագործ գեղջուկներից մինը, անտառում արօր, մաճ, լուծն ու ռամիք էր տաշում, պատրաստում, որ վարն սկսի, մի ուրիշը ցորեն, գարի, կորեկ և կամ լոբի էր չորացնում հարելու համար, երրորդն անտառից օջախի կամ թոնրի փայտ ու ցախ էր քաշում դէպի տուն, չորրորդը, հինգերորդը..., մի խօսքով, բոլորն անխտիր գործի էին, նրանց հանգիստը միմիայն կիրակի օրն էր, այն էլ մինչև երեկոյեան ժամերը:

Թանձր անտառից բաւական հեռու, մի հին աւերակ գիւղատեղում, տխուր հանգստարանի մէջ, առանձին կանգնած էր հնադարեան մի հսկայ և բարձրաբերձ ընկուզենի, որն իւր հզօր ու հարիւրաւոր բազուկների տակ՝ հովանաւորում էր դարաւոր ժամանակներից ամփոփած հայ հանգուցեալների նշխարներ՝ իրենց կիսամաշ տապանաքարերով, որոնցից շատերը հողի հետ հաւասարուել էին և կամ բոլորովին ծածկուել նրա տակ:

Հանգստարանին կից աւերակ եկեղեցու միայն բեմն ու խորանն էին կանգուն մնացել, որոնց մէջ՝ պատերին յենուած, խունկ ու մոմերի ծխից սևացած, մրոտուած խաչքարերը ցոյց էին տալիս, որ վեց օր անհանգիստ աշխատող գեղջուկները եօթներորդ օրը այնտեղ՝ ուխտատեղում աղօթք են

մատուցանում Աստուծուն և սրբի միջնորդութեամբ սէր ու միութիւն խնդրում իրենց ազգի համար...։

Խորանի երկու կողմը բուսած թփերը բեռնաւորուած էին զանազան գոյնզգոյն թելերով ու չթի կտորներով, խաչ քարերի վրայ դրուած էին պտուղներ, մատաղած հաւի և գառան ոտն ու գլուխ, ոսկրներ և այլն. դրանք բոլորը ուխտատեղին բերած ընծաներ էին *)։

Այդպէս, բայց աւելի շքեղ կերպով զարդարուած էր և կոնդաբուն հնադարեան ընկուզենին, որին գիւղացիք «Եղցու պպօքնի» էին կոչում և ամեն անգամ, երբ տեսնում էին սրբազնահայեաց ծերունի ծառին, երկիւղածութեամբ կանգնում, երեսներին համեստութեամբ խաչակնքում և աղօթքի մրմունջ էին տալիս նրան։

Ծերունի ծառը շատ բարձրից էր նայում իւր հաստոտն արմատներին, որոնք զանգակի ձևով ամուր գրկել էին գետինը և խորասուզուել նրա սեւահող շերթերի մէջ՝ ընդգրկելով ահագին ծանրութեամբ քառանկիւնի սալ-սալ տապանաքարերը, որոնցից միքանիսն արդէն արշինաչափ վեր էին քա-

*) Գիւղացիներն այդ ընծաները՝ թել, չիթ, ոսկըր և այլն, փաթաթելով թփին կամ թողնելով քարի վրայ, մի խօսքով սրբատեղում, այն կարծիքն ունին, որ իրենց բոլոր ցաւերը դրանց հետ այնտեղ են թողնում։

շուել գետնից դէպի աճող կողմը ու մնացել սեղմուած՝ մսալից կեղևների մէջ խրելով իրենց ափերքը։ Ընկուզենին գետնից սկսած միքանի կանգնաչափ բարձրութեամբ ուռել, ընդլայնացել և մի ահագին գիւրգ էր կազմել, որի խլխլթուտ շրջապատը տասը մարդ ձեռք ձեռքի տուած հազիւ կարողանային իրենց գրկի մէջ փակել։ Այդ մի քանի հարիւր փթանոց գիւրգից (գլանից) յետոյ՝ նա բաժանւում էր երեք հսկայ բնաբազուկների, որոնց ընկուզալից ճիւղերը կաղաղներով ծանրացած, կռթնել էին հանգստարանի վրայ և համարեա ծածկել նրան։

1890 թ. էր. Ներսիսեան դպրանոցի սանիկ Սէթը նոր էր աւարտել իւր հայրենի լեզուի ուսումը, դեռ թարմ էին նրա մտքի մէջ իւր սիրելի, ուսուցիչների աւանդածները...։ Նա, ամարային արձակուրդի վերջին օրերում շատ աւերակների միջով անցնելով՝ տխուր տպաւորութիւնների տակ, դադրած եկել էր կիսաւեր եկեղեցու կտերը կօշիկներն ու գուլպաները հանել՝ մի կողմը դրել, վերարկուն թփից կախել և փորի վրայ պառկել հանգստանալու։ Սէթն արմունկը բեմի կամարակապին յենած, դաստափը ծնօտին դրած, քրտինքի մանր կաթիլները ճակատին, լուռ ու մունջ նայում էր աւերակողը սրբազան ծառին և խորը հոգոցներով մտածում...

Միջակ քամին հանդարդիկ կերպով ճօճում էր երեքընեան ծերունուն և աջ ու ձախ տարուբե-

րում նրա բազուկները և պտղալից ճիւղերը, որոնց արանքներում աւերակողք և չարագոյժ ագռաւներն իրենց տխուր և անախորժ կռկռոցներով երիտասարդ Սէթին հին-հին դարերի վշտոտ խորհրդածութիւնների մէջ էին ընկղմել։ Նա՛ յափշտակուած մրմնջում էր…

—«Գուգարաց աշխարհի այս հզօր վկան, որի գլխով անհամար ամպ ու կայծակներ են որոտացել և հայոց աշխարհի համար կորստաբեր հեղեղներ տեղացել, եարաբ քանի՞ տարեկան է. գուցէ վեց, եօթն կամ ութ հարիւր և կամ հազար տարեկան լինի։ Ի՞նչ ժամանակուայ է այս հանգստարանը, եարաբ քանի՜ ուրախ կամ տխուր անցքերի վկայ է այս ծառը։ Ո՞վ գիտէ, թէ քանի՜ քանի սրածութիւններ, ճակատներ է տեսել սա, որոնց պարտուող կամ յաղթող զօրապետները հանգստացել են սրա ստուերախիտ հովանու տակ և իրենց արնաշաղախ սրերն ու նիզակները կախել սրա պիթակներից։ Ո՜հ, ո՛վ գիտէ, թէ քանի արիւնարբու բարբարոսի սուր է մխուել այս տապանաքարերի տակ հանգստացող նահատակների կրծքի մէջ…։ Եարաբ այս ողորմած հոգիներն էլ հանգիստ են գտել իրենց ձեռքով տնկած ծառի տակ, վայելե՞լ են պտուղներից, թէ՞ տնկել, ջրել, պահպանել, մեծացրել են ու նահատակուել և իրենց արիւնով ոռոգել այս արմատները…

Ոչինչ գրաւոր վկայութիւն և ո՛չ մի արձանագրութիւն չկա՛յ այս կամարների քարերի վրայ.

աւերակի հետքերը շատ վաղուց են երևում, ո՞ր ժամանակուայ պիտի լինեն։ Ա՜խ, երանի գիտենամ, ո՛վ է ամփոփուած այն տապանաքարի տակ, որն իբրև ձի է քանդակուած. զինուո՞ր է նա, թէ զօրապետ կամ սա ո՞ւր և ո՛ր պատերազմում է դրել իւր գլուխը, արդեօք այս եկեղեցին ու գիւղն աւերելի՞ս, թէ՞ հայ եսիրներ ազատելիս։ Այս աւերակի անունը չեն տալիս գիւղացիք, նրանք միայն «Եղեցի» են ասում այս տեղին և «Եղեցու տակ, Եղեցու գլուխ» անուանում սրա շրջակայքին, իսկ շրջակայքում խորհրդաւոր անուններ շատ կան, որոնք իրենց նշանակութիւնն ունեն. օրինակ՝ գիւղացիներն ինչո՞ւ այն մի աւերակին «Սրանոց» են անուանում, միւսին «Ղլուղ-շլաղ», երրորդին «Սրդնախատեղ» և այլն։ Երևի սրանք բոլորն էլ ունեն իրենց նշանակութիւնը։ Բայց չէ՞ որ գիտեմ, որ 1722 թուականին Կովկասի լեռնականները զօրանալով սփռուեցին այս կողմերը և սրաճարակ տըրին Աղուանից, Սիւնեաց երկրները և այս տեղերով՝ Գուգարաց աշխարհով անցան տիրեցին Սևանայ երկրներն ևս՝ ետևներից թողնելով միայն ամայացած, արիւնով ներկած, հողին հաւասարեցրած հայ անպաշտպան գիւղերի աւերակների հետքեր։ Հը՞, դա հու մօտ անցեալումն էր, պէտք է որ արձանագրութիւններն այսպէս շուտ չջնջուէին… ինչո՞ւ գոնէ այս բազմաթիւ քարերից ոչ մէկի վըրայ մի յիշատակութիւն չմնաց՝ գէթ մի թուական։ Անիրաւ թշնամիները հու իրենց հետ քար-

տաշներ չունէին, որ արձանագրութիւնները տաշէին և թողնէին անյիշատակ։ Գուցէ, ո՞վ գիտէ, եթէ այդպէս լինէր, պէտք է Մոռաձորի վանքի արձանագրութիւններն էլ ոչնչացնէին…։ Չէ, հեռու պէտք է գնալ. գուցէ սա այն ժամանակից էլ շատ առաջ է աւերուած. քարերը բոլորովին մաշուած են. սակայն, երբ կուզէ եղած լինի, Լանկթամուրի պէս մի արիւնարբու բարբարոսի գործ է սա, կամ թէ՝ այն բարբարոսների՝ որոնց մասին մեր բազմաթիւ ողբերգու մատենագիրներից Արիստակէս Լաստիվերտացին իւր վշտալի և արիւնի մէջ թաթախած գրչով այսպէս է նկարագրում. «…Վա՜յ նոցա գալուստ յարեւելս, և վա՜յ, ուր նոքա անց ու դարձ արարին. ահա՜ ազգ չար և անողորմ, ազգ դառնասիրտ և հարկանող… (որք) մտեալ ի ներքս (երկրի), սուր ի վերայ եդեալ՝ կոտորեցին զամենեսին… կոյսք ի խայտառակունս անկեալք և երիտասարդք առաջի ծերոցն ընդ արիւն և ընդ ապաժոյժ եկեալք և դիակունք թաւալագլոր խաղացեալք… իսկ ոմանք չարապէս վիրաւորեալք՝ կիսամեռ գոլով ի դժուարին խոցուածոցն մարմանչեալք՝ աքսորէին ոտիւք և եղնգամբք ձեռացն՝ տափը հատանէին… Ո՞ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ո՛չ հեղձու արտասուօք…»։— Այո՛, անշուշտ այս աւերակներն այն ժամանակուայ կլինեն…։ Աւա՜ղ… և այդ բոլորը Հայոց այն անմիտ նախարարների ազգակործան արարմունքների հետևանքն է, որոնք ջրերը թանկագին

ընծաներով բարձած՝ հպարտութեամբ գնում էին պարսից թագաւորին բողոք ներկայացնեն, որ նա իրենց թագաւորին գահընկեց անէ. ա՛խ, երանի մի հրացան ձեռիս դուրս գայի, ճանապարհին, ազգակործաններից գո՛նէ մէկի ճակատին տայի գնդակս…։ Նոյնպէս վարուէի Վասակ Սիւնիի հետ և մանաւանդ քերթէի Վեստ Սարգսին և աղ անէի նրա ջիգարի վրայ…։ Այդպէս անթիւ ու անհամար մատնիչների անուններ տալով, վրէժխնդրութեամբ լի, մրմնջաց Սէթը և վերջապէս հազիւ զգաց, որ իւր արմունկը կամարակապի քարից է կպել, թմրել սաստիկ։ Նա հէնց շուռ եկաւ միւս արմունկի վրայ յենուելու, յանկարծ նկատեց երկու ծերունի մարդ, որոնք «փափախները» վերցրած, երկիւղով մտնում էին հանգստարան։ Նրանք ծնկաչոք և քրտնաթոր մրմունջներով աղօթում ու համբուրում էին մրոտուած քարերն ու խաչարձանները։

Սէթը շունչն իրեն քաշեց ու լուռը կրկին ընկաւ փորի վրայ։ Ջերմեռանդ զգացմունքով, լի յոյս ու հաւատով աղօթողները, չոք-չոք անելով, քարերը լիզելով, հող գցելով բերանները՝ մօտեցան «Եղցու Պղոքնուն», սկսեցին համբուրել ընդգըրկուած տապանները և երեսները ծառի կեղևին քսել. ապա վեր կացան, ծունր դրին միքանի անգամ, խաչակնքեցին և մոմերը վառելուց յետոյ՝ սովորական ընծաները տուին — թելերը թփերից ու ընկուզենու կեղևից կախեցին և հետաքրքրու-

թեամբ ծառի շուրջը պտտելով՝ սկսեցին զանգակաձև ուռուցքը զննել։

—Ծառը վնասուած ա. վա՜յ, վա՜յ, դրանց գեարգանն ու մէջքը կոտրի, հրէս ըստի՛ան են բուրդու տուել։

—Երկու տեղ էլ էս ղոլիցն են ծակել. վայ բո՜ւրդուն դրանց աչքի լիսըմը ցցուի, տե՛նըմ ես։

—Բան չկայ, Ասծու հետ հանաք անողն իր տունը խէր չի տանիլ, ոչ էլ սրբին հակառակիլ կլի։ Սուրբն իրան բանը գիտայ—տունները կը քանդի… միտդ ա՞, տեհա՞ր, որ սրանից միքանի տարի առաջ Ուզունթալըցի Քիքին անպատկառ՝ տրխնին կեցին բարձրացաւ սուրբ Սրուէղի գլուխը, կաթղուկի գլխին մի խաչ դրեց վեր եկաւ ու տակին էն սհաթին մեռաւ, էն ընչի՛ցն էր, նրանից՝ որ Քիքին ոչովի չը լսեց, շատ մարդ ասեց, որ տրխնին կեցիցը ՝հանի, ՝տները լուանայ, եպոյ բացրանայ, անգաջ չ՚կալաւ, ամա, սուրբը պատիճը տուեց. հըմի էսղայդի չարագործնին էլ իրանցն ըռանց էն չի, որ չստանան երկնքից… սրբի ու Ասծու ձեռին դժար բա՜ն չկայ… կփչացնե՛ն դըրանց։ Ասած ա, «ինչոր անես առաջդ կը գայ»։

—Է՜… ես գիդըմ չեմ, թէ դըրանք էս փուչ ըշխարիցն ի՞նչ դեն տանիլ հետները։

—Հը՛, մի մտիկ արա էս գերեզմնաքարեբին.—ձեռքով ցոյց տալով տապանաքարերը հառաչեց ծերունին և ասաց.

—Ոնչի՜չ, ի՞նչ դեն տանիլ՝ շա՜տ-շատ, հինգ

գազ կտա՜ւ, էրկու էլ նշափետ։ Մարդ մեռնելուց ետը՝ միայն էրկու բան ա թողըմ ըշխարըմս—լաւի անըմ, մէկ էլ՝ ուշունց, հայհոյանք։ Լաւ բան, բարեգործութին ա անըմ, եա արած ըլը՜մ, ասըմ են՝ «փիս, վայխ մարդ էր, գեօռբագօռ ըլաւ՝ շան գեօռըմը սըտակեց». ամա երանի, հազա՜ր երանի էն մարդին, որ Ասծուն ճնանչըմ ա, թագաւորին հնազանդըմ ա, իր ազգը սիրըմ, փառըն տըմ ա, խեղճին օգնըմ, մոլորածին ճամբայ ա բերըմ, մի խօսքով՝ էն ա անըմ, ինչոր իրան ազգի օգտին ա…։ Է՛նղայդի մարդը երբ մեռնըմ ա, անըմը միշտ «վա՜շ, ափսո՜ւս մարդ» ասելով են իշըմ…։ Մեր գեղըմը չարութինով կործանուած մարդիկ շատ կան, էս ծառը փչացնողնին էլ նրանց ճամբովն են գնալու. ամա գի՛տես, Ղա՛սըմ ապէր, մեր պարտականութինն ա, որ գնանք գեղը, նրանց խրատենք, կը լսե՛ն, կը լսե՛ն, չե՛ն լսիլ, իրանք թող պարտական մնան աւուր դատաստանին…

—Է՜, Դա՛նէլ ջան, էն վաղ էր, որ մեծ ու պուճուր կար… հըմիկուայ ջահէլջուհիւլնին ըսկի ա՛սըմ չեն, թէ քե Ա՛ստօծ ա ստեղծել, լսի՛լ չեն մեզ. խրատիդ ջուղաբն էլ էն կլի, որ միրուքիդ ուշունց կը տան։ Հըմիկուայ ծերացողը պէտքա էլ միրուք չթողայ, այսուհետոյ միրուքն է՛լ ա համուել… Դէ կիրակի օրը խու Ղուկաս ապէրը, լաւ-լաւ խրատնի կարդաց, ընչի չը լսեցին, տեհա՞ր անտէր արաղի զոռովը թղթին ինչքան մարդի ձերք քաշիլ տուե՞ն… Ես լա՛ւ գիդամ, որ սօր թէ էգուց

կանսստորիցը նրանք հրաման են բերելու, որ ծառը կտրեն.—ասաց ծերուկ Ղասմն ու լռեց։

—Մեծ տեղը (կոնսիստորումը) տհենց բան չեն անիլ, Ղա՛սըմ, պէտք ա գդենաս, որ կանսըստորի անդամնին մեզ պէս մարդիկ չեն, նրանք որ իմանան, թէ հայրական ծառն ուզըմ են կըտրել, էն սըհաթին մարդ կը ղրկեն, որ չթողայ...։

—Դու ա՛սես, Աստօծ էլ լսի. տե՛նանք.—կասկածանքով պատասխանեց Դանէլը։

—Գնա՛նք.—ասացին նրանք և համբուրելով կրկին և կրկին, քաղած մի քանի կաղաղներն (թաց կեղևով ընկուզներն) ածեցին փեշներն ու դուրս եկան հանգստարանից և ճանապարհ ընկան դէպի գիւղը։

Սէթը խորանի կտրից իջաւ և հասնելով նըրանց, ողջունեց մտերմաբար։

—Բարի օր ձեզ, ա՛յ բիձէք։

—Ա՛յ Աստու անհատ բարին քե՛. էտ ո՛րդեղ իր, Սէթ ջան.—հարցրին ծերունիները։

—Գնացել էի Մոլոր-ծակի հնութիւնները տեսնելու. այնտեղից էլ գիւղատեղովն անցայ, եկայ, որ էս աւերակները տեսնեմ։

—Լա՛ւ, բա՛րի լի.—պատասխանեցին նրանք, իսկ Սէթը հարցրեց.

—Ա՛պէր, հին մարդիկ էք, շատ բան կ'իմանաք, ասե՛ցէք տեսնենք... Սէթն ուզեց հարցը շարժել, բայց ծերունին իսկոյն սկսեց լեկզիների պատմութիւնից, որ կիրակի օրը Թիւնինից էր լը-

սել և վերջացրեց ընկուզենու պատմութիւնով։

Երիտասարդ Սէթը սիրով լսեց ամենը և ապա գեղջուկի քաղցը բարբառով համառօտ կերպով սկսեց ծանօթացնել նրանց հայոց անցեալ փառքի հետ։ Նա վերջացրեց իւր խօսքը մօլի կամ մանուկ Արտաշէս թագաւորի, նախարարների, մատնիչ Վասակի, Անի քաղաքի կործանման վերջին պատճառ եղող Վեստ Սարգսի արարքներով։ Ամեն անգամ, երբ Սէթը տխուր կերպով նկարագրում էր ազգատեաց, ազգուրաց և մանաւանդ մատնիչ մարդկանց մասին, ծերունի Դանէլն աչքերից արնագոյն արցունք էր հոսեցնում, խորն ա՛խ էր քաշում և ուշադրութեամբ լսում Սէթին։ Դանէլը հայ նահապետի տիպար կրող եօթանասնամեայ այն ծերունիներից էր, որը դէպքը բերած ժամանակ իւր եօթը որդիների հետ ձի կը նստէր և կը շտապէր պատերազմի դաշտում մեռնելու...։ Սէթը շատ անգամ էր լսել նրանից հետևեալ ազնիւ միտքը, որ նա ասել էր իւր որդիներին.

—Ա՛յ որդիք, ասըմ են կռուի սա՛ս կայ, օսմալլուի ղոլէն հա՛յեր են մորթըըմ, աղջկե՛րք են խայտառակըըմ, ձիաներդ հազիր պըհեցէք, թրից, թուանքից զատից ա՛ռէք, կարելի ա «հարայղոփտին» ընկնըմ ա, կգնանք։... Սէթը երբ վերջացրեց իւր պատմութիւնը, ծերունին մի ա՛խ էլ քաշեց և ասաց.

—Էրնակ նրա՛ն, ով իրան որդին ուսումի կը տայ...։ Գնա՛, Աստօծ մուրա՛զիդ հասցնի, էլ աւելի

շնորք տայ քե.—ասաց և պինդ սեղմեց Սէթի ձեռքը։ Նրանք գիւղամիջում բաժանուեցին միմեանցից։

Դ.

Բողոքագրերը փոստը ձգելուց արդէն մօտ երկու ամիս էր անցել. գիւղացիները անհամբեր սպասում էին պատասխանի։ Նրանք աշնան վարուցանքը վերջացրել, այգիները քաղել, խաղողը մզել և շիրայով լցրել էին կարասները։ Մաճարի եփման, ճլճլան ժամանակն էր. կիրակի օրերը գիւղի քեադխուդաները հերթով սրա-նրա տանը մաճար էին խմում։

Մի օր Դաւիթ ապօր տանը, օջախի շուրջը քեչաների վրայ ծալապատիկ նստոտել էին մօտ տասներկու մարդ. Նրանց առաջը ձգուած էր երկայն ու նեղ մի կապտագոյն սփռոց. սեղանը կատարեալ նահապետական էր—իւրաքանչիւրի՝ առաջ դրուած էր մի մի պղնձէ ափսէ, մէջները՝ վրան սոխ կտրտած շորումածուն, կրակի շեղջի դիմացը կանգնեցրած էին մի քանի ամբողջ հացեր, որ տաքացնում էին շորումածնի հետ ուտելու համար. սեղանի ծայրերում դրուած էին սափորանման գինով լի կաւէ ամաններ։ Հիւրերի ետևը ձեռքները սրտներին դրած կանգնած էին տան հարսները, կրակի մի կողմը, թանեսպասի մեծ պղնձի մօտ նստած էր Խաթուն տատը և ոտների մինը մեկնած

քրեղանները լցնում էր սպասով, իսկ նրա հնազանդ հարսները բաժանում էին քեդխուդաներին, որոնք գաւաթներով մաճարը բարձրացնելով նախ քեօխվի և ապա իրենց կենացն էին խմում և հազար ու մի օրհնանքներ անում։

—Ա՛հ, ես քու եփողին մատաղ, էս ա կրակուր հա՛.—ասում էին նրանք ու խփշտում տաքտաք թանեսպասը։

—Հ՛ըհը՛, ո՛ւմ եփածն ա, որ տհենց ա՛նոշ չլի. ըռւօտից մնչի ճաշը ծաւարը պտղունց-պտղունց եմ հընտրել.—հպարտութեամբ պատասխանեց Խաթուն տատը, որի կենացն իսկոյն առաջարկուեց։

—Քե արքաւո՛ւթին, տա՛տի ջան։

—Ձեզ էլ արև-ումբըրշատութին» պատասխանեց տատը։

Հացկերութիւնը շարունակւում էր շատ հասարակ կերպով. այնտեղ պատառաքաղի ու դանակի հարկաւորութիւն չկար, սրբիչների տեղ էլ ծառայում էր իւրաքանչիւրի չուխի փեշը և կամ «փափախը»։ Մաթոս ապին իւր թանեսպասի քեղանը լիզելուց յետոյ, գլխի ուլի մորթուց կարած թասակը վեր կալաւ և աջ ու ձախ քսելով դունչը սրբեց, բեխերը սղալեց և գետնին ու հիւրերի երեսին նայելով ասաց.

—Կա՛մպանեա, դուք գիտէք, որ ծառի մասին խաբար չ'եկաւ Կանսստորիցը, բա ինչ էք ասըմ. ես վախըմ եմ, թէ նրանք մեր դուշմանների սըրտովն անեն մեզ։

— Ես էլ եմ տհենց խիալ անըմ.—ասաց երկրորդը։

—Վա՛յլահ, հլէ լա՛ւ կանեն, որ կորիլու իրաւունք չտան. խնդիրքը գրել տալու վախտը ձեզ ասե՛ցի ոչ թէ գրիլ մի՛ք տալ «ծառը գերեզմանի մէջըն ա՞», խի՞ չի անգաճ կալաք ինձ։ Ձեր բանը զարմացք ա էլի, բա՛ն չգիտէք, մարդի էլ չլսեցիք, էտա տհենց կլեր էլի.—նկատեց երրորդը։

—Ա՛պէր, դրանից ի՞նչ զարար կայ, որ գրել ենք տուել թէ. «ծառը գերեզմանուտի «մէջըն ա.—հարցրեց չորրորդը։

—Է՛ն, որ դու ըշխարհիցս խաբարութին չունես։

—Խի՞, ո՞նց թէ խաբարութին չունեմ։

—Նհե՛նց, որ բոյըդ կաղնի կոնդակ ա դառել, ո՛չ մի բանից գլուխ չես դուս տանըմ. տնա՛քանդ ոչ, կա՛սես թէ քրիստոնեայ չլես. խի՞, բա դու մի ա՛նգամ էլա տէր-տէրին մեռել թաղելիս ջտե՛հել չե՞ս, որ հողը վրատալուց եդը խաչով վրէն խազ ա քաշըմ ու ասըմ թէ «անշարժ եղիցի՞»։

—Անշարժ եղիցին ի՞նչն ա, ա՛ղպէր ջան։

—Անշարժ եղիցին էնա, որ գերեզմանը քա՛նդիլ չի լիլ, քրիստոսադիր ադաթ ա։

—Վա՛, քու մէջքդ չկոտրի, դեա՛դա, բա խի՞ չիր էն ժըմանակը մեզ գլխի գցըմ էտ բանը, որ հանդստարանից մի֊քիչ ղրաղ ինք գրիլ տուել. թո՛ւհա՛, տե՛նըմ ես դո՞ւ, անպատճառ դրա հըմա՛ր

են ետ գցել թղթի պատասխանը.—ծնկանը խփելով ասաց Մծռտիկ Գնդակովը։

—Ա՛, ծնկներիդ խի՞ ես տալի, հէրդ խու նոր չի մեռել։

—Մթամ դուշմանի սրտովն ըլելը հօր մեռնելուց պակաս ա՞։

—Դէ լաւ, քրեղանդ վեկալ, խմի՛, քե՛փ արա, սօր ուրախութենի օր ա...

—Է՜. քեփս խա՛րաբ ըլաւ գնաց...

—Խմե՛ցէք, խմե՛ցէք, մեր ձեռին հեշտ ա էգուց էլ մի խնդիրք կը շինենք ու մէջը ձեռք կը քաշենք թէ՝ ծառը գերեզմանուտից մի չուան հեռու ա...

—Եդո՞յ։

—Եդոյ ի՞նչ, կանսստորը խու մեր կշտին չի՛, որ տենայ գրածներս ղօրթ ա թէ սուտ։

—Էտ հու կլի՛, ասըմ եմ բանը վախտին գլուխ գայ՝ մենք էլ մի օգուտ տենանք է. ախր տընը-ցոնց հըմար ղէրիից մթանից զատից առնել ըեմ է։

—Սո՛ւս, սո՛ւս... թամադեն կենանց ա ասըմ, ա՛նգաջ դի։ Ամենքը լռեցին, իսկ կառավարիչն սկսեց խօսել իւր առաջարկելի կենացի մասին։

—Կա՛մպանեա.—ասաց նա.—Աստօծ ձեզ սաղութին տայ, դուք որ մեր հոգևոր կանսստորի անըմը տուիք, տէր Վերնէին թագաւոր Աստօծը նրանց բարին իշխի, նրանց սուրբ օխնութինն ըլի ձեզ վրայ էլ, ըշխարհիս վրայ էլ. տեհէ՞ք՝ էս աղիզ թասը կանսստորի անդամների պայծառութենի կե-

նանցն ըլի, Աստօծ նրանց միշտ պաշտըմ պատարագի պըհի, նրանց սուրբ սիրտը թրահմ, ո՛ղորմը գցի, որ մեր խնդիրքն անտես չանեն՝ ջուղաբը մեր օգուտին եա ղըկեն, որ մեր դուշմաննին չուրախանան։ Ո՛վ ինչ ունի ասելու, խրատունք եմ տալի, թո՛ղ ասի։

—Օ՜, լա՛ւ կենանց ա՛, լա՛ւ կենանց ա՛, ա՛ծա, ա՛ծա, ո՛ւստայ Կարօ, ա՛ծա, քրեղանս լցրու էրգնափեշների կենանցով բողազս մի թրջեմ.—ասաց Գեվոյ ապին ու գաւաթը մեկնեց դէպի գինի ածողը։

—Ա՛յ տղայ, մի սո՛ւս է, մարդը բա՛ն ա ասըմ.—դարձեալ լռեցին, իսկ Քիքին նկատեց։

—Լաւ կենանց ա, ամա գլխի՛ցը չ’ասեցիք, շտրա՛փ ունէք...

—Գլուխը ո՞րն ա, Քի՛քի ջան։

—Գլուխը մեր սուրբ Իջմիածինն ա, մեռնեմ նրա ողորմութենին, մեր ամենիս ըրխի մեռոնն ընտեղ ա էփւըմ... մեր պօզտիւորնին ընտեղ են աղօթք անըմ ալամ ըշխարիս հըմար...

—Դէ որ տհե՛նց ա, ես հին թամադին ընդո՛ւնըմ չեմ, եկէք թազեն ջոկենք, դա կենանցի ոտներիցն ա սկսըմ. ո՞վ ա ինձ հետ հըմաձայն, թող ձէն տայ։

—Ե՜ս, ե՜ս...

—Ե՜ս, ե՜ս, հինը դո՛ւս, դո՛ւս... հինը դո՛ւս...

—Քիքի՛նին ջոկենք, Քիքինի՜ն...

—Չէ, չէ՜, Քիքին ընդո՛վշիկ ա, Հադամին ջոկենք Հադամի՜ն....—ամեն կողմից ձայները խառնուեցին և Քիքին ընտրուեց։

—Բա՛րով կառավարես, Քի՛քի ջան...

—Բա՛րով կառավարես.. ասացին ամենքը։

—Սա՛ղ լէք, սա՛ղ լէք, սա՛ղ լես, Հա՛դամ ջան... պատասխանեց նորընտիրը և ապա առաջարկեց.

—Ո՛տի կաղնեցէք. — ամենքը բաժակները ձեռքներին կանգնեցին։

—Ասեցէք մեր սուրբ Աթոռի կենանցն ա։

—Մեր սուրբ Աթոռի կենանցն ա.—ասաց մինը նրանցից և իսկոյն վրաքաշեց բաժակը։

—Հա՛նէս, էտ անկարգի գլխին մի թըմփըցրու է. անկարգ հարամզադէն կասես թէ կըկա՛փել ա, մի կա՛ց, տես պըծե՛լ ենք ետոյ է...

—Ես մեղա՛յ Աստու, ա՛ղպէր։

—Սո՛ւս, սո՛ւս, թամադեն բան ա հրամայըմ.

—Տի՛րացու Ղուգեաս, սուրբ Իջմիածնի տաղը մի ա՛սա. ամենքդ էլ ձայն պըհեցէք։

—Թա՛մադա ջան, ներողութին կանէք, որ ձէնս միքիչ լաւ չի.—ասաց նա և երգեց.

—«Է՜յ... Ի՛ջմիածի՜ն խիստ սի՛րո՛ւն պայծա՛ա՛ա՛ռ տեսա՛ա՛այ, հա՛-հա՛-հա՛...

—Ա՛ա՛ա՛.—բոլորը միասին ձայնակցեցին։

—Է՜յ... Իջմիածի՜ն խիստ սիրո՛ւն պայծա՛ա՛ա՛ռ տեսա՛ա՛այ հա՛ա՛հա՛... մառմառ քարից շի՛նած էր ըւագա՛նը՜ը՜ը՜... պիրին դրին մեռոնի ղազանը՜ը՜ը՜.—Ղուգասը տեղ-տեղ ձայնը երկարացնելով, տեղ-տեղ էլ իբրև թէ խաղացնելով սկսեց երգել,

իսկ նրանք ոգևորուած սկսան գովել նրան, ասելով.

—Ջա՜ն, ջա՜ն, Ղուգեաս ջան, ջա՜ն. ապրի մառմառի բերանդ, ապրի, դէ՛, դէ՛, խմեցէք.—Հետևեցին Թամադա Քիքինին և միանգամից գաւաթները դատարկեցին ու նստեցին տեղները սովորական կարգով։

Քեադխուդաների քեֆի, ուրախութեան հէնց նոր տաքացած ժամանակ յանկարծ մի եափնջաւոր ներս մտաւ և գրաւեց ամենի ուշադրութիւնը։

—Օ՜... խէր ըլի, ուստայ Աթոյ, խէր ըլի, համեցէք, համեցէք... աղճի, Մրգարիտ, կոթը պէ ուստի տակին դի։ Եկողը, ակամայից կարծես, ձեռը ծոցը տանելով ասաց։

—Նհախ տեղը «խէր լի» մի՛ք ասիլ, որ քեփներդ փոզմիշ դի լիլ. ասաց ու մի թուղթ յանձնեց տիրացու Մաթոսին։ Վերջինս թղթի երեսին երկար նայեց։ Ամենքը լուռ և անհամբեր սպասում էին թղթի ընթերցմանը. բայց նա ասաց.

—Ա՛ղպէր, սա իմ բանը չի, մեծ տիրացուին տուէք, կարըմ չեմ կարդամ, ջլի՜ս խորը գրափառ ա։

—Տի՛րացու, տի՛րացու.—մեծ տիրացուին կանչեցին դրսից. նա փափախը շալակած ներս մտաւ, առաւ թուղթը և մի առ ժամանակ սերտեց ու վերջապէս կարդաց. «Կոնսիստորեայս համաձայն սրբազան... եպիսկոպոսի մերժում է ընկուզենու հատելը։ Վասն որոյ հրամայում ենք չհատել...

Ամենքի երեսը տխրութիւն արտայայտեց. գաւաթները մի առ ժամանակ մնացին լցրած, նրանք սկսեցին մճրուել... նրանցից մինը և ապա միւսներն ասացին.

—Թո՜ւ, ափսուս մեր մաճար, որ նրանց կենանցը խմեցինք, ափսո՜ւս, հազա՜ր ափսուս...

—Ափսո՜ւս, ափսո՜ւս...—կրկնեցին միւսները և ապա ամենքն սկսեցին խնդիր գրող տիրացուին մեղադրել հետևեալ կերպով.

—Վայ քու մէջքդ կոտրի, տի՛րացու Մաթոս, ասենք թէ մենք խոզ ըրըցնողնի ինք, գրի՛լ չգիգենք, խո՞ չիր ծառը միքիչ հնգստարանիցը ղրաղ գըըմ, դու հու գրի սև ու սիպտակն իմա՛ձըմ ես։ Քու տո՛ւնդ չքանդուի, բա էսղադար տարի ա տիրացութին ես անըմ, տէրտէրի հետ մեռել-մուռուլ ես թաղըմ «անշարժ եղեցի»-ն էլ չես սըվերե՞լ. վայ ափսուս մեր արաղ, որ քու տէր-տէր օխնիլ տալու, քու ազատական թուղթը ձերք քաշելու հըմար փուչ ու քոռ արինք, հզա՛ր ափսուս։ Տօ՛, բա որ ըռէխդ էտա, զահլաներս խո՞ ես տանըմ թէ՝ «ինձ ձտեըմ չէք, տէր-տէր օխնիլ չէք տալի...»։

—Հըմի ինչ լել ա լել, տիրացուին նախատելով բան չի դուս գալ, ուրիշ ճար ունէ՞ք, վաղօրօք տեհէք։

—Ուրիշ ճարն էն ա, որ էլի մի թուղթ շինենք ղրկենք։

—Լաւ ա ասըմ Քիքի ապին, հըմաձայն ենք.—ասացին ամենքը և ժամանակ չկորցնելով՝ դարձեալ

գիւղն ընկան, նորից ստորագրողներ ժողովելու և խնդիր գրել տալու համար…

Ե.

Երեկոյեան դէմ բոլոր կուսակիցները ժողովուեցին Մծուտիկի կալեպանի սրահի տակը։ Մեծ տիրացուն նստեց ցորենով կիսալից ջուալի վրայ, մի թերթ թուղթ դրեց ծնկանը, սագի թեւն առաւ ձեռը և գլուխը քաշ գցած սկսեց գրել։ Նա գրեց վերջացրեց ու նրանց դիմացը կարդաց այսպէս.

« Ի Հոգեւոր Կանսստորեայն…»

«Մենք ի ներքոյ սորին ստորակրեալքս Խ.
« գիւղի բնակիչքս վկայըմ ենք… որ «եղցու» ա-
« նուանեալ «պըպօքնին», որնոր ուզըմ ենք կտրիլ
« տալ, ծախել՝ նրա փողովը յուսումարան շինել,
« գերեզմանուտնից դուս ա գտնըմ—էնպէս որ, ե-
« թէ կտրենք, գերեզմաններին ըսկի վնաս չի դիպ-
« չիլ։—Աւելացնըմ ենք էս էլ՝ որ ծառին լաւ գին
« են տալի—(400 մանէթ)։

Ստորագրութիւն հասարակութեան՝
« Պետրոսանց Կիրակոս.
« Կըրպետանց Խեչոյ.
« Դանէլանց Մուխի.
« Զօրանանց Սաքոյ.
« Ամըրխանանց Մուսի.
« Գնդականց Մծուտիկ…
«1890 ամի…։

—Լաւ ա.—հարցրեց կարդացողը։

—Օ՜… լաւ չի՛, լաւ չի՛, էլի լաւ չի՜…

—Չէ, չէ… ձեռք չենք քաշիլ, ձեռք չենք քաշիլ….—կրկին և կրկին աղաղակեցին ամենքը։

—Ի՞նչ պակասութիւն կայ, ապէր, ասեցէք դըրըստեմ.—ասաց տիրացուն։

—Պակասութիւնն էն ա՝ որ ծառի գինը զուր տեղն ես գրել, որովհետև կարելի ա մենք 300 մանէթից եա աւել, եա պակասով ենք ծախ'ըմ, ըն-չի՞ իմանան։ Վրաէրկուսն էլ էն ա, որ գրածիդ ըւելնըցրու թէ՝ ծառի կողքը փուչ ա ու մի ճուղըն էլ չոր։ Տիրացուն ուղղեց բոլորը, թուղթը կազմուեց և կրկին փոստը ձգեցին։

Զ.

—Տ՛րիցփոխ, բա էլի խնդիրք ղրկեցին կանսըստորը. խի՞ ես տազ արել։

—Խեչո՛, կանսստորը դրանց ըռխին մտիկ չի տալ, կուզեն տասը խնդիրք էլ ղրկեն.—հաստատ յոյսով պատասխանեց երեցփոխը։

—Տ՛րիցփոխ մէկէլ օրը դըրանք իրանց բանը ուրիշ ղայդի դըստեցին։

—Ո՞նց։

—Ուրբաթ օրը թագաւորական ճամբովը քաղաք գնացող մի վըրդապետի ճըմբի մէջ տեղը կըղնըցրին ու հետը շա՛տ խօսեցին… բանը գլուխ դեն բերիլ տալ, ա՛րի դու ինձ լսի՝ մի թունգի արաղ ա՛ռ, մի էրկու-իրեք էլ հաւ մորթի, խալխը հըւաքի էլի

մի Թուղթ շինել տու․ վայ թէ՝ էս դոնըմ կանսըստորը լսեց նրանց խնդրքը․ սաղ գեղին արաղի զոռով թղթին ձեռք քաշիլ են տուել…

—Խեչո՛, լաւ ես ասըմ, համա ես եղեցական փողը ո՞նց արաղի տամ ու խալխին խըմացնեմ, կարալ չեմ․—ասաց նա։

—Ի՛րեցփոխ, եղեցական փողը դու խու զուր տեղը չես մսխըմ, չէ՞ որ օգուտը եղեցունն ա, դրա հըմար ո՛վ դի քե բամբասիլ․․

—Չէ, չէ, կա՛րալ չեմ, Խե՛չո ջան. ուզըմ ես կանչի գան, թէ ըռանց արաղի ձե՛ռք կըքաշեն, թող քաշեն, թէ չէ, թող մնայ, կանսըլստորը դըրանց խնդիրքը ընդունիլու չի, արաղներս էլ զուր կըգնայ…

—Ա՛ քե մատա՛ղ, դու գիդըմ չես, որ գեղըմը մի գործ գլուխ բերիլու հըմար ա՛րաղ ա հարկաւո՞ր. սղա՛լուիլ մի՛, արի ինձ անգած կալ, եդոյ կըփոշմանես…

—Կարալ չե՛մ—կրկին պնդեց երեցփոխը։

Խեչոն շատ աշխատեց գործն օղիով առաջ տանել, բայց երեցփոխը չզիջեց։ Փորձեցին առանց օղու սկսել ստորագրութիւնը։ Թուղթ ու թանաքն առան ընկան գիւղամէջ և սրան-նրան կանչեցին.

—Սաքո՛։

—Ի՞նչ ա, ե՛րեցփոխ։

—Արի մի էս թղթին ձեռք քաշի, ձե՛ռք։

—Ի՞նչ թուղթ ա։

—Ծառի թո՛ւղթն ա, ծա՛ռի։

—Բերէք ըստի, նրանց թղթին որ ձեռք եմ քաշել, ձերին խո՞ չեմ քաշիլ, նրանց խաթրը ձերից խու թանկ չի՛, ասենք նրանց թէ մի ստաքան արաղն աւել էր․—ասաց երիտասարդն և սրտալի ստորագրեց։

—Էհէ Պե՛տի, Պե՛տի, էհէօ՛յ…

—Հէօ՛յ․—հեռու բլրի վրայից պատասխանեց մի ուրիշը, որը կացինն ուսին անտառը փայտ կըտրելու էր գնում։

—Ա՛, էտ ո՞ւր ես գնըմ, քե հետ խու բա՛ն ունենք, բա՛ն…

—Ի՞նչ ա՛, ե՞նչբան ա՛․—բարձր գոռոցով հարցրեց նա։

—Թուղթ կայ, պէտքա ձե՛ռք քաշե՛ս, թո՛ւղթ. ե՛տ արի, ե՛տ արի մի ձե՛ռք քաշի՛…

—Ա՛, էլ ե՛տ գամ ե՞նչ անեմ, ես խու գի՛ր չեմ գիդըմ, գրողն էլ էք դուք, ջնջողն էլ, անըմըս խազեցէք էլի՛․—բլրի գլխից համաձայնութիւն յայտնեց միամիտ գեղջուկն ու կացինը կրկին ուսեց անյայտացաւ։

—Գրի՛, ամա բա՛ն չի դուս գալու, շատերը փախուստ են տալի, որ ձեռք չըքաշեն․—յուսահատութեամբ ասաց Խեչոյ ապին։ Ստորագրութիւնը երկու օր շարունակեցին, մի՛այն շատ քիչ թուով մարդկանց ստորագրութեամբ կրկին փոստը ձգեցին։

Է.

Այդ բողոքների պատասխանը Թիֆլիսում այնքան ուշացաւ, որ Վրաստանի և Իմերէթի թեմի

Հայոց վիճակաւոր առաջնորդը փոխուեց։

Ընկուզենին գնող կոճղավաճառները, որոնց գիւղացիք «Կոնձի կտրող» են անուանում, մի քանի անգամ եկել էին գիւղը և ընկուզենուն 250-ից 300, 300-ից 350 ռուբլի կանխիկ փող առաջարկել, իսկ վերջին անգամ զանազան հնարքներով կարողացել էին մի քանի ցեցերի համաձայնութիւնն առնել...։ Նրանք իրենց օգուտն աչքի առաջ ունենալով շտապեցնում էին խաբուած գիւղացիներին, որ շուտով կոնսիստորից հրաման բերեն—ծառը հատելու իրաւունք առնեն, որովհետև վախենում էին, թէ գիւղացիք յետ կանգնեն իրենց խոստումից և ծառի գինն աւելացնեն, իսկ հակառակ դէպքում աւելին էլ պիտի տային և հետևապէս քիչ կ'օգտուէին...։ Նրանք շշերով օղին գրպանները դրած, շարունակ պտտում էին գիւղը և մի քանի աղքատների համոզում, շոյում, խոստումներ անում, որ եթէ գործը յաջողացնեն, նրանց ևս կշահեն։

Գիւղականները կիրակի օրը կրկին ժողովեցին մի տեղ։ Ծաղախուրին. որ յայտնի էր գիւղի համար իբրև մի վնասակար անդամ, որ միմիայն իւր օգուտին մանեկող մարդ էր, շահ ու օգուտ փնտռող խաբեբաների հետ եկաւ ժողովատեղին, կեղծաւոր և համոզիչ յորդորներ կարդալով, ասաց ամենին.

—Ա՛յ տղեք.—ցոյց տալով գնողներին.—էս մարդիկը միքանի տարի ա, որ հինգ-վեց անգամ

մեր գեղն են եկել ու դարդակ ետ դառել. մեր թղթի պատասխանն ուշացաւ, բա ի՞նչ էք ասըմ, եա հա՛, եա չէ՛, մի պատասխան տուէք էս մարդկերանցը...

—Ձ'եկաւ, հա՛. դրուստ ա.—յուսահատ կերպով ասացին շատերը և լռեցին։

—Բա խե՞ էք տաղ անըմ։

—Բա ի՛նչ անենք. թէ ուզըմ էք, էլի թուղթ շինենք, էլի փորձենք։

—Թուղթը բան չի շինըմ, զուր ենք խզմզըմ ղրկըմ.—նկատեց մէկը։

—Դրուստ ա, թուղթը փոշտը գցելով քանի տարի ա չըչարըւըմ ենք, կարըմ չենք զատ շինենք. պէտքա մեզանից մի էրկու մարդ ջոկենք ղըրկենք հասկանըստորը, որ գնան բերանացի ամեն բան հասկացնեն, թէոր զատ ուզեն հըլա թող մի զատ էլ տան ու իրաւունք առնեն գան.—ասաց Խուրին։

—Խուրի ապին շա՛տ խելքից մօտիկ բան ասեց, եկէք տհենց անենք։

—Ա՛նենք.—պատասխանեցին միւսները։

Այդ միջոցին Քարվանսարայ գիւղից մի ձիաւոր եկաւ, իջաւ կալում, ձին կապեց և ողջունեց ասելով.

—Ընկջըրռնուկն ի՞նչ էք տալի, որ մի ուրախ խա՛բար ասեմ։ Լռութիւնը տիրեց և ամենքը հետաքրքրութեամբ սպասեցին, թէ ինչ պէտք է լինի նրա ասելիքը։

—Էն եպիսկաբոսին դո՛ւս են արել։

—Ո՞ր եպիսկոպոսին, Ա՛րթին ջան.—հարցրին։

—Էն էլի, որ թո՛ղըմ չէր թէ ծառը կտրենք։

—Ա՛յ թէ արել են հէ՛յ. հլէ վա՛ղ դին դուս արած նրան։

—Բա հըմի նրա տեղն ո՞վ ա. Ա՛րթին ջան, ինչ ին ասըմ Քրվըսըրըմը հըրցրիր ո՞չ։

—Ասըմ են Մամբրէ սրբազանն ա։

—Նա լա՛ւ մարդ ա՞։

—Էտ մասին բան չեն խօսըմ.—պատասխանեց Արթինը։

—Նա նո՛ր մարդ ա, հլա պէտք ա մի քիչ կենայ, ճնանչուի, որ լաւը, եա վա՛տն ասեն.—Նըկատեց մի ծերունի։

—Ուշա՛ցանք, խօսցրու տենանք. — Խուրինի կողքին կամաց բզելով ասացին կոճղավաճառները, տեսնելով, որ գիւղացիները հարցից հեռանում են։

—Տղե՛ք, նոր եպիսկոպոսի լաւ թէ վատ լելը էդոյ կիմանանք, հըմի խօսեցէք տենանք ո՞ւմ էք ջոկըմ, ո՞ւմ էք ղըկըմ Թիֆլիս, որ բանը գլուխ բերի.—հարցրեց Խուրին, աչքով անելով իւր կողմնակիցներին։

—Կիրակոս ապօրը ղըկենք.—առաջարկեց մինը, իսկ միւսները հաւանութիւն տուին.

—Հա՛, լա՛ւ ա ասըմ Խուրի ապին, նրան ղըկենք։

—Լա՛ւ էք ասըմ, ամա Կիրակոսը ծեր մարդ ա, կարալ չի բան գլուխ բերի.—ասաց խարդախ Խուրին և կրկին աչքով առաւ։

—Ինչի՞ հըմար։

—Նրա՛ հըմար, որ գնացողը պէտքա մի լիզուանիկ, ճակատը բաց մարդ լի, որ գնայ ա՛սի, խօսի, հըսկցնի..—պատասխանեց Խուրին, կարծես ինքը նախօրօք մէկին աչքի առաջ ունենալով։

—Դէ էտղայդի մարդն ո՞ւր ա, դու գտիր, մենք էլ ղըկենք.—ասացին ժողովականները։

—Մեր Մծռտիկին որ ղըկենք, հըմա՛ձայն էք.—տէրողորմիան ձգելով հարցրեց Խուրին։

—Լաւ, հըմա՛ձայն ենք, թէ որ գնայ։

—Կը գնա՞ս, Մը՛ծռտիկ.—հարցրին նրան։

—Թէ որ ճամբխս ծախսը տաք, ընչի՞ չեմ գնալ, լա՛ւ.—պատասխանեց նա, իսկ Խուրին բեխերը սղալելով դարձեալ աչքով արաւ։

—Ի՞նչ տանք, ինչքանով ըռազի կը կենաս.—հարցրին ժողովականները։

—Տասնըհինգ մանէթ տուէք. — պահանջեց Մծռտիկը։

—Հէր օխնած, դրանդա՛զով ես գնալո՞ւ, տասնըհինգ մանէթն ինչ խաբար ա։

—Ա՛յ տղեք, տասնըհինգ, եա թէ չէ հինգ մանէթը մենք խի՞ ենք տալի, թող կոնձի կտրողնին տան.—պնդեց նրանցից մինը։ Խուրին կրկին աչքով արաւ, իսկ Մծռտիկն ասաց։

—Նրանք էլ են տըւել... ես ձեզանից ըռանց նրանց տուած 15 մանէթն եմ ուզըմ։

—Ա՛րի գնա՛, ա՛րի.—առաջակեցին կրկին։

—Չէ, էտքանով գնալ չեմ, հլէ 12 մանէթ էլա պէտքա տաք։

—Ա՛յ տղայ, մեր գործի հըմար խուլ չես գնըմ, եղեցու, լուսումարանի հըմա՛ր ես գնըմ. 10 մանէթ մե՛նք ենք տալի, մի տասն էլ նրա՛նցից առ։ Քսան մանէթը քի՛չ փող չի. հինգ մանէթով կը գնաս կըգաս, 15-ն էլ կբերես շահովը կը տաս գեղըմը։

—Ա՛րի, արի գնա՛, լաւ բոլ փող ա.—երկար խօսակցութիւնից յետոյ, վերջապէս Մծուտիկին համոզեցին և նա առանձնանալով կոճղավաճառներից ևս իւր ստանալիքն ստացաւ, ձին թամքեց ճանապարհ ընկաւ դէպի Աղստափայ և այնտեղից երկաթուղով Թիֆլիս գնաց։

—Շա՛տ ղոչաղն ա Մծուտիկը, անպատճառ հրամանը կը բերի.—ասում, գովաբանում էին ամենքը և օրէ ցօր անհամբեր սպասում։

Ը.

—Գիշերիս մի շա՛տ գէշ էրազ եմ տեհել, իրիցփոխ, ամա գիդենաս, ծառի կտրիլն աջողացնիլ դեն, ես իմ էրազը փորձել եմ։

—Ի՞նչ էրազ ա, ասա մի տե՛նանք.—հետաքրքրութեամբ և երկիւղած սրտով հարցրեց երեցփոխ Ստեփանը։

—Մեռնեմ Աստու ողորմութենին.—երեսին խաչակնքեց և սկսեց.—Գիշերս, հըմի հէ՛նց ա ես

ու դու մերկ, տկլոր, ոտնըբաց՝ անտրեխ, գլխըբաց՝ անփափախ, արինքըրտնքմը մտած կաղնած ինք մի խո՛ր ձորի եառանդի բերանըմ. եառանդի տակը ջուրը կերել էր, իր (այր) արել։ Մենք ուզըմ էինք ջուրն անցկենալ էնղոլի ղրաղը, մի բոլուկ (մի խումբ) տղամարդ մեզ վրայ սկսեցին քըըպրանուկ անել (քարկոծել). մենք ըղաչանք, պըղատանք արինք, լաց ըլանք, մե՛ խօսքով, ինչղադար չըչարուե՛ցինք, ինչղադար տանջուե՛ցինք, թողե՛ցին ո՞չ թէ գլխվերենք եառանդի տակը։ Շատ չըչարուելուց, տնքալուց եդը որ բըզարե՛ցինք, թլացած ծնկներով բացրացանք մի թմբի գլուխ, ընտեղ վե՛ր ընկանք, մէջքներս մի եղնաքարի դէմ արինք ու ՛նստեցինք, ամա բե՛ղափիլ վե՛ թռանք տեհանք որ՝ մեր առաջը՝ գերեզմանուտի մէջ մի սիպտակամիրուք, մի լուսի պէս ծերունի մարդ լուս ընկաւ։ Նա դողդողալա, մի ջուխտ պատրիկ կռցրած կամա՛ց-կամաց մօտկացաւ քանդուած եղեցուն, պատրիքնին բեմի խաչ քարերիցը կպցրուց, չոք-չոք արաւ, իրեսը տափը քըսեց, ճիտն (վիզն) ուսովը գցած խեղճ-խեղճ «Եղցու պըպօքնու» վրայ մտիկ տըւուց ու, ո՛ր աչքե՛րը չճպե՛ց, ա՛րին—արտասունքը տափին վեր եկաւ գեօլ-գեօլ ըլաւ (լճակներ գոյացրեց)։ Դրանից եդը, փի՜ս մտիկ տւուց մեր գեղի վրայ, ըրեսին խչըհանեց, ոտը պինդ տա՛փովը տւուց ու կրակի ալի նման, հէնց երկինքը բարցրացաւ թէ չէ, էս ղոլից—էնղոլից ամպերը հըւաքւեցին, երկինքը թըխ-

պեց, քամի ու հրո՛մունք վերկացաւ՝ ծառ ու սար քոլ, չիմ տեղներիցը ժաժ եկան, մութն աշխարս պատեց, ծովեանը օղիկ-մօղիկ անելով հուր հրատին տըւուց, կեծակը տրա՛ք-տրա՛քեց, ճքաց ու շըը՜խկ՝ քըըկարկուտի պէս ղալիմ տուուց մեր գեղի մէջ տեղին թէ չէ, երկինք-գետինք ժաժ գցեց, տըները փուլ եկան, լաց ու վայնասին աշխարս պատեց։ Հէնց էտ բհարին ես տեղիցս վէ թռայ, աչքս բաց մնաց, տե՛հայ որ էրազի մէջ եմ։

—Պահո՛վվէ. ա՛, էտ ի՛նչ գէշ էրազ էր.—ասաց երեցփոխը և աչքերը խոնարհեց գետին։

—Երազս գէշ ա, ամա ծառը կտրիլու հըմար գեղիս վրայ Աստծանից զիլլումա՛թ ա գալու. էն ծերունի մարդն Աստու մարդ էր։ Երազատեսն ինքն իւր երազը մեկնեց և խոր ախ քաշեց։

—Խեչո՛, գնանք տիրացուի կուշտը մի Եփրեմվերդուն մտիկ անիլ տանք, տեհանք էտ ի՞նչ էրազ ա տեսածդ։

Գրբաց տիրացուն, Աստուած հոգին լուսաւորի, տիրացու Բալաբէգն էր, որի մասին գիւղացիք արդէն որոշ գաղափար էին կազմել իբրև գուշակողի վրայ և հաւատում էին միմիայն նրա բացած Նփիմերտուն բացառապէս։ Բալաբէգին էլ հանգամանքը շատ օգնում էր։

Բրդևան գիւղը գտնւում է մի սարի գլխի, ուր համարեա ամեն տարի կարկուտ է տեղում և այդտեղից էլ թռչում է յանկարծ այս և այն գիւղի հանդը փչացնում։

Բալաբէգն այդ միշտ փորձով գիտէր և հէնց այդ կերպ էլ գիր էր բացանում երկրագործների համար։ Խեչոն ու Ստեփանը գնացին Բալաբէգի մօտ և երազը պատմեցին նրան։ Տիրացուն գիրքը բացեց, դէս թերթեց, դէն թերթեց և յայտնեց թէ՝ «Երազը վատ երազ ա և հինգ օրից յետոյ պէտքա կատարուի»։

—Տի՛րացու ջան, ե՞նի ինչպէս ա վատ.—հարցրեց Խեչոն։

—Դէ ըստեղ ասած չի թէ ինչպէս ա վատ. ասած ա. «Երազդ ո՛չ կատարի ի բարին...»։

Նախապաշարուած գեղջուկները ձի հեծան և տխուր վերադարձան իրենց գիւղը։

—Գնանք Ղումաշ տատի կուշտը, նրան էլ դարի գցիլ տանք, տեհանք նա ինչ ա ասըմ, ա՛ Խեչ։

—Գնա՛նք, գնանք նրան էլ փորձենք։

Ղումաշ տատը գիւղում յայտնի էր իւր աչքակապութիւնով. նա բարձրահասակ մի պառաւ կին էր, որին առաջին անգամ տեսնողը շողքորթող կանուանէր։ Նա դարի գցելով ու եղունգին նայելով ամեն տեսակ գուշակութիւններ կարողանում էր անել։ Օրինակ՝ նա գուշակում էր թէ՝ այս ինչ կորած հորթը յաւիտեան կը կորչի, այն ինչինը երկու օրից յետոյ կգտնուի, այսինչ կնոջ փորը տղայ է, միւսինն աղջիկ, երազում ջուրն՝ ընկնողը շառ-շամաթի կը հանդիպի, քամի տեսնողը սուտ խաբար կը լսի, ծեր մարդ տեսնողն արդար կը

լինի և այլն և այլն։ Սնոտիապաշտները գէշ երազը պատմեցին պառաւին, բայց նա յայտնեց թէ․ «օրն ամպած ա, գարին կտրել չի, էգուց ծէգին եկէք»։

Միւս առաւօտը Ղումաշ տատը, որ գայլերի բերանը մազով էր կապում, իսկ գողերինը խոտով, միքանի հատիկ գարի ածեց ձախու բուռը, երեք սև գլուլ էլ ձգեց մէջը, չար ու բարու նշանները որոշեց, աջու ձեռի ափը փուչփուչ դրեց միւսի վրայ (ինչպէս հաւատամքն ասելու ժամանակ), քթի տակ փնթփնթալով մի քանի ծածուկ աղօթքներ մրմնջաց, աչքերից արտասունք կաթեցրեց, սրբեց և խորհրդաւոր լռութեամբ բուռը հարեց՝ գարին գցեց, աջու ձեռը յետ տարաւ, նայեց և ասաց․ «սղալ եկաւ»։ Նա բուռը կրկին փակեց, էլի գցեց, բաց արաւ և ցոյց տուեց նրանց։

—Տե՛սըմ էք, էս էրկու սև-սև գլուլներից մինը չա՛րն ա, մինը բարին։ Սրանք կուըմ են, ամա մինն ու մինը կ'ախտի՝ ա՛ռաջ կընկնի։ Տեսնենք հըմի՛ ի՞նչ դուս կը գայ․—պառաւը կրկին խառնեց գարին, բուռը փակեց, էլի գցեց, բաց արաւ և մեկնութիւն տալով ասաց․

—Օ՜... չարն ա՛խտեց (յաղթեց), առաջ ընկա՛ւ, հրէ՛ս՝ ուրախ-ուրախ գալիս ա։

—Տա՛տի, չարն էս ա՞, որ քստի ղոլը դուս ա ցցե՞լ․—հարցրեց Խեչոն։

—Հա՛, էտ ա, դրա աչքը դուս գայ։

—Բա էտ ընչից ես իմանըմ, որ գալիս ա։

—Էտ ասե՛լու բան չի, ո՛րդի, թէօր ասեմ,

գարին էլ կտրել չի․—պատասխանեց ճարպիկ պառիկը։

—Ազի ջան, ա՛զի, մի հլա մնէ՛լ գցի տենանք, էտ անտէր չարը, կո՛տրի դրա ոտը, քա՛նի օրից եդը դի գեղը հասնի՞։ Պառաւը գարին կրկին գցեց և յայտնեց, որ չորս օրից յետոյ գիւղն է մտնելու։

—Կնի՛կ ա՛, մա՞րդ ա, թէ՞ ինչ բան, տա՛տի․—հարցրեց Խեչոն։

—Մարդ ա, մարդ, ամա ջահէլ տղայ ա։

—Ինց մարդ ա՞։

—Ջահէլ տղայ ա, էրգեան չուխով, բեղերն էլ նո՛ր ա ծլըմ...

—Ը՜...—մատը կծելով ասաց նա․—էլ խօսալ մի՛ք, Մծոտի՛կն ա...

—Տա՛տի, բա էն ամպի՛ գոռոցն ու տըրքտրաքոցը մնէլ կեծակի տա՛լն ինչ բան ա։

—Ը՛նէլ Աստու բարկութինն ա, որ կարկուտ ա թափելու արտերի վրայ...

—Ա՛դա, բա էտ ո՞նց ա, որ Բալաբէգը մա՛ցաւ ոչ․—զարմացմամբ հարցրեց Ստեփան ապին և հեռացան պառաւի մօտից։

Խեչոյի երազի և նրա մեկնութեան լուրը գիւղում սարսափ տարածեց։ Ամենքը երկիւղով սպասում էին, որ տեսնեն թէ ի՛նչ կպատահի գիւղի հետ։

Թ.

Գարի գցել տալուց հինգ օր յետոյ՝ Զատկի երկրորդ շաբաթ երեկոյեան դէմ, երեցփոխն իրեն սրահի տակ ոտնհուրագով տաշ էր անում—յորսլի ու թի էր շինում լոբենի գերանից։ Հետզհետէ մարդիկ ժողովուեցին այնտեղ։ Ամբողջ շաբաթուայ խօսակցութեան նիւթը Մծռտիկի քաղաք գնալու մասին էր։ Երեցփոխին՝ իբրև պաշտօնական անձի նրանք ստէպ-ստէպ այցելում էին, որ տեսնեն թէ կոնսիստորիցն ի՞նչ թուղթ է ստացւում։

—Ի՛րեցփոխ, բա խաբար, աթար չկա՞յ.— շուտ-շուտ հարցնում էին նրան ու յուսահատւում, իսկ հակառակորդներն ուրախ-ուրախ, միշտ բարկացնում էին սրանց և պարծենում թէ Մծռտիկը դատարկ ետ չի գալու, | իւր տղամարդութիւնը ցոյց է տալու, և այլն։

—Նա գնա՛ց, ամա բրթունքը բերիլ դի, մենք խայտառակուիլ դենք.—կասկածելի կերպով ասում էին նրանք։

—Հը՛, բան խու չես մացել, ի՞նչ կայ.—դէմքը շարժելով հարցրեց երեցփոխը։

—Չէ, հլա բա՛ն չկայ, ամա ասըմ են՝ էն շան տղէն կոնձի կտրողներից փող շա՛տ ա առել...—պատասխանեց մի ուրիշը։

—Կարալ չի բերիլ, կանսստորը մին-մին չէ ա ասել նրանց. նա իրան թըքածը խու էլ ետ չի լի՛զիլ։

—Է՜.—գլխին պտտելով ձայնարկեց Պետրոս ապին։

—Հը՛, ի՞նչ ա, ա՛պէր։

—Բա՛ն չէք մացե՞լ։

—Դու մացել ե՞ս, թէ մա՛ցել ես, ա՛սա։

—Հա՛ մի բան եմ մացել։

—Ես էլ եմ մացել.—ասաց Ուհանէսը։

—Իրկուսինդ էլ մի՛ բան ա. ասեցէք տենանք։

—Թող ապէրն իրանն ասի տենանք, թէ իմն ուրիշ կլի, ես էլ կասեմ.—ասաց վերջինը։

—Ապէր, դէ ա՛սա տենանք, եղըցնի՛լ մի է։

—Ես էս եմ մացել, որ Մծռտիկը գնացել ա էն օրուայ վըրդըպետի կուշտը...։ Նա խորհուրդ ա տուել իրան մօտ գնալ, որ ամեն հնարք սըվրցնի նրան։

—Ի՞նչ հնարք դի սըվրցնիլ նրան։

—Օ՜... ասըմ են նա շա՛տ վերցնողն ա, շա՛տ...

—Պա՛, էտ ի՞նչ ես ասըմ, մդեար վըրդապետնին էլ են էտթաւուր բաներ անը՞մ.—խիստ զարմանքով հարցրեց բացականչողը։

—Է՛տ ա՝ բա՛ս էլ կարծի՞ք չկայ, բանը սա՛րքուիլ դի...։ Տղէք, հալբաթ կանսստորից բաչրի կուշտն ա ղրկել նրան։

—Հա՛, նա ինքը նրա հետ էլ ծանօթ կլի...

—Է՜... ա՛ղպէր, աշխարս փխսացել ա, ինչ ասէք, խելքս կկտրի։

—Ուհանէս, քու մացածն էլ էր է՞տ։

—Չէ։

—Բա՛։

—Ես ուրիշ սազի ձէն եմ լսել։

—Դէ ածա տենանք, ածա...

—Էսօր Պապոնց Արթինը հետս խստովանք արաւ թէ՝ Կանսստորի էն գլխաւորին, որն որ թողըմ չէր ծառը կտրենք, դուս են արել։

—Ղո՞րթ, ա՛ Մակ։

—Խե՞, հաւատըմ չէ՞ք։

—Հաւատըմ ենք, ամա վա՛յ թէ հանաք լի՛։ Դէ հլա ողդըմ կե։

—Էն կծըպըծանը վկա՛յ, որ դրուստ եմ ասըմ.—Մակին մատը երկնքի վրայ մեկնելով երդուեց արեգակի անունով։ Ամենքն տրտմեցին այդ լրով։

—Օ՛հ, ինչ փիս բան ա լել, ինչ փիս խաբար իմացա՛նք.—այդ խօսքերը կրկնեցին ամենքը։

—Թիւ հա՛, էտ ինչ փիս բան ա լել։

—Տխրել մի՛ք, ասած ա, «Քաչալ Հասան, Հասան քա՛չալ», հըմի ընդո՛ւրը չըլի՝ Ազարին դուս են արել, Ղազարին տե՛ղը կըդնեն էլի. նոր եկածը խու հընի կարգադրութինը քանդի՛լու չի. ինչ նա՛ արաւ, ընէլ սա՛ կանի...—ասաց տիրացու Կարօն։

—Էտ տհե՛նց ա, տի՛րացու Կարօ ջան, ամա ամեն մարդ էլ խու մի պնութին չի ունենըմ, վա՛յ թէ դրան խաբեցէ՞ն...

—Չէ՛. խաբելով կա՛րալ չեն խաբել, ամա դու էս ասա թէ ջըբումը խաշամ դնո՛ղ մարդ չլի՛։

—Դէհ, Աստօծ անի, որ քու ասածն ըլի։

—Իրիցփոխի հակառակու դրանք վռազեցին ծառը չորս հարիր մանէթով տուին թէ չէ՝ դրանք ծառի գինը հլեչուել ութ հարիր-ինը հարիր մանէթընի բարձրացնելու.—նկատեց տիրացու Կարօն։

—Տղե՛ք, սօր կոնձի կտրողներին տեհել չեմ, ըստեղ ե՞ն, թէ գնացել են փոշտից խաբար իմանան...

—Բա ո՞ր ջհանդամին են, էլվախտ էլ Քըրվըսըրի դուքաններիցն էրկու-իրեք թունդի արաղ բերել տուին, արաղներնին հատել էր։

—Պա՛հ, պա՛հ, պա՛հ, խալխին էնքան արա՛ղ խմացրին, որ բողազներն ուռաւ։

—Բա արաղի հո՛ւնարը չէ՞ր, որ Մծռտիկին քաղաք ղրկեցէ՞ն։

—Նա խու քաղաք գնա՛ցող չէր, դրանք նրան շա՛տ փող խոստացան...

—Ի՛րիցփոխ, ի՞նչքան են տալի ծառին, մացել չե՞ս.—հարցրեց անտեղեակ կուսակիցը։

—Ծառին չորս հարիր մանէթ են տալի։

—Բա որ տհենց ա, խե՞ չիր դո՛ւ տալի ու վերջացնըմ, զուր տեղն էլ էս ղալմաղալը ընչե՞ սարքեցիր...

—Երօր գեղըցոց հլա այդնի չէր, էտ առնողներն առաջ ինձ մօտ եկան. չորս հարիրը բուռս հըմբարեցին, եռսուն մանէթ էլ ինձ «ջափափուլի» խոստացան, մի քանի օրից եդն էլ հինգ թուման շինեցին ջափափուլիս, ամա չ՛արի՝ ասեցի կարալ չեմ, ծառը կանսստորի ըրաւունքի տակն ա։ Հըմի, հալ-

բաթ էն փողերը, Եագախուբինի ու գիժ Ուհանի տակն արին թխսի ձուի պէս, որ տհենց տաքացել են…

—Դէ բա ըռանց «զատ» առնիլու, ըռանց ուտիլ խմիլու շաշ խու չեն, որ ըռնի տակ ընկնեն *)։

Ժ.

Հէնց այն խօսակցութեան միջոցին գիւղի վերին ծայրում, Խուրինի կալում, յանկարծ մի աղմկալից կերուխում սկսուեց։

—Ը՜.., բէ՛րեց հա.—մատը կծելով ասաց երեցփոխը և բարկացած հուրագը գետնով տուեց։

Նախատեսուած կերուխումն ըստ գիւղականի փառաւոր էր։—Նրանք յաղթութիւնը տարած լինելով, քէֆն էլ հպարտութեամբ էին անում։

Խաչթառակցի Գիժ-Ուհանը վիզն ուսերի մէջ մտցրած և մորուսը ցցած թառ էր նուագում ծրնգհա-ծրնգ, Խուրի ապէրը իւր անախորժ և ջուխտակ դուրս եկող ձայնով շարական էր երգում. մի.քանի խոզարածներ սրինգ ու պկու էին ածում, կոճղավաճառներն էլ փեշները քլուանդ արած, ձեռք-ձեռքի էին տուել և Մծռտիկի հետ կռօի ասուած «Ա՛յ Նարէ՜, Նարէ՜». ու «լէյլէյով» եալլի ու գոփի

*) Ծառի կտրիլը արիւնհեղութիւն էին համարում։

էին խաղում, ապա գինու սափորներն ու գաւաթները գլխներին դնում, կամ թէ ձեռքներին բռնում և գիւղականներին զարմացնելով պտոյտներ անում, գլորւում, վեր կենում, շշեր կոտրըմ և ապա «քիաշիները» լցնում և հպարտութեամբ կենացներ էին առաջարկում։

Ամենից առաջ նրանք առաջարկեցին խմել ծառի գործն աջողացնող վարդապետի կենացը։

—Տղէ՛ք, գենանցները խմիլու ժամանակ բացըր-բա՛ցր ասեցէք, որ մեր հակառակորդնին մանան ու ճաքեն…

—Կա՛մպանեա… սո՛ւս… լռութի՛ւն.—ասաց կառավարիչը։

—Հրամա՛յի թամադա ջան։

—Թէ ըրաւունք կտաք ինձ թողէք մի թանկագին գենանց կըխմեմ։

—Ըրաւունք տուողը դու ես, հրամա՛յի տեանք։ Կառավարիչ Խուրին բաժակը բարձրացնելով այսպէս օրհնեց.

—Տէր Վերնէին թագաւոր ստեղծող արարիչը, ողորմած Աստօծը հայրըսուրբ վրդըպետին համեշա պաշտըրմ բաղարագի պըհի, նրան հայր Աալըհամ շինի, սրբերի դա՛սը դասի, որովհետև նա մեր խօսքն ու խնդիրքն ընդունեց, մեզ. մեր դուշմանների սրտի՛վը չարաւ, նրա ոտը միշտ սուրբ սեղանիցն անպակաս անի, նրա սուրբ օխնութինն ըլի ալամ՝ (համայն) աշխարհիս վրայ և ձեզ ու ձեր որդոց վրայ… ասեցէք ա՛մէն։

—Ամէ՜ն, Տէ՛ր Աստօծ, ամէ՜ն.—կրկնեցին նըրանք։

—Դէ՜հ քիաշիներդ (գաւաթներդ) գլխներիդ քաշեցէք, խմե՜ցէ՜ք, իրար հե՜տ, իրար հե՜տ, Թմմո՛ւղ, Թմմո՛ւղ։ Քի՛քի, ղալբութին մի՛ անիլ, քիաշիդ դարդակի. Թմմուղ խմեցէք ամենդ էլ, թէ չէ, շտրա՛փ կխմացնեմ.—Հը՛, պրծա՞ք։

—Հրա՛ման քե, պրծա՛նք, պրծա՛նք։

—Դէ սո՛ւս... Թի՛ւնի, Թի՛ւնի, էհէ Թիւնի։

—Հա՛մմէ։

—Ա՛, մի տա՛ղ ասա, տա՛ղ։

—Թա՛մադա ջան, ձէնս կտրած ա, թո՛ղ տիրացու Մա՛թոսն ասի.—հրաժարուեց Թիւնին։

—Չէ՜, չէ՜, լի՛լ չի՛, մեզ ղա՛բուլ ա, մեզ ղա՛բուլ ա.—աղաղակեցին նրա ընկերները։

—Աղպէր, կա՛րալ չեմ, ձէնս խազաս կերած պառաւի ձէն ա դառել։

—Չէ, որ ա՛սըմ են, պէտք ա ա՛սես՝ թէկուզ իշի պէս խռանչես էլ.—պնդեց թամադան։

—Տիրացու Թիւնին ստիպուած սկսեց. «Հա՛յոց աղջիկնե՜ե՜ե՜ր, ձե՜ր հո՛գուն մատա՛ա՜...ա՛ղ» երգը, որին ծանօթ էին բոլորը և ձայնակցեցին։ Թիւնին վերջացրեց երգը։

—Տի՛րացու Մաթոս, մինն էլ դո՛ւ ասա։

—Ես շարա՛կան կասեմ, թա՛մադա ջան։

—Է՛հ, էտ խու ես էլ կասեմ.—մէջ ընկաւ մէկը։

—Բա ի՞նչ ասեմ.—ասաց Մաթոսը։

—Ա՛յ տղայ, թամադեն ես եմ, նրա հետ ի՞նչ բան ունես, իմ ըռխի՛ն ուշ կալ, ա՛սա, ինչ որ գիդաս։

—«Որ ը՛զխո՛րհուրդ քո գալըստեանդ յառաջագոյն գուշակեցեր. մարգարէիւքն Իսրայէլի...».—սկսեց նա քաղցրաձայն ներբողը։

—Ջա՛ն, ջա՛ն, ա՛ տիրացու Մաթոս, հա՛լալ լի կերածդ, հա՛լալ. հլէյես թէ կովի բո՛ւղա ըլես, բո՛ւղա. էս ա ծառը պրծնե՜նք թէ չէ, քե տէրտէր օխնիլ տալու հըմար էլի մի թուղթ դեմ շինիլ տալ.—քաջալերեց զգացուած կառավարիչն և առաջարկեց նոր առաջնորդի կենացը։

—Էս էլ Աստօծ փառաց փառքի պըհի նոր եպիսկոպոսին, որն որ մեր խնդիրն անտես չարաւ։ Տէրը մեր մե՜ղքին էլ թողութին տայ, որ նրան խաբեցինք... Նրա պաշտըմ պադարագի զօրութինն ըլի ըշխարիս վրայ, դէ՜հ, թմմուղ խմեցէք։

—Քիաշիքդ լա՛ւ լցրէք։ Էս էլ Աստօծ էրգեան ումբրը տայ մեր քեադխուդա Մծռտիկին. կա՛ցէք, չխմէ՜ք։ Պե՛տի, մեր ա՛ղայ Մծռտիկի գենանցի վրայ մի հօռօլօ սկսի։ Սո՛ւս...։ Հը՛, որ սկսի, ձէն տուէք։

—Հօ՛հօ... հօ՛, հօ հօ՛օ՜, մաճկալը վարող գութանի մաճին, հեռուից գալիս ա մաճկալի բաջին. հօ՛ հօ՛ հօ՛... վա՛րի, գո՛ւթա՛ն ջա՛ն՝ վա՛րի քե մատա՛ղ հօ՛ հօ՛ հօ՛...—բարձր ձայնով սկսեց Պետին, նրան ձայնակցեցին միւսները և գիւղը մի ահագին դղրդոց գցեցին։ Հօռօլն էլ վերջացրին։

—Դէ, զարգակեցէք.—հրամայեց Թամադան։ Քեֆը շարունակուեց մինչև կէս գիշերը։

ԺԱ.

Բոլորովին հակապատկեր։ Երեցփոխի սրահի տակ ժողովածները բարկացած, մէկը մէկուն մեղադրելով՝ մի վէճ, մի կռիւ էին սկսել։

—Մեղաւորը դո՛ւ ես, դո՛ւ։

—Ա՛դա ո՞նց եմ ես՝—ասում էր երեցփոխը։

—Դու նհէ՛նց ես մեղաւոր որ, ես քե հըզար հետ ասեցի թէ՝ գեղի բանն ըռանց արաղի գլո՛ւխ չի գալ, դու խո՛ չի անգաջ կալար ինձ.—Խեչոյ ապին բորբոքուած և նրա հետ էլ միւսները խիստ յանդիմանում էին երեցփոխին։

—Թուրքն ասել ա թէ «հայի եղի խելքն ինձ» հըմի դուք էնքան կացե՛լ էք, որ բանը բանին տուել ա՛նց ա կացել, նո՛ր էք արաղով բան շինելու վրայ խօսը՞մ...—նկատեց մինը։

—Էտա ինչ լե՛լ ա, լե՛լ. ձէներդ էլա քա՛շ արէք, ամօթ ա, նրանք ուրախութին են սկսել, դուք կռիւ ու թըրշողում...

—Դուք էս ասեցէք՝ ըռաւօտը նրանք պէտքա գնան ծառը կտրեն, մե՛նք ի՞նչ դենք անիլ։

—Մենք էլ կգնանք քեօխվին զանգատ կանենք թէ՝ մեր թղթի պատասխանը հլա եկել չի, խնդըրմ ենք մնչի գալը թո՛ղաս ոչ նրանց, որ ծառը չկտրեն։

—քեօխվեն նրանց ղոլեն ա, բաւոր մեզ լսի ո՞չ. էն վախտն ի՞նչ անենք։

—Ի՞նչ դենք անիլ, էրւած սրտին սոխ մխիթար. մենք էլ Կոպալնիս վե կունենք, կը գնանք հլէ մի էրկուսի գլուխն էլա կճղենք, որ սրտներս հովանայ։

—Ա՛ղպէր, ես ըտուր հըմա՛ձայն չեմ։

—Ես էլ չեմ հըմաձայն.—ասացին միքանիսը և հրաժարուեցին կռուել հակառակորդների հետ։

Երեկոյ էր, նրանք ցրուեցին և միւս օրն առաւօտեան վազ-վազ ժողովուեցին քեօխվի դուռը և արին իրենց զանգատը, բայց նա պատասխանեց. «Ես հոգևոր գործերին խառնուիլու ըրաւունք չունեմ, դա իմ ըրաւունքից դո՛ւս բան ա»։ Այդ ժամանակ միւսների կողմից էլ ծառահատ մշակներն իրենց բահերով, կացիններով, քլունգներով, թիերով և սղոցներով ժողովուել էին Խուրինի դուռը։ Այնտեղից հրահանգ ստացան և ուղևորուեցին դէպի ընկուզենին։

Նրանք ծառին հասնելուն պէս, այս և այն կողմը գլորելով տասնեակ տապանաքարերը, ինչպէս միջատներ, սկսեցին փորել արմատների շուրջը։

—Տղե՛ք, էս ա քա՛նդըմ ենք, ամա վնասը տե՛նալ դենք։ Գերեզման քանդելը հե՛շտ բան չի, մեր հայրապետները նզովք են դրել քանդողի վրայ։ Ղօ՛րթ ա, ամեքս միքանի շահու խաթեր բահներս ուսեցինք, եկանք, ամա բանի մէջ դենք ընկնիլ.—

նկատեց փորողներից մինը, որն իբրև մշակ էր եկել և ո՛չ իբրև կուսակից։

Ծառահատների կուսակցութիւնը զօրեղ էր. հակառակ կողմի մարդիկ երեցփոխի սրահի տակ արած վճռին կամ խոստմանը հաւատարիմ չըմնացին. ամենքը թագուն քաշուեցին ու իրենց գործին գնացին, միայն երեցփոխը, ալեզարդ Թիւնին, Ղասըմը... և Դանէլ ապին էին, որ համարձակուեցի գալ Ղամիշգէօլը, որ իրենց սիրելի «պըպօքնուն» վերջին հրաժեշտը տան, երկրպագեն, քանի դեռ կանգնած էր, չէր ընկել։

—Ա՛յ տղէ՛ք, հաւը որ հա՛ւ ա, ջուր խմելիս Աստուն մտիկ ա տալի, դուք խու մարդիկ էք, խի՞ էք տհենց անօրէն բան բռնըմ, եկէ՛ք, քանի կացին չի՛ դիպել ծառին, ձեռը վե՛ կալէ՛ք, կտրիլ մի՛ք...

«Սրա տակին ձեր պապերը ծնուել, մեռել են, սրա տակին սրբեր կան թաղուած, նրանց գերեզմանին՝ ամեն ուրախ օր—Զատկին, Կանանչ կիրակի և Համբարձման օրը ձեր ըեխէքն ուրախուրախ՝ կարմիր ձուն ձեռներին ուխտ են գալի... Դուք եկէ՛ք քարը փէշերնիցդ վե՛ր ածեցէ՛ք՝ ամենի մեղքըմն էլ լցըւիլ մի՛ք. էտ մեղքիցը մեր գեղի վըրայ պատուհաս՝ կարկուտ կըգայ։ Աչաջուրն աչքըներիդ ղաքին ձեզ էօրնակ՝ Գրիգոր վըրդըպետին վանքի հողերի հըմար խեղդեցին—անաստուած բա՛ն բռնեցին, հըմի ամեն տարի նրանց հանդի, արտ ու արօտի վրայ արդար երկնքիցը կարկուտ ա թափ-

ւըմ... էտ չիմ նրանց մեղքիցն ա....—արտասուելով և աղաչելով այդ խօսքերը վերջացրեց Թիւնին և ապա Ղասըմն սկսեց.

—Ա՛յ տղէ՛ք, էտ որ Տէղն իմա՛նան ձեզ կը բռնեն բերդը կածեն, ջարմա կառնեն, ձեր հոգևոր դատաստանը ջո՛կ կանեն, մարմնաւորը ջո՛կ, ջա՛հել էք, խելքներդ բա՛ն չի կտրըմ, ամա մտիկ արէ՛ք, գլխներս սիպտակել ա, բան շատ ենք տեհել, եկէ՛ք լսեցէ՛ք մեզ...

Ծերունիները նախապաշարուած մտքերով երկիւղ էին զարթեցնում միքանիսի մէջ. իսկ նրանք քանի խորացնում էին փորուածքը, այնքան երկմտում էին իրենց արարքի մասին։ Հանդստարանի տխուր տպաւորութիւնն էլ էր կարծես ազդում նրանց սրտի վրայ, որոնք վարձուած էին, միայն մշակութիւն անելու համար էին մասնակից եղել այդ աւերածութեան։ Նրանք անդադար սպասում էին, որ այս կամ այն րոպէին իրենց բահ ու քըլունգի առաջ ննջեցեալի ոսկրներ են փշրուելու։ Խղճահարութիւնն առհասարակ երևում, նկատւում էր այնպիսիների դէմքի վրայ։ Բանուորները շարունակում էին փորել։

—Ա՛յ տղէ՛ք, ձեզ կը բռնեն, Աստու պատիճը ձե՛զ կըհասնի...—շարունակ կրկնում էին ծերուկները։ Իսկ Խուրին և միւսները սիրտ էին տալիս նրանց, երաշխաւորելով ամեն պատժի։

—Ես ըստեղ եմ, վա՛խիլ մի՛ք, էս մեռելների մեղքը թող մեր գլխին լինի, դուք քանդեցէ՛ք

ոչով էս չոլի տեղը, էս քօլի մէջ ձեզ հարցմունք չի անիլ. թէ ա՛ննեն էլ՝ դուք կասէք թէ՝ մենք մշակ ենք... դէ, քանդեցէ՛ք..., ըրիկունը ձեզ չայից եդը արաղ էլ դենք խմացնիլ...—խրախուսում էին գիւղական մարդակեր եւ աղքատակերները, որոնք իրենց աղայի դիրք տուած՝ կանգնած էին տապանաքարերի վրայ և անտեղի հրճւում ու արհամարհելով ծերունկներին, պարծենում էին գլուխ բերած ապօրինի գործի յաջողութեամբ...

Տխուր հանգստարանի հովանին դարաւոր ընկուզենին, անհուն ժամանակի մի շրջանում գետնի մէջ խոր ամրացրել էր իւր անթիւ ու անհամար արմատները, ամուր գրկելով իւր մայր հողը՝ պի՛նդ սեղմուել, կպել էր նրանից. Նա լեռ քարերի միջով անգամ անց էր կացրել իւր մթնասէր տակուիքը և պատ ու պտոյտ տալով նրանց հարիւր ու մի տեղով, թաղել էր սև հողի խոնաւ շերտերի մէջ, որտեղից սնունդ տալով իւր հսկայական բազուկներին և ճիւղերին, տարածել, մեկնել էր նրանց ազատ օդի մէջ. Բնութեան այդ հսկային միայն ահեղ կայծակը չէր հարուածել, թէ չէ փոթորկալից հեղեղներ շառաչիւնները շատ էին անցել նրա մօտից և կործանիչ ամպ ու կայծակների հրացայտ թռոյցքների միջից քարանման կարկուտը շատ էր տեղացել նրա գլխին, բայց նա լուռ և անլեզու տարել էր այդ ամենը, սակայն, այնքան թշնամիների հարուածներից յետոյ՝ ահա մօտեցել էր օրհասը. «ամեն բան ժամանակ ունի»,

ինչպէս և ունեցաւ Գուգարաց աշխարհի Հայոց ազգի գլխին կատարուած տխուր անցքերի վկան։ Կացինն արդէն արմատի մօտ էր, թէև՝ ընկուզենին պտղատու էր, անպտուղ չէր. Նրա նրակոկոն ճիւղերը բարձրահայեաց և տխուր կերպով նայում էին ներքև իրենց մօր սննդարար արմատներին, ուր մի վայրենութիւն էր կատարւում։

Բահ ու քլունգների առաջ արմատներն արդէն բացուել էին կիսով չափ, բնական ուռուցքը մասամբ դեռ հողի մէջ էր։ Բանուորները քրտնած՝ փորում, դուրս էին ածում հողը, կացինաւորներն ու սղոցաւորները ջուր ու սուր դրած, տը՛կ տը՛կ, չը՛խկ, չը՛խկ, շը՛ռտ ու ծրնգ, ծրնգ... անելով սրում էին իրենց գործիքները։ Եւ հազիւ թէ՝ արշնաչափ փորած լինէին, յանկարծ բանուորներից մէկի և միւսի քլունգը խիստ հարուածեց՝ դարերից առաջ, յոյս ու հաւատով ամփոփուած հայ հանգուցեալի մի չորացած, մէջն ուղեղի տեղ սև հողով լցուած գանգի և փշուր-փշուր արաւ նրան, իսկ միւսների թիակները դուրս շպրտեցին մարմինների ուրիշ մասերի ոսկրներն և քստմնեցրին նայողին։

—Ո՛վվէ... մեղքըմը կորանք, էս ի՛նչ ենք անըմ.—բացականչեց հարուածողներից մինը. շփոթուածի պէս քլունգը շպրտեց այն կողմն և հրաժարուեց փորելուց։

- Ըհա՛, հա՛, հա՛.—ծիծաղեցին շատերը հեռացողի վրայ, որին ուզում էին հետևել և միւսները, մանաւանդ լսելով ծերունկների գուշակողական ահա-

ւոր խօսքերն Աստուծոյ պատուհասների մասին։ Վերջիններս, Ղասըմն ու Թիւնին, դէպքից օգուտ քաղելով կրկին սկսեցին երկիւղ տալ նրանց, բայց Խուրին ու Մծատիկը ցասնացան ծերուկների վրայ և հայհոյելով նրանց, ասացին մշակներին.

—Ա՛, էս հին քէօփակներին լըըմ էք. մթամ սրանք բա՞ն են ասըմ—«վա՜նքերը քա՜նդիլ մի՛ք, Ծառը կտրի՛լ մի՛ք, ա՛ղօթք արէք...» Է... կա՛սես թէ ծառն ու վա՛նքերը անօգուտ, անշահ, անշաւ լակ որ մնա՛ցին, մեզ հըմար պա՛րծանք են՝ հաց դեն դառնալ, որ ո՛ւտենք։ Ա՛, քանդեցէ՛ք, անգաճ մի՛ք դնիլ.—արհամարհելով ծերերի ասածները, փորեցին, բաց արին ամբողջ գիւրզը սառը գերեզմաններից դուրս ածեցին շատ գանգեր ու նշխարներ։ Տեղներից վեր կացան և կացինաւորները և Թըըխկհա թըը՜խկ սկսեցին հատել ընկուզենին։ Դանէլն արտասուելով մէջներն ընկաւ, գլուխը դրեց ծառի ուռուցքի վրայ և արտասուահեղձ աղաղակեց.

—Դէ էտա որ ձեր ասածն ա՛նըմ էք, առաջ տուէ՛ք գլո՛ւխս ջարդեցէ՛ք, եդոյ աչքիս ղաքին կըտրեցէ՛ք մեր ուխտի ծառը, որին սաղ գեղը ուխտա՛ւոր ա։ Նրա օրինակին հետևեցին և միւս ծերուններըը, սակայն դրանով էլ ոչինչ չեղաւ, լեռնականների սրտերն արդէն քարացել էին։ Կացինաւորները գայլի նման վրայ եկան։ Ծերունիները դուրս շպրտուած գանգերը ձեռներն առան և սկսեցին որդին մեռած հօր պէս ողբալ...։ Բայց դեռ հինգ ժամ չանցած, ընկուզենին ուռուցքից բարձր բա-

րակեց կացինների սուր հարուածների առաջ։ Այնուհետև քամին հեշտութեամբ ճօճեց և վիշապահայեաց ծառը մեծ զօրութեամբ ճռճըռաց, ճքճըքաց և այնպիսի մեծ դղրդոցով հարուածեց գետնին ու փշրուեցաւ, որ կարծես միքանի լեռներ միասին յանկարծ փլեցին։ Գետինը բաւական տեղ շարժուեց ու պատռուեց. բանւորներից շատերն ընկան գետին և ականջները կալան։

Բայց այդ տխուր դէպքին անակնկալ կերպով հետևեց մի ուրիշ սարսափեցուցիչ դէպք գիւղականների համար...

Դղրդոցից փոքր ինչ յետոյ, գիւղի կողմից շնչառութիւնն սպառուած, հևռելով, հեկեկալով գունատուած մի երիտասարդ արտասուհեղձ ձայնով գուժեց։

—Հա՛նէս ապի, Միխա՛կը... և ձէնը կտրեց։

—Հը՜ հը՛, ի՞նչ ա, ի՞նչ ա.—կացինը մի կողմ շպրտելով ասաց Հանէսը։

—-Միխակը սաղ-սալամաթ հանդից եկաւ հըա տո՛ւն չհասած՝ ուշաթափուեց վեր ընկաւ մեռա՛ւ...

—Վա՛յ, վա՛յ... տունս քանդուե՜ց...—վշտահար բացականչեց ալերիչը, ուժը հտւաքեց, կացինն առաւ ու հէնց ուզում էր իւր գլուխը փեղկել, ձեռները թուլացան և նա ահաբեկուած աչքերը հըջեց և շնչասպառ ընկաւ գետին...

—Ջո՛ւր, ջո՛ւր.—սարսափահար գոչեցին ամենքը և հազիւ կենդանացրին նուաղածին, որի միակ տղան, միակ զաւակը յանկարծամահ մեռել էր։

—Վա՛յ, երկնքից պա՛տիժ ա գալու մեզ հըմար...

—Հա՛, Աստոծ պատրճի նշանն էս ա տըւեց…,—դողդողալով մրմնջում էին նրանք։—Նախապաշարուածներից շատերն այնչափ ահաբեկուել էին, որ շրթունքները մէջտեղից ճաքել, արիւնը հոսում էր և եթէ իրենց գլխի վերևը օդի մէջ որևէ թռչուն թևերը խշխշացնում էր, կարծում էին թէ երկնքից գնդակներ են թափւում գլխներին։ Իսկ գիւղից լսուող կանանց պարսկական «վա՛յ էհէ՜, վա՛յ-վա՛յ, վա՛յ-էհէ՜…» վշտալի սուգ ու ողբի ձայնը մանաւանդ, անակնկալ դէպքի հետ միասին աւելի ևս կաշկանդում էր նրանց…։ Նրանցից ոմանք հազիւ ուշքի եկան և մահացած երիտասարդի հօր կռներից բարձրացրած տուն հասցրին, որի ետևից գնում էին բոլոր ծառահատները և երկիւղած մըրմունջներով գուշակութիւններ անում և ասում.

—Խեչոյի էրազը կատարուեց, վա՛շշ, մեր խեղճ գեղի գլխին հլա շատ ցաւեր են գա՛լու…

—Վա՛յ.—տուն հասնելուն պէս գոչեց վշտոտ հայրն և վայր ընկաւ։ Իսկ գիւղական սփարթնած մնացին պատերի տակ արձանացած։

Կաճղավաճառներն ընկուզենու գիւրզերը տարան…

ՎԵՐՋ

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0571750

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԷԿ.

Ա. գիրքը հատով գնողի համար արժէ 60 կոպ.
Բ. գիրքը » » » » 50 »
Ա. և Բ. գրքերը միասին գնողի համար 1 ր.

Տպագրութեան համար պատրաստ են.

1. «Մոռացուած աշխարհ»-ի Գ. և Դ. գրքերը և
2. Մեր «ՇԻՐԻՆԱՆՑ ՆԱԽՇՈՒՆԸ» վէպը։